



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 12 1892

ԴԵԿՏԵՄԲԵՐ

1892 № 12

ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Երես

1	ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, Ա.	1729	«Մուրճ»-ի անցեալ գործունէութիւնը:
2	ԶՈՐԱՐ, ԳԵՈՐԳ.	1743	Ջուլիակ:
3	ՍԵՆԿԵԻԻԶ, ՀԷՆՐԻԿ.	1740	Առանց զաւանանքի (վկայ):
4	ԹՈՒՄԱՆԵԱՆՅ, ՅՈՎՀԱՆՆԷՍ.	1798	Մոռացած սէր (բանաստեղծ):
5	ԽԱԺԱԿԵԱՆՅ, ԳԱՐԵԳԻՆ.	1799	Նաւթաշրջանի բանաստեղծ:
6	ՄԻԹԱՐԵԱՆՅ, Ա. Թարգմ.	1814	Գէօթէից (բանաստեղծ):
7	» ՅՈՎՀԱՆՆԷՍ.	1815	Օր. Շ-ի աղբամուտ:
8	ԲԱԼԱԳԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ.	1816	Կենդանիների խելքն ու սիրտը:
9	ՇՈՒՄՖ, Գ. Ա.	1833	Ֆ. Կ. Կոնիլիերի նոր գիրքը:
10	ԱՂԱՅԵԱՆՅ, ՂԱԶԱՐՈՍ.	1841	Հալոց գրի մասին:
11	ՄԱԼԽԱՆԵԱՆ, ՍՏ.	1852	Մ. Խորենացու նոր աղբիւրը:
12	ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, Ա.	1864	Գրիգոր Արծրունի:
13	Ֆ.	1866	Արտատաճմանեան Քրոնիկ:
14	ՆԱՀԱԳԵՏԵԱՆ, ԳՐ.	1875	Երաժշտական քրոնիկ:
15	ԽՄԲ.	1878	Ջանազան լուրեր:
16	»	1890	Բովանդակ. «Մուրճ»-ի 1892 թ.:


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՎՆԵՐ:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Խ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՅԻ

Типография М. Д. Ротинянца, Пол. пр., д. № 41.

1892



Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 12 1892

Դ Ե Կ Տ Ե Ս Ի Ե Ր

1892 № 12

ԶՈՐՐՈՐԳ ՏԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԻԱՆՑԻ

Типография М. Д. Ротиніанца, Гол. пр., к. № 41.

1892

Дозволено цензурою. Тифлисъ, 9 Декабря 1892 г.

V SURԻ **ՄՈՒՐՃ** SURԻ V

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

1893

ԹԻՒԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՅԻՍԾ Է

«ՄՈՒՐՃ» ամսագիրը կը հրատարակի 1893 թւականին նոյն ծրագրով, որպէս և նախկին տարիներում:

«ՄՈՒՐՃ»-ը կը հրատարակի ամէն ամիս 8 — 10 թերթ մեծութեամբ. աւելին կախած կը լինի բաժանորդների թւից:

«ՄՈՒՐՃ»-ի ցայժմեայ մշտական բաժինները կը մնան նաև 1893 թւականին, այն է 1) Յօդածներ մեր կեանքի հիմնական խնդիրների մասին (առաջնորդողներ): 2) Յօդածներ հասարակական կեանքի ընթացիկ խնդիրների և երևոյթների մասին (ներքին Տեսութիւն, Ամուսն. քրոնիկ): 3) Հետազոտութիւններ տնտեսական: 4) Յօդածներ քաղաքական անցքերի և ընդհանուր քաղաքական դրութեան մասին (Քաղաքակ. Տեսութիւն): 5) Գրական ընդարձակ քննադատութիւններ: 6) Յօդածներ ընթացիկ գրականութեան վերաբերեալ (Գրախօսութիւն): 7) Ընդհանուր յօդածներ զիտութիւններից: 8) Յօդածներ գիտութեան ընթացիկ խնդիրների մասին (Գիտական քրո-

նիկ): 9) Ճանապարհորդական նկարադրութիւններ: 10) Թղթակցութիւններ ուսաց կայսրութեան զանազան տեղերից: 11) Արտասահմանեան քրոնիկ: 12) Վէպեր, վէպիկներ, պատկերներ, 13) Ոտանաւոր բանաստեղծութիւններ: 14) Երաժշտական քրոնիկ: 15) Զանազան լուրեր: 16) Ֆայտարարութիւններ:

«ՄՈՒՐՃ»-ի ՎԻՊԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ 1893 թվականին կը բաղկանայ թէ ինքնուրոյն և թէ թարգմանական վիպական գրածքներից: Ինքնուրոյնների մէջ կարեւորագոյն տեղը կը բռնի՝ «ԱՐՍԷՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ» վէպը, գործ մեր նոր աշխատակից պ. Ալեքսանդր Շիրլանդադէի, որ կըսկսի տպւել 1893 թ. առաջին համարից և որ հաւանօրէն կը վերջանայ օգոստոս ամսին:

Թարգմանական մասի մէջ կը լինի շարունակութիւնը Հ. Սենկևիչի «ԱՌԱՅ ԴԱԻԱՆԱՆԻ» վէպի, այն է երրորդ և վերջին մասը: Նոր բաժանորդները ձրի կը ստանան այդ վէպի առաջին և երկրորդ մասերը:

Բացի դրոշանից կը տպւեն աւելի մանր վէպեր կամ վէպիկներ, պատկերներ և այլն, թէ ինքնուրոյն և թէ թարգմանական, ինչպէս մինչ այժմ:

«ՄՈՒՐՃ»-ի բաժանորդագիրն է 10 ռուբլի: Ուսուցիչները և ուսանողները կարող են վճարել 8 ռուբլի:

ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐԵԼՈՒ Համար գիմել կամ Խմբագրատունը՝ (Тифлис, Въ Редацію „МУРДЪ“) կամ մեր գործակալներին (տես «Մուրճ»-ի կազմի հսկի երեսը):

„ՄՈՒՐՃ“-Ի ԱՆՑԵԱԼ ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹԻՒՆԸ

Ներկայ համարով «Մուրճ» ամսագիրը լրացնում է իւր չորս ամեայ շրջանը. յաջորդ համարով նա կը մտնի հինգերորդը: Մենք օգտուում ենք այդ դէպքից մի ընդհանուր տեսութիւն տալու «Մուրճ»-ի ցայժմեայ գործունէութեան և նորա հանգամանքների մասին, ամսագրի ընթացքը և ուղղութիւնը պարզելու համար, մանաւանդ որ արդէն երեք տարի է մի այդպիսի տեսութիւն տւած չենք հայ ընթերցող հասարակութեան:

Ինչ է եղել մեր ջանքը:

Մեր ջանքը եղել է՝ «Մուրճ»-ը դարձնել մի օրդան ժամանակակից յառաջդիմութեան համար: Այդ մտքով նա հիմնւել է, և մենք աշխատել ենք «Մուրճ»-ին այն ուղղութիւնն ու ընթացքը տալ, որ նա անշեղ կերպով այդ նպատակին ծառայի:

Յառաջ դիմութիւնը համեմատական դադափար է. նորա գոյութիւնը իմացւում է ներկայի համեմատութիւնից անցեալի հետ, և այս դէպքում՝ որքանով որ նա կապւած է «Մուրճ»-ի հետ. իսկ «Մուրճ»-ի դիրքը ներկայիս մէջ՝ կարող է իմացւել նրանից թէ որչափով նա կանգնած է դրութեան բարձրութեան վերայ, որ նոյնն է թէ որքանով նա համապատասխանում է ժամանակիս պահանջներին, որքան լայն է «Մուրճ»-ի տեսողութեան հորիզոնը համեմատած ժողովրդի կարիքների հետ, որքան են իրար բռնում մէկ կողմից «Մուրճ»-ի ուղղութիւնը, արծարծած խնդիրները, ժամանակի խնդիրներին տւած պատասխանները, ընթերցանութեան համար մատակարարած նիւթերը, — և միւս կողմից մեր ընթերցող հասարակութեան պահանջները, եթէ միայն դժբա վեր չեն այն ոյժերից, որ տալիս է մեզ ժամանակակից սերունդը: Եւ այդ է

որոշում պահանջների խելացիութեան չափը, և մեր ասածը՝ միայն խելացի պահանջների մասին է:

Մենք ձեռնարկել էինք մի դժարին գործի. գոնէ այնքան դժարին, որ այս վերջին երեսուն և հինգ տարիներում արած ջանքերը խորտակել էին մի ընդհանուր կրթական ամսագիր երկար տարիներ շարունակել ու դժարութեան դէմ: Եւ արդարեւ «Հիւսիսափայլ», «Կռունկ», «Հայկական Աշխարհ», «Փորձ» — դոցանից ամենաշատ տեղգութիւն ունեցածը առաջինն էր, «Հիւսիսափայլը», որ վեց տարի հրատարակեց, լինելով կիսով չափ փոքր քան «Մուրճ»-ը, իսկ վերջին ամսագիրը, փորձը ունենալով «Մուրճ»-ի չափ ծաւալ՝ տեղեց ոչ աւելի քան չորս ու կէս տարի:

Ամսագրի տեղը այդպիսով թափուր էր մնացել: Բայց «Մուրճ»-ը չէր եկել ուղղակի նոցա շարունակելու: «Հիւսիսափայլ»-ը որի հետ «Մուրճ»-ը իւր տենդենցիաներով աւելի մօտ է, շատ էր վաղուց անյայտացել, որպէս զի «Մուրճ»-ը զար ուղղակի նորան շարունակելու համար. «Հիւսիսափայլ»-ի և «Մուրճ»-ի միջերբում կայ մի ժամանակամիջոց, երբ այն դերը, որ կարող էր կատարել այսպէս ասած մի վերանորոգած «Հիւսիսափայլ», կատարեց «Մշակ» լրագիրը, որքանով որ մի լրագիր առհասարակ կարող էր ամսագրի տեղը տալ:

1889 թւականին սկսեց լոյս տեսնել՝ «Մուրճ»-ը: Աւելի քան որ և իցէ մէկը նախկին ամսագիրներից՝ «Մուրճ»-ը սկսեց կեանքի հետ գործ ունենալ, որ և արտայայտուում է նորա բաժինների բազմակողմանիութիւնով և բազմաթիւ նոր մարդկանց զբաղման ասպարէզ զուրս գալով: Զորս տարի առաջ մենք դեռ չը գիտէինք թէ ովքեր էին լինելու մեր տեղական աշխատակիցները. մենք միայն գիտէինք թէ ինչ ուղղութեան տէր մարդիկ կարող էին համակրել «Մուրճ»-ին, մենք գիտէինք որ միայն մի աւելի հասուն երիտասարդութիւն կարող է լինել մեր աջակիցը, միայն նորա միջից կարող են զուրս գալ նոր մարդիկ՝ «Մուրճ»-ի ձգտումները հասկացող, գնահատող և նոցա համակրող, հետեւապէս և ամսագրին աշխատակցող: Ամսագրական ոյժեր «Մուրճ»-ի համար սլափափափ չը կային, որովհետեւ չէր կարելի յոյսեր դնել այնպիսի ոյժերի վերայ, որոնք իրանց ոգով, ուղղութիւնով, աշխարհայեցողութիւ-

նով, զգացմունքներով, քաղաքականութիւնով ոչ մի մտերմութիւն չէին կարող զգալ իրանց տրադեցիաներին հակառակ մի օրգանի հետ, որքան էլ նոքա յայտնի լինէին իբրեւ զրոշներ: Իսկ նախկին ամսագիրներից մնացած ոչոքերը ընդհանուր առմամբ հէնց այդպիսիներն էին: Նոր ուղղութեան ամսագրի համար հարկաւոր էին նաև նոր մարդիկ, թէկուզ գրականութեան մէջ քիչ յայտնի կոմ բոլորովին անյայտ աշխատակիցներ, բայց իրանց ուղղութիւնով աւելի մօտ կամ սերտ կպած յառաջդիմական մի օրգանի: Զորս տարի առաջ մի այդպիսի միտք շատերին, և յատկապէս հակառակորդներին, խիմերական էր թւում, և մեր ձեռնարկութիւնը հէնց սկզբից կարծում էին դատապարտւած կատարեալ անաջողութեան:

Այլ էին մեր յոյսերը: Եւ այս չորս տարիների փորձը մեզ ապացոյց տւեց որ մի յառաջդիմական ամսագրի շիտակ, լուրջ ու կենդանի վերաբերմունքը դէպի հասարակական խնդիրները միակ հաստատ գրաւականն է՝ հասարակութեան մէջ ամուր արմատ բռնելու, ժամանակիս իդէալներով համակելու ընդունակ մարդկանց համակրութիւնը վաստակելու և այդ ամենով միասին մամուլի մէջ այն տեղը գրաւելու համար, որ վայելում է մի ամսագրին, որ դրութեան բարձրութեան վերայ կանգնած է ուղղում լինել:

Մեզ շրջապատող ժամանակակից մամուլը մեր այդ դիտաւորութեան իրագործումը չը խրախուսեց ոչ մի կերպ: Բոլորովին ընդհակառակը: Մենք ոչ միայն թշնամանքի և ծաղրի հանդիպեցինք այն մամուլից, որ իւր ուղղութիւնով հակառակ պէտք է լինէր «Մուրճ»-ին, այլ և այն մամուլի կողմից, որի գործը շարունակելու համար կոչւած էր այս ամսագիրը:

Բայց զաղափարը իւր գործը կատարեց, որովհետեւ ամենազօրեղներն անգամ չը կարողացան արգելք լինել, որ «Մուրճ»-ը յառաջդիմական մի օրգան ճանաչւի և տարեցտարի աւելի ու աւելի տարածւի: Թշնամական վերաբերմունքը նոյնպէս իւր դերը կատարեց, բայց դորա տպաւորութիւնը և ազդեցութիւնը նւազում էր ամեն տարի, և ուր «Մուրճ»-ը, այսպէս ասած, իւր սեպհական ոյժով թափանցում էր՝ նա ապացուցանում էր նաև որ մեր մամուլի վերաբերմունքը դէպի «Մուրճ»-ը հիմնւած էր իրանց ընթերցողների կոյր հաւատի վերայ:

Խրախուսական մինչ այժմ մենք ոչինչ չենք դաել մամուլի վերաբերմունքի մէջ: Եւ այդ մենք ասում ենք ոչ թէ գանգատւելու համար, այլ պարզելու համար թէ ինչ պայմանների մէջ «Մուրճ»-ը պէտք է հարթէր իւր ճանապարհը, որ պրոգրէսի ճանապարհն է, մի ճանապարհ, որ լիապէս հարթելու համար դեռ երկար տարիներ քրտնաջան աշխատանք ենք տեսնում հորիզոնի վերայ: Զընայած որ անցեալում հայերս ամագիրներ ունեցել ենք, բայց ամագիրը դեռ ևս չէր դառել մի անհրաժեշտ պահանջ ընթերցող հասարակութեան համար: Այդ կախած է եղել մեծ մասամբ հասարակութեան անպատրաստ լինելուց, բայց մասամբ նաև այդ ամագիրների ղեկավարների հայեացքից ամագրի կոչման վերայ: Այդ պատճառով «Մուրճ»-ի ղեկարութիւններից մէկը կապած էր այն մութն և անորոշ գաղափարների հետ, որ ունեցել են հայերը քաղաքական-հասարակական-գրական ամագրի մասին: Մեր խօսքը այն սուար միջամասնութեան մասին է, որոնցով պահպանւում են պարբերական թերթերը մեզանում առհասարակ: Ժողովրդականացնել ամագրի ասած բանը ընթերցող հասարակութեան լայն խաւերում,— ահա մի խնդիր, որ պէտք է լուծէր «Մուրճ»-ը: Դա նոյն այն խնդիրն է, որ քսան տարի առաջ դրած էր լրագրութեան համար, որը դեռ ևս այն ժողովրդականութիւնը չունէր, ինչ նա ունի այժմ: Լրագիրը դեռ ևս անհրաժեշտ պահանջ չէր ընդհանրութեան համար այն ժամանակ, ինչպէս ամագիրը չէր ընդհանրութեան համար, երբ «Մուրճ»-ը սկսեց հրատարակել:

Այդ խնդրի հետ միասին «Մուրճ»-ը ունէր լուծելու մի այլ խնդիր: Ամագիրը պէտք է բաւականութիւն տայ աւելի զարգացած, ուրեմն աւելի պահանջող հասարակութեան: Ամենապահանջող ընթերցող հասարակութիւնը՝ ամագրի հասարակութիւնն է: Ինչով «Մուրճ»-ը պէտք է բաւարարութիւն տար այդ հասարակութեան: Նրանով, կը պատասխանենք մենք, որ «Մուրճ»-ը կը ներկայացնէր մի ակնյայտի յառաջդիմութիւն մեր պարբերական մամուլի մէջ, առհասարակ: Ոչ մրցութիւնը իրան նման ռուսաց կամ արուստահմանեան ամագիրների հետ պէտք է դէպ իրան քաշէր հայ ինտտելիգէնտ հասարակութիւնը, այլ այն գաղափարական շահը, որ պէտք է կապի ինտտելիգէնտ հասարակութիւնը հայրեն-

նական մահուլի և գրականութեան յառաջդիմութեան հետ: Երբ այդ յառաջդիմութիւնը կատարուեմ է՝ կարելի է նաև ապահով լինել ինտելիգենցիայի համակրութեան վերայ, եթէ այդ ինտելիգենցիան արժանի է իւր անւան: Ամեն ուրիշ միջոց՝ արհեստական է. միայն յառաջդիմութիւնն է, որ կարող է լինել թէ նպատակ և թէ միջոց. իսկ այդ յառաջդիմութիւնը իրագործելու համար մենք ծառայացրել ենք մեր ողորդ և մոլորի ամբողջ կարողութիւնը նաև հակառակ իշխող կարծիքներին:

Յառաջդիմութիւնը անհնարին է առանց մոլորը գրականօրէն մշակելու՝ և հասարակական, գրական, քաղաքական երևոյթները գիտնականօրէն քննելու և ուսումնասիրելու: Ամեն յառաջդիմութիւնից առաջ հասարակական կեանքի մէջ՝ լինում է առաջ գրականութեան յառաջդիմութիւն, որովհետև կեանքի մէջ յառաջդիմութիւն անելու համար հարկաւոր է որոշ ծրագրով գործել, իսկ ծրագիրները ոչ այլ ինչ են, եթէ ոչ համառօտութիւններ գրականութեան մէջ արծարծած, մշակած, պարզած, ընդհանրութեան համար մատչելի դարձրած խնդիրների և սոցա լուծելու միջոցների. գործելու համար հարկաւոր են կուսակցութիւններ, բայց կուսակցութիւնները ոչինչ են առանց ծրագիրների, իսկ ծրագիրները բղխում են առաջընթաց գրականութիւնից:

Արդ, այս երեսուն տարիների ընթացքում, մեր նոր գրականութեան սկսելու օրից, մոլորի ու գրականութեան շարժումներ մենք կարող ենք վկայել զլիստորապէս երկու շրջանների համար՝ «Հիւսիսափայլ»-ի 1858 — 64 և «Մշակ» լրագրի, զլիստորապէս սորա գոյութեան առաջին տասնեակ տարիներում: Մեր գրականութեան համար միայն այդ երկու շրջանները կարող ենք բեղմնաւոր համարել, այդ շրջաններումն են արծարծւած մեր մէջ նոր տեսակէտներ հասարակական կեանքի մասին, այդ շրջաններումն են սկսել արթնանալ հասարակութիւնները գրականութեան համար, այդ շրջաններումն է սկսել նոր բանաստեղծական ու վիպական գրականութիւնը, այդ ժամանակներում նոր սերունդը սկսեց մասնակցել մահուլին: Մի խօսքով՝ դժբա շրջաններ են, որոնք նշանաւոր սկզբնաւորութիւնների շրջաններ կարելի է համարել:

Բայց գոյութիւն ունեցող մամուլը 80-ական թւականներին այլ ևս բաւարարութիւն չը տւեց սկզբնական պերիոդները անցկացած սերունդներին: Լրագրութիւնը, որ միւս կէր ասպարիզի վերայ, անբաւարար հանդիսացաւ գրականութեանը նոր մղում և խնդիրների մշակութեան նոր ծաւալ տալու համար: Բարձր հրապարակաստութիւնը երկրորդական դարձաւ, դրականութիւնը՝ զարգանալու համար՝ այլ ևս դաշտ չէր գտնում լրագրական էջերում: Մի խօսքով մամուլը չէր առաջադիմում, այլ սատած մնացել էր այն շրջանակների մէջ, որ որոշւած էր առաջ, այս զանազանութեամբ սակայն, որ գրական ոյժերն էլ գրեթէ յետ էին քաշւել գրելուց, ոչ մի խրախոյս չը գտնելով մամուլի բռնած ընթացքից, և ոչ էլ նոր գրողների հոսանք էր նկատուում:

Ահա այս հանգամանքների մէջ է, որ «Մուրճ»-ը սկսեց հրատարակել, ցանկութիւն յայտնելով շարունակել ընդհատւած գրական շարժումը: Դորա համար պէտք էր ընդլայնել և խորացնել ընդհանուր խնդիրների քննութիւնը, զգալ տալ եղածի անբաւարարութիւնը, խրախուսել ուսումնասիրական ոգին, արծարծել անաշուտութիւնը գրական քննութեան մէջ, բաց ամեն բանում անցկացնելով յատաջդիմական ոգին. պէտք էր գրեթէ ստեղծել գրական քննադատութիւնը մեր մէջ, պէտք էր ընդհանուր խնդիրների համար նոր-նորից մի սիւստեմ և նոր տեսակետներ մշակել, պէտք էր իւր բաժինների բազմակողմանիութիւնով ժամանակի պահանջների համեմատ հայկական ամսագրի տիպը ստեղծել, որի համար մեր նախկին ամսագիրները կամ այժմ եղած ամսաթերթերը օրինակ չէին կարող մեզ ծառայել, և այդ ամենով միասին «Մուրճ»-ը թէ հայկական մամուլի և թէ գրականութեան ու ազգի յառաջաւոր մտքի մի օրգան դարձնել:

Մենք չենք ուզում դորանով մեր կատարածի ամփոփումն անել, այլ միայն գծել այն, ինչին ձգտել ենք: Այդ ձգտումի արդիւնքները այժմ ամփոփւած են «Մուրճ»-ի չորս տարւայ հատորների մէջ և դրւած են ընթերցողների առաջ: Թող սոքա վկայեն թէ որքան է կարողացել «Մուրճ»-ը իրագործել իւր մտադրութիւնները մինչ այժմ. մենք միայն կ'ասենք, որ անսպթաք կերպով նոյն շաւղով պէտք է ընթանանք նաև այսուհետև, ունենալով ընթեր-

ցող հասարակութեան մէջ դէպի «Մուրճ»-ը ածող համակրութիւնը և այն հաւատը, որ մենք ունենք դէպի «Մուրճ»-ի կատարած և կատարելիք լաւ գերը:

Ամենաշոշափելի ապացոյցը այն բանի, որ «Մուրճ»-ով սկսեց գրականական մի նոր հոսանք, մենք տեսնում ենք նրանում, որ բազմաթիւ գրողներ «Մուրճ»-ի միջոցով գրական ասպարէզ դուրս եկան, գրողներ, որոնք, սակաւ բացառութիւններով, կամ շատ փոքր գրական անցեալ ունէին և կամ առաջին անգամ «Մուրճ»-ում երևացին:

Սկսելով «Մուրճ»-ի հրատարակութիւնը, չորս տարի առաջ, մենք, որպէս վերը նկատեցինք չունէինք աշխատակիցների կազմակերպւած մի խումբ. և չը գիտէինք թէ ովքեր լինելու մեր տեղական աշխատակիցները. մենք գիտէինք միայն որ տեղական աշխատակիցներ «Մուրճ»-ի համար կը լինեն նախ անպայման յառաջդիմականներ և երկրորդ՝ ովքեր համաժողով են մեր մամուլի շրջանակները ընդլայնելու և խնդիրների քննութիւնը խորացնելու անհրաժեշտութեան մասին: Մեր յոյսերը, ինչպէս այժմ վկայել կարող ենք, անհիմն չէին: Զը նայած մեզ շրջապատող մամուլի կողմից դէպի «Մուրճ»-ը բռնած զիրքին, աշխատակիցների հոսանքը «Մուրճ»-ում սկզբից մինչ այսօր եղել է անընդհատ: Անկարելի է դորանում չը տեսնել մի զարկ, որ կարող է բղխել միայն զաղափարից: Մեզ շրջապատող մամուլի ոչ առերես անտարբերութիւնը, ոչ էլ թշնամանքը կարողացան ներդրածել այն հոսանքի վերայ, որ իւր ուղին բնականօրէն բռնեց դէպի «Մուրճ»-ը: Սա մի իրողութիւն է, որ, չը նայած խմբագրութեան կողմից ցոյց տւած մեծ խստութեան՝ սկզբից մինչ այսօր «Մուրճ»-ի ամեն մի համարը իւր հետ բերել է մի, երկու, երեք, երբեմն մինչև անգամ աւելի նոր աշխատակիցների անուններ: Եւ անկարելի չէ այն, որ նոցանից շատ շատերը նոյն իսկ նորերից՝ ոչ միայն «Մուրճ»-ում, այլ դորանով իսկ առհասարակ գրականութեան մէջ, գնահատութիւն են գտել, կապելով իրանց անունները մեր գրականութեան որ և է ճիւղի հետ: Խօսելով աշխատակիցների մասին, մենք պարտականութիւն

ենք համարում առանձին կերպով չիշել այն անձերի մասին, որոնց աշխատութիւնը արտայայտւել է ոչ միայն գրչով, այլ և խորհուրդներով, իրանց մօտ չարաբերութիւններով ամսագրիս խմբագրութեան հետ:

«Մուրճ»-ի աշխատակիցների մէջ ղեռ առաջին տարում սկսեց մի յայտնի զտումն. զտնւեցին աշխատակիցներ, որոնք, ի նկատի ունենալով ամսագրի ուղղութիւնը, գործով ցոյց տւին ցանկութիւն՝ խմբագրութեան հետ սերտ, զազափարական չարաբերութիւն ունենալ: Զտման այդ պրօցեսը ժամանակի ընթացքում առաջացրեց այն, ինչ կարող ենք անւանել «Մուրճ»-ի սկզբնական խումբը: Ինքնաբերաբար և ժամանակի ընթացքում կազմաւծ այդ խումբն է ահա, որով յետոյ կարելի եղաւ սկիզբ դնել մի կազմակերպութեան, որ մենք անւանում ենք «Մուրճ»-ի խմբագրական խորհուրդ: Միջոց տալ որ «Մուրճ»-ի հետ զազափարական սերտ մտերմութիւն ունեցողները կանոնաւոր նիստերում ի մի հաւաքւեն և իրանց կարծիքները յայտնեն կամ տպագրելու նշանակւած և կամ տպւած գրւածների մասին, և որ առհասարակ մտքերի փոխանակութիւն կատարւի,— ահա «Մուրճ»-ի խմբագրական խորհրդի նշանակութիւնը:

Մի այդպիսի օգնական մարմնի կազմելը եղել է մեր ցանկութիւններից մէկը ղեռ ևս «Մուրճ»-ը հիմնելու օրից. բայց բնական է որ նորա գլուխ բերելը կարող էր կատարւել միայն ժամանակով, երբ գործի ընթացքը ինքը ինքնաբերաբար կը յառաջացնէր մի խումբ, որը «Մուրճ»-ի մէջ կը գտնէր օրգանի էական յատկութիւնները և կը հաւաքւէր այդ օրգանի շուրջը:

Բայց որքան էլ մեր սկզբնական ցանկութիւնն էր խմբագրական խորհուրդ ունենալ, այնուամենայնիւ դորան կազմելու վաստակը պատկանում է նաև այն աշխատակիցներին, որոնք առաջինները համախմբւեցին «Մուրճ»-ի իբր օրգանի շուրջը, որոնք ուրեմն առաջիններն էին որ հասունացրին այդ խնդիրը:

«Մուրճ»-ի խմբագրական խորհրդի սկիզբը ընկնում է 1890 թ. հոկտեմբերի 8-ին, և նորանում երկար կամ կարճ միջոցներով մինչ այժմ մասնակցութիւն են ունեցել, բացի մեզնից՝ ութ ուրիշ անձեր զանազան ժամանակներից սկսած, աւելի կամ պակաս տևողութեամբ, համաձայն մասնակցողների ազատ կամքին:

Որքան էլ ազատ հիմունքների վերայ է հիմնւած խմբագրական խորհրդին մասնակցելը, որքան էլ խորհուրդը լոկ խորհրդատու և ըստ մեզ հէնց զորա այդ բնաւորութեան պատճառով, բայց համերաշխութեան և փոխադարձ հաւատի և յարգանքի վերայ հիմնւած մի այդպիսի մարմնի կարեւորութիւնը մենք շատ ենք գնահատում: Նաև այսուհետև մեր ձգտումը կը լինի «Մուրճ»-ի այդ նոր սկսւած տրադիցիաները շարունակել, որքան միայն հնարաւոր է, և դորանով խմբագրութիւնը զօրեղացնել օգնական և գաղափարակից խորհրդատու ոչ ժերով: Անկախ զորանից խմբագրատունը մնում է և կը մնայ մի կենտրոն ամսագրի բոլոր աշխատակիցների համար, որոնց հետ հաղորդակցութիւնից անցեալի նման նաև ապագայում ապաստում ենք նոյնքան օգուտներ ամսագրի համար:

Սորանով երկրորդ անգամն է որ առիթ ենք ունենում հրապարակական հաշիւ ներկայացնել «Մուրճ»-ի դործունէութեան մասին: Մեր առաջին հաշիւը վերաբերում էր ամսագրիս առաջին տարւան: Այդ ժամանականից դէս «Մուրճ»-ը, մնալով իւր ծաւալով նոյնը, ինչ որ էր, զգալի կերպով ճոխացել է նիւթերի բազմակողմանիութեան կողմից: Այդ յառաջադիմութիւնը կատարել է տարին տարւայ վերայ, որովհետև միայն ժամանակի ընթացքում կարող էին գտնւել համապատասխան աշխատակիցներ: Նոր զարգացած բաժիններն են՝ դիտականը, քննադատականը, թղթակցութիւնները Ռուսաստանից, Արտասահմանեան քրոնիկը, Ֆէյլըտոնը:

Գիտական յօդւածները այժմ բռնում են այն տեղը, ինչ առաջին տարում բռնում էին մանկավարժական յօդւածները, որոնք մի ընդհանուր կրթական ամսագրում չպէտք է մեծ տեղ գրաւեն: Գիտական բաժինը, ըստ իւր հերթին, այժմ երկու տեսակի են բաժանւել՝ ընդհանուր կրթական յօդւածներ, գլխաւորապէս բնագիտութիւնից, և գիտական քրոնիկ. վերջինիս նպատակն է ընթերցողներին յընթացիկս պահել գլխաւորապէս կիրառական գիտութիւնների յառաջդիմութեան, նոր թէօրիաների ու գիւտերի հետ:

Գիտական բաժնի համար մինչ այժմ աշխատել են պ. պ. Ս. Քալադեան, բժշկ. Վ. Արծ. ունի և բժ. Ն. Ումիկեան. իսկ գիտա-

կան քրոնիկը իւր վերայ է առնում վարել ու. Մ. Տէր-Անդրէասեան:

Մի առանձին ծաւալ է ստացել «Մուրճ»-ում քննադատական բաժինը, որից առաջին տարում գոյութիւն ունէր գրախօսութիւնը, բացի մի-մի փոքրիկ փորձերից գրական ազատ քննութեան: Գրախօսութեան համար սկզբում «Մուրճ»-ը ունէր աշխատակիցներ ժողովրդական և բելլետրիստիկային պատկանող գրքեր գրախօսելու համար: Ժամանակով «Մուրճ»-ին մերձեցան նաև հայոց հին մատենագրութեան և առհասարակ լեզւի մասնագէտներ. այնպէս որ մանաւանդ ներկայ 1892 թւականին Գրախօսական բաժնում տպւեցին ընդարձակ քննութիւններ հայերէնագէտ մասնագէտների ձեռքով. չորսնով մասամբ փաստեց գրքերի հաշւետւութիւնը՝ լիակատարութեան կողմից: Բայց մենք յոյս ունենք, որ ապագայում, աշխատակիցների աւելի կանոնաւոր խմբի աջակցութեամբ՝ այս տարւայ պակասորդը կը լրացնենք:

Այս վերջին տերկու տարիներում «Մուրճ»-ը ձեռնամուկ եղաւ մեր նոր գրականութեան այսպէս ասած դասական հեղինակների քննադատութեան գործին, որից մի թոյլ փորձ կատարել էր զեռ ևս առաջին տարում, ու. Պերճ Պաօշեանի գործքերի վերաբերմամբ մի պատահական աշխատակցի կողմից: Այժմ, այս վերջին երկու տարիներում ու. Նզիշէ Մաղաթեանն է որ այս ամսագրի էջերում տւեց ընդարձակ ուսումնասիրութիւններ ու. Սմբատ Շահազիզեանի և նորոգ հանգուցեալ Ռաֆայէլ Պատկանեանի: Մենք քիչ կը լինենք մեղանշած ճշմարտութեան դէմ, եթէ ասելու լինենք որ հէնց այդ վերջին փորձերով գրականական-գեղագիտական քննադատութեան լուրջ սկսբնաւորութիւն է դնում մեր մէջ:

«Մուրճ»-ի վիպական մասը թելադրում է մեզ մի քանի խօսք ասելու: Այդ մասում մինչ այժմ աշխատակցել են թէ հայ գրականութեան մէջ աւելի վաղուց ծանօթ հեղինակներ և թէ նոր գրողներ, և թէ թարգմանաբար երևացել են այլազգի հեղինակներ: «Մուրճ»-ը հրատարակելու սկզբի ամսից մեր դիտաւորութիւնը այդ նկատմամբ այնպէս էինք յայտնել, թէ աւելի ուշք կը դարձնենք մեր ինքնուրոյն հեղինակների, քան թէ թարգմանականների վերայ: Մենք այդպէս էլ վարեցինք, միայն ներկայ 1892 թւականին է որ թարգմանականը զերիշխող էր «Մուրճ»-ի վիպական մասում:

Խնդիրը սա է թէ ինչ տեսակէտ պէտք էր պահպանել «Մուրճ»-ում վիպական գրաւորների վերաբերմամբ, այդ բաժնին զարկ տալու համար։ Վէպեր, ուր արտափայլում են կեանքի նոր հոսանքները և շօշափւում ժամանակակից հասարակական խնդիրները և իդէալները, դոքա են, որ աւելի հետաքրքրել են մեզ, որքանով որ նոքա գրաւոր են գնահատելի տաղանդով։ Բայց ի հարկէ միշտ մեզնից չէ կախաւած եղել այդ ցանկութիւնը իրագործելու։ Արդէս զի ամսագրի վիպական բաժինը իւր նիւթերով, հիմնական ուղղութիւնով և գեղարւեստով մի մարմին կազմի ամսագրում քարոզած մտքերի հետ, պէտք է մի սերունդ որ կրթւած լինի այդ ամսագրի պաշտպանած հայեացքներով՝ ընդհանուր և կենսական խնդիրների ու գեղարւեստի նկատմամբ։ Դորանով բաւական է ասւած, որ «Մուրճ»-ի համար զեռ վաղ է այսպէս ասած՝ իւր վիպասաններն ունենալ իբրև մշտական աշխատակիցներ։ Մինչ այժմ՝ ինչ կարող էինք անել, դա ընտրութեան գործ էր՝ առաջարկւած անթիւ վիպական գրաւորներից ընտրել այնքինչ խրախուսելու արժանի է դատուել և, հնարաւոր եղածին չափ, դէմ կենալ ըստ երեւութին ապագայ չը խոստացողներին։

Թարգմանական վէպերի մէջ առանձնապէս շեշտելու է՝ վրաց գրականութիւնից տւածները։ Մենք կամեցել ենք դորանով հայ և վրացի ազգերի իրար մերձենալու գործին նպաստել, ընտրելով իրար հետ աւելի մօտ ծանօթացնելու ճանապարհը։ Քան թէ իրար վերայ բամբասել և, իրարից անտեղեակ՝ միմեանց ծաղրել, — աւելի լաւ է իրար ճանաչել. և մենք յոյս ունենք որ իրար հետ գրականութեան միջոցով ծանօթանալուց չլը յառաջանայ գրականական փոխադարձ հաղորդակցութիւն և աւելի լուրջ քննադատութիւն, որ հեռու կը լինի նախապաշարումից յառաջացած բամբասանքներից։ Մինչ այժմ թարգմանած երկու վիպական գրաւորների վերայ (Կացիա-Ագամիանի և Ելիսո) գալ տարի կ'աւելանայ, ինչպէս յոյս ունենք, երրորդը (Ելգուջա, գործ Մոշխուբարիձէի)։

Ներուպական վիպասանութիւնից ցաջժմ «Մուրճ»-ը տւել է միայն մէկ նշանաւորը «Ասանց զաւանանքին», որի շարունակութիւնը կը տրւի 1893 թւական։ Այդ վէպով մենք կամեցանք մեր ընթերցողներին հնարաւորութիւն տալ ծանօթանալու հոգեբանական մի

ռոմանի և միենոյն ժամանակ մի վերին աստիճանի բազմակողմանի լուսավորւած հեղինակի գեղարեստական և հասարակական խնդիրների մասին ունեցած հայեացքների հետ:

Ոստանաւոր բանաստեղծութեան մասին մենք ոչինչ չունենք աւելացնելու 1889 թւականին մեր գրածի վերայ, եթէ ոչ այն, որ այժմ ակնյայտնի կերպով տեսնում ենք թէ որքան անհիմն չէին մեր յոյսերը, որ դնում էինք «Մուրճ»-ի այդ բաժնի վերայ: Այդ բաժինը շարունակել է առաջւայ պէս կենդանի մնալ շնորհիւ մեր սկզբնական աշխատակիցների՝ գլխավորապէս պ. պ. Լեոն Մանուէլեանի, Ալ. Մատուրեանի (Արծիւեան), Արշալոյս Մխիթարեանի, որոնց միացել են այն ժամանակներից դէս պ. Յովհաննէս Թումանեանց և պ. Լեւոնեց:

Քաղաքան տեսութիւնը վարւել է միանգամայն նոյն ոգով, ինչպէս և առաջ: Մենք պէտք է սակայն դանդառնենք որ չափազանց բազմազբաղ դրութիւնը մեզ չի թոյլ տւել որ քաղաքական տեսութիւնը ամենայն կանոնաւորութեամբ իւրաքանչիւր ամիս տալինք: Բայց «Մուրճ»-ի ընթերցողները կարող են ապահով լինել որ մեր տեսութիւնից չի վրիպել բարձր քաղաքականութեան վերաբերեալ որ և է կարեւոր դէպք: Բացի դորանից կանոնաւոր կերպով այժմ տանուող Արտասահմանեան քրոնիկլը, բացի իւր առանձին կոչումից՝ մասամբ լրացնում է նաև քաղաքական տեսութիւնը:

Ներկայ 1892 թւականին, շնորհիւ յատուկ աշխատակցի, կարելիութիւն եղաւ երաժշտական բաժին բաց անել և կանոնաւորապէս նորան վարել: Դորա համար մենք պարտական ենք պ. Գրիգոր Նահապետեանցին:

Դառնանք այժմ «Մուրճ»-ի երկու կարեւորագոյն բաժիններին, որոնք ամենասերտ կապ ունեն ամսագրի ուղղութեան հետ՝ առաջնորդողները և Ներքին Տեսութիւնը: Առաջնորդող յօդւածներում մենք շարունակ շօշափել ենք և կը շարունակենք քննութեան առնել մեր կեանքի հիմնաւորագոյն խնդիրները: Այդ յօդւածների ներքին կապը մենք մի ժամանակ մի առանձին յօդւածի նիւթ կը դարձնենք. այստեղ միայն կը շեշտենք, որ նոցանում մենք դնում ենք մեր լաւագոյն մտքերը մեր հասարակական յաւաքդիմութեան խնդիրների վերաբերմամբ:

Ներքին տեսութիւնը անպակաս է եղել. նորա «Ամուսնաց Քրոնիկ»-ում մենք ընթերցողների առաջ դրել ենք ամուսնայ ամենաաչքի ընկնող հասարակական խնդիրները և առանց որ և է տատանմունքի՝ տեւել մեր կարծիքները նոցա մասին: Կարող ենք ասել որ «Մուրճ»-ը ոչ մի դժարութիւն չի կրել՝ առաջադրած խնդիրների նկատմամբ բռնել ամենակտրուկ զիրք, միշտ աշխատելով լինել կարելիին չափ լիակատար, իսկ վիճաբանութիւնների մէջ՝ ազնիւ և անաչառ: Մեր ընթերցողներից բոլրած յաճախակի վկայութիւնները մեզ շատ անգամ համոզել են, որ այդ բաժինը ըստ արժանւոյն դնահատում է ընթերցող հասարակութիւնից:

Այս ամենով մենք չսպառնացինք բոլորը. պ. Գր. Վարդանեանը շարունակեց տալ աշխատութիւններ անտեսական հասարակական խնդիրների մասին. լոյս տեսան մի քանի լուրջ ուսումնասիրութիւններ հոգացին խնդիրների, պանդխտութեան և բանւորների մասին, աշխատակցութեամբ, բացի մեզնից՝ Յ. Սաղաթեւանի, Անուշ. Գալանթարի, Գարեգին Խաժակեանի, և մի շարք տնտեսական յօդածներ մեր երկրի արդիւնաբերութիւններից:

Սորանով մենք կը վերջացնէինք «Մուրճ»-ի անցեալ չորսամսայ գործունէութեան հաշւետւութիւնը, եթէ առիթից չ'օգուէինք ասելու թէ ինչ է մնում մեզ անելու «Մուրճ»-ի արտաքին կերպարանքը ամբողջացնելու համար:

«Մուրճ»-ի արտաքին կազմը լրացնելու համար, և մենք այդ շատ լաւ զգում ենք, — մինչ այժմ պակասել են՝ մի կողմից զաւառական թղթակցութիւնները կամ զաւառական քրոնիկը, և միւս կողմից՝ թղթակցութիւնները Տաճկա-Հայաստանից: Մեր մշտական ընթերցողներին քաջ յայտնի կը լինի, որ մեր այս դանգառը նոր չէ և որ տարիներ առաջ մենք նոյնը ասել ենք: Գաւառական թղթակցութիւնների պակասելը մենք մեկնում ենք նրանով, որ զաւառական ինտելիգենցիայի մէջ դեռ շատ են սակաւ այնպիսի անհատներ, որոնք կարողանան մի ամբողջ նահանգի ներքին գործերին հետամուտ լինել և նոցա ընդհանուր տեսութիւնները տալով՝ ներդրածել տեղական հասարակական կարծիքի վերայ: Եթէ

ինկատի առնելու լինենք, որ լրագրութիւնը իւր արդէն մի քանի տասնեակ տարիների անցեալով դեռ էլի զանդատների շրջանի մէջն է արժանաւոր թղթակիցների նկատմամբ, այն ժամանակ հասկանալի կը լինի ամսագրական թղթակիցների պակասութեան պատճառները: Արկիում կնք որ «Մուրճ»-ին հարկաւոր զաւառական թղթակցութիւնները պէտք է կրեն զաւառական կամ նահանգական տեսութիւնների բնաւորութիւն:

Վերջացնելով մեր տեսութիւնը, աւելորդ չենք համարում մեր ընթերցողների ուշադրութիւնը զարձնել մի կարևոր հանգամանքի վերայ: Ինտելիգենտ հասարակութեան պահանջները «Մուրճ»-ից շարունակ աճում են և մենք ինքներս աշխատում ենք աստիճանաբար լրացնել նկատուած թերութիւնները: Միւս կողմից աճում է նաև նոր աշխատակիցների հոսանքը: Այս ամենը յառաջացնում է այս բնական պահանջը, որ «Մուրճ»-ի ծաւալը մեծանայ, եթէ չենք ուզում որ ամսագրի մի բաժինը փաստի մի ուրիշ բաժնի օգտին: Ինչիւրը սա է, թէ կարող ենք արդեօք «Մուրճ»-ի այժմեան նիւնական կարողութիւնով չայդ պահանջներին բաւարարութիւն տալ: Ճշմարտութիւնը սա է, որ այս չորս տարւայ շրջանում ոչ մի տարւայ հաշիւ չի փակւել առանց զգալի դեֆիցիտի, չընայած որ բաժանորդների թիւը ոչ թէ նւազել է, այլ աճել: Բայց այդ աճումը բաւական չի եղել եղած անհրաժեշտ ծախքերը ծածկելու համար: Եւ չընայած դորան՝ «Մուրճ»-ի չայս չորսամեայ համադրումարը անցնում է մեր խոստացածի սահմաններից. մեր խոստացածն է եղել տարւայ ընթացքում տալ ամենապակասը 8 թերթ, այսինքն տարեկան 1536 երես, և առ ուսուէին միայն 10 թերթ, կամ տարին 1724 երես, բայց մեր տւածը ոչ մի տարում չի եղել խոստացածի նւազագոյնը, այլ միշտ աւելի: Այս հանգամանքը հարկ է դնում «Մուրճ»-ին համակրողների և մանաւանդ այդ ամսագրի տւածից աւելին պահանջողների վերայ՝ աշխատել «Մուրճ»-ը տարածել իրանց շրջաններում և չը բաւականանալ ձրի խորհուրդներով:

ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ:

Զ Ո Ւ Թ Ա Կ

(ԷՏԻԻԴ)

Գ Է Ո Ր Գ Զ Ո Ւ Բ Ա Ր Ի

Ն... քաղաքի զատարանի փոքրիկ կիսամութ դահլիճը պարպ-
ւում էր. քրէական գործերի սիրահար ամբոխը ցրւելու վերայ էր.
ինքը զատաւորը հանել էր արդէն իւր շղթան և մօտենում էր
մեզ, փաստաբաններին, երբ գրազիրը դարձաւ նրան:

—Պր. զատաւոր, ահա երկրորդ անգամն է, որ մի մարդ ձեզ
է հարցնում... կամենում է տեսնել ձեզ:

—Խնդիրք ունի, արտասանեց զատաւորը անվրդով, յոգնած
ձայնով.

—Ասում է թէ այո:

—Թող դայ:

Գրազիրը մեկնեց. մենք, փաստաբաններս և ինքը զատաւորը,
մնացինք ծխով լցւած սենեակում և շարունակում էինք մեր գործ-
նական խօսակցութիւնը, երբ յանկարծ ծխի գուլաների միջից
լսւեց մի դողդոջուն ձայն.

—Ներեցէք, իմ պարոններ...

Նւ դւան շէմբում երևաց մի երկարահասակ, չոր ու ցամաք կազմ-
ւածքով, ալեզարդ երկար, թափթափւած մազերով, մի մարդ, որի
կողքին կանգնած էր տապաւ տարեկան սեւ, վազվզող աչքերով մի աղջիկ:

—Ներեցէք, պարոններ, կրկնեց ծերունին:

Նա խօսում էր մաքուր խօսակերէն լեզուով:

Մօտ եկէք, դարձաւ նրան զատաւորը:

Ծերունին չըշարժեց անգամ. նա ձգել էր իւր հայեացքը պատերին և անշարժ նայում էր մի կէտի:

—Մօտ եկէք... երևի խնդիրք ունէք... մա... նա այլ ազգի է և ռուսերէն չէ հասկանում, դարձաւ ինձ դատաւորը, խնդրեմ թարգման եղէք:

Սենեակում տիրել էր լռութիւնը. ներկայ եղողները հետաքրքրւած էին. ես մօտեցայ ծերունուն. նա արձանացած կանգնած էր դռան շէմքում և տրորում էր իւր սև, լայն, հնացած գլխարկը. նրա հագուստը աղքատ և ցնցոտի էր. նրա թուխ, սևացած երեսը ծածկւած էր փոքրիկ, նեղ, միմեանց հետ խառնւած կնճիռներով. նրա հայեացքը, նրա անշարժ, մի կէտի մեխւած հայեացքը, նման էր ապակու:

—Դուք խտալացի էք, պարոն, հարցրեցի ես:

—Այո... պարոն... խտալացի եմ... նոր եկայ այս քաղաքը... իսկ սա... իմ թոռս... իմ հանդուցեալ Բելիզիս աղջիկը:

Ծերունու ձայնը դողաց, երեսի կնճիռները լայնացան, իսկ աչքերը մնացին անշարժ, բոլորովին անշարժ:

Փոքրիկ խտալունին նայեց վերաս իւր սև գլորակ աչքերով և վախեցած քաշւեց պապին:

—Երևի խնդիրք ունէք:

—Այո... պարոն... մի խնդիրք:

—Մօտ եկէք... ահա դատաւորը...

—Ձեմ կարող... ես կոյր եմ...

Այդ «ես կոյր եմ»-ը ծերունին արտասանեց մի այնպիսի տխուր, սիրտ մաշող ձայնով, որ բոլոր ներկայ եղողները լարեցին իրանց ուշադրութիւնը, թէև ու մէկը նրանցից չէր հասկանում խտալերէն:

Սենեակում տիրեց խորին լռութիւն:

—Այո... ես կոյր եմ... Մառիեթթա... տար ինձ դատաւորի մօտ:

Պապ ու թոռը մօտեցան սեղանին:

—Ահա 30 տարի է, որ ես չեմ տեսել հայրենիքիս երկնքի գոցը, նրա մեղմ փերեզեայ կապուտակը, նրա ոսկի արևը, նրա լուսնեակը, նրա վառվառղ աստղերը... ես կուրացայ և Աստուծոյ զեղեցիկ աշխարհը դարձաւ ինձ համար մի մութ բանդ, մի խաւար գերեզման և ես... երկար 30 տարիներ ապրում եմ այդ սար-

սափելի խաւարում... Սկզբից այդ պատիժը անտանելի էր ինձ համար... զրկանքը խոցոտում էր սիրտս... քանիցս ինքնասպանութեան միտքը պաշարում էր իսձ... ես վճռում էի մեռնել, բայց խիղճս բողբոսում էր և ես... շարունակում էի ապրել, ապրել առանց լուսնի, զրկած արեւից, կարծես ամբողջ կեանքս լինէր մի երկար, անվերջ գիշեր...

Արտասուքի շիթը փայլեց ծերունու անշարժ, ապակեայ աչքերում:

— Իմ կինը մեռած էր վաղուց... մեռաւ մի օր և մին ու ճար աղջիկս և մնացինք ես և Մարիեթթաս... մնացինք անտէր ու որբ. մենք աղքատ էինք, չոր հացի կարօտ, թէև առաջ... շատ առաջ ես էլ եմ տեսել երջանիկ, բաղլաւոր օրեր..., բայց նոքա անցան, գնացին անդարձ... կուբացայ ես, կուբացաւ և բաղդս... մեր խրճիթը ծախեց պարոնը, որին պատք էի ես մի քանի ոսկի... մնացինք բաց երկնքի տակ... Մառիեթթաս լալիս էր... նա քաղցած էր... երեսոս կարող էր սովամահ լինել... հարկաւոր էր, ուրեմն, ապրուստի միջոցներ դոնել... Երիտասարդութեանս ժամանակ ես ջութակ էի ածում... ջութակս շատ հազւագիւտ ջութակ էր, լաւ հռչակած վարպետի շինած... խրճիթս ծախող պարոնը խղճաց և թոյլ տւեց ինձ վերցնել ինձ հետ ջութակս... և ես... այդ օրից դարձայ թափառական երաժիշտ...

Ծերունին կանգ առաւ, սրբեց իւր բարակ, ճղոտ ձեռով երեսի քրտինքը և կրկին շարունակեց.

Իտալիայից ոտով եկայ Ռուսաստան... Մառիեթթաս էլ գրկիս... շատ քաղաքներ, գիւղեր անցանք միասին... ես ածում էի իսկ թոռս երգում... այգալիսով փող էինք աշխատում. պատահում էր որ օրերով հացի երես էինք տեսնում... բայց այնու ամենայնիւ ապրում էինք... և ահա անցեալ օր, երբ ես ածում էի հրապարակում, ինձ հրաւիրեցին մի տուն... այնտեղ մի քանի հոգի կեր ու խում էին սարգել... գինին արդէն արբացրել էր նրանց. ես ածեցի նրանց համար ամբողջ գիշեր... Մառիեթթաս նստաւ երգում էր և ապա քնեց ծնկներին վերայ... ես ածում էի, երբ մէկը մօտեցաւ ինձ և կոպիտ կերպով լսեց ջութակս... ես շարած վեր կացայ և կամենում էի մօտենալ այդ անպիտանին և յետ առնել

ջուլթակս, բայց ես կոյր եմ... ես դիպչում էի աթոռներին, սեղանին, պատերին, իսկ արբածները հռհռում էին...

— Ջուլթակս... ջուլթակս տեք ինձ, աղերսում էի ես, արտասուքը, կատաղութիւնը, արբածների բարձրաձայն, կուլիտ հռհռոցը խոցելով սիրտս խեղդում էին ինձ... Խլելով ինձնից ջուլթակս, այդ մարդը, կարծես, խլեց իմ հոգիս, կեանքս... 30 երկար, թշառ տարիներ դա իմ միակ լինկերս էր... Ինչ, իմ ջուլթակը... ես սիրում էի նրան, աւելի, ես պաշտում էի նրան... հաւատացէք, պարոն, Մառիեթթայիս և ջուլթակս ես սիրում էի հաւասար, միևնոյն սիրով...

Մերունին տարաւ իւր դողդոջուն ձեռը աչքերին, սրբեց արտասուքի կաթիլները և շարունակեց.

— Իմ ջուլթակը հագազիւտ էր... ամբողջ Ֆլորենցիան գիտէր նրան... մի օր իշխան Ֆռանչեսքո դ'Աքքոսու կինը, Ֆլորենցիայի առաջին գեղեցկուհին, իւր կրծքի վարդը տւեց ինձ իբրեւ պարգև լաւ ածելու համար... հասարակութիւնը բուռն ծափահարութիւններով ընդունեց ինձ... այո, իմ ջուլթակը դիւթիչ էր, նրա մեղեդին թափանցում էր մարդու սրտի ամենախորքը և շարադործի աչքերից անգամ քամում էր արտասուքի կաթիլներ... ջուլթակս գիտէր լալ, ողբալ... ամբոխի առաջ, ամբոխի աչքում դա մի փայտեայ կտոր էր, իսկ երբ ես առանձնանում էի այգեստանում, կամ անտառում իմ ջուլթակը սկսում էր ուրախ երգել, փոքրիկ թռչնակների հետ միասին և նրա քաղցրահնչիւն մեղեդին, նրա փայլալիկը տարածւում էին անտառի խորհրդաւոր լուսնի մէջ... սոխակը անգամ լուում էր և զմայլած լսում էր ջուլթակիս երգը... կամ երբ նստած ծովի ափին ես ձեռս էի առնում ջուլթակս, նա սկսում էր լալ, ողբալ, կարծես, ողբում լինէր իմ անցեալը, իմ թշառ ներկան, իմ կուրութիւնը... այդ բոպէներին ես մոռանում էի որ կոյր եմ, ես սկսում էի զգալ ինձ երջանիկ, բաղտաւոր... այո... ջուլթակս մի ամբողջ աշխարհ էր, աշխարհ սիրոյ, լացի, հառաչների և ուրախութեան... և ահա... ջուլթակս չկայ...

— Գողացան, հարցրի ես վրդոված ծերունու խօսքերից:

— Ոչ... այն արբածները կտորեցին, փշրեցին ջուլթակս...

Եւ ծերունիը երեսայի նման սկսեց հեկեկալ:

Մառիեթթան աւելի ևս պինդ փաթաթեց պապի ոտներով և սկսեց շոյել նրա ձեռները:

—Այո... փշրեցին, կոտրեցին... անդուժ մարդիկ... ոչ... մարդիկ չեն դռքա... այլ դաղաններ... ինչո՞ւ ավր... թող խէին ինձ-նից թշառ կեանքս... էլ ինչո՞ւ է նա ինձ...

Մերուկը ծոցից հանեց մի բան և դրեց սեղանի վերայ. դա ջութակի կոտրածներն էին:

—Ահա, պարոն, իմ խնդիրքը:

—Դուք փող էք կամենում... Ձեր ջութակի գինը, հարցրեցի ես մի փոքր լռութիւնից յետոյ. ծերունին խկոյն չը պատասխանեց. նա երկար նայեց ինձ իւր անշարժ, մեռած աչքերով, տխրօրէն ժպտաց և մի սատիկ դառն ձայնով պատասխանեց.

—Ջութակիս գինը... ո՛չ, պարոն... իմ ջութակը անգին էր... միթէ փողով կարելի է գնել նրա սիրտ հալ ու մաշ անող երգերը, նրա արտասուածից ողբերը, նրա կսկիծը, լացը... ո՛չ... ես կամենում եմ միայն, որ օրէնքը պատժէ չարագործին... կարելի է...

Ես թարգմանեցի դատաւորին ծերուկի խօսքերը, ինչիւրը բոլորիս այդ արկածը ձգեց մի տխուր տրամադրութեան մէջ:

—Այո... ես պատիժ եմ խնդրում, կրկնեց ծերուկը:

Ես իմացայ մի քանի օրից յանցաւորների անունները, մի ինչիւրք գրեցի և մի շաբաթից գործը քննեց հաշտարար դատաւորի մօտ. ծերուկի շահերի պաշտպանութիւնը դատաստանում յանձն առայ նոյնպէս ես:

Դատարանի դահլիճը լցւած էր քաղաքիս ընտիր հասարակութիւնով. կանայք նստացրել էին իրանց մօտ փոքրիկ Մառիեթթային և տալիս էին նրան քաղցրեղէն, փող:

Մերուկ խաւացի-երաժիշտը կանգնած էր մօտս:

Երբ ես վերջացրի իմ ճառը, սենեակում լսւեցան խուլ հեկեկանքներ. ծերուկը լալիս էր:

—Իմ ջութակս... իմ անգին ջութակս, անդադար կրկնում որ նա:

Դատաւորի վճիռը խիստ էր. յանցաւորը վճարեց ծերուկի օգտին 100 բուբլի. խաւացի-երաժիշտը մեքենայաբար լսեց վճիռը,

որ ես թարգմանեցի նրան, մեքենայաբար առաւ փողերը և դանդաղ, շփելով պատերը առաջ տարածած ձեռներով հեռացաւ ինձնից: Մառիեթթան գիմաւորեց նրան և երկուսը կրկին մօտեցան ինձ.

—Շնորհակալ եմ պարոն... այս փողը կապահովացնէ Մառիեթթայիս... գլուխ տուր պարոնին, զարձաւ նա երեխային:

—Եւ Ձեզ, ասացի ես:

—Ի՞նձ... հի... ինձ ոչինչ հարկաւոր չէ... տեսնում էք այս կտորտանքները, ջուլթակիս փշրանքները... սոքա մնացին միայն ինձ... էլ ուրիշ ջուլթակ չի կարող փոխարինել սրանց... ոհ... իմ ջուլթակս...

Եւ ծերուկը ճիշտ մայրական զգւանքով սեղմեց սրտին ջուլթակի կտորտանքները և երերւելով դուրս եկաւ փողոց:

Այդ օրից ի վեր ես էլ չը տեսայ ծերուկ երաժշտին:

ԱՌԱՆՑ ԴԱԻԱՆԱՆՔԻ

ժամանակակից վեպ Հենրիկ Սենկևիչի

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

(Շարունակութիւն ¹⁾)

13 մայիսի.

Կլարան ու Սնեատինսկիները չ'եկան: Սնեատինսկին նամակ էր գրել, որով յայտնում էր, թէ վաղը չ'լը գան, եթէ լաւ եղանակ անի: Այսօր Պլոշովը տալն ու վրայ արեց այնպիսի մի փոթորիկ, որի նմանը այստեղացիք վաղուց է չեն յիշում: Առաւօտեան ժամի տասին մօտ յանկարծ մի տօթաշունչ քամի վեր կացաւ ու այնպիսի թոզ ու դուման բարձրացրեց, որ արևն այլ ևս չէր երևում: Հողմը շարունակ չէր փչում, այլ մէկ բոլորովին նստում էր, մէկ էլ յանկարծ բարձրանում և այնպիսի սաստկութեամբ, որ ծառերը ձկում էր՝ հասցնում գետնին: Այդպէս շարունակեց մինչև կէսօր: Մեր գեղեցիկ ծառաստանը թնդում էր կոտրատւող ձիւղքերի ծարձատիւնից և մէզ ու փոշիի մէջ պտոյտ-պտոյտ էին զալիս հազարաւոր պոկւած տերեւներ: Ահագին կակղին, որ կանգնած էր աջակողմեան Ֆլիգէլի առաջ, որի մէջ մեռաւ լատիշ դպիրը, ճեղքւեց՝ մէջից երկու եղաւ: Անտանելի տօթ էր. քիչ էր փնում մարդ խեղդ-

¹⁾ Տես «Սուրճ» 1892 թ. №№ 1, 2, 3, 4, 5, 6, 7-8, 10 11:

էր օգի պակասութիւնից. մեզ թւում էր, թէ այդ հողմը հրաշէկ հնոցից էր գուրս գալիս և ածուխի գոլորշիներ էր բերում հետը: Ինձ, որ Խապիպում ընտելացել եմ սիրովկոյին, այդ շատ էլ չէր ազդում, բայց պանի Յելինան շատ էր տանջւում, նրա հետ էլ Անելլան, իսկ հօրաքոյրս «գորս գու պատւիրեցիր» նախատեց կառավարիչ Խապտովսկուն պարտէզում կատարող աւերածի պատճառով: Դիւրաբորբոք շեմստիչը, որի ականջները անշուշտ շատ քաշած կը լինեն ուսումնարանում Հոմերոսի պատճառով, ինչպէս երևում էր չէր մոռացել ոչ Ողիսականը, ոչ էլ այն, որ իւր բերնումն էլ լեզու կայ, որովհետև պատասխանեց հօրաքոյրս, թէ, ի՞նչքը Եօլը ¹⁾ լինէր, ոչ նրա կալածների կառավարիչ կը դառնար, ոչ էլ անարգար նախատինքների կ'ենթարկէր նրա կողմից: Հօրաքոյրս այս անգամին տեղի տեց կարծեմ զլիսաւորապէս այն պատճառով, որ երկնքի կողմից նոր սպառնալիքներ էին երևան գալիս: Ահօրից յետոյ օդը յանկարծ բոլորովին խաղաղւեց, բայց դրա փոխարէն սկսեցին կուտակել աֆիւի վիթխարի շեղջեր՝ մերթ սաթի պէս սև, մերթ՝ միջուկը պղնձագոյն ու շուրջը ոսկերանգ: Երբեմն դիշերաց պէս մթնում էր, այնպէս որ պանի Յելինան խնդրում էր ձրագ վառեն, երբեմն էլ նորից երկիրը լուսաւորւում էր չարագուշակ շաւադոյն ցոլքով: Ահողջ բնութիւնը կարծես ահ ու գողի մէջ էր: Պան Խապտովսկին վազ տեց ագարակը, որ հրամայի՝ տաւարը դաշտից տուն բերեն, բայց, ինչպէս երևում էր, նախարարածները իրանք հրամանն ստանալուց առաջ քշել բերել էին նախիրը, որովհետև մենք շուտով լսեցինք կովերի աղիողորմ բառանը, որ փութորկից առաջ տիրող խաղաղութեան մէջ հասնում էր մեզ աղաւալի գոմանոցից: Հօրաքոյրս վերցրեց լօրէտեան (loretansky) զանգա՛ն ու սխեց սենեակէ սենեակ ընկած, որքան ուժովն էր, զանգահարել: Յս մինչև անգամ փորձ չարեցի բացատրել նրան, որ այդ տեսակ անշարժ մթնոլորտի մէջ զանգահարութիւնը աւելի կարող է գրաւել քան մղել շանթերը և չը նայելով, որ շատ լաւ գիտէի, թէ նրան այդ գէպքում ոչ մի բանով օգնել չեմ կարող, ես էլ հետը սենեակէ սենեակ ման էի գալիս, որովհետև ամաչում

¹⁾ Հոմերի Աստուածը՝ Կուեայ գիւցաբանութեամբ:

Մ. Փարզմ.

էի թողնել, որ նա մենակ կեանքը վտանգի ենթարկէր: Հօրաքոյրս միանգամայն հիանալի էր, երբ գլուխը բարձրացրած խիզախաբար նայում էր ամպերի այդ սև ու շառագոյն շեղջերին և սաստում էր նրանց իւր զանգակով: Ձէի ավստսում, որ գնացի նրա հետ սենեակները պտտելու, որովհետև առաջիս կարծես մի խորհրդանիշ պատկեր էր կանգնած, - այն ժամանակ, երբ ամեն ինչ զողում է ամպրոպից, սարսափահար դեռին է տապալւել ու պապանձւել, միմիայն հաւատն է, որ վախ չի զգում, կռւի է կանչում ու զանգահարում է: Այդ, ինչ էլ լինի, անհուն զօրութեան տարր է մարդկային հոգու մէջ:

Մենք վերադառնալով, երբ որ առաջին որոտմունքները սկսեցին թնդացնել ամբողջ երկնակամարը: Մի քանի բոպէից յետոյ ամպի գոռոցը անբնդհատ դարձաւ: Ինձ այնպէս էր թւում, թէ երբ որոտը զլորւում է ամպեղէն կոտորի վրայով, կոտորը սրահող զերանները խորտակւում են ու այդ բոլորը միասին անասելի դղրդոցով թափւում է գետի: Կայծակը խփեց առաջ ծառատանի ծաղրի լճակին, յետոյ իսկոյն կրկին խփեց աւելի մօտիկ այնպէս, որ մեր տան պատերը հիմքից սասանւեցին: Մերոնք սկսեցին աղօթել, իսկ ես մի բոպէ սաստիկ անախորժ դրութեան մէջ էի, որովհետև ինձ թւում էր, եթէ նրանց հետ միասին աղօթեմ, փարիսեցիութիւն կը լինի իմ կողմից. եթէ չ'աղօթեմ, արածս կը նմանի անբարեկիրթ իմաստակի պարծենկոտութեան, որը ինկատի չի առնում ընդունւած գեղջկական սովորութիւնը և մանաւանդ կանանց զգացած երկիւղը: Սակայն շուտով նկատեցի, որ սխալւած եմ. եղել կարծելով թէ նրանք վախենում են. նրանց դէմքերը հանդիստ էին և մինչև անգամ զւարթ: Անշուշտ այդ սովորական աղօթքը նրանց այնպիսի զօրաւոր վահան էր թւում. բոլոր վտանդների դէմ, որ վախ ասած բանը նրանք չէին կարող զգալ: Մի ուրիշ բան էլ անցաւ այդ ժամանակ մտքովս, այն է՝ որքան խորթ հոգի է իմ հոգին այդ երեք լեհ կանանց մէջ, որոնցից իւրաքանչիւրը ինձնից տասնապատիկ քիչ բան զիտէ, բայց մարդկանց սովորական չափով աստ անգամ աւելի արժէ քան ես: Նրանք նման են այնպիսի զրքերի, որոնք համեմատաբար քիչ էջեր ունեն, բայց լի են սլարդ ու որոշ կանոններով, մինչդեռ այն բոլոր հատորներ-

րում, որոնցից ես կազմած եմ, չը կայ և ոչ մի աներկբայելի ճշմարտութիւն և ես առաջինը պատրաստ եմ երկմտել նրանցում պարունակւած ճշմարտութիւնների վերաբերմամբ:

Բայց այդ միտքը կարճ տեւեց, որովհետեւ նրան ցիրուցան արեց փոթորիկը, որ քանի զնում աւելի սարսափելի ծաւալ էր ստանում: Հոգմը նորից փչեց այնպիսի սաստկութեամբ, որ նրա թափից ամբողջ ծառաստանը փռւում էր գետին: Երբեմն-երբեմն քամին յանկարծ դադարում էր, և այն ժամանակ տարափ էր տեղում երկնքից: Զօկ-ջոկ կաթիլներ չէին երևում, այլ ջրի անընդհատ լարեր, որոնք կապում էին երկինքը երկրի հետ: Պարագլխի ծառուղիները յորձանահոս հեղեղատներ դարձան: Ժամանակ առ ժամանակ հոգմի անակնկալ, ահաւելի շունչը ցիր ու ցան էր անում, փոշի էր դարձնում երկնքի ու երկրի մէջ փառ կապած ողջ ջուրը և այնպիսի մէկ ու մաստիսող էր պատում երկիրը, որ մասող մարդու աչք կոխէիր՝ չէր տեսնիլ: Արոտի խլացուցիչ ումբակոծութիւնը ամենեւին չէր դադարում: Մթնոլորտը յագեցած էր էլեքտրականութիւնից: Երակս ծանր էր զարկում. սենեակներումն անգամ զգացւում էր փոթորկի գրգռիչ հոտը, որ շանթի հարւածներից է յառաջանում: Ի վերջոյ, հետեւելով բնութեան տարրերին, իմ մտքերն ու իղձերն էլ կապները կարեցին: Փոթորիկը մոռացաւ ու միայն Անեկիային էի տեսնում առջևս. գլուխս բոլորովին կորցրեցի և մօտենալով նրան ասացի.

— Ուղձում ես փոթորկին նայել:

— Ինչու չէ, պատասխանեց նա:

— Գնանք այն սենեակը... Այնտեղ վենետիկեան լուսամուտ կայ:

Նա եկաւ ինձ հետ և մենք կանգնեցինք պատուհանի մօտ: Այդ րոպէին խաւարը աւելի սաստկացաւ, գրեթէ կատարելապէս մթնեց, բայց մի քանի վայրկեան անցած խաւարի սև քողը պատռոտեցին սլիտակ ու շիկակարմիր փայլակներ՝ բանալով երկնքի խորքը և միևնոյն ժամանակ լուսաւորելով մեր երեսներն ու ջրով հեղեղւած երկիրը: Անեկան հանգիստ էր, միայն թէ ամեն փայլատախումբից յետոյ ինձ աւելի տենչալի էր թւում:

— Ձեք վախենում, հարցրի ես շշնջաձայն:

— Ոչ...

—Ձեռքդ տուր ինձ...

Նա զարմացած նայեց ինձ վրայ։ Մի րոպե ևս՝ և ես կը գրկէի նրան ու շրթունքներս կը սեղմէի նրա շրթունքներին, իսկ յետոյ ինչ ուզում էր լինէր, թէկուզ Պլոշովը գետնի տակն երթար։ Բայց նա վախեցաւ—հէ փոթորկից—այլ իմ դէմքի արտայայտութիւնից ու շշուկիցս, և շտապով հեռանալով պատուհանից՝ վերադարձաւ այն սենեակը, ուր նստած էին հօրաքոյրս ու իւր մայրը։

Մնացի մենակ՝ ստորացման ու զայրոյթի զգացմունքով։ Ես անտարակոյս ի չարը գործ կը դնէի Անեւկայի վստահութիւնը, բայց այնուամենայնիւ ինձ թւում էր, թէ նա իւր անվստահութեամբ վիրաւորանք հասցրեց ինձ։ Վճռեցի այդ զգացնել տալ նրան։ Այդպիսի տրամադրութեան մէջ ես դժւարութեամբ կարողացայ վերականգնեցնել հոգեկան հաւասարակշռութիւնս. մի ժամի չափ մնացի կանգնած պատուհանի առաջ ապուշի պէս նայելով շլացուցիչ փայլալներին։ Մինչ այդ մթութիւնը հետզհետէ փարատուում էր, եղանակը հետզհետէ պարզւում էր և ի վերջոյ տմպերը պատուելիքն ու նրանց բացւածքից փայլեց արեւը, որ կարծես լողարանից էր դուրս գալիս և զարմանում էր տեսնելով փոթորկի պատճառած աւերմունքները։

Իսկ փոթորկիկը շատ մեծ աւերած էր արել. պարտէզի ծառուղիներով դեռ ևս հոսում էր դեղնագոյն ու փրփրալից անձրեւաջուրը, որի երեսին ցից-ցից լողում էին կոտրատւած ձիւղքեր։ Տեղ-տեղ երևում էին տապալւած ծառեր։ Իսկ կանգուն մնացածներին շատերի բների վրայ հեռուից նշմարւում էին ահագին վէրքերի նման պոկւածքներ։ Ուր նայում էիր՝ կործանումն էր ու աւերած որպէս թէ պատերազմից յետոյ։

Երբ որ ջուրը մի քիչ նստեց, գնացի դէպի լճակները, որպէս զի աւելի մօտիկից տեսնէի աւերածը։ Յանկարծ ծառաստանը մըրջիւնանոցի կերպարանք ստացաւ։ Ինչ որ մարդիկ ահապին բազմութեամբ սկսեցին զարմանալի եռանդով ու զւարճութեամբ կտրատել բեկբեկւած ձիւղքերը և ջարդել տապալւած ծառերը։ Դուրս եկաւ, որ դրանք անտուն զիւղացիներ էին, որոնք սեփական անտառ չունեն, և կացիներն առած՝ փոթորկից խորատկւած ցանկապատովը ներս էին մտել իրանց համար ցախի պաշար հաւաքելու։

Իսկապէս ասած, այդ իմ հոգս չէր ամենեւին, բաց որովհետեւ նրանք այդ առանց թոյլտուութեան էին անում ու վայրենաբար և վերջապէս որովհետեւ տրամադրութիւնս վատ էր, սկսեցի դուրս քշել նրանց սաստիկ զայրոյթով, որ քանի դնում այլ ևս սաստկանում էր նրանց դիմադրութիւնից: Արդէն այնտեղ էի հասել, որ առաւելում էի շինական տանուտէրին կանչել, երբ յանկարծ յետեւս կողմից լսեցի՝ ինձ համար աշխարհքիս ամէնաքաղցր ձայնը, որ հարցնում էր Ֆրանսերէն՝

— Միթէ քնաս կը լինի մեզ, Լէօն, որ դրանք պարտեղը մաքրեն:

Շուռ եկայ և տեսայ Անեկային՝ գլխին գլխաշոր կապած: Նա եր'ու ձեռքով բարձրացրած պահում էր հագուստը, այնպէս որ մինչև պճեղները բաց էր արել բարձր կօշիկներ հագած փոքրիկ ոտները, և մի քիչ առաջ կռացած՝ նայում էր ինձ կարծես խընդրական հայեացքով:

Նրան որ տեսայ՝ բարկութիւնս ձեռաց-ձեռ նստեց: Ես մոռացայ սիրտս մի քիչ առաջ տրորող դառն զգացմունքները, հիացած նայում էի նրան ու աչքս չէր կշտանում նայելուց:

— Այդպէս ես հրամայում, հարցրեցի ես:

Ու դառնալով դէպի գիւղացիներն՝ ասացի:

— Շնորհակալութիւն արէք աղջիկ-պարոնին ու ցախը կիտէք՝ տարէք:

Այս անգամին հրամանս սիրով կատարեցին: Ոմանք, անշուշտ չիմանալով թէ ով ինչ գիրք ունի մեր ընտանիքում, շնորհակալութիւն անելիս նրան «jasna panienka» ¹⁾ էին անւանում, որ ինձ անասելի հաճոյք էր պատճառում: Եթէ Պրոշովն իմն լինէր, նրա խօսքովը թոյլ կը տայի, որ ամբողջ ծառաստանը կտրեն՝ տանեն: Կէս ժամւայ մէջ, ինչ որ փոթորիկը կտրատել՝ ջարդել էր, սրբեցին՝ տտրան և ծառաստանը աւելի ուրախ կերպարանք ստացաւ: Անեկայի հետ ծառուղիներով ման գալով անթիւ ծիծեռնակներ ու ուրիշ թռչուններ դտանք, որոնք կամ բոլորովին սաստկոտել էին

¹⁾ Լեհերէն pani (խանում) ասում են մարդատէր կնոջ, իսկ panna և նրա նւագականը՝ panienka (խանրաջի) — օրիորդին:

փոթորկից կամ կիսամեռ էին ու այնպէս թրջւել էին, որ ջուրը ծլծլում էր վրաներիցը: Նրանց որ վերցնում էի զեանից ու տալիս Անեկային, ձեռքս կաշում էր նրա ձեռքին, նայում էի նրա աչքերին և ես դարձեալ լաւ էի զգում ինձ: Երէկան իդիլիան նորից սկսեց մեզ համար և նրա հետ միասին սկսեցին առաջանալստ յարաբերութիւնն ու ուրախութիւնը: Սիրտս հրճւում էր, որովհետեւ ես տեսնում էի այն, ինչ որ Անեկան չէր տեսնում, այն է՝ որ մեր իբր քոյր-եղբայրական յարաբերութեան մէջ կրկնապատիկ աւելի քնքշութիւն կար քան կարող էր և պարտաւոր էր լինել թէկուզ ամենագորովալից ազգականների մէջ: Կատարելապէս հաւաստի էր ինձ համար, որ նա ինձ սիրում է անգիտակցաբար, բաց սիրում է բոլորովին այնպէս՝ ինչպէս ես նրան: Այդպիսով իմ յոյսերի ու ցանկութիւնների մեծ մասը կատարւած էր, մնում էր ինձ միայն այնտեղ հասցնել, որ նա գիտակցէր ու հասկանար իւր զգացածը:

Այս բոպէիս որ դրա մասին մտածում եմ, երջանկութիւնից բաբախող սրտով մտաբերում եմ, որ մի ժամանակ այս յիշատակարանումը գրել եմ, թէ աշխարհումս ոչ մի կին չի կարող զիմադրել այն տղամարդուն, որ սիրելի է իւր սրտին:

15 մալիսի.

Մեր հիւրերը այսօր եկան և ոչ երէկ, ու շատ էլ լաւ արեցին, որովհետեւ մինչև այսօր գետինը դեռ կարգին չէր չորացել և այսօր եղանակը հիանալի էր: Մայիսի տասնըհինգը միշտ իմ կեանքի ամենայիշատակաւոր օրերից մէկը կը լինի: Այժմ արդէն կէս գիշերից անց է. սակայն քնած չեմ և չեմ պառկում քնելու. քունս բոլորովին փախել է. զգայութիւններս այն աստիճան գրգռւած են, որ յոգնութիւն ամենեւին չեմ զգում և մտադիր եմ մինչև առաւօտ շարունակ գրել: Աշխատում եմ միայն, որ վերջից չը սկսեմ ու ամեն բան կարգով գրի անցնեմ: Արդէն բաւական վարժեւել եմ յիշատակարան գրելում, այնպէս որ այդ շատ էլ զժւար չէ ինձ համար:

Հօրաքոյրս կառքը շատ վաղ ուղարկեց Մեհապինսկիների ու Վարաչի յետեից, այնպէս որ արդէն կէսօրից առաջ նրանք Պլո-

շովուճն էին: Մեհաօրինական ու Կլարան շատ ուրախ-զւարթ եկան ու ծաերի պէս ճըլ-ըլում էին: Երևում էր, որ շատ մեծ զւարճութիւն էր պատճառում նրանց հիանալի եղանակն ու իրանց արած ճանապարհորդութիւնը: Ի՞նչ հազուատներ էր հագներին, ի՞նչ ֆանտաստիկական գլխարկներ՝ գլուխներին: Կլարայի շերտ-շերտ ու բացգոյն շորը շատ էր սազում նրան, որովհետև այդ հազուատով նա սովորականի պէս ահագին չէր երևում: Նկատեցի, որ Անելկան հէնց առաջին բոպէից ուշի ուշով զննում էր նրան ու կարծես զարմացել էր տեսնելով նրա գեղեցկութիւնը, որի վերաբերմամբ նրան զրեթէ ոչինչ չէի ասել Կլարայի մասին խօսելիս: Այդ դիտմամբ չի եղել, այլ ուղղակի նրանից, որ իմ ուշ ու միտքս բոլորովին գրաւած է Անելկայով, — քնացած բաները՝ որը մտքովս չի անցնում, որն էլ սկի չեմ տեսնում: Այ՛ օրինակ, չը նայելով, որ երկու անգամ եղել եմ Մեհաօրինակներին մօտ, բացց միայն այժմ Պլոշովում նկատեցի, որ սրանի Մեհաօրինական մագերը կարճ խուզել է, որ պէտք է ասած նրան շատ է սազում: Այդ բացգոյն ու ճակատի վրայ թափւած ցցունքը նրան խիզախ ու կարմրաթուշիկ պատանու տեսք է տալիս: Այժմ ես ու նա շատ բարեկամ ենք իրար հետ: Մի ժամանակ նա Անելկայի պատճառով այնքան թշնամացել էր ինձ հետ, որ արիւնս տալին՝ կը խմէր: Սակայն յետոյ մարդը, ինչպէս երևում է, պատմել է նրան, թէ որքան եմ տանջւել, և քանի որ կանայք առհասարակ սաստիկ թուլութիւն ունեն դէպի այն մարդիկ, որոնք տանջւել են սէրից, նա ներել է իմ բոլոր մեղքերն ու սկսել է քաղցր սրտով վերաբերւել ինձ: Այդ սիրունիկ, կայտառ վարմունքի մէջ անբռնազբօսիկ կնոջ ներկայութիւնը շատ օգնեց Անելկայի ու Կլարայի մէջ սկզբում տիրող սառը չարաբերութիւնների դէպի լաւը փոխելուն: Ինչպէս նկատեցի, հօրաքոյրս, որ իրան երախտապարտ է զգում Կլարային, նրան չափից վեր սրտազին ընդունեց, իսկ Անելկան ընդհակառակը, չը նայելով իւր վերին աստիճանի քաղաքավարի բնաւորութեանն ու բնածին քաղցրութեանը, կարծես այլալլած լինէր ու մի քիչ բռնազբօսիկ տրամադրութեան մէջ: Այդպէս տեսց մինչև նախաճաշ, երբ ընդհանուր ուրախ խօսակցութեան մէջ նա ու Կլարան մի քիչ մօտիկացան իրան: Կլարային ապշեցրեց Անելկայի դեղեցկութիւնը

և քանի որ նա չափից վեր պարզ է ու սովորել է արտայայտել իւր մտքերը արտիստին յատուկ ազատութեամբ, այժմ էլ առանց քաշու- ու Անեղկային յայտնեց իւր հիացմունքը, բայց այն գողտրիկ կերպով լի այն աստիճան անկեղծ ոգևորութեամբ, որ այդ չէր կարող չը շահել Անեղկայի սիրտը: Պանի Յելինան, որ ներկայ էր նախա- ճաշին, այդ գովասանքները լսելով քիչ-քիչ ուռում-փքում էր և թէպէտ այդ առաջին անգամն էր կեանքումը, որ ժամանակ էր անցկացնում արտիստական աշխարհին պատկանող մի կնոջ հետ, հետզհետէ աւելի ու աւելի քաղցր աչքով էր սկսում նայել Կլարային:

Վերջը նա դարձաւ Կլարային ու ասաց, որ թէև իրան չի սագիլ, բայց պէտք է ասէ, որ Անեղկան հէնց փոքրուց շատ աստ- ղով երեխայ էր և, այն ժամանակեայ սիրունութեանը նայելով, հիմա պէտք է տասնապատիկ աւելի գեղեցիկ լինէր: Մնեատինակի- ներն էլ խառնեցին խօսակցութեան մէջ: Մարդը խսկոյն սկսեց վիճել Կլարայի հետ կանանց զանազան տիպերի մասին և սկսեց դատողութիւն տալ Անեղկայի տիպի ու նրա էսթետիկական կառա- րելութեան մասին այնպիսի ծիծաղաշարժ օբյեկտիւութեամբ, կար- ծես Անեղկան պատից կախ արած պատկեր լինէր և ոչ թէ կեն- դանի ու ներկայ եղող մի անձնաւորութիւն: Իսկ նա, լսելով իւր մասին այդպիսի դատողութիւններ, այնպէս էր կարմրում ու քաշ գցում երկար ու խիտ թերթեւները, կարծես փոքրիկ աղջիկ լինէր և այդպիսով աւելի ևս սքանչելի կերպարանք էր ստանում:

Նա չէի խօսում, բայց մտքումն համեմատում էի այդ երեք կանանց դէմքերը և աշխատում էի նայել նրանց վրայ նոյնպէս օբյեկտիւ կերպով, այսինքն մի կողմ թողնելով այն հանգամանքը, թէ ես Անեղկային անչափ սիրում եմ և հետևաբար նա բոլորովին բացառիկ էակ է ու այնքան գրաւիչ, որքան չի կարող լինել ոչ մի ուրիշ կին: Սակայն համեմատութիւնը, մինչև անգամ այդպիսի պայմաններում, նրա համար նպաստաւոր հետևանք ունեցաւ: Պանի Մնեատինակի գլուխը, մանաւանդ այժմ որ մազերը խուզել է, շատ գողտրիկ է, բայց այդպիսի գլուխ կարելի է զանել ամեն մի անգ- լիական «keepsake»-ում: ¹⁾ Կլարայի գեղեցկութիւնը կազմում

¹⁾ Շքեղ պատկերներով զարդարւած հրատարակութիւն: Ծան. թ.

են նրա մեղմ դիմադժերը և գլխաւորապէս նրա կապուտակ աչքերը ու թափանցիկ կաշին, այնպիսի կաշի, որ առհասարակ ունենում են գերմանուհիները. սակայն եթէ նա արտիստ չը լինէր, որի շնորհիւ մարդ նրան նայելիս միշտ միւսնոյն ժամանակը մոռաւում է և՛ երաժշտութեան մասին, նրա դէմքը ամենաշատը միայն սիրուն կարելի էր անւանել: Անելկան ոչ միայն կանոնաւոր դիմադժեր ունի, ոչ միայն մարմնացումն է չափազանց ազնիւ ճաշակի տէր գեղարւեստագէտի գլխում յղացած զաղափարի, այլ և մէջը այնպիսի մի անհատական բան ունի, որ չի կարող ոչ մի ընդհանուր տիպի յարմար գալ: Գուցէ այդ անհատական աւանձնացատկութիւնը նրանումն է կայանում, որ նա ոչ թուլս լինելով, ոչ շէկ, Ֆիզիկապէս թուլի տպաւորութիւն է դործում, իսկ բարոյապէս շէկի. գուցէ դրա պատճառն այն է, որ համեմատաբար փոքրիկ դէմքի հետ շատ վարսառատ է, բայց ինչ էլ լինի, նա իր տեսակում անդուդական բան է: Նա այդ կողմից մինչև անգամ տիկին Ռեխսից էլ բարձր է: Տիկին Ռեխսը անաղարտ գեղեցիկ էր, բայց արձանի գեղեցկութեամբ. նա զարթեցնում էր իմ մէջ զարմանք և կիրք, Անելկան, բացի այդ, ծնեցնում է և իդէալիստի զգացումներ, իդէալիստի, որը հիւանում է նրա դէմքի պօէզիայով և այն էլ նոր, մինչև այդ ժամանակ չը տեսնւած, պօէզիայով:

Բայց համեմատել անգամ չեմ ուզում այդ երկու չափից վեր տարբեր էակներին: Նախաձաշի ժամանակ ես անձնատուր եղայ այդպիսի խորհրդածութիւնների, նախ այն պատճառով, որ խօսակցութիւնը այդ տեսակ բաների մասին էր և երկրորդ, որ Անելկայի գեղեցկութեան անալիզը ինձ միշտ մեծ զւարճութիւն է պատճառում: Հօրաքոյրս ընդհատեց այդ խօսակցութիւնը, որովհետև համոզւած էր, որ ինքը, իբրև հիւրասէր տանտիկին, պարտաւոր է Կլարայի հետ խօսել վերջին կոնցերտի մասին: Նա շատ խօսեց և շատ լաւ խօսեց. ես ենթադրեմ անգամ չէի կարող, թէ նա այդքան տեղեակ է երաժշտութեան. բացի այդ, նա իւր հաճոյախօսութիւնները ասում էր այնպիսի grande—dame'ային քաղցրութեամբ, այնպիսի կոկ և սիրուն ձևով, ինչպէս կարողանում են հաճոյախօսել միայն աւագ սերունդի մարդիկ, որոնք մասամբ իւրացրել և մինչև այժմ պահպանել են տանութեւորդ դարի ոգին:

Մի խօսքով ես զարմացմամբ նկատեցի, որ իմ շիտակախօս հօրաբոյրը ուզած ժամանակը կարողանում է միտքը բերել կեղծ ծամերի ու կեղծ խալերի (mouche) դարը: Կլարան, որի սիրտը դրաւում էր այդ, նրանից յետ չը մնաց:

—Վարչաւացում, ասաց նա, ես միշտ լաւ կ'ածեմ, որովհետեւ հասարակութիւնը ինձ հասկանում է, բայց ամենից լաւ ես նւագում եմ ծանօթների փոքր շրջաններում, ուր ամենքը ինձ համակրելի են, — և եթէ թոյլ կ'տաք, ես կաշխատեմ ձեզ այդ ապագութեանը նախաճաշը վերջանալուն պէս:

Հօրաբոյրս, որ սաստիկ ուզում էր, որ պանի Յելինան և Անելկան լսեն Կլարայի նւագելը, բայց չէր իմանում, վայելուչ կը լինի արդեօք իւր տան մէջ խնդրել նրան, որ ածի, հիանալի տրամադրութեան մէջ ընկաւ: Ես սկսեցի պատմել Կլարայի Փարիզի դէպիւտների ու Երարի դահլիճում տարած յաղթանակների մասին, Սեհաօրինսկին մանրամասնօրէն հաղորդեց, թէ ինչ են խօսում Վարչաւացում, և այդպէս անցաւ ժամանակը մինչև նախաճաշի վերջը: Երբոր վերկացանք, Կլարան բռնեց պանի Յելինայի բազկաթոռի թւերից՝ նրան հիւրասենեակը տանելու համար ու ռոբի չը թողեց որ իրան փոխարինի, ծիծաղելով ու ասելով, որ անշուշտ ինքը մեր բոլորիցը ուժեղ է և չի վախենում թէ ձեռները կը յոգնեն: Մի րոպէ անցած, նա նստեց ածելու և այս անգամ երևի նրա տրամադրութեանը ամենից շատ համապատասխանում էր Մոցարտը, որովհետեւ մենք լսեցինք «Դոն — ժուանը»: Հէնց առաջին դաշնաձայները հնչեցին թէ չէ, Կլարան բոլորովին կերպարանափոխեց. նա այլ ևս այն սիրուն և ուրախ երեսան չէր, որի հետ մենք խօսում էինք նախաճաշի ժամանակ, այլ կարծես անձնաւորւած սուրբ Յեցիլիա լինէր: Մի տեսակ կապ էր հաստատուում նրա արտաքին տեսքի ու երաժշտութեան մէջ. նրա վրայ իջնում էր ինչ որ հոգեկան լրջութիւն ու ներդաշնակութիւն, որ նրան սովորական կանանցից բարձր էակ էր դարձնում: Այդ միջոցին ես մի դիտողութիւն արեցի, այն է, որ սիրահարւած տղամարդու սիրտը կարողանում է բոբբոքել իւր զգացմունքը մինչև անգամ այնպիսի բաներով, որ նպաստաւոր չեն սիրած կնոջը: Երբոր մտածեցի,

Թէ որքան անընդունակ է իմ Անեղկան այդպիսի Սիբիլա ¹⁾ զառնալ, երբոր տեսայ թէ ինչպէս նա երեխայի պէս, հանդարտ ու կարծես ճնշած հոտած էր դահլիճի անկիւնում, զգացի, որ հէնց այդ պատճառով ևս առաւել եւ՛մ սիրում նրան և որ նա դրանով աւելի ևս թանկ է ինձ համար: Մտքովս անցաւ նոյնպէս և այն, թէ կինը իրօք այնպէս չէ, ինչպէս նրա մասին կարծում են առհասարակ մարդիկ, այլ այնպէս, ինչպէս նրան տեսնում է նրա վրայ սիրահարած մարդը, և թէ նրա բացարձակ կատարելութիւնը, այսինքն նրա կատարելութիւնը ինքն ըստ ինքեան և ոչ ուրիշների անձնական հայեացքների համեմատ, ուղիղ շարաքերական է այն սիրոյ ոյժին, որը նա կարողացել է զարթեցնել իրան սիրողի սրտում: Ժամանակ չունէի երկար կանգ առնելու այդ զաւաիարի վրայ, բայց նա շատ սրտովս եկաւ, որովհետեւ ազօտ կերպով նշմարում էի և այն եզրակացութիւնը, թէ յանուն այդ կատարելութեան կինը պէտք է համաձայնի պատկանել այն սրտին, որը իրան ամենից շատ է սիրում:

Կլարան նւագում էր հրաշալի կերպով: Ես աշխատում էի միւսների դէմքերի վրայ նշմարել, թէ ինչ տպաւորութիւն է գործում նրա նւագումը, սակայն իսկոյն նկատեցի, որ Անեղկան էլ իմ դէմքի վրայ է աշխատում նշմարել կրածս տպաւորութեան արտայայտութիւնը: Արդեօք այդ հասարակ հետաքրքրութիւն էր, թէ անգիտակցական անհանգստութիւն սրտի, որ չի կարող ասել, թէ ինչից է վախենում և սակայն վախենում է: Ես ինձ ու ինձ ասացի, որ եթէ վերջին եսթադրութիւնս իրաւացի լինի, նոր ապացոյց կունենամ, թէ նա ինձ սիրում է: Այդ միտքը սիրաս ուրախութեամբ լցրեց և ես վճռեցի այսօր և եթ այդ հարցի պատասխանը գտնել:

Այդ բոլորից սկսած Կլարայից չէի հեռանում: Աւելի շատ էի խօսում նրա հետ և աւելի քաղցր էի վարւում նրա հետ, քան երբ և իցէ կեանքիս ընթացքում: Գնացինք անտառ. անտառում էլ միշտ նրա հետ էի ման գալիս և միայն ժամանակ առ ժամանակ նայում

¹⁾ Հին Հռոմպիցոց մէջ մարգարէուհի կանաչը Սիբիլա էին կոչւում:

Անելկային, որ գալիս էր քիչ հեռուից Մեհապինսկիների կողքովը: Կլարան հիանում էր անտառից, որ չիրաւի շատ զեղեցիկ էր շնորհիւ առատութեան տերեւախիտ ծառերի, որոնք եղևինների մթագոյն կամարի տակ մի ուրիշ անհամեմատ աւելի ուրախ կամար էին կազմում:

Արեւի լոյսը տերեւների արանքներով առատօրէն թափանցում էր անտառի ներսը և գետնի երեսին բուսնող պտերի (папоротники) վրայ ցոլում էր ոսկեկար ու շողշողուն զործւածքի նման: Չորս կողմից լսում էր կիւռների ձայնը. տեղ-տեղ ծառքութութը (дятель) փորում էր փայտը:

Երբ որ մենք միացանք Մեհապինսկիներին ու Անելկային, ես ինդրեցի Կլարայից, որ երբ տուն վերադառնանք, երաժշտութեան վերածի այս անտառը, արեգակը, ծառերի սօսափիւնը և այս ամբողջ գաբունը: Կլարան պատասխանեց, որ իւր սրտի մէջ երգւում է արդէն մի ինչ որ Frühlingslied, և որ նա կը փորձի նազել այդ զարնանային տաղը: Յիրաւի նրա դէմքի արտայայտութիւնից երեւում էր, որ նրա մէջ մի բան երգւում է: Իսկն ասած՝ նա մեծ տալիղի նման մի բան է, որ խօսում է միայն հնչիւններով:

Կլարայի դէմքը պայծառ էր ու կարմրատախած. Անելկան ընդհակառակը կարծես թմրած լինէր, թէև, ինչպէս երևում էր, ամեն ջանք թափում էր ինքն իրան յաղթելում յետ չը մնալ Մեհապինսկիներից, որոնք չարածձի երեխաների պէս իրանց տւել էին շարութեան և վերջը այնտեղ հասցրեցին, որ սկսեցին իրար յետեից վազ տալ անտառում: Կլարան էլ սկսեց հետները վազ տալ, որ չը պէտք է անէր, որովհետև նրա պէս ահազին հասակ ունեցողի շարժումները չէին կարող ձկուն լինել. և իրօք շատ ծիծաղելի էին նրա շարժւածքները, մանաւանդ նրա լայն ազդրների երերալը, որ ուղղակի կոմիկական էր թւում ինձ:

Երբ որ նրանք իրար յետեից վազ տալով հեռացան, ես ու Անելկան մնացինք մենակ: Իմ տակտիկայի համաձայն ես պէտք է այնպէս անէի, որ նա սկսէր զիտակցել իւր սրտի անհանգստութիւնը, ուստի ասացի նրան՝

— Այսօր, ինչպէս տեսնում եմ, մի բան պատահած պէտք է լինի քեզ, Անելկա. ճիշտ է:

— Ի՞նչ. ոչինչ չի պատահել:

—Մէկ-մէկ ինձ այնպէս է թւում, թէ դու մի բանից անբաւական ես: Կարելի է քո դուրը չի գալիս Կլարան:

—Նա ինձ շատ է դուր գալիս և ինձ ամենեւին չի վարմացնում, որ բոլորը նրանից այդքան հիացած են:

Մեր խօսակցութիւնը ընդհատեց Սնեատինսկիների ու Կլարայի մօտենալը: Տուն վերադառնալու ժամանակ էր: Ճանապարհին Սնեատինսկին հարցրեց Կլարայից, յիշաւ՝ նա այդքան գոհ է Վարչաւա գալուց, ինչպէս ասում է:

—Ամենալաւ ապացոյցն այն է, որ ես չեմ մտածում այստեղից դնալու մասին, — ուրախ-ուրախ պատասխանեց Կլարան:

—Մենք կ'աշխատենք, վրայ բերեցի ես, որ դուք միշտ մեզ հետ մնաք:

Կլարան չը նայելով որ առհասարակ ինչ որ ասում են՝ ուղղակի է հասկանում և սովորութիւն չունի լսած խօսքերին կողմնակի միտք վերադրել, այս անգամին նայեց ինձ հարցական հայեացքով, յետոյ փոքր ինչ շփոթեցած պատասխանեց.

—Այստեղ բոլորը այնքան բարի են դէպի ինձ...

Ես դիտէի, որ ասածիս մէջ փոքր ինչ խաբեբայութիւն կար, որովհետեւ իմ խօսքերը կարող էին սխալման մէջ գցել Կլարային, բայց ես մտածում էի գլխաւորապէս նրա մասին, թէ ինչ տպաւորութիւն կը գործեն նրանք Անելկայի վրայ: Դժբախտաբար ես ոչինչ չը կարողացայ տեսնել. Անելան հէնց այդ բոլորին սկսեց մէր գցել ձեռնոցի կոճակները և զլուխը այնքան քաշ գցեց, որ գլխարկը աչքիցս բոլորովին ծածկեց նրա դէմքը: Սակայն այդ յանկարծական շարժումը ինձ բարենշան բան թւաց:

Վերադարձանք տուն: Հօրաքոյրս ու պանի Յելինան հացը դրել էին տւել ու սպասում էին մեզ: ձաշը տւեց մինչև երեկոյեան ժամի իննը: Յետոյ Կլարան նստեց ածելու և յանպատրաստից յօրինեց ու ածեց իւր «Frühlingslied»-ը: Երևի Պլոշովը իւր դոյութեան օրից երբէք այդպիսի երաժշտութիւն չէր լսել, բայց այս անգամին ես քիչ էի ուշադրութիւն դարձնում երաժշտութեան վրայ, որովհետեւ ուշ ու միտքս բոլորովին գրաււած էր Անելկացով: Ես տեղ ընտրեցի նրա կողքին. մենք նստած էինք կիսամթութեան մէջ, որովհետեւ Կլարան չը թողեց ճրագ բերեն հիւրասենեակը: Սնեատինսկին ձեռքը շարժում էր նւագապետի փայտի պէս. նրա կինը, որին,

ինչպէս երևում էր, այդ շարժումները խանգարում էին, ժամանակ առ ժամանակ քաշում էր նրա թևքից. Անելկան նստած էր անշարժ: Գուցէ նա էլ ինչպէս խորասուզւած էր իւր մտքերի մէջ և չէր լսում գարնան տաղը: Ես համարեա հաւատացած էի, որ նա այդ բույէին մտածում էր իմ ու Վլարայի մասին և մանաւանդ աշխատում էր ինքն իրան մեկնել Վլարային ասած խօսքերիս նշանակութիւնը: Դժւար չէր ինձ համար հասկանալ, որ թէկուզ նա սկի սիրելիս էլ չը լինէր ինձ, թէկուզ ամենեւին չը գիտակցէր էլ, թէ իմ դէպի նա տաճած զգացմունքը եղբայրական սէրից աւելի սաստիկ զգացմունք է, այնուամենայնիւ այժմ որ կասկած է տանում, թէ մի ուրիշը կարող է զրկել նրան իմ սէրից, նրա սիրտը լցւում է ակրութեամբ, զաւնութեամբ ու միայնութեան զգացմունքով: Այն կինը, որ բախտաւոր չէ ամուսնութեան մէջ, փաթաթւում է ամենմի զգացմունքի, թէկուզ բարեկամութեան զգացմունքին, ինչպէս պատուաւոր փաթաթւում է ծառին, և վախենում է զըրկւել այդ նեցուկից: Ինձ համար բոլորովին անկասկածելի էր, որ եթէ այդ բույէին չօքէի նրա առաջին ու խոստովանէի, թէ միմիայն իրան եմ սիրում, չը նայելով որ այդ նրան սարսափի մէջ կը գցէր, սակայն միևնոյն ժամանակը նրա սիրտը կը լցւէր նաև անասելի ուրախութեամբ, որ զգում է մարդ, երբ նորից գտնում է մի կորած թանկագին բան: «Ոսկ եթէ այդպէս է, — մտածեցի ինձ ու ինձ, — լաւ չի լինիլ արդեօք խնդն և եթ խոստովանւեմ, հէնց որ միջոց կը գտնեմ նրան որքան կարելի է քիչ վախեցնել և որքան կարելի է շատ ուրախացնել»:

Եւ իսկոյն սկսեցի մտածել այդ միջոցի մասին, որից կարող էր կախւած լինել գործի յաջողութիւնը կամ անյաջողութիւնը: Ես հասկանում էի, որ պէտք է այնպէս անել, որ Անելկան զինաթափ լինի և զրկւած լինի ինձ մի անդամ ընդ միշտ ի բաց մերժելու հնարութիւնից: Միտքս այդ բույէին ծանր էր բանում, որովհետև խնդիրը հեշտ չէր: Քիչ-քիչ յուզւում էի ու յուզմունքս քանի դնում սաստկանում էր, և զարմանալի բան է, իմ յուզմունքս աւելի Անելիայի համար էր, քան թէ ինձ համար, որովհետև հասկանում էի, որ այդ անաղին յեղաշրջումն կը լինի նրա կեանքի մէջ, և վախենում էի նրա համար:

Մինչ այդ՝ սենեակը ազօտ կերպով լուսաւորեց. լուսինը բարձրացաւ պարտէզի ծառերի յետեւից և տախտակամածի վրայ գցեց չորս պատուհանների պայծառ ցոլքը: Գարնան տաղի ձայները շարունակ հնչում էին դահլիճում: Սոխակը ծառերի թաւտից ձայն էր պահում Կլարային և նրա երգը լսում էր ապակէ բաց դռնից: Սքանչելի երեկոյ էր. — զարունը ու լուսինը, երաժշտութիւնը ու սերը իրար հետ միացած մի հրաշալի ամբողջութիւն էին կազմում: Ակամայից մտածեցի՝ թէ, եթէ կեանքը բախտաւորութիւն չի տալիս, յաճախ տալիս է գէթ պատրաստի շրջանակ բախտաւորութեան համար:

Այդ լուսափայլ մթութեան մէջ սկսեցի աչքերովս որոնել Անելիայի հացեացքը, բայց նա շարունակ նայում էր Կլարայի վրայ, որ այդ բոպէին միանգամայն ուրաւանի տպաւորութիւն էր դործում: Լուսնի շողքը հեռանալէ աւելի ու աւելի խոր թափանցելով դահլիճի մէջ, ի վերջոյ լուսաւորեց Կլարային ու դաշնամուրը, և նա իւր բացգոյն հազուստով այդ ժաճանակ այնպիսի տեսք ստացաւ, կարծես երաժշտութեան արծաթափայլ ողի լինէր:

Սակայն տեսիլքը այլ ևս երկար չը տևեց: Կլարան վերջացրեց իւր զարնան երգը, որից յետոյ խփոյն պանի Սնեատինակին, որ շտապում էր տուն, վերկացաւ որ գնայ: Սնեատինակին ու Կլարան հետեւեցին նրա օրինակին: Որովհետեւ զարմանալի տաք երեկոյ էր, ես առաջարկեցի ոտքով դնալ մինչև խճուղին, որ մեր տանից կես վերստաչափ հեռաւորութիւն ունի: Ես այդ նրա համար արեցի, որ ես ու Անելիան մենակ յետ դառնայինք: Նա չէր կարող հրաժարուել հիւրերին ծանապարհ գցելուց, հօրաքոյրս մեզ հետ ի հարկէ չէր գալ, — կը նշանակի հաշիւս սխալ դուրս գալ չէր կարող:

Պատւիրեցի կառքը առաջուց ուղարկեն և ասեն, որ սպասի մեզ խճուղու վրայ, իսկ մենք էլ քիչ անցած գնացինք կակղիի ծառուղիով, որ Պլոշովի տնից ստանում է մինչև ծանապարհը: Ես թեւս տևեցի Կլարային, բայց գնում էինք բոլորս միախումբ, ուղեկցւած Պլոշովի լճակների գորտերի կրկնոցով:

Կլարան մի քանի բոպէ կանգ առաւ ու սկսեց ականջ դնել այդ համերգին, որ մերթ լսում էր, մերթ հնչում աւելի ևս բարձրաձայն, և ի վերջոյ տասց՝

— Իմ զարնան տաղի վերջաւորութիւնը:

— Ի՛նչ հրաշալի զիշեր է, բացականչեց Սնեատինսկին:

Եւ իսկոյն սկսեց ողել (декламировать) վեճեցի վաճառականից հետեւեալ հրաշալի կտորը.

Մի տես, ինչ անոյշ քընած է լուսնի
 Լոյսն այս բլրի վրայ: Ե՛կ, նստենք այստեղ,
 Եւ թող հեռից մեր լսելիքը
 Թափանցէ ձայնը երաժշտութեան.
 Դիշերային լուռ խաղաղութիւնը
 Յարմար է քաղցր ներդաշնակութեան:

Շարունակութիւնը նա չէր կարողանում մոտբերել, բայց ես չիշում էի և նրա տեղակ վերջացրեցի.

Նայիր, Ջեսիկա, նայիր, տես, ինչպէս
 Երկնականարը ամբողջ սփռած է
 Ոսկեղէն փայլուն շրջանակներով.
 Ամենափոքր շրջանը անգամ,
 Որ դու տեսնում ես, իւր ընթացքի մէջ
 Երդում է իբրեւ հրեշտակ լուսափայլ
 Քերովքէների երկնային պարում:
 Այսպէս լցւած են ներդաշնակութեամբ
 Յաւիտենական, անմահ հոգիներ.
 Բայց մենք չենք լսում, որովհետեւ մեր
 Հոգին ծածկւած է կոպիտ հողեղէն
 Այս հանդերձի տակ ¹⁾:

Կլարան լեհերէն չէր հասկանում, ուստի ես յետոյ ամբողջ հառաւոր կրկնեցի Ֆրանսերէն իմ սեփական յանկարծակազմ թարգմանութեամբ: Նա լսելիս ակամայեց աչքերը բարձրացրեց վերեւ, ու վերջը ասաց՝ նայելով աստղերին.

— Ես միշտ հաւատացած եմ եղել, որ բոլոր աստղերը երգում են:

¹⁾ Թարգմ. Գ. Բարխուդարեանցի. Փորձ, 1879, № II.

Ծանօթ. Թարգմ.

Դուրս եկաւ, որ պանի Սնեատինսկան էլ այդ համոզմունքին է եղել. նա պնդում էր մինչև անգամ, թէ ինքը յաճախ խօսել է զրա մասին իւր մարդու հետ, որը սակայն ամենևին չէր կարողանում յիշել, որ երբ և իցէ այդպիսի խօսակցութիւն եղած լինէր իրանց մէջ: Դրանից մարդ ու կնոջ մէջ վէճ ծագեց, որի վրա ես ու Կլարան բաւական ծիծաղեցինք: Անեկան ամբողջ ժամանակը գրեթէ ամենևին չէր խառնուում մեր խօսակցութեանը: Մտքովս անցնում էր, թէ գուցէ այդ թանկագին էակը հոտում է ինձ վրայ նրա համար, որ ես թեանցուկ եմ արել Կլարայի հետ և զխաւտրապէս նրանով եմ զբաղւած: Այդպիսի բան ենթադրելն իսկ բաւական էր, որ սիրտս լցւէր բերկրանքով: Աշխատում էի սակայն զլուստ բոլորովին չը կորցնել և մտքումս ինձ ու ինձ ասում էի. «Չուր մի՛ ուրախանալ կարծելով, թէ նա հասկանում է, որ ինքը նախանձից է տանջւում. - մի քիչ տխուր է, գուցէ մի քիչ էլ վիրաւորւած է զգում իրան. զրանից աւելի բան կարծելը զուր կը լինի»: Այդ բոպէին հազար հատ Կլարայի պէս արտիստուհիներ կը տայի, միայն թէ կարողանայի ասել Անեկացին, որ ինչ որ կայ՝ չը կայ իմ մէջ, նրան է պատկանում: Մինչ այդ՝ Սնեատինսկին սկսեց խօսել աստղաբաշխութեան մասին: Ես նրա ասածներից հազարից մէկն էի լսում, թէ եւ ասել անգամ չեմ կարող, թէ որքան հետաքրքրում է ինձ այդ գիտութիւնը, որ ըստ իւր էութեան չի կարող ոչ ինքն իրան, ոչ էլ մարդկային ոգուն անհունութիւնից աւելի անձուկ սահման որոշել:

Վերջապէս մենք հասանք խճուղուն, ուր Սնեատինսկիներն ու Կլարան նստեցին կառքը: Մի րոպէ անցած անիւները զորդացին, մեր աղանջին հասաւ վերջին «ցտեսութիւնը» և ես ու Անեկան մնացինք մենակ:

Մենք իսկոյն յետ դարձանք դէպի տուն և երկար ժամանակ գնում էինք լուռ ու մունջ: Գորտերի կրկնոցը արդէն դադարել էր. միայն հեռւից՝ ագարակի շինութիւններից հասնում էին մեր աղանջին գիշերապահների շուրջներն ու շների հաջոցը: Ես դիտմամբ Անեկացի հետ չէի խօսում, որովհետեւ այդ լռութեան բոպէները կարծես մի տեսակ ապացոյց են, թէ իմ ու նրա մէջ ինչ որ մի բան կատարւում է, և Անեկացին մտածել են տալիս այդ բանի մասին: Սակայն վերջը ճանապարհի կիսին ես ասացի.

— Ի՛նչ հրաշալի անցաւ այսօր, չէ՞:

— Ես վաղուց էր այդպիսի երաժշտութիւն չէի լսել, — պատասխանեց Անեկան:

— Եւ սակայն կարծես մի բանից տժգոհ լինէիր. ինչ էլ ասես, չեմ հաւատար, որ ասածս սխալ է: Ես այնպէս ուշադրութեամբ եմ դիտում, թէ ինչ է կատարւում քո մէջ, որ նշմարում եմ քո դէմքի արտայայտութեան ամենաչնչին նշոյլը:

— Այսօր դու պէտք է զբաղւէիր հիւրերով... Դու շատ բարի ես, բայց հաւատացնում եմ, որ ինձ ոչ մի անսխորժ բան չի պատահել:

— Այսօր, ինչպէս և միշտ ես միմիայն քեզնով էի զբաղւած՝ և այդ ապացուցանելու համար, եթէ թոյլ տաս, կասեմ քեզ, թէ ինչ էիր մտածում ամբողջ օրը:

Ու չը սպասելով նրա թոյլտուութեանը, շարունակեցի.

— Դու մտածում էիր, թէ ես մի քիչ նման եմ այն լատիշներին. մտածում էիր, թէ ես քեզ խաբւում էի, խօսելով ինձ շրջապատող անազատի մասին. մտածում էիր վերջապէս, թէ ես իզուր էի քեզնից մտերմութիւն հացում, որովհետեւ արդէն ուրիշ տեղ գտել էի հացածս մտերմութիւնը: Անկեղծ ասա, ճիշտ չե՞ս ասածս:

Անեկան պատասխանեց փոքր ինչ դժւարութեամբ.

— Որ անպատճառ ուզում ես... կասեմ... հա, զուցէ և... բայց այդ կարող էր միայն ուրախութիւն պատճառել ինձ...

— Ի՞նչը կարող էր քեզ ուրախութիւն պատճառել:

— Քո ու Կլարայի մտերմութիւնը:

— Դուցէ և սրտանց ցանկանում եմ նրան ամենայն բարիք, բայց այսպէս թէ այնպէս՝ Կլարան, ինչպէս և միւս բոլոր կանայք, օտար է ինձ համար: Իսկ զիտես ինչո՞ւ:

Այդ որ ասացի, մարմինս սկսեց մի քիչ դողալ, որովհետեւ տեսայ, որ վճռական ընդհանրեցի. մի փոքր ժամանակ սպասեցի, որ Անեկան կրկնէր այդ հարցը, ու յետոյ պատասխանեցի, աշխատելով խօսքերը արտասանել շատ հանգիստ ձայնով.

— Անշուշտ դու ինքդ տեսնում ու գլխի ես ընկնում, որ ես հոգով — սրտով քեզ եմ պատկանում, որ ես միմիայն քեզ եմ սիրել առաջ և այժմ էլ միայն քեզ եմ սիրում ցնորւածի պէս:

Անելկան մեխլածի պէս կանգ առաւ տեղումը: Ես դէմքիս սառելուցը զգացի, որ գունաթափւում եմ: Եթէ խեղճ Անելկան քիչ էր մնում գետինը մոնէր այդ բոպէին, չէ որ ես էլ հոգի ունէի: Բայց լաւ գիտենալով, թէ ինչպիսի կնոջ հետ գործ ունեմ, ես պէտք է շտապէի, որպէս զի նրան զինաթափ անէի, քանի դեռ նա ուշքի չէր եկել ու ինձ ի բաց մերժել:

Ուստի սկսեցի արագ-արագ ասել.

—Մի պատասխանիր ինձ, որովհետեւ ես ոչինչ չեմ ուզում, ոչինչ չեմ խնդրում,—ոչինչ, լսում ես: Ես միայն ուզում էի քեզ ասել, որ դու դրաւել ես կեանքս և որ կեանքս այժմ քեզ է պատկանում: Անշուշտ դու ինքդ էլ նկատած կը լինես այդ, այնպէս, որ իմ ասելովս ոչինչ չաւելացաւ: Ելի կրկնում եմ, ես ոչինչ չեմ տենչում, ոչինչ չեմ սպասում: Դու ինձ վանել չես կարող, որովհետեւ ես ինքս եմ յետ քաշում... Ես չայտնում եմ քեզ այդ միմիայն այնպէս, ինչպէս կը յայտնէի մտերիմ ընկերոջս, քրոջս: Ես զսլիս եմ ու դարդս բաց եմ անում քո առաջ, որովհետեւ չը կայ մի ուրիշը, որի առաջ կարողանայի բանալ սիրտս, գալիս եմ ու ասում եմ քեզ, որ սեւացել է բախտս, որովհետեւ ես սիրում եմ մի կնոջ, որը պատկանում է ուրիշին, և սիրում եմ ցնորւածի պէս, Անելկա ջան, անսահման սիրով:

Արդէն դարպասի մօտ էինք, բայց դեռ չէինք դուրս եկել ծառերի խորը խաւարից: Մի բոպէ ինձ թւաց, որ նա ցօղունակ տուր ծաղկի նման կը թեքւի դէպի ինձ և ես գիրկս կառնեմ նրան, բայց սխալեցի: Անելկան աղաաւելով խօսքերիս առաջին սողաւորութիւնից, յանկարծ սկսեց կրկնել մի տեսակ նեարդայոյզ եռանդով, որ նրանից երբեք սպասել չէի կարող.

— Ես այդ չեմ ուզում լսել, Վէճն. չեմ ուզում, չեմ ուզում, չեմ ուզում:

Ու շտապով մտաւ լուսնեակով լուսաւորւած բակը, կամ ճիշտ ասած փախաւ ինձնից, իմ խօսքերից ու խոստովանութիւններից: Մի բոպէ անցած նա անհետացաւ պատշգամբում, իսկ ես մնացի մենակ անհանգստութեան ու երկիւղի մէջ, աաստիկ խղճալով նրան, բայց միեւնոյժ ժամանակ չաղթական ուրախութիւն զգալով, որ այն խօսքերը, որոնցով մեզ երկուսիս համար սկսւում է նոր կեանք, ար-

դէն արտասանւած են: Եւ լաւ զիտէի, որ ինչ էլ լինէր՝ միանգամից զրանից աւելի ոչինչ չէի կարող սպասել, մինչդեռ այդպիսով այն սերմը, որից մի բան կարող էր բուսնել, զցւեց հողի մէջ:

Տուն որ վերադարձայ Անելկային այլ ևս չը տեսայ: Տեսայ միայն հօրաքրոջս, որ սենեակում տէրողորմեան ձեռքին ման գալով քթի տակին աղօթքներ էր ասում՝ ու մէջ է մէջ էլ ինքն իրան բարձրաձայն խօսում: Եւ խիղջ մնաք բարե ասացի նրան, որպէսզի որքան կարելի էր շուտ գնայի իմ սենեակը: Մտածում էի, որ այսօրւան տպաւորութիւններէս գրի անցնելը կը հանգստացնի սիրտս և ցրւած մտքերս կարգի կը բերի: Բայց ընդհակառակը աւելի ևս տանջեցի: Վճռել եմ վաղը (կամ աւելի ճիշտը այսօր, որովհետեւ դուրսը արդէն լոյս ցերեկ է) գնալ Վարշաւա: Ուզում եմ որ Անելկան աւելի հաստատուի այն համոզմունքի մէջ, թէ ես ոչ մի բանի չեմ ձգտում, և որ զլիսաւորն է ժամանակ ունենայ հանգստանալու ու ընտելանալու այն բանին, որ ես նրան ասացի: Սակայն ճիշտն ասած այդպէս վճռելուս պատճառը մասամբ էլ այն է, որ վախենում եմ վաղը նրա հետ ունենալիք տեսակցութիւնիցս և ուզում եմ այնպէս անել, որ աւելի ուշ հանդիպենք իրար: Մէկ—մէկ ինձ թւում է, թէ մի չը լսւած յանցանք եմ գործել, ներմոծելով իմ բարոյական ապականութեան տարրը այդ ցարդ անարատ աշխարհ: Բայց իսկն ասած հիմնական չարիքը չի կայանում արդեօք նրանում, որ նա պատկեւ է մի մարդու հետ, որին չի սիրում և չի կարող սիրել: Ի՞նչն է աւելի անբարոյական, — իմ սէրը, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ բնութեան մեծ օրէնքի արտայայտութիւն, թէ Անելկայի այդ մարդուն պատկանելը, որ այդ օրէնքի քստմնելի ոտնակոխումն է: Ամենախիստ օրինական կապը իսկապէս անարգ կապ է, եթէ որ չի հիմնւած սիրոյ զգացմունքի վրայ: Նւ սակայն ես, որ այդ հասկանում եմ, այնքան թոյլ եմ, որ սարսափում եմ, երբ պէտք է լինում հրել՝ դէն զցել այդ մեռելաչին բարոյագիտութիւնը: Բարեբախտաբար այդ երկիւղը բուսական է: Եթէ մինչև անգամ հաւատացած էլ չը լինէի, թէ արդարութիւնը իմ կողմն է, չամենայն դէպս բոլորովին անկասկած է ինձ համար, որ արդարութիւնը հակառակորդիս կողմը չէ: Վերջապէս խղճման անքիս այդ նախադաշարումները ջարդ ու փշուր է անում մի հատիկ «սիրում եմ» խօսքի իրական ոյժը:

Իսկ եթէ սիրտս հրձեւում է երբ որ մտածում եմ թէ գուցէ նա էլ այս րոպէիս քնած չէ, լաց է լինում ու մտատանջում է, այդ միայն մի նոր ապացոյց է, որ ես նրան սիրում եմ: Արդ այդպէս լինելուց յետոյ այն բոլորը, ինչ որ կատարւում է ու կատարւելու է, անհրաժեշտ է ու չի կարող չը կատարւել:

19 մայիսի.

Արշաւա որ եկաց, առաջին օրը մեռելի պէս քնեցի: Պաշտում ափսոս է գալիս օրւայ ամեն մի րոպէն, որ ես կարող եմ անց կացնել Անեկայի հետ, իսկ զիշերները զրում եմ: Ի վերջոյ այդ բոլորը ինձ սաստիկ յոգնեցրեց: Հիմա էլ զեռ զգում եմ, որ դուխս ծանրացած է, բայց գոնէ կարողանում եմ մտածել: Մի քիչ ամաչում եմ, որ Պաշտոնից փախաց և թողեցի Անեկային իմ խոստովանութեան ծնշման ներքոյ, բայց սիրած կնոջ հետ վարւելիս մի քիչ վախկոտութիւնը վնաս չունի: Ասենք երեւի էլի չէի փախչիլ, եթէ այդ չը պահանջէին սիրոյս շահերը: Այժմ մի քանի օր շարունակ, առաւօտը վեր կենալիս, «հայր մեր»-ն ասելիս, պարտէզում ման գալիս և հիւանդ մօրը խնամելիս, Անեկան ուղիւ չուզի պէտք է ինքն իրան կրկնի՝ «նա ինձ սիրում է», և քանի գնաց այդ միտքը անհրաժեշտօրէն նրան աւելի քիչ անհեթեթ, աւելի քիչ սարսափելի կը թւայ: Մարդկային բնաւորութիւնը ամեն բանի բնութանում է, իսկ կինը շատ շուտ է հաշտւում այն մտքի հետ, թէ իրան սիրում են, մանաւանդ երբ որ ինքն էլ սիրում է: Այն հարցը թէ արդեօք սիրում է նա ինձ, ես ինքս ինձ առաջարկեցի հէնց առաջին րոպէին, երբ ինձ ու ինձ խոստովանեցի, որ ես սիրում եմ նրան: Այն ժամանականից սկսած այդ հարցը զլսումս ամեն կողմի վրայ շուռ եմ տալիս, աշխատում եմ քննել բոլոր հանգամանքները, այնպէս՝ կարծես ինձ վերաբերւելիս չը լինի, և գալիս եմ այն համոզմունքին, որ նա ինձ սիրում է: Մարդի գնալիս նա ինձ է սիրելիս եղել և ոչ Կրօնիցիւն, իսկ համաձայնւել է նրա կինը դառնալ՝ սրտի յուսահատութիւնից: Եթէ գոնէ սովորականից բարձր մարդ առնէր, որ կարողանար գրաւել նրան իւր փառքովը կամ գաղափարներովը, եթէ նա հանդիպէր արտակարգ բնաւորութեան տէր մի մարդու, այն ժամանակ գուցէ ինձ մոռա-

նար: Բայց հօ Կրօմիցիին չէր կարող զրաւել նրան իւր գրամական
 նեւրոգով: Բացի այդ նա հարսանիքից յետոյ շատ չանցած գնաց
 այստեղից. այդ էլ մի կողմը թողնենք, նա ծախեց Գլուխովը, որ
 այդ երկու կանանց կեանքի նպատակն էր: Կրօմիցիու մասին ամե-
 նաօրջեկաիւ կերպով որ դատելու լինենք, նա փոքրիկ մարդ է և
 նրա մէջ չկայ ոչ մի բան, որով նա կարողանար գրաւել այդ իդէա-
 լական զգացումներով ու խանդերով լի էակի սիրտը: Այդ միջոցին
 եկաց ես, դէպի որը նա սէրը հաւանօրէն գեռ ևս չէր հանդել, և
 հէնց առաջին օրից սկսեցի ներգործել նրա սրտի վրայ թէ յիշո-
 ղութիւններով, թէ իւրաքանչիւր խօսքով, ամեն մի հայեացքով,
 ես զրաւում էի նրան ոչ միայն այն վարպետութեամբ, որ մարդ
 ձեռք է բերում կեանքի փորձառութիւնից, այլ և գլխաւորապէս
 այն մագնիսական ոյժով, որ տալիս էր ինձ իմ սրտումս էլ առձեռն
 իսկական սէրը: Աւելացնելով դրա վրայ և այն, որ Անեկան գիտէր
 թէ որքան տանջւում էի ես նրա վճռի շնորհիւ այն ժամանակ, երբ
 ուղարկեցի նրա մօտ Սնեասինսկուն, և որ նա անշուշտ խղճում
 էր ինձ ու մինչև այսօր էլ խղճում է, ես ասում եմ ինքս ինձ. —
 կեանքս եմ խաղի դրել, բայց այնպիսի պայմաններում եմ խաղում,
 որ տարւել չեմ կարող:

Ես արդար եմ, որքան արդար է ամեն մարդ, որ պաշտպա-
 նում է իւր կեանքը: Ես այս ասում եմ ոչ թէ բոլոր զգացմունքի
 ազդեցութեան տակ, այլ հանգիստ կերպով դատելով: Ես ոչինչ չու-
 նեմ, ոչ համոզում, ոչ հաւատ, ոչ սկզբունք և ոչ պատւանդան ոռ-
 ներիս տակ, որովհետև քննադատութիւնն ու ընթերցսիան մաշել
 ոչնչացրել են իմ մէջ այդ բոլոր յենարանները: Ես ունեմ միայն
 բնածին կենսական ոյժեր, որոնք ուրիշ ելք չը գտնելով կտրօնա-
 ցել են՝ դէպի այդ կիներ զպացած սիրոյս մէջ: Եւ ես պինդ բռնել
 եմ այդ զգացմունքից, ինչպէս խեղդողը բռնում է տախտակից:
 Եթէ այդ էլ չը լինի, ես այլ ևս չեմ կարող ապրել: Երբ խելքս
 հարցնում է ինձանից՝ ինչո՞ւ ես ուղղակի չամուսնացայ Անեկայի
 հետ, ես նրան պատասխանում եմ այն, ինչ որ մի անգամ արդէն
 ասել եմ. — ուղղակի չամուսնացայ նրա համար, որ ես ուղիղ չեմ,
 այլ ծուռը: Այդպէս են դայեկիւ ինձ իմ երկու դայեակները — ընթ-
 րքսիան ու քննադատութիւնը: Ինչո՞ւ է այդ կիներ և ոչ մի ուրիշը

դարձել ինձ համար վերջին ապաւեն, չը գիտեմ: Երեւի հէնց նրա համար, որ դա է դարձել և ոչ ուրիշը: Այդ ինձնից կախած չի եղել:

Եթէ նա այժմ ազատէր, ես ձեռաց առանց տատանելու նրան կառնէի, բայց եթէ նա ամենեւին մարդու զնացած չը լինէր... Բոլոր գիտէ... ամաչում եմ խոստովանել, բայց զուցէ աւելի պակաս տենչանք զգայի դէպի նա:

Եւ այդպէս կը լինէր ոչ թէ որ և է ռումանոսիկական հայեացքների շնորհիւ, ոչ թէ նրա համար, որ ես ամուսնութիւնը կեանքի լիօրեայ պրոզա կը համարէի: Ոչ: Այդ տեսակ հայեացքներ ինձ ծիծաղելի են թւում: Սակայն հիմնւելով կատարւած իրողութիւնների վրայ, ենթադրում եմ, որ այն ժամանակ ես կ'սկսէի անվերջ կերպով քննել ու գննել թէ ինձ և թէ Անեկիային, մինչև որ մէկն ու միկը ձեռիցս կը թռցնէր նրան:

Չեմ ուզում դրա մասին մտածել, որովհետև եթէ մտածեմ, անշուշտ պէտք է ինքս ինձ անիծեմ:

20 մայիսի.

Այսօր միտք էի անում, թէ ինչ կը լինի, երբոր զրաւեմ Անեկիայի փոխադարձ սէրը և մանաւանդ հասցնեմ նրան այնտեղ, որ խոստովանւի թէ սիրում է ինձ: Ցեանում եմ առաջիս երջանկութիւն, բայց չեմ տեսնում որ և է բան, որ կարելի լինէր անել: Ինձ թւում է, որ եթէ Պրոշովում այդ կանանց ներկայութեամբ արտասանեմ «ապահարզան» խօսքը, գետինը կը պատուէի ու մեղ տակովը կանի: Դրա մասին խօսք անգամ չի կարող լինել, որովհետև հօրաքոյրս ու սրանի Յելինան, այնպիսի գաղափարների տէր են, դարդամահ կը լինեն, եթէ Անեկան բաժանւի մարդուց: Անեկիայի վերաբերմամբ էլ ինքս ինձ չեմ խաբում: Նրա հասկացողութիւններն էլ այդ պառաւների հասկացողութիւնների տեսակ են: Եւ սակայն հէնց որ նա խոստովանւի թէ ինձ սիրում է, ես կարտասանեմ այդ խօսքը, և նա պէտք է ընտելանայ ապահարզանի մաքին: Ուրիշ ելք չը կայ, իսկ այդ միակ ելքի համար պէտք կը լինի սպասել մինչև հօրաքրոջս ու պանի Յելինայի մահը: Դրանից աւել ոչինչ չի մնում անել: Կրօնիցիկին կամ կը համաձայնի յօ-

ժարակամ, կամ ոչ: Վերջին դեպքում ես Անեկային կը վերցնեմ կը տանեմ թէկուզ Հնդկաստան, իսկ ապահարզանը կամ որ նոյնն է ամուսնութեան ոչնչացումը գլուխ կը բերեմ նրա կամքի հակառակ: Բարեբախտաբար նիւթականի կողմից պակասութիւն չունեմ: Գալով ինձ, ես ամեն բանի պատրաստ եմ և այդ ներքին խորին համոզմունքս ինձ բոլորովին արդարացնում է խղճիս առաջ: Այս անգամին ինձ յուզողը սովորական դատարկ բռնան չէ, այլ մի զգացմունք, որի մէջ կետրոնացած է իմ ամբողջ էութիւնը: Այդ զգացմունքի անկեղծութիւնը և ոյժը արդարացնում են նոյնպէս և իմ վարմունքը Անեկայի հետ: Ես գիտեմ, որ խաբւում եմ հաւատացնելով նրան թէ ոչինչ չեմ ցանկանում, բայց այդ բոլորը չարամիտ խաբէութիւն կը լինէր միայն այն դեպքում, եթէ սէրս ինքը խաբեբացութիւն լինէր, բայց քանի որ սէրս կեղծ չէ, այդ միմիայն զգացմունքի տակտիկա, զգացմունքի զիւանագիտութիւն է: Այդ մտնում է սիրոյ պրոցեսսի մէջ: Յայտնի է, որ մինչև անգամ նշանաւորներն էլ զանազան խորամանկութիւններ են բանեցնում իրար լերանից սիրոյ խոստովանութիւն զուրս քաշելու համար: Գալով ինձ, ես անկեղծ եմ մինչև անգամ այն ժամանակ, երբ սուտ եմ ասում:

21 մալխի.

Ես Անեկային ասացի թէ ուզում եմ մի գործով պարապել, և յիրաւի ուզում եմ, թէկուզ հէնց այն պատճառով, որ նրա առաջ սուտ զուրս չը գամ: Վճռել եմ ամենից առաջ հօրս հաւաքածուները վարչաւա փոխադրել ու աջատեղ հիմնել Պոշովսկիների թանգարանը: Այդ Անեկայի բարի վաստակը և մեր սէրից յառաջացած առաջին օգտակար գործը կը լինի: Նախատեսում եմ, որ իտալական կառավարութիւնը իմ դէմ խոչնդոտներ կը յարուցանի, որովհետև այնտեղ մի օրէնք կայ, որը արգելում է Իտալիայից զուրս տանել զանազան հնութիւններ ու գեղարւեստական թանկագին կերուածներ: Բայց այդ փաստաբանիս գործն է: Ախ, յիշում եմ, որ այն Սասուֆերատոյի Մարոննան էլ, որ հայրս կտակել է իւր ապագայ հարսին, գտնւում է իմ հաւաքածուի մէջ: Վր պատուիրեմ այդ պատկերը իսկոյն ուղարկեն, նա ինձ աջատեղ պէտք կը դառնայ:

Ինչքան չարասիրտ արարած է մարդս: Ինչ ուզում էք ասեք, բայց այդ պարոն Կրոմիցկին, որ միլիոններ վաստակելու համար ջհաննամի ծայրն է հասել ու քիչ է մնում սխի գլխի վրայ ման գալ, այն ժամանակ երբ այստեղ նրա կնոջ ականջին սիրոյ խօսքեր են շնչում, — ինձ ծիծաղելի է թւում. սիրտս հրճում է, երբ որ մտածում եմ, թէ այդ բանը պէտք է Անեկայի մոքոմը էլ անցնի, իսկ եթէ չանցնի, ես էլ ինչացնեմ ամայտեղ, որ զըլխի չը քցեմ նրան: Կրոմիցկու պատկերը ոտից գլուխ հիանալի երևում է նրանում, որ Գլուխովը ծախեց և Անեկային ու մօրը սեփական յարկից զրկեց... Անշուշտ նա մտածելիս է եղել թէ Օդեսայում կամ Կիևում կը կենան, սակայն բանը այնպես գնաց, որ պանի Յելինան հիւանդացաւ ու Անեկան ստիպւած եղաւ զալ Պլոշով:

Բայց չէ որ նա գիտէր, թէ որքան թույլ է պանի Յելինայի առողջութիւնը, և հետեւաբար նա պէտք է նախատեսէր, որ զօքանչը կարող է ծանր հիւանդանալ և որ այն ժամանակ Անեկան կը մնայ մենակ և վշտերի ու հոգսերի ծանրութեան ներքոյ: Գուցէ նրա գործերը անհրաժեշտ պահանջում են նրա ներկայութիւնը հեռաւոր Արևելքում, բայց որ այդպէս է, ինչո՞ւ էր պսակւում:

Վաղը գնում եմ Պլոշով: Այստեղ կարօտը սաստիկ տանջում է ինձ, համ էլ ուզում եմ Անեկայի աչքերին ուղիղ նայեմ, թէ չէ մէկ-մէկ ինձ այնպէս է թւում, թէ փախել եմ վախենալով պատասխանատուութիւնից: Խոստովանութիւնից յետոյ պէտք էր հեռանալ անյոտեղից, բայց այժմ պէտք է վերադառնալ: Ով է իմանում, զուցէ աւելի բախտաւոր եմ, քան կարծում եմ, զուցէ նա էլ իմ կարօտն է քաշում...

Այսօր եղել եմ Անեատինսկիների մօտ, Կլարայի մօտ, որին տանը չը գտայ, և այստեղի հռչակաւոր ղեղեցկուհի պանի Կորիցկայի մօտ: Վերջինս կրում է իւր պատմական անունը ժոկէի գլխարկի պէս, իսկ սրախօս լեզուն՝ մորակի պէս, որով աջ ու ձախ դադողում է ծանօթների երեսները: Բայց ես դուրս եկայ նրա մօտից առանց կապտած տեղերի, — ընդհակառակը ես արժանացայ փոքր ինչ կոկետ վերաբերմունքի: Մի քանի այցելութիւններ էլ արեցի

այցեւորմաներ թողնելով: Ուզում եմ բոլորը իմանան թէ ընդ միշտ բնակութիւն եմ հաստատում Վարչաւայում:

Որովհետեւ հօրս հաւաքածունների տեղափոխելը ինձ գոհացնել չի կարող, քանի որ այդ գործ չէ, այլ մի հարց, որի վճռելը կախած է կամքիցս ու քսակիցս, ուստի ինձ ու ինձ միտք եմ անում, թէ բացի այդ ինչ կարող եմ անել: Մեզնում իմ վիճակի մարդիկ ընդհանրապէս բաւականանում են իրանց կալածների կառավարութեամբ, որ, ի միջի այլոց ասած, շատ քիչ բացառութեամբ վատ, ինձնից հազար անգամ վատթար են անում: Մեզնից հազարից մէկն է միայն հասարակական կեանքում որ և է դեր խաղում: Վերը արդէն ասել եմ, որ մարդիկ այստեղ դեռ արիստոկրատիա և դեմոկրատիա են խաղում, այնպէս որ մեր մէջ կան այնպիսիները, որոնք իրանց կեանքի նպատակն են դարձրել կռւել դեմոկրատական հոսանքների դէմ և պաշտպանել հասարակական երարխիան: Գալով ինձ, ես այդ նոյնքան լաւ սպորտ եմ համարում, որքան միւս ամեն տեսակ սպորտները, բայց որովհետեւ սպորտսմէն չեմ, այդ խաղին մասնակցել չեմ կարող: Եթէ մինչև անգամ այդ խաղ չը լինէր, եթէ դրա մէջ որ և է գործնական միտք լինէր, ես էլ չէի կարողանալ յարել այդ բանակներից մէկնում: Մէկին, որովհետեւ երկուսին էլ չափից վեր սկեպտիկաբար եմ վերաբերում: Գեմոկրատներին ջղերս չեն տանում, — այսինքն ոչ թէ ռամիկ ծագումով մարդկանց, այլ նրանց, որոնք իրանց պատենտաւոր դեմոկրատ են համարում: Արիստոկրատիայի մասին մտածում եմ, որ եթէ իրօք նրա *raison d'être*-ը հիմնում են նախնիքների պատմական ծառայութիւնների վրայ, այդ ծառայութիւններից շատերը այն տեսակ են, որ ժառանգները պէտք է քուրք հազնեն ու զլխներին մոխիր ցանեն: Ի վերջոյ իսկն ասած այդ բանակները իրանք իրանց չեն հաւատում, բացի գուցէ մի քանի չափից վեր յիմար անհատներից: Ոմանք անկեղծ են ձեւանում անձնական նկատումներով, բայց քանի որ ես ոչ մի բանում չեմ կեղծում, կընշանակի այդ տեսակ կռւի մասնակցելը իմ բանը չէ:

Կան նաև սինթետիկներ, ինչպէս Մեաափնակին, որոնք երկու բանակիցն էլ բարձր են կանգնած և պատրաստ են ձուլել երկու

բանականները իրանց սինթզի մէջ: Պրանք ընդհանրապէս կորովի մտրդիկ են, բայց թէկուզ նրանց աշխարհահայեացքն ընդունելի էլ, պէտք է բացի այդ էլի մի բան անելի, որովհետեւ զգացմունքը ինքն ըստ ինքեան գործ է, զգացմունքը պէտք է մի կերպ ակներև ձևով արտայայտել: Այ՛ս օրինակ Մեհաօրինակին — դրամաներ է գրում: Խնայը, իրերի զրութեանը մօտիկից որ նայում եմ, տեսնում որ ես մի տեսակ՝ փակագծից դուրս եմ և չեմ իմանում ինչպէս մանեմ մէջը: Խն էլ ասէք տարօրինակ բան է, որ մեծ կարողութեան, կրթութեան, քիչ թէ շատ ընդունակութիւնների ու կամքի տէր մի մարդ չի իմանում ինչ կործի կպչի: Պարձեալ ուզում եմ ինքս ինձ անիծել, որովհետեւ տեսնում եմ, որ դրա պատճառն էլ այն է, որ հոգիս չափից աւելի է նրբացած: Խնձ վրայ պէտք է որոշեն մեր դարի և քաղաքակրթութեան ծերունական հիւանդութիւնը, որովհետեւ իմ մէջ այդ հիւանդութիւնը տիպային բնաւորութիւն է ստացել: Ով որ սկէպտիկաբար է վերաբերում դէպի հաւատը, դէպի գիտութիւնը, պահպանողականութիւնը, յառաջագիմութիւնը և այլն, նրա համար յիրաւի դժար է որ և է գործ կատարել:

Իսկ դրան դեռ աւելանում է և այն, որ իմ տենչանքներս անհամեմատ աւելի զօրեղ են, քան նրանց բաւականութիւն տալու միջոցներս: Ամէն տեղ կեանքը հիմնած է աշխատանքի վրայ, այստեղ էլ մարդիկ աշխատում են. խօսք չունեմ դրա դէմ: Բայց այդ՝ լծի ձիերի աշխատանք է, որոնք տաժանանքով խրձերը կալն են կրում: Ես որ ուզեմ էլ՝ այդ չեմ կարող անել: Ես հանդէսի ձի եմ — գուցէ և կարողանայի մի որ և է կառք քաշել, բայց սովորական սալ աւազոտ ճանապարհով ամէն մի քոսոտ ձի ինձանից համ լաւ կ'քաշի, համ հանգիստ: Տուն շինելիս աղիւս կրել ոչ մի կերպ չէի կարողանալ. գուցէ պէտք զայի շէնքը զրուգներով զարդարելու համար. դժբախտաբար երբ հարցը սովորական շէնքի ու ծածկի մասին է, այդպիսի վարպետների պէտք չ'կայ:

Ասենք եթէ որ ներքին հակումն զգայի դէպի աշխատանքը կամ ցանկանայի մի որ և է բան անել Մեհաօրինակու դաւանանքների ազդեցութեան ներքոյ, ես ինձ կ'հարկադրէի պարսպիկ մի որ և է հասարակ զոծով: Բայց իսկապէս ինձ համար նշանակու-

Թիւն ունի լոկ արտաքին կողմը: Ես ուզում եմ աշխատել այն պատճառով, որ այդ կ'շահի սիրածս կնոջ սիրտը: Անեկան այդ կողմից շատ գրաւող է և զիտեմ որ այս անտարակոյս նրա սիրտը կ'շահի: Բայց հէնց այդ պատճառով թէ ինքնասիրութիւնս և թէ շահերս ստիպում են ինձ այնպիսի աչքի ընկնող տեղ դրաւել, որը ինձ նրա աչքում կարողանար բարձրացնել: Տեսնեմ. պէտք է դեռ չորս կողմն մի լաւ զիտեմ: Իսկ առ այժմ թող գործի իմ քսակը: Կ'փոխադրեմ հօրս հաւաքածուները, կ'սկսեմ օգնել զանազան հիմնարկութիւնների ու փող տալ ում հարկաւոր լինի:

Զարմանալի է Անեկայի պէս կանանց ազդեցութիւնը: Սրինակ հէնց այս. հանդիպում է նրան մի կատարեալ «անպորտֆեօյլ հանճար», մի այնպիսի չափից վեր անշահ մարդ, ինչպէս ես եմ, — և հանդիպելուն պէս առանց որ և է զրդման ու քարոզութեան նրա կողմից, սկսում է զգալ զանազան պարտաւորութիւններ ու ձգտումն դէպի հազար ու մի գործ, որոնց վերաբերմամբ առաջ ոչինչ չէր զգում, թող սատանայի բաժին լինեմ, եթէ մոքովս անգամ անցնի շահել մի պարիզեցի կամ վիէննայի կնոջ սիրտ հաւաքածուիս Պարիզ կամ Վիէննա փոխադրելովը:

Կնում եմ Պլոշով, շտապում եմ բարի հրեշտակիս մօտ:

25 մայիս.

Ստամբնում նրա համար առ ժամանակ հեռացաց Պլոշովից, որ Անեկան ժամանակ ունենար որ և է վճիռ կացացնելու: Վարչաւայում և Պլոշով յետ դառնալիս՝ ճանապարհին ես աշխատում էի գուշակել թէ ինչ վճռած կ'լինի: Ես գիտէի, որ չէր կարող մարդուն ուղղակի դրել, թէ «Արի, ինձ վեր կալ տար, որովհետեւ Պլոշովսին ինձ հանդիստ չի տալիս իւր սէրովը»: Նա այդ չէր անի, եթէ մինչև անգամ առնելիս էլ լինէր ինձ: Նրա պէս նուրբ ու քնքոյշ հոգու տէր մարդիկ անընդունակ են այդպիսի բանի: Ել չեմ ասում, որ եթէ այդպէս վարէր, անշուշտ իմ ու Կրոմիցկու մէջ ընդհարումն տեղի կունենար, ինքը ստիպւած կ'լինէր թողնել հիւանդ մօրն և գնալ, որովհետեւ պանի Յելինան այնքան տկար է, որ չի կարող Պլոշովից հեռանալ:

Անեկայի զրութիւնը արդարեւ դժւար է և ես այդ հաշի

էի առել նախ քան խոստովանելս: Բայց Պլոշով յետ դառնալիս վախենում էի, մի գուցէ խելքը մոնի փակել մօր սենեակում և ըստ կարելոյն խոյս տալ ինձանից: Սակայն շուտով հանդատացայ: Գիւղում, այն էլ մի յարկի տակ, այդ միանգամայն անհնարին բան է, և յամենայն դէպս շատ ակներև կ'լինէր ու կ'գրաւէր հօրաքրոջս ու պանի Յելինայի ուշադրութիւնը, այնուհետև զանազան կասկածների տեղիք կ'տար ու կարող կ'լինէր վատ ազդել վերջինի առողջութեան վրայ:

Ճիշտն ասած, առանց խղճահարութեան օգտւում եմ նրա դրութիւնից, բայց ո՞ր սիրահարած մարդը չի օգտւում հանգամանքներից: Ես զիտէի, այդ Անելկան, թէ կուզ սաստիկ սիրելիս էլ լինի ինձ, չի ուզիլ թոյլ տալ, որ ապագայում կրկնեմ խոստովանութիւնս և մինչև անգամ շատ աւելի սաստիկ կ'զիջարի քան սովորաբար զիմադրեմ են մարդատէր կանայք, որովհետև նրա պէս սկզբունքներ ունեցող ու նրա չափ համեստ կնոջ աչքում ամէնայնչին զիջումն անգամ զարհուրելի մեղք կերեւալ: Բայց ինչպէս կարող էր արգելել ինձ խօսել իւր հետ իմ սիրոյ մասին: Նրա ձեռքին դրա համար մի միջոց կար միայն — ստանալ իմ յօժարակամ համաձայնութիւնը: Ենթադրում էի, որ կը ցանկանայ վճռական կերպով խօսել ինձ հետ, ու չէի սխալւում:

Վերջապէս հասայ Պլոշով: Անելկան լղարել էր, բայց ինձ նայում էր բաւական անվեհեր կերպով: Երևում էր, որ խեղճիկը պատրաստել էր զանազան ապացոյցներ ու հաւատում էր այդ ապացոյցների զօրութեանը. հաւատում էր, որ հէնց որ այդ փաստերը մէջ բերէր, ինձ ոչինչ չէր մնալ անելու, բայց եթէ լեզուս ինձ քաշել ու ընդ միշտ լռել: Հրեշտակային մոլորութիւն, թէ աշխարհիս երեսին միմիայն մի ճշմարտութիւն կարող է լինել: Ինձ հետ ոչ մի վիճաբանութեան մի բռնուիլ, իմ Անելկաս, որովհետև եթէ կան որ և է ճշմարտութիւն ու ապացոյցներ, որոնց ես քչից-շատից հաւատում եմ, այդ՝ սիրոյ ճշմարտութիւնն ու իրաւունքներն են, և բացի դրանից այնքան ծարպկութիւն ունեմ, որ կարող եմ քո բոլոր ապացոյցները ձեռնոցի պէս շուռ տալ ու զէնք դարձնել քո դէմ: Քեզ չեն փրկիլ ոչ քո զատողութիւնները, ոչ իմ խղճալը քո վրայ, որովհետև որքան աւելի մաքուր, որքան աւելի կատա-

րեալ ու հրեշտականման երևաս, որքան աւելի յուզես ինձ, այն-
քան աւելի կը սիրեմ՝ քեզ, իսկ որքան աւելի սիրեմ, այնքան աւելի
տենչալի կը լինես ինձ համար: Քեզ համար ես ունեմ միայն կոիոր-
դիլոսի տրտաստեւքներ, որոնք հոսելով միևնոյն ժամանակը գրգռում
են իմ գիշակեր ձգտումներս: Այդ սիրոյ կախարդած շրջանն է:

Անեկլային տեսնելուն պէս ինձ զգացի այդ շրջանում: Իմ վերադառնալու օրը, կէսօրից յետոյ, երբ պանի Յեկինան խոր քնեց պատշգամբում, Անեկլան ինձ նշան արեց, որ յետեիցը գնամ պարտէզի խորքը: Նրա զեմքից, որ զարմացրեց ինձ իւր անսովոր լրջութեամբ, ես հասկացայ, որ այդ բոպէն է ընտրել հետս խօսելու համար, ուստի շտապով գնացի նրա յետեից: Սակայն որքան հեռանում էինք պատշգամբից, Անեկլայի քաջութիւնը հետզհետէ անհետանում էր: Նկատեցի, որ զուենաւել էր. անկներեւ էր, որ նրան վախեցնում էր իւր սեփական եռանդը, բայց յետ նահանջել այլ ևս անհնար էր, ուստի սկսեց խօսել անհաստատ ձայնով.

—Եթէ իմանալիր որքան անբախտ էի ես այս քանի օրս...

— Կարծում ես, ես շատ բախտաւոր եմ զգու՛մ ինձ, պատասխանեցի ես:

—Ձէ, չեմ կարծում, և այդ պատճառով քեզնից մի մեծ խնդիրք ունեմ... Նս դիտեմ, որ զու ամէն բան հասկանում ես, որ զու մեծահոգի ու բարի ես, և հաւատացած եմ, որ խնդիրքս չես մերժիլ. հաւատացած եմ, որովհետեւ քեզ ճանաչում եմ:

—Ասա, թի՛նչ ես ուզում:

— Դու պէտք է, Լէն, զնա այստեղից արտասահման և չը վերադառնաս, մինչև մայրիկը աչքքան լաւանայ, որ կարողանայ Պլոշկից հեռանալ:

Նա առաջուց զիտեի, որ այդ է պահանջելու, բայց մի քանի վայրկեան լուռ կացոյց, որպէս թէ մտքումն պատասխան էր փնտռում:

—Դու կարող ես տնօրինել իմ կեանքը, ինչպես ցանկանում ես, ասացի ես վերջապես, բայց զոհե՛ս ասա, ինչո՞ւ ես ինձ աքսորման դատապարտում:

— Ես քեզ ապստրման չեմ դատապարտում, բայց դու ինքդ էլ զիտես թէ ինչու...

—Դիտեմ,—սպասախանեցի ես անկեղծ արտաբերութեամբ ու հեղուկութեամբ,—նրա համար, որ քեզ համար կը զոհէի արեանս վերջին կաթիլը, նրա համար, որ եթէ մեզնից մէկն ու մէկին կայծակն այս րոպէին խփելու լինէր, ես կը պատասխարէի քեզ և իմ զուխը կը դնէի կայծակի տակ. որ քո զլխին գալիք բոլոր չարիքները ինձ վրայ կը վերցնէի. վերջապէս նրա համար, որ քեզ կեանքիցս աւելի եմ սիրում, —այդ յիրաւի մահացու մեղքեր են...

—Ո՛հ,—կտրեց խօսքս Անեղիան՝ լարելով եռանդը,—այլ նրա համար, որ ես մարդ ունեմ, որին սիրում ու յարգում եմ, և որ չեմ ուզում լսել այդպիսի խօսքեր:

Ես յանկարծ ցնցեցի անհամբերութիւնից ու բարկութիւնից, ինչպէս էլեքարական կայծից: Ես գիտէի, որ Անեղիան ձիշտ չի ասում, որ ամուսնու սիրով ու յարգանքով պատասխարում են բոլոր արամբի կանայք, երբոր կանգնած են լինում կեանքի ճամբաբաժանի վրայ,—զրազ կը գամ որ թէև արոններումը այդ զգացմունքների նշոյն անգամ չը լինի, էլի նոյնը կ'ասեն. և սալայն Անեղիայի խօսքերը այնպէս արորեցին իմ նեարդերը, որ հազիւ կարողացայ ինձ զսպել ու չը գոռալ. «սուտ ես խօսում, դու ոչ սիրում ես նրան, ոչ յարգում»: Բայց միևնոյն ժամանակ մոքովս անցաւ, որ նրա այդ եռանդը շուտով կը սպառւի, ուստի սպասախանեցի զրեթէ խոնարհութեամբ:

—Մի բարկանալ ինձ վրայ, Անեղիա,—կը գնամ:—Եւ տեսայ, որ իմ խոնարհութիւնը նրան զինաթափ է անում, որ նա խղճում է ինձ: Յանկարծ ցածիկ ձիւղից մի տերեւ պոկեց ու սկսեց նեարդացող կերպով կտոր-կտոր անել: Սիրտը սաստիկ լցել էր և նա գերմարդկային ճիգ էր թափում հեկեկանքը պահելու համար:

Ես էլ սաստիկ յուզւած էի և շարունակեցի դժւարութեամբ.

—Բայց մի զարմանալ, որ ուզում եմ յետաձգել զնալս. ախար ինչպէս իսկոյն հեռանամ, երբ որ քո պահանջը սարսափելի անարդարութիւն է իմ վերաբերմամբ: Քեզ արդէն ասել եմ, որ ոչինչ չեմ ուզում, բացի այն, որ քեզ հետ միևնոյն օդը շնչեմ և քեզ վրայ նայեմ: Ասուած էլ տեսնում է, որ իմ պահանջներս չափից դուրս մեծ չեն: Եւ այդ է իմ բոլոր ունեցածը... չունեցածս... Իսկ դու այդ էլ ես խլում ինձանից: Մի քեզ ու քեզ մոռածիւր, ամեն մարդ

Կարող է դալ աչտեղ, խօսել քեզ հետ, նայել քեզ վրայ, — միայն
ես չեմ կարող, — և այդ նրա համար, որ դու ինձ համար աւելի
թանկ ես, քան ուրիշների համար: Ի՞նչ աստիճան նրբութեան
հասցրած՝ բախտի դաժանութիւն է այդ: Մի բոպէ իմ դրութեան
մէջ մտիր: Քեզ համար այդ դժւար է, որովհետեւ քո հոգին չի
ըջապատուած այնպիսի անպատու, ինչպէս իմ, դու սիրում ես
մարդուդ կամ ինքդ քեզ խաբում ես, թէ սիրում ես, իսկ այդ
դրեթէ միւնոնջ բանն է, բայց երեւակայիւր մի բոպէ, թէ դու լէօն
Պոշոմսկին ես, և կը տեսնես, որ այդ՝ մահւան դատաւճուից վատէ:
Պէտք է ինձ վրայ էլ փոքր ինչ խղճալ: Հասկանո՞ւմ ես արդեօք, որ
վանելով ինձ, դու ոչ միայն զրկում ես ինձ քեզ տեսնելու բախ-
տաւորութիւնից, այլ և խլում ես կեանքիս վերջին նեցուկը: Քեզ
ասել եմ, որ վերադարձել եմ հայրենիք նրա օգտին աշխատելու
գիտաւորութեամբ: Թերեւս այդ աշխատանքի մէջ զոնէի ես և՛ մո-
ռացութիւն, և՛ հանգիստ, թերեւս քաւէի իմ հին մեղքերը. օրի-
նակ այս քանի օրս վճռեցի հօրս հաւաքածուները փոխադրել այս-
տեղ, — այժմ դու պատւիրում ես ինձ ձեռք քաշել այդ բոլորից,
թողնել ամեն ինչ, դնալ աշխարհէ աշխարհ ընկնել ու նորից սկսել
վարել աննպատակ կեանք՝ զուրկ արեւի ամենաազօտ ճառագայթից:
Լաւ, կերթամ: Բայց կերթամ միայն այն դէպքում, եթէ դու
կրկնես քո պատւերը երէք օրից յետոյ, որովհետեւ այժմ դեռ են-
թադրում եմ, որ դու չը գիտէիր, թէ այդ ինչ կը լինի ինձ հա-
մար: Այժմ արդէն գիտես: Քեզնից երեք օր եմ խնդրում միայն —
ուրիշ ոչինչ:

Անելիան աչքերը ձեռքերով ծածկեց ու սկսեց կրկնել.

— Ա՛խ, Աստուծ իմ, Աստուծ իմ, Աստուծ իմ:

Այն աստիճան խանդաղատիչ էր այդ բացականչութիւնը, այն-
քան նման էր անօգնական երեխայի տրտունջի, որ մեղքս սաստիկ
եկաւ նրա վրայ: Մի բոպէ քիչ էր մնում ընկնէի նրա ոտներն ու
համաձայնէի կատարել նրա բոլոր պահանջները: Բայց հէնց այդ
տրտունջը ինձ երեւաց աւետումն մօտաւոր յաղթութեան և ավի-
սոսս եկաւ զրկել այդ յաղթութեան պտուղներից:

— Լսիր, ասացի, միայն մի դէպքում ես կը գնայի աչտեղից
խիոյն և եթէ, հէնց այսօր ու այնքան կը հեռանայի, որ սարեր ու

ծովեր բաժանէին մեզ իրարից,—եթէ գիտենայի, թէ այդ ոչ միայն նրա համար է քեզ պէտք, որ հանգիստդ չը վրդովես շարունակ տեսնելով իմ թշուառութիւնը, այլ և քո սեփական սրտի համար: Ես խօսում եմ քեզ հետ իբրեւ բարեկամ և եղբայր. ես գիտեմ հօրաքրոջիցս, որ դու սիրում էիր ինձ. եթէ այդ զգացմունքը դեռ չի հանգել քո սրտում, այն ժամանակ ես վաղը այստեղ չեմ լինիլ:

Անկեղծ էին ասածներս, սրտիս կսկիծն էր թելադրում լեզուս, և սակայն այդ խօսքերը սարսափելի որոգայթ էին Անելկայի համար, որովհետև կարող էին սիրոյ խոստովանութիւն դուրս բաշել նրա բերանից. իսկ եթէ յանկարծ այդ յաջողէր, չը գիտեմ, զուցէ և իսկ որ գնայի, բայց անպատճառ իսկոյն կը գրկէի նրան: Սակայն Անելկան միայն ցնցւեց, ինչպէս եթէ ես անզգուշութեամբ ձեռք տայի նրա վէրքին. նրա երեսը մի ակնթարթում կարմրատակեց բարկութիւնից ու զայրոյթից:

—Ոչ,—գոչեց նա յուսահատ յափշտակութեամբ, այդ սո՛ւտ է, սո՛ւտ է: Կուգես զնա, կուգես մնայ, բայց այդ սո՛ւտ է, սո՛ւտ է:

Բայց էս հէնց նրա տաքանալուցը եզրակացրեցի, որ զուցէ այդ ճիշտ է: Սրտումս յանկարծ վայրենի ցանկութիւն ծագեց կո պիտ կերպով, ուղղակի նրա երեսին ասել այդ, բայց հեռւից նկատեցի մեզ մօտեցող հօրաքրոջս: Անելկան միջոց չունեցաւ զսպելու իւր յուզմունքը, այնպէս որ հօրաքրոյս նրան վրայ նայելու պէս իսկոյն հարցրեց.

—Ի՞նչ է պատահել քեզ: Ինչի մասին էիք խօսում Վէօնի հետ:

—Անելկան ասացի ես,—պատմում էր ինձ, թէ ինչպէս վատ է ազդել իւր մօր առողջութեան վրայ Գլուխովի վաճառումը, և ես չեմ զարմանում որ այդ պղտորեց նրա սիրտը...

Արդեօք բոլորովին սպառւել էին արդէն Անելկայի ոյժերը, թէ՛ զուցէ իմ ասած սուտը, որ նա ստիպւած էր լռութեամբ հաստատել, լցրեց առանց այն էլ արդէն լիքը դառնութեան բաժակը,—չը գիտեմ, բայց նա այդ րոպէին յանկարծ սկսեց անզուսպ կերպով լալ. նրա ամբողջ մարմինը հեկեկանքից ջղաձգաբար ցընցւում էր. հօրաքրոյս առաւ նրան իւր գիրկը ու երեխայի պէս սեղմեց կրծքին:

—Անեկա ջան, ասում էր նա, աչքիս լոյսը: Դրա դեմ ինչ ճար կայ մեր ձեռքին... Ամեն բան Աստծու կամքովն է լինում: Վերջին փոթորկի ժամանակ կարկուտը իմ հինգ ազարակս փչացրեց, ես պան Խվաստովսկուն մի թթու խօսք անգամ չասացի:

—Զը գիտեմ ինչու այդ կարկուտի ու հինգ ազարակների ջիշատակութիւնը երևաց ինձ մի այնպիսի անպատշաճ ու եսական բան և այնքան ոգորմելի՝ Անեկայի մի կաթիլ արտասուների համեմատութեամբ, որ զայրոյթս եկաւ հօրաքրոջս վրայ:

—Բանը ազարակներումը չէ, ասացի կոպիտ կերպով, —Անեկային տանջողը մօր հիւանդութիւնն է:

Ես հեռացայ կսկծահար սրտով, որովհետեւ զգում էի, որ տանջում եմ այն կնոջը, որին չէի փոխիլ ամբողջ աշխարհի հետ: Յաղթութիւնը կարծես տարայ ամբողջ զծի վրայ, և սակայն սիրոս սաստիկ տխուր է, որպէս թէ ապագայում ինձ սպասելիս լինէր ինչ որ անյայտ ու սարսափելի բան:

25 մալիսի

Այսօր երեք օր է անցել մեր վերջին խօսակցութիւնից: Անեկան չը կրկնեց իւր պահանջը, —կը նշանակի մնում եմ: Նա ինձ հետ քիչ է խօսում, աւելի շատ է փակւում իւր սենեակում, բայց ինձանից շատ էլ խօս չի տալիս. վախենում է, որ եթէ այդպէս անի, կը գրաւի պառանքների ուշադրութիւնը: Ես աշխատում եմ նրա վերաբերմամբ լինել բարի, քաղցր ու հոգատար, բայց համը չեմ հանում, չեմ ձանձրացնում: Ուզում եմ նրան թւայ, որ սիրոս ինքն է իրան մատնում, բայց ես ձեռքիցս եկածն անում եմ սէրս թաղցնելու համար: Նա պէտք է տեսնի, որ սէրս սաստկանում է, որովհետեւ արդարեւ շարունակ սաստկանում է: Անկարելի է, որ այդ նրա վրայ չազդի: Ինչ լինում է լինի, բայց արդէն մենք ունենք մի ջոկ աշխարհ, որի մէջ երկուսիցս զաւո ոչ ոք չկայ. ունենք ընդհանուր դադանիքներ, որոնք յայտնի չեն հօրաքրոջս ու պանի Յեւրիային: Երբ մենք խօսում ենք անտարբեր բաների մասին, երբ ուրիշների ներկայութեամբ ծիգ ենք թափում պահպանել արտաքուստ մեր հին յարաբերութիւնները, երկուսս էլ միակերպ զգում ենք, որ մեր սրտի խորքում բոլորովին ուրիշ բան է կատարւում:

վերջապէս ես այնպիսի խօսքեր ու հայեացքներ ունեմ, որ միայն նա է հասկանում: Բանը այդ ընթացքը ստացաւ հանգամանքների շնորհիւ. և թէպէտ այդ կատարւեց աւելի Անելկայի կամքի հակառակ, քան նրա կամքի համաձայն, — այնուամենայնիւ այդ մեզ կապում է իրար հետ: Ժամանակը, ընտելացումը նրա կողմից և իմ համբերութիւնը կը լրացնեն պակասը: Ես իմ սէրից կը մանեմ հազարաւոր թելեր, որոնցով կը պատեմ նրան չորս կողմից և որոնք օրէցօր մեզ աւելի ու աւելի ամուր կը կապեն իրար հետ: Այդ աշխատանքը ապարդիւն կը լինէր միայն այն դէպքում, եթէ նա սիրելիս լինէր մարդուն: Այն ժամանակ անշուշտ ես նրա մէջ ատելութիւն կը զարթեցնէի դէպի ինձ: Բայց անցեալը իմ կողմն է, իսկ ներկան Կրօնիցիուն չի պատկանում: Գրաւ մասին դատում եմ բոլորովին օբյեկտիւ կերպով, որպէս թէ մի երբորդ անձն լինէի, և միշտ գալիս եմ այն համոզմունքին, թէ նա իւր մարդուն սիրել չի կարող: Անելկայի զիմադրութիւնը ոչ այլ ինչ է եթէ ոչ ներքին կռիւ մի արտակարգ մաքուր հոգու, որը ուստադրուած լինելու մասին մտածել անգամ չի ուզում: Բայց այդ կռիւ մէջ ոչ մի բան նրան նեցուկ չի լինում: Գալով ինձ, ես էլ ինձ չեմ խաբում: զիտեմ, որ զիմադրութիւնը երկարատե ու զժւար ընկճելի կը լինի: Ես պէտք է ուշքս միշտ վրաս պահեմ. պէտք է ամեն ինչ ընդգրկեմ մոքովս, ամեն բանի նկատմամբ ինքս ինձ պարզ հաշիւ տամ. պէտք է ցանցս այնքան նուրբ թելերից հիւսեմ, որ գրեթէ անտեսանելի լինեն: Ես չեմ կարող սեղմել ժամանակից առաջ կամ չափից դուրս ուժգին ոչ մի ստեղծ, բայց կ'աշխատեմ խուսափել սխալներից և չեմ դադարիլ մինչև որ ուզածիս պէս չը փոփոխեմ նրա հոգին: Վերջապէս եթէ բան է մի քանի սխալներ էլ անեմ, այդ սխալները կը բղթեն իմ սէրից և յոյս ունեմ, որ հէնց այդ պատճառով իմ օգուտն կը ծառայեն:

26 մայիսի.

Այսօր յայտնեցի Մեհապինսկուն, որ հաստատ վճռել եմ հօրս հաւաքածուները Վարչաւա փոխադրել: Այդ լուրը անկասկած նրանից կանցնի զանազան լրագիրների, որոնք ձեռաց իմ մտադրութիւնը կը հռչակեն իբրեւ մի մեծ քաղաքացիական սխալգործու-

Թիւն: Անելկան ակամայից կը համեմատի ինձ Կրոմիցկու հետ, և այդ համեմատութիւնը իմ օգտին կը լինի: Բացի այդ հեռագրեցի, որ ըստ կարելոյն շուտով ու առանձին ուղարկեն ինձ Սասսօֆերատոյի գլուխը:

Նախաճաշի ժամանակ զիտմամբ բոլորի մօտ ասացի Անելկային, որ հայրս այդ պատկերը նրան է կտակել: Անելկան շփոթեց, որովհետև իսկոյն գլխի ընկաւ, որ հայրս այն ժամանակ համարում էր նրան իւր ապագայ հարսը: Իսկապէս կտակի մէջ նրա անունը մինչև անգամ չի էլ յիշւած. գրւած է միայն՝ «Մադոննայի գլուխը (Ք այս ինչ) կտակում եմ ապագայ հարսին»: Բայց հէնց դրա համար այդ պատկերը ուղղում եմ տալ Անելկային: Իսկ այժմ՝ այդ կտակի մասին յիշատակութիւնը մեր երկուսի սրտում զարթեցրեց յիշողութիւնների մի ամբողջ աշխարհ: Ես էլ հէնց մասամբ նրա համար խօսք գցեցի այդ կտակի մասին, որպէս զի ուղղէի Անելկայի միտքը դէպի այն անցած ժամանակները, երբ նա ինձ սիրում էր և կարող էր սիրել բոլորովին հանգիստ սրտով: Գիտեմ որ այդ ժամանակներից մնացել է նրա սրտում և՛ սաստիկ դառնութիւն և՛ սրտազին կարեկցութիւն դէպի ինձ: Այլապէս չի կարող լինել: Ես անդառնալի կերպով կորած կը լինէի նրա սրտի համար, եթէ չը լինէր այն խնդիրքս, որով վերջին ընդունում դիմեցի նրան Մեատինսկու միջոցով: Այդ հանգամանքը թեթևացնում է իմ մեղքերը: Այդ բանի մասին միտք անելիս Անելկան պէտք է մտածի, որ ես ուղղում էի ամեն բան ուղղել, որ ես սիրում էի իրան, տանջւում էի, զղջում էի ու զղջում եմ մինչև օրս, իսկ եթէ այժմ երկուսս էլ անբախտ ենք, այդ բանին ինքն էլ է նպաստել: Այդ տեսակ մտքերը պէտք է ստիպեն նրան ներել իմ մեղքերը, ցաւել անցեալի վրայ և հոգով զմայլել այն երջանկութեան պատկերներից, որ այժմ մեր «հանապազօրեայ հացը» կը լինէր, եթէ չը լինէին իմ մեղքերն ու նրա խտուութիւնը:

Այժմ էլ նրա դէմքից նկատեցի, որ վախենում է այդ հոգեզմայլիչ տեսիլքներից և ուղղում է փարատել այդ տեսիլքները խօսելով անտարբեր բաների մասին: Հօրաբրոջս ուշ ու միտքը այն աստիճան զբաղւած է մօտակայ ձիարշաւով (որի ժամանակ նրա կարծիքով պետական մրցանակը մեր «Naughty-boy»-ն է տանելու),

որ նա ուրիշ ոչ մի բանի մասին չի կարող մտածել, ուստի Անեկ-
կան նրա հետ սկսեց խօսել ձիարշաւի մասին: Բայց խօսում էր
խօսած լինելու համար և ի հարկէ սաստիկ մոռաշաղ կերպով, ու
զրա շնորհիւ մի քանի այնպիսի հարցեր տւեց, որ հօրաքոյրս չա-
րացաւ և ի վերջոյ ասաց.

— Խնչպէս տեսնում եմ, որդիս, դու ձիարշաւի մասին ամե-
նեւին գաղափար չունես:

Ես աչքերովս ասացի նրան. «Գիտեմ, որ դու այս բոպէիս ու-
զում ես խեղդել քո մէջ խօսող ձայնը», և նա ինձ այնքան լաւ
հասկացաւ, որպէս եթէ միաքս խօսքով արտայայտած լինէի: Եւ
յիրաւի համարեա հաւատացածեմ, որ ուշ ու միտքն էլ իմիս
նման բոլորովին գրաււած է մեր փոխադարձ յարաբերութեամբ:
Ամուսնութիւնից զուրս սիրոյ գաղափարը արդէն պատւաստւած է
նրա հոգուն, բուն է դրել մէջը և ոչ մի բոպէ չի հեռանում նրա-
նից: Անեկկան պէտք է ապրի այդ գաղափարի հետ ու ընտելանայ
նրան: Այդպիսի պայմաններում՝ մարդուն սիրող կնոջ սիրտն ան-
գամ կարող էր սառչել: Զրի կաթիլը շարունակ կաթկթելով քա-
րեր է ծակում: Եթէ Անեկկան ինձ գէթ մի փոքր սիրում է, թէ-
կող միայն մեր անցեալը, նա ուզի-չուզի իմս կը լինի: Չեմ կա-
րողանում հանգիստ կերպով զրա մասին մտածել, որովհետեւ բախ-
տաւորութեան նախազգացումը ճնշում է ինձ:

Կան տեղեր, ուր ծովափը ծածկւած է ոտնասոց աւազով:
Այն ճանապարհորդի համար, որ ոտը դրել է այդ աւազի վրայ,
փրկութիւն չը կայ: Մէկ-մէկ ինձ թւում է, թէ իմ սէրը նման է
այդ աւազին: Ես Անեկկային քաշում եմ այդ աւազի վրայ, բայց
ինքս էլ գնալով աւելի ու աւելի թաղւում եմ մէջը:

Երանի թէ միատեղ թաղւէինք:

28 մալխի.

Հօրաքոյրս այժմ օրը վեց-ութ ժամ անց է կացնում իւր
ագարակներից մէկում, Բուժանքում, որ Պլոշովից մօտ մի մղոն հե-
ռաւորութիւն ունի և ուր նա ժամանակը կորցնում է «Naughti-
boy»-ից հիանալու ու ձիերին վարժեցնող անգլիացի Վէբին վե-
րահակելու վրայ: Ես երէկ մօտ երկու ժամ այնտեղ էի: «Naughty-

boy»-ը ճիշտ որ յոյսեր տուող ձի է և գուցէ մրցելու ժամանակ շատ էլ «naughty» դուրս չը գայ: Սակայն ինձ ինչ այդ: Զանազան գործեր ստիպում են ինձ զնալ քաղած, բայց սիրտս չի ուզում հեռանալ Պիոշովից: Պանի Յելինան այժմ աւելի թոյլ է զգում իրան քան մէկ երկու օր առաջ: Զահէլ Խւասար (ինչպէս անւանում է նրան հօրաքոյս) այդ ժամանակաւոր բան է համարում, և միայն պատուիրում է, որ շարունակ մէկն ու մէկս հիւանդի կողքին նստենք ու զբաղեցնենք նրան, թէ չէ խեղճ կինը սկսում է մտածել Դրուխովի կորստի մասին և աւելի է խանգարում իւր նեարդերը: Ես աշխատում եմ գրելթէ որդիական հոգատարութեամբ վերաբերել նրան, որովհետեւ այդպիսով շահում եմ Անելկայի երախտագիտութիւնը և սովորեցնում եմ նրան համարել ինձ ամենամօտ մարդ: Ել առաջւան քէնը չը կայ սրտումս դէպի պանի Յելինան, —նա չափազանց անբախտ է զրա համար, և բացի այդ սկսում եմ սիրել Անելկայի բոլոր ազգականներին, — բոլորին, բացի մէկից: Երէկ ու այսօր մի քանի ժամ անցկացրի հիւանդի մօտ Անելկայի ու Խւասարի հետ: Մենք կարդում ու խօսում էինք: Պանի Յելինան գիշերները չի քնում և որովհետեւ բժիշկը նրան խլորալ չի տալիս, ցերեկները երկար խօսակցութիւնից, յետոց սովորաբար քունը տանում է ու խոր քնում է և — տարօրինակ բան է՝ զարթնում է միայն այն ժամանակ, երբ մենք լուծւում ենք ու սենեակում խաղաղութիւն է սկսում տիրել: Այդ պատճառով մենք առանց նրա վրայ ուշ դարձնելու շարունակում ենք կարդալ ու խօսել: Այսօր էլ այդպէս եղաւ: Եթէ բժշկի ներկայութիւնը չը լինէր, ես կը կարողանայի բոլորովին ազատ կերպով խօսել Անելկայի հետ:

Ի դէպ, այս քանի օրերս լրագիրներում տեղեկութիւն էր տպւած գեղեցիկ պանի Կորիցկայի ապահարգանի գործի վախճանական դատաւարութեան ու վերջաւորութեան մասին: Ամբողջ Վարչաւան սաստիկ հետաքրքրւում է այդ գործով, մանաւանդ հօրաքոյրս, որ Կորիցկու հեռաւոր ազգականն է: Ես վճռեցի իսկոյն օգտուել յարմար առիթից ու պատւաստել Անելկայի հոգուն մի քանի, մինչ օրս նրան խորթ զաղափարներ:

— Հօրաքոյրը, — ասացի ես խորին համոզմունքի տոնով, — անի-

բաւացի կերպով է զայրանում պանի Կորիցկայի վարմունքից: Իմ կարծիքով նա վարւում է իբրեւ խելօք ու ազնիւ կին: Մարդու կամքը վերջանում է այնտեղ, ուր սկսւում է սէրը, — մինչև անգամ հօրաքոյրն էլ պէտք է համաձայնի դրան: Եթէ պանի Կորիցկան սիրում է ուրիշին, այն ժամանակ նրան ուրիշ ոչինչ չի մնում անել, եթէ ոչ բաժանւել մարդուց: Գիտեմ ինչ կասէր հօրաքոյրը և հաւանօրէն ինչ մտածելիս կը լինես այս բոպէին դու, Անելկա, կուզես՝ ասեմ, — դու երևի կարծում ես թէ նրան մնում է կատարել իւր պարտաւորութիւնը, — չէ:

— Ես կարծում եմ, որ դու էլ նոյն կարծիքին ես, — պատասխանեց Անելկան:

— Անկասկած: Հարցը միայն նրանումն է, թէ ինչ է պարտաւոր անել պանի Կորիցկան:

Ձր դիտեմ ինչու երիտասարդ բժիշկը յայտնեց այդ ժամանակ, որ ինքը կամքի ազատութիւն չի ընդունում: Սակայն յետոյ նա սկսեց ուշադրութեամբ լսել, որովհետև դուրն էր գալիս իմ հայեացքների համարձակութիւնը:

Իսկ ես զարմացքի արտայայտութիւն տեսնելով Անելկայի երեսին, շարունակեցի.

— Ի՞նչը կարող է աւել վայրենի լինել և աւելի հակառակ բնութեանը, քան պահանջելը որ և է մարդուց, որ նա աւելի սիրածին զոհի պակաս սիրածի համար: Չանազան դաւանութիւններ կարող են որքան: Ուզէք հակառակ լինել միմեանց, բայց նրանց բոլորի բարոյագիտութիւնը միանման է, և ամուսնութիւնը այդ բարոյագիտութեան համաձայն պէտք է հիմնւած լինի սիրոյ վրայ: Ուրեմն ինչ է ամուսնութիւնը: Կամ մի անխախտելի ու իսկապէս սուրբ բան է, եթէ հաստատուած է այդպիսի հիմքի վրայ, կամ թէ, հակառակ դէպքում, բարոյականութեան ու կրօնի հակառակ մի պայմանադրութիւն, որ, իբրեւ անբարոյական բան, պէտք է լուծւի: Ուրիշ խօսքով՝ կնոջ պարտաւորութիւնները պէտք է զղխեն զգացմունքից և ոչ թէ մի շարք աւել կամ պակաս հանդիսաւոր ծիսականարութիւններից, որոնք ինքն ըստ ինքեան լոկ ձևականութիւնների մի շարք են: Այս ասելուս պատճառն այն է, որ ես այն մարդկանցիցն եմ, որոնք էութիւնը ձևից բարձր են դասում: Գի-

տեմ, որ «ուխտադրութիւն» խօսքը շատերին սարսափեցնում է: Բայց մի՛ խաբէք ձեզ, թէ կինը ուխտադրութ է դառնում միայն այն ժամանակ, երբ թողնում է մարդուն: Նա ուխտադրութ է, և կատարեալ ուխտադրութ, արդէն այն բոլորին, երբ զգում է, որ մարդուն այլ ևս չի սիրում: Ինչ կը պատահի, ինչ չի պատահիլ այնուհետեւ,—այդ կախած է միայն նրա տրամաբանօրէն վարելու ընդունակութիւնից, նրա անվեհերութիւնից և նրանից, թէ արդեօք նրա սիրտը ընդունակ է թէ ոչ՝ սիրելու: Պանի Կորիցկան այն մարդուն, որի համար այժմ այրաթող է լինում, սիրելիս է եղել նախ քան իւր այժմեան ամուսնու հետ պսակելը, և նրան չի առել միմիայն զանազան թիւրիմացութիւնների շնորհիւ, միմիայն այն պատճառով, որ նրա խանդոտութիւնից բղխած վարմունքը սխալմամբ անտարբերութեան նշան է համարել: Պանի Կորիցկայի գլխաւոր սխալը զրանումն է եղել, բայց եթէ այժմ նա ուզում է այդ սխալն ուղղել, եթէ հասկացել է, որ իրաւունք չունի սիրած անձին զոհել չը սիրածի համար, և որ իւր պորտաւորութիւնն է վարել ոչ ընդունած պատշաճի, այլ իւր գգացմունքի համաձայն, դրա համար նրա վրայ կարող են յարձակել միմիայն փարիսեցիներն ու նախապաշարմունքից կուրացած մարդիկ:

Իմ ասածի մէջ որքան որ ստուծիւն կար, նոյնքան էլ անկեղծութիւն կար: Գիտէի որ հօրաքոյրս կը մեռնէր ու չէր համաձայնիլ այն թէօրիային, թէ կամքը վերջանում է այնտեղ, ուր սկսում է սէրը, բայց զիտմամբ այդպէս ասացի, որպէսզի այդ ճշմարտութիւնը Անելկային ներշնչէի իբրեւ ամեն կասկածից բարձր ճշմարտութիւն: Գիտէի որ պանի Կորիցկան մի թեթեամիտ կին է, որի համար չարժի առաջ քաշել սկզբունքների ծանր թնդանօթները. վերջապէս նրա առաջւայ սիրոյ պատմութիւնը հնարեցի նմանութիւնը աւելի կատարեալ դարձնելու համար: Ընդհակառակը բոլորովին անկեղծ էի, երբոր խօսում էի սէրից բղխող իրաւունքների ու պարտաւորութիւնների մասին: Ուրիշ հարց է, որ թերեւս ես այդքան անկեղծօրէն համոզւած չը լինէի, թէ այդ թէօրիան ճիշտ է, եթէ որ նա ինձ այդ աստիճան ձեռնտու չը լինէր, բայց մարդս միշտ սուրջեկոխ է, մանաւանդ այն մարդը, որ կասկածով է վերաբերւում բոլոր օբյեկտիւ ճշմարտութիւններին:

Ես խօսում էի իմ օգտին և չիմար կը լինէի, եթէ խօսէի ինձ դէմ: Ես համոզւած էի, որ Անեկաչին ծանօթացնելով այդ գաղափարների հետ, արագացնում եմ ինձ համար ցանկալի էությունների նրա հոգու մէջ, որովհետեւ այդ գաղափարները կարող են նրան աւելի համարձակ դարձնել ու հնարաւորութիւն տալ իւր խղճի առաջ արդարանալու: Ի նկատի ունենալով նրա սատիկ սպաւորւող բնաւորութիւնը, ես ենթադրում էի, որ պատւաստս դռնէ մասամբ կը բռնի: Եւ չիրաւի նա ինձ շատ լաւ էր հասկանում ու պարզ տեսնում էի, որ իմ իւրաքանչիւր խօսքը շարժում է նրա նեարդերը, ինչպէս կնոնտոցը՝ քնարի լարերը: Որքան ես խօսում էի, այնքան նրա դէմքը աւելի ու աւելի վառ կարմիր պոչտերով էր ծածկւում. նա մի քանի անգամ ձեռքը դրեց բորբոքւած թշերին, կարծես ուզելով այդպիսով հովացնել երեսը և ի վերջոյ երբ խօսքս վերջացրի, ասաց.

— Ապացուցել կարելի է ամեն բան, բայց երբոր մարդ վատ բան է անում, խիղճը միշտ ասում է՝ վատ բան է, և անհնար է լինում համոզել, թէ լաւ բան է:

Երիտասարդ Խլաստովսկին երևի այդ ժամանակ մտածում էր, թէ Անեկան բոլորովին զուրկ է փիլիսոփայական կրթութիւնից. սակայն ես, խոստովանում եմ, առաջին րոպէին այնպիսի բան զգացի ինչպէս եթէ օրինակ սրախաղութեան ժամանակ սրիս ծայրը դէմ առնէր պատին: Անեկաչի պատասխանը իւր պարզութեամբ ու զոգմատիկականութեամբ չիք դարձրեց իմ բոլոր եզրակացութիւնները: Որովհետեւ եթէ այն սկզբունքը, թէ կամքը վերջանում է այնտեղ, ուր սկսւում է սէրը, կարող է վերջ ի վերջոյ կասկածի ենթարկւել, բոլորովին ակնբեր և աներկբայելի ճշմարտութիւն է ընդհանրաւակը, թէ ուր սկսւում է զոգման, դաւանանքը, այնտեղ վերջանում են բոլոր դատողութիւնները: Կանայք ընդհանրապէս և լեհուհիք մասնաւորապէս մինչև այն ժամանակ են համաձայնում տրամաբանութեանը, քանի որ տրամաբանութիւնը իրանց համար վտանգաւոր չի դարձել: Հէնց որ վտանգ են տեսնում, խիղճն պատուարւում են պարզ հաւատալիքների և քրիստոնէականի (КАТЕХИЗИСЬ) հրահանգների ամբողջ պարիսպներում, որ կործանել կարող է միմիայն զգացմունքը, ըստ որում դատողութիւնը նրանց դէմ անզօր

է: Այդ՝ կանանց թոյլ և միևնոյն ժամանակ զօրեղ կողմն է, որովհետեւ նրանց մտածողութիւնը կորովի կողմից դրա շնորհիւ ստոր է տղամարդկանց մտածողութիւնից, բայց միւս կողմից նրանց սրբութիւնը նոյնպէս դրա շնորհիւ որոշեալ պայմաններում կարող է անյաղթելի լինել: Ստոանան միայն այն դէպքում կարող է կնոջ անկման պատճառ դառնալ, եթէ նրան սիրահարեցնի, — իսկ եթէ ուզենայ դատողութեամբ ազդել, ձեռքիցը ոչինչ չի գալ, թէկուզ և բացառաբար արդարութիւնը նրա կողմը լինի:

Այդպիսի խորհրդածութիւններ սաստիկ վնասեցին ինձ: Ինձ թուում էր, թէ ինչ շէնք էլ շինեմ, թէկուզ ամենանուրբ կերպով ու ամենատաժանակիր աշխատանքով, Անեկան կը քանդի մի հասիկ բացականչութեամբ՝ «վատ բան է, խիղճս դրան դէմ է»: Եւ այդ բացականչութեան առաջ ես անզօր կը լինեմ: Բացի այդ ես սաստիկ զղոյշ պէտք է վարւեմ, որպէս զի չը վախեցնեմ նրան այն զաղափարների ծայրացեղ համարձակութեամբ, որ աշխատում եմ պատուաստել նրան, ու չը խորշեցնեմ նրան ինձանից:

Եւ սակայն չեմ կարող բոլորովին ձեռք քաշել և՛ այդ տեսակ նկրտումներից: Նրանք երբէք չեն կարող գլխաւոր դեր խաղալ Անեկայի հոգին նւաճելու գործում, — խօսք չունեմ. բայց կարող են խաղալ օժանդակիչ դեր և արագացնել գործի վախճանը: Նրանք ոչ մի օգուտ չեն ունենալ միայն այն դէպքում, եթէ նա ինձ չի սիրում: Եթէ այդպէս լինէր, այդ իմ կողմից սարսափելի սխալ կը լինէր, բայց այն ժամանակ էլ հարցը այս կամ այն կերպ կը լուծւէր:

29 մայիսի ¹⁾

Այսօր չը գիտեմ ինչու մտայ սեղանատուն ու տեսայ, որ Անեկան աթոռի վրայ կանգնած սարքում է պատի ժամացոյցը: Այն րոպէին, երբ նա, սլաքը տեղը դնելու համար, բարձրացաւ կանգնեց մատների ծայրի վրայ, աթոռը տակին շարժւեց: Ես հագիւ ժամանակ զտայ բացականչելու «վայր կընկնես» ու զրկելով

¹⁾ Այս կտորն էլ ուսերէն թարգմանութեան մէջ բաց է թողնւած: Ծանօթ. թարգմ.

Նրան զրեցի գետին: Մի վայրկեանաչափ ես սեղմում էի կրծքիս այդ սիրելի մարմինը. իջնելիս նրա մազերը քսւում էին երեսիս և ես դէմքիս վրայ զգում էի նրա շնչառութիւնը: Գլուխս սկսեց ափսոսապէս պտոյտ գալ, որ ստիպւած էի բռնել աթոռի մէջքից, որպէս զի վայր չ'ընկնէի,— և նա այդ տեսու: Նա զիտէ, որ ես նրա վրայ գծւած եմ: Այսօր այլ ևս չեմ կարող զրել:

30 մալիսի.

Այսօր ամբողջ օրը ինձ համար թունաւորւեց, որովհետեւ Անելկան էլի առաւօտեան նամակ ստացաւ Կրոմիցկուց: Լսեցի, որ հօրաքրոջս ասում էր, թէ, ինչպէս գրում է, ինքն էլ չը զիտէ, թէ երբ կը կարողանայ գալ,— գուցէ շուտով, գուցէ և երկու ամսից յետոյ: Երեւակայել անգամ չեմ կարողանում, թէ ինչպէս պէտք է տանեմ նրա ներկայութիւնը Անելկայի մօտ: Երբեմն ինձ թւում է, թէ ինչ անեմ-չանեմ՝ չեմ կարողանալ տանել: Յոյսս միմիայն հանգամանքների յաջողակ բերմունքի վրայ է, որ կարող է նրա գալուստը ուշացնել: Խառտովսկին ասաց, որ պանի Յելինան, հէնց որ ոյժերը ներեն, պէտք է գնայ Գաշտէյն: Այդ այնքան հեռու է Բաքուից, որ իմ կարծիքով Կրոմիցկուն աշխարհի ծայրը կը թւայ: Իսկ ես կերթամ, երկինքը վկայ, կերթամ: Ինչ հիանալի բան է մտածել Խառտովսկին, հիանալի՝ թէ ինձ համար և թէ պանի Յելինայի համար, որին այնտեղի լողարանները արդարեւ կարող են առողջացնել: Ես էլ սաստիկ տանջւել՝ յոգնել եմ, պէտք ունեմ լեռնային օդ ծծելու և աւելի ևս Անելկայի մօտ լինելու: Վաղը կը գնամ Վարշաւա ու կը հեռագրեմ լողարանների վարչութեանը, որ տիկիների համար բնակարան վարձեն: Եթէ յանկարծ բոլոր բնակարանները վարձւած լինեն, պատրաստ եմ ամբողջ ամառանոց գնել: Երբ որ պանի Յելինան խօսում էր այն նեղութիւնների ու հոգսերի մասին, որ քաշելու է Անելկան, եթէ Գաշտէյն գնալու լինեն, ես ասացի՝ «Այդ ինձ թողէք, ես կանեմ»,— ու յետոյ դառնալով դէպի Անելկան աւելցրի ցած ձայնով՝ «Ամեն բան այնպէս կը կարգադրեմ, ինչպէս իմ մօրս համար կանէի»: Տեսնում էի, որ պանի Յելինան, որ օրէցօր աւելի ու աւելի թերահաւատութեամբ է վերաբերւում Կրոմիցկու միլլիօններին, վախենում է՝ այնտեղ կե-

Նալը շատ թանկ նստացնեմ իրանց վրայ, բայց ես արդէն ինձ ու ինձ վճռել եմ նրանց շինծու պայմանագիր ցոյց տալ, որ մինչև օրս ծալտուն անգամ չեմ հանել, թէ ես էլ մտադիր եմ գնալ Գաշտէյն: Ազգում եմ գործը աշնպէս վարպետութեամբ տանել, որ հօրաքոյրս ինքը ինձ առաջարկի գնալ և յոյս ունեմ, որ կը յաջողեցնեմ այդ, որովհետեւ նա ոչնչից չի կասկածում: Գրեթէ համոզւած եմ, որ հէնց որ յայտնեմ, թէ ուզում եմ ամսուը մի որ է լեւնային տեղ գնալ ու սկսեմ որոնել թէ որտեղ է յարմար դրա համար, հօրաքոյրս կասի ինձ՝ «Յելինայի ու Անելկայի հետ գնա. թէ քեզ համար ուրախ կը լինի թէ նրանց»: Գիտեմ, որ Անելկան այդ որ լսի կը սարսափի, բայց զուգէ և սրտի խորքումը զտնելի մի խորշ, որ ուրախանայ այդ բանից: Գուցէ միտքը դայ Կորդիանի հետեւալ տողը՝ — Ամեն տեղ ես, — ինձնից վեր, իմ շուրջս և իմ մէջ»: Արդարեւ իմ սէրը նրա շուրս բոլորքը կախարդւած շրջան է կազմում. շրջապատում է նրան, կապում է նրան իւր հետ, գրաւում է դէպի ինքը, աշխատում է սողոսկելով մանել նրա սիրտը, ընդունելով հոգատարութեան կերպարանք դէպի նա և նրա մայրը, ընդունելով կերպարանք աշնպիսի ծառայութիւնների, որ նա մերժել չի կարող, եթէ չի ուզում բանալ մօր աչքերը ու ցոյց տալ թէ ինչ է կատարում նրանից ծածուկ և այգալիսով աւելի վատացնել նրա վիճակը. թափանցում է նրա հոգու մէջ իբրեւ երախտագիտութիւն դէպի ինձ և իբրեւ կարեկցութիւն դէպի իմ չարաչար տանջանքները. վերջապէս զաղար չի տալիս անցեալի յիշողութիւններով:

Աւաւտից մինչև երեկոյ Անելկան լսում է միմիայն զովասանքներ իմ մասին. հօրաքոյրս, ինչպէս միշտ, խելքամաղ է լինում ինձանից, երիտասարդ Քաւտովսկին, աշխատելով ցոյց տալ թէ ինչ աստիճան անկողմնապահ ընդունակ են լինել իւր կուսակցութեան մարդիկ, պնդում է, թէ ես բացառութիւն եմ կազմում իմ «փառած շրջանում», մնում է պանի Յելինան, — մինչև անգամ նրա համակրութիւնն էլ եմ դրաւել: Այն աստիճան սրտազին կարեկցութեամբ եմ վերաբերւում նրան, որ նա այժմ ինձ — շատ կարելի է ակամայից — սիրում է, — և հաւատացած եմ, սրտի խորքումը ցաւում է, որ ես Անելկայի ամուսինը չեմ: Մի խօսքով կարծես Անել-

կային շրջապատող մարդիկ ու բնութիւնը խօսք են կապել՝ նրան տէր ներազդել (ВНУШНТЕ):

Իսկ զուհոգոյս հատոր, միթէ կարող ես դիմադրել այդ բոլոր ոյժերին: Ե՛րբ պէտք է դաս ինձ մօտ ու ասես ինձ՝ «էլ չեմ կարողանում դիմանալ, — ան, քոնդ եմ, որովհետեւ սիրում եմ քեզ»:

Վարչաւա, 31 մայիսի.

Պանի Լ....ն, այստեղի բարեգործական ընկերութիւններից մէկի խնամակալուհին, խնդրել է Կլարային մի կոնցէրտ էլ այդ ընկերութեան օգտին տալ: Կլարան մերժել է պատճառ բերելով այն, որ զբաղւած է մի մեծ երաժշտական երկասիրութիւն յօրինելով, իր համար իրան անհրաժեշտ է կատարեալ մոռւոթ կետրոնացումն: Սակայն պանի Լ....ին գրած նամակին, որ կարող է քաղաքավարի բացասութեան օրինակ համարւել, կցել է այնքան դումար, որքան ստացւել էր իւր առաջին կոնցէրտից: Գժւար չէ երեւակայել, թէ ինչ տպաւորութիւն գործեց Վարչաւայում նրա այդ վարմունքը: օրագիրները մինչև այժմ դեռ երկար ու բարակ յօդւածներ են գրում դրա մասին, երկինք հասցնելով արտիստուհուն ու նրա մեծահոգութիւնը: Ինչ խօսք, որ նրա չիրաւի հարուստ հօր կարողութիւնը օրագիրների էջերում եռապատկւել, քառապատկւել է: Զը գիտեմ որտեղից է հասարակութեան մէջ լուր ատարածւել, թէ Կլարան պատկուծ է ինձ հետ: Գուցէ այդ զրոյցներին առիթ է տւել մեր վաղուցւան ծանօթութիւնն ու մտերմութիւնը և նրա միլլիօնների մասին պոտող չափազանցրած լուրերը: Այդ որ իմացայ՝ սկզբում մի քիչ չարացայ, բայց միտք արեցի ու տեսայ, որ աւելի լաւ է այդ զրոյցների առաջը չառնեմ, որովհետեւ նրանց շնորհիւ իմ յարաբերութիւնը դէպի Անեկան ամենայն կասկածներից զերծ կը մնայ:

Երբ որ այսօր կէսօրեայ ընդունելութեան ժամին Կլարայի մօտ էի, առաջինը մօտեցաւ ինձ պանի Կորիցկան սաստիկ սատանայ դէմքով և երաժշտական աշխարհին ու մեր Վարչաւեան high — life-ին պատկանող մի քանի անձերի մօտ բարձրաձայն ասաց.

— Կուզէն, այն ով է դիցաբանութեան մէջ, որ չը կարողացաւ դիմանալ սիրէնայի երգերին:

— Ոչ, դք չը դիմացաւ, կուզինա, — պատասխանեցի ես, — բացի Ուլիսեսից, բայց նա էլ դիմացաւ միայն այն պատճառով, որ առաջուց պատուիրել էր կապել իրան կայմից:

— Իսկ դու այնքան հեռատեսութիւն չես ունեցել:

Ներկայ եղողներին մի քանիսը կծեցին շրթունքները, սպասելով իմ պատասխանին, ուստի պատասխանեցի.

— Երբեմն Կորինթական, չը նայելով իւր վերին աստիճանի անձնաւստահութանը, շփոթեց, իսկ ես տարայ այն փոքրիկ յաղթութիւններից մէկը, որոնց մասին սալոններում խօսելիս միշտ մէջ են բերում «կացինը քարին դէմ առաւ» առածը:

Ուզում են խօսեն, ուզում են չը խօսեն թէ ես պսակում եմ Կլարայի վրայ, ամենեւին հոգս չէ ու մինչև անգամ այն պատճառներով, որ ես արդէն յիշեցի, ուրախ կը լինեմ, որ խօսեն: Բայց ամենեւին չէի սպասում, որ իմ այցելութիւնս կարող էր վերջանալ անսխորժ կերպով շնորհիւ նոյն իսկ Կլարայի: Երբոր բոլորը ցուեցին և միայն ես ու Սնեատինսկին մնացինք, Կլարան սկսեց ածել մեզ համար իւր նոր յօրինած կոնցէրտը, որ այնքան հիանալի էր, որ մենք խօսք չէինք գտնում ըստ արժանոյն զովելու: Խնդրեցինք որ վերջաւորութիւնը նորից ածի. նա կրկնեց ու յանկարծ ասաց.

— Այս մնաս-բարեն է. չէ որ աշխարհումս ամեն բան վերջանում է հրաժեշտի ողջոյնով:

— Չը լինի դիտաւորութիւն ունէք մեզնից հեռանալու, — հարցրեց Սնեատինսկին:

— Ամենաշատը տաս օրից յետոյ պէտք է լինեմ Ֆրանկֆուրտում, — պատասխանեց Կլարան:

Նա որ այդ ասաց, Սնեատինսկին դարձաւ դէպի ինձ.

— Դու ինչ կասես դրա առթիւ, դու, որ Պլոշովում մեզ յոյս էիր տալիս, թէ օրիորդը ընդ միշտ կը մնայ այստեղ:

— Նս դարձեալ կրկնում եմ, որ օրիորդի յիշատակը միշտ անմոռաց կը մնայ այստեղ:

— Նս էլ այդպէս հասկացայ այն ժամանակ, — պատասխանեց Կլարան միամիտ հաւակամութեամբ:

— Իսկ իմ բարկութիւնս եկաւ թէ ինձ վրայ և թէ Սնեատինսկու ու Կլարայի վրայ: Նս ոչ այնքան ունայնամիտ եմ, ոչ էլ

այնքան չիմար կամ վատահոգի, որ ամեն մի յաղթանակ տանելիս ուրախութիւնից զժւեմ. ուստի այն միտքը, թէ Կլարան խիսապէս կարող է սիրահարւած լինել ինձ վրայ ու տածել անհիմն յոյսեր, անասելի տհաճութիւն պատճառեց ինձ: Ես գիտէի, որ նա տածում է դէպի ինձ մի անորոշ զգացմունք, որ որոշեալ պայմաններում կարող էր շատ սաստիկ զարգանալ, բայց չէի սպասում, թէ այդ զգացմունքը համարձակութիւն ունենար որ և է բան պահանջել ու որ և է բան ակնկալել: Յանկարծ մտքովս անցաւ, թէ Կլարային ամենեւին անհրաժեշտ չէ դնալ և նա միայն նրա համար խօսք գցեց գնալու մասին, որ տեսնի, թէ ինչպէս կընդունեմ ես այդ լուրը: Այդ պատճառով ես աշխատեցի որքան կարելի էր սաւը ընդունել: Դէպի Անեղիան զգացած սէրիս նման սէրը պէտք է սովորեցնի սիրտս կարեկցութեան, սակայն Կլարայի տխրութիւնն ու գնալու մասին չիշատակութիւնը ոչ միայն չը յուզեցին սիրտս, այլ և թւացին ինձ անամօթ յաւակնութիւն ու վիրաւորանք իմ վերաբերմամբ:

Ինչո՞ւ: Ի հարկէ ոչ նրա անտոհմիկ լինելու պատճառով: Ես շատ հեռու եմ այդ տեսակ հայեացքներից: Աղքատ եմ ինքս էլ չէի կարողանում ինձ համար պարզել դրա պատճառը, բայց այժմ բացատրում եմ այդ տարօրինակ երևոյթը նրանով, որ ես պատկանում եմ Անեղկային, պատկանում այն աստիճան բացարձակօրէն ու օտարամերժօրէն, որ ինձ թուում է թէ ամեն մի կին, որ պահանջում է ինձնից թէկուզ սրտիս միմիայն մի զարկ, դրանով իսկ ձեռնաժուխ է լինում Անեղկայի սեփականութեանը: Այդ բացատրութիւնը գոհացնում է ինձ:

Անտարակոյս շատ սրտազին մնաւ բարեւ կասեմ Կլարային, երբ որ արդէն վազոնումը լինենք, բայց դնալու մասին այդ կանխաժամ ազդարարութիւնը սիրտս լցրեց տհաճութեամբ: Ախ, երեւի միայն Անեղկային է ներելի անպատիժ կերպով դալարել իմ ջղերս: Երբէք այն աստիճան մոգոհութեամբ ու կրիտիկաբար նայած չը կամ Կլարայի վրայ, որքան այդ րոպէին: Այդ ժամանակ առաջին անգամը նկատեցի, որ նրա լիբը մարմինը, նրա թափանցիկ կաշին, թուխ մազերը, կապուտակ ու չափից վեր դուրս պրծած աչքերը և բաց դոյն շրթունքները, մի խօսքով նրա ամ-

քողջ գեղեցկութիւնը յիշեցնում է հարեմական հուրիններին պատկերացնող անճաշակ նկարները կամ որ աւելի վատ է՝ միջնակարգ հիւրանոցի իւղանկար պատկերները: Նրա մօտից դուրս եկայ ամենավատ տրամադրութեամբ և ուղղակի գնացի գրավաճառանոց, ուր ուզում էի մի քանի գիրք ընտրել Անեկայի համար:

Մի շաբաթ կը լինէր որ մտածում էի թէ ինչ տայի նրան կարդալու: Զէի ուզում զանց առնել և այդ միջոցը, սակայն իսկապէս շատ էլ կարեւորութիւն չեմ տալիս նրան, որովհետեւ շատ դանդաղ է ներգործում: Բացի այդ նկատել եմ, որ մեր կանանց համար, որոնց երեւակայութիւնը շատ աւելի բուռն է քան տեմպերամենտը, գիրքը միշտ մի տեսակ անիրական բան է մնում: Եթէ մինչև անգամ սաստիկ տպաւորւող կնոջ ձեռք է ընկնում գիրքը, էլի ամենալաւ դէպքում այն հետեւանքն է ունենում միայն, որ այդպիսի կնոջ գլխում մի առանձին, անմարմին և գործնական կեանքի հետ ոչ մի կապ չունեցող աշխարհ է ստեղծում: Մեր կանանցից գրեթէ ոչ մէկի գլխովը չի անց կենալ, թէ գրքերից քաղւած գաղափարները կարելի է իրագործել անձնական վարմունքի մէջ: Ես համոզւած եմ, որ եթէ մի որ և է մեծ ու հուշակաւոր հեղինակ աշխատէր ապացուցանել Անեկային, թէ օրինակ հոգու ու մտքի մաքրութիւնը կնոջ համար ոչ միայն աւելորդ բան է, այլ և բարոյական տեսակէտից ուղղակի դատաւարտելի, — և որ աւելին է, — եթէ նա այդ մի որ և է հրաշքով ապացուցանէր, Անեկան այն կարծիքին կը լինէր, թէ այդ սկզբունքը կարող է ճիշտ լինել ամբողջ աշխարհի վերաբերմամբ, ի բաց առած իրան:

Ամենաշատը որ կարող եմ սպասել, այդ այն է, որ նպատակայարմար գրքերի ընթերցումը կը սովորեցնի Անեկային մի տեսակ մտքի զգացմունքների ազատութեան: Ասենք, իսկապէս ասած, դրանից աւելի էլ ոչինչ չեմ ցանկանում: Սիրելով նրան բոլոր հոգով, ես փափագում եմ միայն, որ նա էլ փոխադարձաբար սիրի ինձ, հնարքներ եմ փնտռում զրա համար, ոչ մի հնարք զանց չեմ առնում և աւել ոչինչ: Ես որ երբէք ինքս ինձ չեմ խաբում, բացարձակ ասում եմ ինձ ու ինձ, — ցանկանում եմ Անեկային հասցնել այնտեղ, որ նա մարդուն զոհի ինձ, բայց չեմ ուզում նրան ոչ փչացնել, ոչ էլ անառակացնել: Թող ոչ ոք չասի ինձ, թէ

այդ երկու բանը իրար բացասում են և թէ ասածս սովետութիւնն է. իմ մէջ առանց այդ էլ մէկ սկեպտիկ դե կայ, որ զլուսս տանում է ամեն թույլէ կրկնելով՝ քեզ համար ես թէօրիա կազմում. անհաւատարմութեան շաւիղը ապականութեան շաւիղ է. եթէ քեզ աւելի ձեռնտու լինէր, դրան հակառակ թէօրիա կը կազմէիր: Գիշար է ասել, թէ որքան տանջանք է պատճառում ինձ այդ: Բայց ահա թէ ինչ եմ պատասխանում իմ դեին, — «Հակառակ թէօրիաներին էլ կարող էի նմանապէս կասկածով վերաբերել. ես մտածում — գործում եմ, ինչ որ հնարաւոր է գտնել ի պաշտպանութիւն եմ սիրահարութեան, որովհետեւ այդ իմ բնական իրաւունքն է: Երկրորդ աւելի ևս վեհ բնական իրաւունք է սիրոյ զգացմունքը: Զգացմունքները կամ վատթար ու գոհակական են լինում, կամ վսեմ ու արտակարգ: Այն կինը, որ հեռուում է վեհ զգացմունքի ձայնին, չի կորցնում հոգու ազնւութիւնը, թէպէտեւ արամբի լինի: Այդպիսի վեհ, բացառիկ սէր եմ տեսնում ես զարթեցնել Անելկայի սրտում և այդ պատճառով կարող եմ ասել, որ չեմ ուզում նրան փչացնել կամ անառակացնել:»

Ասենք այդ ներքին ընդդիմախօսութիւնները ոչինչ նշանակութիւն չունեն: Եթէ մինչև անգամ բոլորովին անկասկածելի լինէր ինձ համար, թէ վատ եմ անում, եթէ ոչ մի յաղթական պատասխան չը գտնէի էլ տալու իմ դեին, այնու ամենայիւ չէի դադարիլ սիրելուց և դարձեալ կը հետևէի աւելի զօրեղ ոյժին, այսինքն՝ կը վարէի այնպէս, ինչպէս կը հրամայէր ինձ կենդանի զգացմունքս և ոչ այնպէս, ինչպէս կը հրամայէին վերացական դատողութիւններս:

Բայց ժամանակակից ինքնազննող ու չափից վեր ինքնազննած մարդկանց իսկական անբախտութիւնն այն է, որ նրանք չը հաւատալով անալիզի հետեանքներին, միւլնոյն ժամանակ անընկճելի պահանջ են զգում քննել իրանց հոգու բոլոր շարժումները: Այդպէս եմ և ես Բաւական ժամանակից ի վեր ինձ հանգիստ չի տալիս այն հարցը, թէ ինչպէս է, որ ես, որի էութիւնը ամբողջապէս դրաւած է սէրով, կարողանում եմ այն աստիճան յուշառ լինել, այնպէս կշռադատել այն բոլոր միջոցները, որոնք կարող են ինձ նպատակիս հասցնել, այնպէս պարզ հաշիւ եմ տալիս ինքս ինձ այդ միջոցների մասին, որպէս թէ այդ բոլորը անելիս լինէի բո-

լորովին սառը սրտով, կամ աւելի ճիշտ ասած՝ որպէս թէ մի ուրիշը այդ անելիս լինէր իմ տեղակի:

Ահա թէ ինչ կարող եմ դրա վերաբերմամբ պատասխանել: Նախ և առաջ՝ արդի մարդս միշտ իւր հոգու մի մասը ազատ է պահում, որպէս զի գործ դնի մնացեալ մասերը գիտելու համար: Բացի այդ՝ զգացմունքի այդ արտաքուստ ստոնարին և խորհրդածութիւններով, հաշիւներով, նոյն իսկ մեքենայութիւններով լի ժիր գործունէութիւնը իսկապէս ուղիղ յարաբերական է նոյն զգացմունքի բարեխառնութեան աստիճանին: Որքան ջերմ է այդ զգացմունքը, այնքան աւելի է սառը դատողութեանը լարել տալիս ոյժերը իրան ծառայելու համար: Դարձեալ կրկնում եմ, մարդիկ զուր են սիրոյ աչքերը կապւած երեակայում: Սէրը չի ճնշում մարդու դատողութիւնը, ինչպէս որ չի ճնշում սրտի կամ շնչառութեան բաբախումը—նա միայն ընկճում է նրան: Դատողութիւնը այդ ժամանակ դառնում է սիրոյ առաջին խորհրդականը ու նւաճելու գործիքը. ուրիշ խօսքով՝ դառնում է Օգոստոս Կեսարի Ագրիպպան ¹⁾: Նա բոլոր ոյժերը լարւած է պահում, նա վարում է զօրքը, տանում է յաղթութիւններ, բազմեցնում է իւր տիրոջը յաղթական կառքի վրայ, վերջապէս կառուցանում է—ոչ Պանթէօն, ինչպէս պատմական Ագրիպպան—այլ Մոնոթէօն ²⁾, որի մէջ ծնկաչոք ծառայում է իւր միակ աստուած Կեսարին: Այն միկրոկոսմում (փոքր աշխարհ), որ մարդ է կոչւում, դատողութեան դերը մինչև անգամ աւելի բարձր է քան զորավարինը, որովհետև նա անվերջ կերպով անդրադարձնում է ամեն բանի ու ինքն իրան գիտակցութիւնը այնպէս, ինչպէս նպատակայարմար դասաւորւած հայելիների համակարգութիւնը անվերջ կերպով անդրադարձնում է մի որ և է առարկայի պատկերը:

(Կը չարունակւի)

¹⁾ Մարկ Ագրիպպա, հռոմայեցի զօրավար, ապրում էր վերջին դարում Ք. Մ. առաջ. Օգոստոս Օկտավիանի խորհրդականն էր. 36 թւին յաղթելով Սեքստ Պոմպէյին և 31 թւին փախուէն յաղթանակ տանելով Անտոնիոսի ու Կլեօպատրայի միացեալ ոյժերի դէմ (Ալեքիոմի մօտ), հիմն դրեց Օկտավիանի միահեծանութեան: Գ. Թ.

²⁾ Պանթէօն կոչւում էր Յունաստանում ու Հռոմում բոլոր աստուծոներին նւիրւած տաճարը (ամենադից մեհեան): Մոնոթէօն՝ կը նշանակի մի աստծու տաճար: Յունարէն՝ պան կը նշանակի—ամեն, թէօս—աստուած, մոնոս—մէկ: Գ. Թ.

ՄՈՌԱՑԱԾ ՍԷՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈԻՄԱՆԵԱՆՅԻ

Սիրում էի երբեմն քեզ...
Այժմ երս տակաւին
Իմ սրտումը դու ապրում ես,
Բայց ոչ ուժով քո նախկին:

Առաջ հնչում էիր մաքուր,
Որպէս աղօթք, իմ հոգում,
Որպէս սիրոյ նախանձ ու հուր
Տաք արիւնս բորբոքում:

Այժմ որպէս վաղուց մեռած
Բարեկամի չիշատակ,
Կամ մանկութեան օրով սիրած
Մի հին երգի եղանակ...

Եւ անունըդ այժմ տալիս
Էլ «հոգեակ» չեմ ես ասում,
Չեմ աշխատում քուն մտնելիս
Որ քեզ տեսնեմ երազում:

Բայց զարմանքով երբեմնապէս
Մտածում եմ ականայ,—
Ինչո՞ւ էլ դու սիրելի չես,
Ինչո՞ւ ես քեզ մոռացայ...:

ՆԱԽԹԱԾՐՋԱՆԻ ԲԱՆԻՈՐՆԵՐԸ

ԳԱՐԵԳԻՆ ԽԱԺԱԿՆԵԱՆԻ

(Շարունակութիւն ¹⁾)

Ամեն մի գործարանաշատ տեղում կեանքը եռ կը զայ, սաստիկ շարժում կը լինի: Նաւթաշրջանում էլ նոյնն է, որ կողմը դառնաք—շոգեշարժների գազանական ձայները, շւինների աղմուկը և անվերջ դղրդոցներն էք լսելու, որ կողմ դառնաք՝ շտապով գնացող մարդիկ, բաղմաթիւ սալեր ու կառքեր էք տեսնելու: Մի խօսքով կենդանութիւն, շարժում:

Այդ շարժողութեան հոգին, վարիչը—նաւթն է: Ահա բաղմաթիւ սալեր ու կառքեր (апог), ուր են շտապում, թնչ են տանում: Բոլորն էլ շտապում են աչս կամ աչն գործարանը, աչս կամ աչն նաւթահանքը. բաղմաթիւ և նոյն իսկ անթիւ կարիքները լրացնելու համար անհրաժեշտ են և բաղմաթիւ կատարողներ: Ահա՝ սալերը: Նրանք անդադար տեղափոխում, կրում են ջուր, վառելանաւթ փոքր ու մեծ գործարանների համար, երկաթէ և չուգունէ շինաձգներ, մեքենաներ, փոքր ամբարտակներ, խողովակներ, հող, փայտ և ալշն և ալշն: Այդ բոլորն էլ պտուտ են գալիս նաւթալին գործի շուրջը, բոլորն էլ նրա պահանջներն են, որ մենք իսկապէս, աւելի լարմարութեան համար, պիտի հաշէինք օժանդակ արհեստների կարգում, բաց աւելի հեշտ է ալժմ ալդ «մանր մասերն» էլ վերջացնել և անցնել արհեստաւոր դասակարգին:

Բոլոր սալերն ու կառքերն ունին իրանց տէրերը: Այդ տէրերն վարձում են մի կամ մի քանի սալապաններ կամ կառապաններ, նախելով ունեցած սալերի թւին, լանձնում են նրանց, որ բանեցնեն

¹⁾ Տես «Մուրճ» № 10 և 11:

և ստացած բոլոր փողն իրանց-տէրերին չանձնեն: Ի հարկէ բոլոր սալներն ու կառքերը դրամատէրերինը չեն, կան նաև մասնաւոր սեփականատէրեր էլ, բաւց զրանց թիւը քիչ է: Առհասարակ տեղական կամ ռուսական երկանիւ սալերի համար վարձում են տեղական թուրքերին կամ Ղաղանի թուրքերին, իսկ քառանիւ կառքերի (арогн) համար մալականների, զուխարօրների կամ ռուսների: Տեղական երկանիւ սալերը լինում են սեփականութիւն թուրքերի: Այդ սալերը նման են արդէն գործածութիւնից զուրս ընկած «արաբաներին», ահաղին անիւնի, որոնք սալից երկու անգամ բարձր են: Իսկ հետեանք է երկրի պաշտանների, եթէ փոքր լինէին անիւնները, տեղական աւագոտ հողի վրա: չէին կարող բան անել, կը թաղէին իւրաքանչիւր քաղափոխում:

Սալապանները վարձւում են ամսով: Դրանց ռոճիկը փոփոխական է լինում. 10 — 25 մանէթ կարող է ստանալ նոյն սալապանը զանազան տեղերում: Աշխատելու ժամանակը բոլորովին անորոշ է. գործ եղաւ, ամբողջ օրն աշխատելու է, գործ չեղաւ, նստելու է: Իրաւունք չունի հեռանալու: Այս երեւոյթը միայն կառապանների գործում չէ, որ աչքի է ընկնում. «ծախւած ժամանակը» նաւթաջին շատ գործերում սովորական է: Ինտելիգէնտ աշխատաւորների աշխատութեան ամենամեծ մասը «ժամանակ սպանելն» է: Անում են մի որ և է կարգադրութիւն և նրանից յետոյ ազատ ընկնում վար: Ձեն կարող այդ ազատութիւնից օգտուել, չեն կարող որ և է լուրջ բան կարգալ, ուսումնասիրել, որովհետեւ ամեն րոպէ կարող են տեղեփոնի, ինտելիգէնտ աշխատաւորների այդ հոգեհանի, մօտ կանչել, կարող են մարդիկ մտնել, կարող է զուրսը գործ պատահել: Երբեմն նոյն իսկ զիշերը քնից զարթեցնում, քաշ են տալիս նաւթահորի կամ մի ուրիշ բանի մօտ. հաճողն է հորն ընկել, հա պարանն է կտրւել, հա մղիշները կանոնաւոր չեն գործում, հա տեղեփոնն են զնգզնգացնում և այլն և այլն:

Ապրանքներ տեղափոխող սալապաններին և կառապաններին չը պէտք է խառնել տնական կառապանների (владельцы) հետ:

Կառապաններից ու սալապաններից յետոյ մեծ տեղ են բռնում բազմութիւ ծառաները, աղախիներն ու տնական կառապանները: Ծառաներ առհասարակ աւելի հայերից են վարձում (կան և բաւականին ռուսներ և ուրիշներ), իսկ աղախիները բացառապէս ռուսներից (շատ քիչ գերմանացիներից ևս): Կառապաններ

վարձելու ժամանակ զանազանութիւն չի արւում. ամեն ազգութիւնից էլ կառապաններ կան սեփական կառքերի համար:

Աւելորդ է ազախիւնների, ծառաների և կառապանների գործը նկարագրել. այն է ինչ ամեն տեղ — ամենքին յայտնի մի դործ: 6 մանէթից սկսած մինչև 25 մանէթ կարող են ստանալ նրանք, նայելով, թէ ուր և ի՞նչ ծառայութիւն են անում:

*
* *

Առաջին հաշեացքից նաւթային գործում բանւորների թիւը երևում է շատ քիչ. փորելու ժամանակ 10—14 մարդ ամեն մի հորի վրայ, քաշելու ժամանակ 4—5 մարդ. կարծես շատ քիչ է: Բայց մտածենք, որ 1891 վերջին պաշտօնական տեղեկատուի համեմատ հորերի թիւը հասնում է 880 (զուցէ և մինչև 900 այժմ): Դրանցից կան այնպիսիները, որ անպէտք են (заброшены), մօտ 320 հատ: Ուրեմն այդ ձանապարհով հաշւելով, ստացւում է մօտ 4550 բանւոր միայն փորելու և քաշելու գործում: Միւս կողմից միւլնոյն տեղեկատուն մեզ տալիս է ամսավարձով ծառայող բանւորների թիւը, որ հաւասար է մօտ 4007-ի: Աչքի առաջ ունենանք օրավարձով բանող բանւոր-մշակներին, որ կազմում են աւելի մեծ թիւ քան նոյն իսկ ամսական վարձւողները, չը մոռանանք, որ տեղեկատուի համեմատ բոլոր շոգեկաթսաների թիւը հաւասար է 596-ի — իսկ ամեն մի շոգեկաթսայի համար հարկաւոր է ունենալ 2 հնոցապան, հաշւենք նաև բազմաթիւ սայլապաններին, ծառաներին ազախիւններին և կը տեսնենք, որ միայն զուտ նաւթային գործերի մէջ ծառայող բանւորները կազմում են ահագին բազմութիւն: Իսկ եթէ դրա վրայ էլ աւելացնենք Սև-Փաղաքի բոլոր բանւորներին, ի՞նչ թիւ կը ստացւի... կարծեմ կարելի է հաստատու ասել, որ մի տասնեակ հազարը կը լրանայ և կանցնի:

Այդ թւի մէջ քանի տեսակ ազգութիւններ, քանի տեսակ բարբառներ ու կրօններ, սովորութիւններ ու հագուստներ կան: Բայց բոլորին բերել, իրար հետ պինդ կերպով կապել, մի կոխարդական շրջանի մէջ է առել տնտեսական հարցը, «կոպէկի» խնդիրը: Պիտի զարմանալ միայն տնտեսական հարցի այդ տեսակ էլէքտրա-

կան զօրութեան վրայ, պէտք է համոզուել, որ մեր կեանքի մէջ շատ բան է կախած այդ հարցից... Բայց զգոյշ լինենք, որ չընկնենք ծայրացեղութեան մէջ, կարծելով, թէ միայն այդ «կոպէկի» արհամարհելի հարցն է մարդկային կեանքի վարիչը, ինչպէս ասում են իդէալիստները:

III

ՕԺԱՆԴԱԿ ԱՐՀԵՈՏՆԵՐ

Մենք մինչև այժմ նկարագրեցինք բուն նաւթային գործերը և այն կողմնակի զբաղմունքները, ուր մի առանձին մասնագիտական փորձառութիւն, առանձին արհեստ չի սրահանջում: Այդ բոլոր գործերում բանողները զիւղական, հողագործ դասակարգից են, շատ քիչ տեղ են բռնում քաղաքացիները: Իսկ օժանդակ արհեստների մէջ, որոնց նկարագրութեան անցնելու ենք այժմ, ամենագլխաւոր և մեծ տեղը բռնում են քաղաքացիները կամ արհեստաւորները:

*
* *

Նաւթային գործի օժանդակ արհեստները կազմում են. 1, երկաթագործութիւն իր մասերով, 2, հիւսնութիւն իր մասերով, 3, կաթսայագործութիւնը և 4, ձուլողների արհեստն իր մասերով: «Օժանդակ արհեստներ» ասելով մենք հասկանում ենք այս դէպքում այնպիսի արհեստներ, առանց որոնց նաւթային փորող, քաշող և մաքրող գործերը իսկոյն կանգ կառնեն:

1. Երկաթագործութիւն. օժանդակ արհեստների մէջ ամենամեծ և ամենաշատ աշխատող ձեռքեր պահանջողը երկաթագործութիւնն է: Թէ նաւթադաշտում, և Սև-Քաղաքում և թէնոյն իսկ Բիբի-Եյբաթում և Բագուում դուք կը տեսնէք ամեն մի քաղաքիսում բազմաթիւ երկաթագործներ: Այդ արհեստի բաժիններն են. ա. փականագործութիւն (слесарное дело) բ. ճախարակագործութիւն (токарное дело) և գ. դարբնութիւն: Ձի կարելի որոշ չափեր դնել, թէ ո՞րը սրանցից և ինչ դէպքերում աւելի անհրա-

ժեշտ է կամ ո՞րն է աւելի գործադրութիւն զանում, որովհետեւ դրանք երեքն էլ հաւասարապէս անհրաժեշտ հարկաւոր արհեստներ են նաւթային գործի համար, թէև, ինչպէս ներքեւում կը տեսնենք, բաւականին աչքի ընկնող զանազանութիւն կայ դրանց վարձատրութեան չափերի մէջ: Երկաթագործութեան արդիւնքներն են նաւթհանքերում և նաւթագործարաններում գործադրուող բոլոր երկաթային մասերն ու գործիքները (մեքենաները և մղիչները արտասահմանից կամ Ռուսաստանի մեծ քաղաքներից են ստացւում): Պատահում են վնասումներ՝ նրանք են ուղղելու, պէտք են դալիս միշտ անհրաժեշտ նորութիւններ, — նրանք են շինելու, եթէ իրանց մասին է վերաբերում: Աւելորդ է այստեղ նկարագրել փականագործների և դարբինների աշխատանքը, որովհետև ամեն մի քաղաքում և գիւղում ծանօթ են այդ արհեստներին: Արժէ միայն ճախարակագործութեան համար մի քանի խօսք ասել, որովհետև մեզանում դեռ երկաթագործութեան այդ մասը մնալով է գտել, դեռ անծանօթ է գոնէ բոլոր գաւառական տեղերում:

Ճախարակագործութեան ¹⁾ համար անհրաժեշտ է մեքենայ ունենալ: Մեքենաները (այդ գործի համար) լինում են կամ ոտերով շարժելու համար չարմարեցրած, կամ մի ուրիշի պտուտ ածելու համար սարքած, կամ շոգեշարժների միջոցով գործելու պատրաստած: Նաւթաշրջանում գործ են ածւում ալդ երեք տեսակն էլ: Առաջին տեսակը բոլորովին անչարմար է գործելու և դանդաղ է շարժւում, երկրորդ տեսակը պահանջում է աւելորդ մարդ, որի օգնութեան ժամանակ էլ միշտ, անըդհատ և արագ չի կարելի գործել. ամենաչարմարը մնում է երրորդ տեսակը — շոգեշարժների միջոցով գործող ճախարակները: Այդ գործիքները բաղկացած են ժամացույցի անիւների նման մի քանի ատամնաւոր անիւներից: Շոգեշարժը փոկերի (ремень) միջոցով պտուտ է ածում ճախարակները կամ անիւները, որոնց վրայ վարպետն ամրացնում է տաշելու, ծակելու կամ կտրելու առարկան: Առնում է ճիշտ չափերը, որոշում տեղերը և սկսում: Տաշելու, կտրելու և ծակելու համար կան առանձին երկաթէ գործիքներ (փողովուրդն անւանում է դաւլամ), որոնց ծալրերը զորած է, աշխինքն կարմիր * ժամանակ ջրի մէջ դրած: Այդ գործիքների և անիւների միջոցով կարելի է երկաթէ, չուգունէ և պղնձէ առարկաները ծակել, կտրել և շատ զեղե-

¹⁾ Ճախարակագործը տեղական լեզուով (զոնէ Թիֆլիսում) կոչւում է խարատ:

ցիկ կերպով տաչել. տաչելու ժամանակ դուրս են գալիս երկար ու բարակ տաչեղներ, եթէ առարկան երկաթից է, և մանր կտորներ ու փոշի, եթէ չուգունից կամ պղնձից է: Վարպետին ալստեղ չի մնում մի որ և է մեծ ֆիզիքական աշխատանք. նա պէտք է լաւ գիտենալ արհեստը: Ամրացնել առարկան անիւների վրայ, չափերը սարքել և ուշադրութիւն դարձնել, որ ուզած ձևն ստանալ կամ ուղած ուղղութիւնով գնալ ծակիչը կամ կտրիչը: Պատահում են չատ անգամ աշխատի դէպքեր, երբ արհեստաւորը սարքում է գործիքները, ընթացք տալիս և ինքը ժամերով աղատ մնում: Այդ ինքնընթաց (самоходъ) գործողութեան ժամանակ վարպետը կարող է աղատ կերպով գիրք կարդալ կամ որ և է ուրիշ գործով զբաղել: Ինչպէս նկարագրութիւնից երևում է, ալդ արհեստը բաւականին մաքուր և միտք զբաղեցնող արհեստներից է, ուր առաջին և գլխաւոր տեղը բռնում է «գիտենալը», ոչ թէ ֆիզիքական աշխատանքը: Առհասարակ պէտք է նկատել, որ խոշոր արդիւնաբերութեան ժամանակ երկաթագործութեան բոլոր մասերից պահանջւում է ամենամեծ ճշտութիւն և մաքրութիւն գործի ու չափերի մէջ, իսկ մանր արդիւնագործութեան ժամանակ ալդ չկալ, ալստեղ արհեստաւորն է չարմարեցնում իւր գործը հանգամանքներին, աշխտեղ հանգամանքներն են մի քիչ չարմարեցնում արհեստաւորի արդէն պատրաստ գործին:

Ամեն մի նաւթհանք, ամեն մի կանոնաւոր նաւթագործարան ունի իր փոքր կամ մեծ արհեստանոցը և, ամենից առաջ, անշուշտ երկաթագործական բաժինը: Այդ տեղերում են պատրաստում նաւթհանքին կամ նաւթագործարանին անհրաժեշտ երկաթէ առարկաները, հարկաւոր հասարակ նորոգումներն ու կարկատանները. ինչ չի կարող պատրաստուել սեփական արհեստանոցում, ուղարկւում է արդէն բաւական տարածւած երկաթագործական և ձուլարան արհեստանոցները, որ կրում են գործարան (заводъ) անունը: Դրանք շինւած են յատկապէս երկաթէ, չուգունէ և պղնձէ առարկաներ շինելու համար: Կան և աշխատի արհեստանոցներ, ուր չկալ ձուլարան:

Թէ զբամասէրերի (նաւթավաճառների) և թէ ալդ գործարանների արհեստանոցներում բանում են վարձկան երկաթագործներ: Արհեստանոցն ունենում է իր գլխաւոր վարպետը, որ առհասարակ վարձւում է ամսով և կրում է մեքենագործ (механикъ) անունը: Նրա պարտականութիւնն է հսկել բոլոր վարպետների գործերի վրայ, ցոյց տալ չափերը, գրել ամեն մի առարկայի վրայ

գործ դրած ժամանակը և նիւթի քանակութիւնը և այլն: Նա պէտք է մօտ ծանօթ լինի արհեստանոցում եզոդ բոլոր արհեստների հետ: Փոքր գործարաններում գլխաւոր վարպետն էլ է աշխատում իր ընտրած ճիւղով, իսկ մեծ գործարաններում նա կատարում է միայն վերահսկողի դեր:

Պատահում են այնպիսի արհեստանոցներ, ուր տէրն էլ է աշխատում և կատարում գլխաւոր վարպետի գործը:

Բոլոր արհեստանոցներում լինում են, բացի վարձկան արհեստաւորներից, հասարակ մշակ-բանւորներ և աշակերտներ ևս: Մշակ բանւորի աշխատանքն արդէն յայտնի է—միայն Ֆիզիքական ոյժի ենթարկւող հասարակ գործեր, իսկ աշակերտների մասին յետոյ:

Փականագործներն ստանում են օրական 1—2 ռուբլի վարձատրութիւն, ճախարակագործները 1 ռ. 20 կոպէկից մինչև 2 ռ. 50 կ., իսկ դարբինները 1,50-ից—3,50 կ.: Ամենաշատ վարձատրութիւն արւում է դարբիններին, որովհետև ամենածանր, ամենատաժանելի գործն ընկնում է սրանց վրայ:

Մխիթարական է տեսնել, որ վերջին ժամանակներումս երևում են փորձեր նոր, երիտասարդ արհեստաւորների կողմից կազմելու արդիւնագործող երկաթագործական կամ ուրիշ փոքրիկ ընկերութիւններ, միանում են մի քանի արհեստաւորներ, զնում են ամեն մէկը մի քանի հարիւրական ռուբլիներ, որ անշուշտ արդիւնք է քրտինքի խնայողութեան, բաց են անում մի արհեստանոց, իրանք էլ են աշխատում և վարձկան բանւորներ էլ բանեցնում: Այդ տեսակ արհեստանոցի արդիւնքն անհամեմատ աւելի է, քան նրանց ամեն մէկի արդիւնքն առանձին եղած ժամանակ: Մխիթարական է ոչ այն, որ մի քանի մարդիկ ևս հարստանում են ուրիշի աշխատանքով—ոչ, այդ ոչինչ—այդ տեսակ շատ ու շատ մարդիկ հարստացել և նորից կուլ են գնացել իրանցից մեծերին եւրոպական առաջաւոր ազգերի հասարակական կեանքի ասպարիզում, — մխիթարականն այդ երևոյթի մէջ այն փաստն է, այն հետեանքն է, որ միշտ արտադրում է դրամատիկական կազմակերպութիւնը: Ուր կայ մի վարձող և բազմաթիւ վարձւողներ, ուր կայ քիչ ունեցողների կամ չունեցողների կենտրոնացում, այնտեղ անշուշտ պէտք է յայտնւի զանազան ձևերով մի ձգտում՝ միանալ ճնշողի դէմ, միա-

նալ չունեորներն ունեորների դէմ: Ամենաառաջին նշանը, կարծեմ, լինում է քիչ ունեցողների խմբւիլը, մի մարմին կազմելը շատ ունեցողների դէմ, իսկ յետոյ, կամաց-կամաց, և չունեցողներին միանալն ունեցողների դէմ, վարձուողների մի մարմին կազմելը վարձողների դէմ: Ահա մ խ ի թ ա ր ա կ ան Ֆակտի նշանները... Այո, ամեն տեսակ հասարակական կեանքերի մէջ միշտ կազմել և կազմում է մղիչ ոյժը, յաղթութիւն տանողը հաւաքական-ընկերական ոգին, որ այսօր կարող է նոյն իսկ դէմ լինել միայն մի խմբի, օգնել միայն մի քանի անհատների, իսկ վաղը նոյն յաջողութիւնով դառնալ հասարակական շահերի ամենայարմար, ամենասուր զէնքը: Ամենագլխաւորը որ և է գաղափարի, որ և է ոգու մարդու օրգանիզմի պահանջ դարձնելն է. երբ միանգամ արդէն նա պահանջ է, պէտք է արտայայտւի, իսկ թէ ինչ դէպքերում, ինչ գործերի օգտին կը դառնայ այդ պահանջի զօրեղ ոյժը, այդ կախած է զօրեղ անհատների, հասարակական բարոյականութեան ու կրթութեան ուղղութիւնից:

2. Հիւսնութիւն. այս արհեստն էլ բռնում է իր աչքի ընկնող տեղը նաւթային գործերում, թէ և ի հարկէ շատ աւելի քիչ չափերով, քան երկաթագործութիւնը, ձուլիչների արհեստը և կաթսայագործութիւնը: Հասկանալի է, որ այս արհեստին պատկանող բանւորների ձեռքերի արտադրութիւն են նաւթային գործերի մէջ գործադրող համարեան բոլոր փայտեղէն մասերն ու գործիքները: Հիւսնութիւնը բաժանւում է երեք մասերի. ա. (խաւատութիւն, плотничье дѣло) բ. ատաղձագործութիւն (столярное дѣло) և գ. կաղապարագործութիւն (модельщик. дѣло):

Այս արհեստի երկու բաժինները լաւ ծանօթ են մեր հասարակութեան համարեան բոլոր մասերին, իսկ երրորդ մասը ծանօթ է շատ քչերին, դրա համար էլ մենք կասենք մի երկու խօսք միայն երրորդ մասի համար:

Խառատութեան արդիւնք են բոլոր բուրգերը, մեքենաների պատւարները, գործիքների կոթերը, տախտակէ տնակները, կախարիչները և այլն և այլն, իսկ ատաղձագործութեան արդիւնքներն այնքան քիչ են, որ կարելի է չեղած համարել, դրա համար էլ ատաղձագործների մասին

մենք ոչինչ չենք ասիլ: Եթէ ատաղձագործական որ և է գործ պատահում է, բերում են, քաղաքում պատւիրում, աչնպէս որ կարելի է աղբ արհեստը ճաշագաշտից և Սև-Քաղաքից դուրս քչւած համարել: Ուրիշ է կաղապարագործութիւնը. ամեն մի ձուլարան պէտք է ունենալ իր կաղապարագործը և իր բազմաթիւ կաղապարները կամ մոդելները: Վարպետը պէտք է առաջուց պատրաստի աչն ամեն առարկաների փաշտէ կաղապարները, որոնք պատւիրում են գործարանին ձուլելու համար: Պատէր տաղը տալիս է մանրամասն չափերը, ձևը և կրքեմն էլ նկարը, որին համաձայն պատրաստում է կաղապարագործը կաղապար: Այս գործում էլ չի պահանջում մեծ ֆիզիքական աշխատանք. գործում են միայն թերի մկանները, գլխաւոր տեղը բռնում է արհեստը, գործի հմտութիւնը և գործիքներին տիրելը: Արհեստին անհրաժեշտ գործիքները կազմում են դուրը, սղոցները, խարտոցները, հարթիչները (ռէնդէ-օբրտցր), ուրաքը և ուրիշ սովորական գործիքներ, բացի դրանցից և երկաթագործութեան ճախարակները՝ դնդեր, գլաններ շինելու, փաշտերն ուղիղ ծակելու համար: Շատ քիչ է լաւ կաղապարագործ վարպետների թիւը:

Խառատների օրավարձը 80 կոպէկից մինչև 1 ռ. 50 կ.-ի է հասնում, իսկ կաղապարագործինը 1,50-ից մինչև 2 ռ. 50 կոպէկի: Հասկանալի է, որ այս զգալի զանազանութեան պատճառը գործի դժւարութիւնն է, նաչելով վարպետութեան և ոչ թէ ֆիզիքական ծանրութեան տեսակէտից:

3. **Ձուլողներ** ի գործը. այս գործն առհասարակ կապւած է լինում երկաթագործութեան հետ: Սա բաղկացած է երկու որոշ մասերից. ա. ձևակերպող (формировщикъ) և բ. իսկական ձուլող (литейщикъ): Միշտ մի բանւորը հաւասարապէս իմանում է և մէկը և միւսը. դժւար է առանց մի մասի միւսը երևակայել մանաւանդ փոքր և միջակ գործարաններում բանող բանւորների համար: Ձևակերտողները շինում են ձուլելու առարկայի արտաքին ձևը հողի մէջ, գետնի վրայ առաջուց ածելով դրա համար պատրաստւած մաղած, փափուկ հող, զրաֆիա և ածուխ:

Վերցնում են առարկայի փաշտէ կաղապարը, դնում գետնի մէջ փորած փոսի մէջ և բոլոր կողմերից ածում պատրաստւած խառնուրդը, լաւ ամրացնում ու միջից կաղապարը կամաց կամաց դուրս քաշելով՝ հանում: Աղբ չինած ձևի մէջ ածում են հալած չուզուհը: Չուզուհն ածում են ձուլող վարպետի հրամանի տակ եղած մշակ բանւորները կամ աշակերտները:

Ձևակերտողն ամբողջ ժամերով նստած է լինում ձուլարանի խոնաւ դետնի վրայ, միշտ քարշ է գալիս հողերի ու փոշի մէջ,

իսկ ձուլող վարպետը հալած չուգունի ահագին տաքութեան, ծուլի, շոգիների և գազերի մէջ է անցկացնում մի քանի ժամ (մօտ 3—4 ժամ) շարունակ: Եթէ մի և նոյն մարդը մի քանի ամիս շարունակ ամեն օր ձուլելու ժամանակ աշխատի, դժուար թէ կարողանայ երկար ապրել. ամեն մի ձուլելու գործողութիւն լիքը լըցնում է մարդու շնչափողը, աչքերը, քթածակերը և բերանը մրով, ծխով և այլն: Այս է պատճառը, որ ձուլող վարպետները շաբաթը մի կամ շատը երկու-երեք անգամ են աշխատում ձուլելու ժամանակ, իսկ միւս ժամանակներում ձևակերտելով են զբաղւում:

Չուգունը հալում են մեծ և գլանաձև վառարանների մէջ, որոնց կարելի է անւանել հալարան (вогранка): Հալարանի ներսի կողմը չինւած է անգլիական աղիւններից, իսկ դուրսը պատած է հաստ երկաթէ թերթերով, 3—4 տեղի երկաթէ գօտիներով պինդ կապած: Եթէ ներսի սլառը չինւած լինէր հասարակ աղիւսից, չէր զիմանալ նրա մէջ եղած սարսափելի տաքութեանը—կը հալէր ու կը ծակէր հալարանի պատը: Իսկ անգլիական աղիւսի կաւը կարող է մինչև 1800°—1900° աստիճան (C.) տաքութեան զիմանալ, դրա համար կոչւում է կրակի զիմադրող աղիւս (огнеупорная кирпич): Հալարանն ունի մի դուռ ներքևի մասից, մի դուռ վերի կողմերից և, բացի սրանցից, վերի ծալքը խողովակաձև բաց է, որ ծառայում է իբրև ծխնելուղ: Ներքևի դուռը անգլիական աղիւններով և երկաթէ կափարիչով պինդ ամրացնում են, վերի դռնից լցնում են չտակի վրաջ փաշտի հաստ հաստ կտորներ մինչև մի արշին կամ մի քիչ աւել վերև բարձրանալը, նրա վրայից էլ մի անգամից ածում են մի քանի փութ կոկս և ապա սկսում մի չերտ չուգուն, մի չերտ կոկս ածել մինչև վառարանի մի որոշ մասին հասնելը: Նրբ արդէն բաւականին չուգուն և կոկս կալ մէջը, փաշտէ մասերն ալրում են և սպասում, որ բոցալառւի և կոկսն էլ կաշի: Կոկսի լաւ բռնկւելուց չետոյ երկու կողմից 2—2½ արշին բարձրութեան վրալ եղած ծակերից սկսում են փչել քամիաբեր խողովակներով, որոնց փչող մասը գտնւում է շոգեշարժ մեքենայի մօտ: Փչելու ժամանակ հալարանի մէջ տաքութիւնը կարող է բարձրանալ մինչև 1200-ից 1500° աստիճանի (C), ալնպէս որ չուգունը հալւում է և հասնում սպիտակութեան աստիճանին (до белого колена): Միջակ և փոքր գործարաններում հաղիւ շաբաթ մի անգամ կամ ամենաշատը երկու անգամ ձուլելու կարիք է լինում, իսկ մեծ գործարաններում օրամէջ:

Սրանից մի քանի տարի առաջ ձուլարանների թիւը շատ քիչ է եղել, իսկ այժմ բաւականին շատացել են և տարածւել թէ նաւթադաշտում, թէ Սև-Քաղաքում և թէ նոյն իսկ քաղաքում:

Ամեն մի առարկայ ձուլարանից դուրս է գալիս անպատրաստ, խորդ ու բորդ մակերևութով, անցնում է ճախարակագործի ձեռքը, տաշտչւում, մաքրւում, ծակւում և ալն, ալնտեղից էլ դարբնի շինած մասերը հետն ամրացւում, եթէ կարիք կալ, ընկնում փականագործի խարտոցի և քղկիչների ճանկը: Այսպէս 3—4 ձեռքերից անցնելով, առարկան բոլորովին պատրաստւում և դուրս է տրւում:

Ձեւակերտողներն ստանում են օրավարձ 1 մանէթից մինչև 1,80 կ., իսկ ձուլող վարպետները 1,50-ից մինչև 3 մանէթ:

Ձուլարանների համար հարկաւոր եղած չուգունը գնւում է երկար անիւներով, որ չի կարելի գցել հալարանի մէջ: Այս երկար կտորները պէտք է կոտորել, բաժանել 4 մասի, լետոյ ածել հալարան: Ահա կրկին գործ բացւեց մշակ բանւորի համար. պէտք է մի քանի ժամ շարունակ մէկ փթից աւելի ծանրութիւն ունեցող մուրճով անդադար հարւածներ հասցնել չուգունի կտորներին, որ մանրանան... մէջք է հարկաւոր, որ ղիմանայ, ձեռքեր են հարկաւոր, որ չը լողնեն...

Այդ չուգուն կոտորողն ստանում է օրական 50—60 կոպէկ վարձ:

4. Կ ա թ ս ա յ ա գ ո Ր Ծ ու Թ Ի ւ Ն (котельное мастерство). երկաթագործութիւնից յետոյ շատ պահանջ ունեցող արհեստն այս է: Նաւթադաշտի, Սև-Քաղաքի և նոյն իսկ քաղաքի մէջ դուք կը գտնէք շատ կաթսայագործարաններ: Անունն այնքան ճիշտ չի բնորոշում կատարելի գործը. ոչ թէ միայն կաթսաներ են շինում, այլ և բոլոր հորերի մեծ ու փոքր խողովակները, բոլոր նաւթապահեստները (резервуаръ), բոլոր մեծ ու փոքր, ամերիկական և հասարակ դոշերը և այլն և այլն: Արհեստի պահանջած գործիքները քիչ են և պարզ, իսկ աշխատանքը տաժանելի: Մի մկրատ (մեքենայի ձեւով և երկար կոթով) երկաթէ թերթերը կտրելու համար, 3 ձուլ գլաններից բաղկացած մի ծռող մեքենայ, որ կլորացնում է երկաթի թերթերը, մի քանի մուրճ, մի քանի հատ ծակիչներ, երկու երեք սալաձև պատրաստած երկաթէ շերտեր, մի քանի փութ կարճ և հաստ մեխեր—ահա համարենք բոլոր հարկաւոր եղած պարագաները: Այդ գործարաններում մէկը լինում է գլխաւոր վարպետ, որ ծռելու, ծակելու և մեխելու տեղերը ցոյց է տալիս, իսկ միւսները լինում են համարենք թէ միայն մուրճ խփողներ կամ կռանահարներ: Դնում են իրար վրայ երկու թերթերի ծայրերն այնպէս, որ նրանց վրայ եղած ծակերն իրար վրայ ընկնեն, շիկացած մեխերը վերցնում, դնում են ծակերի մէջ

և մի կողմից խփում, որ ծայրը լայնանալ, իսկ միւս կողմն արդէն առաջուց ունենում է լայն գլուխ: Այդպէս բոլոր ծակերն իրար հետ ամրացնում են մեխով և կապում մի թերթը միւսին աջնպէս, որ էլ ջուր ծորելու անգամ տեղեր չեն մնում: Երբ շինում են կաթսայ կամ պահեստատեղ, այն ժամանակ միայն սկսում է կաթսայագործի կամ խլուկի իսկական տանջանքը: Շատերն անշուշտ կարգացած կը լինեն Գարշինի «նկարիչները»: ով կարդացել է նա կը յիշի ճարտար գրչի սրտացաւ արտայայտութիւնը: Կարելի է նկարագրել, պատկերացնել լուսանկարի նման, ամենայն մանրամասնութիւններով և ճշտութիւններով, բայց «արտի արիւնով և ջղերի հիւթով գրելը»-ը շատ քիչ ընտրեալներին է տրւած:

Խլուկներից մէկը մտնում է կաթսայի մէջ, վերցնում դրսից ունեւելքով տւած շիկացած մեխը, անցկացնում ծակերից մէկի մէջ և մուծի գլուխը դէմ տալիս մեխի հաստ ծալրին, որ դուրս չգալ: Ակտում են դրսի կողմից արագ արագ հարւածել մեխի դուրս պրծած ծալրին, որտափակի: Այդ ժամանակ ներսի խլուկը դէմ է տալիս մուծի կոթն իր կրծքին, որ հարւածելիս մեխը դուրս չը թռչի: Մուծների ամեն մի հարւածի հետ արհեստաւորն զգում է իր կրծքին իս մի լաւ հարւած, մի քիչ լետ է ցնցում, բայց իսկույն նորից մօտեցնում կործքը, նորից դէմ տալիս թարմ-թարմ հարւածներ ստանալու համար:

Մի կողմից անդադար հարւածները, միւս կողմից ականջ խլացնող աղմուկը (մուծների ձայնը) անտանելի են դարձնում ու միայն արհեստաւորի դրութիւնը, այլ և հետաքրքրութիւնից դրդած զիտողի դրութիւնը: Առաջին անգամները սաստիկ խղճահարւում է մարդ, դիտելով այդ արհեստաւորների դրութիւնը, բայց մի քանի անգամ նայելուց յետոյ սովորական է դառնում: Զէ որ մարդկային օրգանիզմը կարողանում է վարժել, ընտելանալ նոյն իսկ ամենաանտանելի պայմաններին... Բայց այդ դրութիւնը ևս ունի իր չափը. վարժելու չափութիւնն անվերջ չէ, նա ևս կը կտրուի: Խլուկը վարժում է իր արհեստին, բայց ճիշտ ժամանակ կարող է ևս զիմանալ, այ թէ ինչու՞ն է գլխաւոր և հարցը: Երբ տէսնում էք այդ «վարժած» խլուկին կործքը հարւածներին դէմ տալիս, ականջ մտածում էք. «այն մեծ պահեստատեղը, որ տանում է մինչև 200,000 փութ նաւթ, ճի խլուկներն են շինել և նրանցից ամեն մէկը քանի հազարաւոր հարւածներ է ստացել, քանի անգամ ցա-

ւել է կուրծքը և քանի անգամ անիծել է նա իր բաղնիքն ու ծըն-
ւած օրը...

1890 թվի ստատիստիկական տեղեկութիւնների մէջ աչքի է
ընկնում, թէ որքան գործ են արել խլուկները. նախադաշտում և
Սև-Քաղաքում եղած բոլոր երկաթէ պահեստատեղերի մէջ տեղա-
ւորում էր 21,809,500 փ. կերոսին հում՝ նախ, նախթային իւ-
ղեր և բենզին. իսկ միայն Սև-Քաղաքում նոյն թվին եղել է 1340
նախակաթսաներ, 1,100,000 փութ նախ պարունակող և 435
հատ շոգեկաթսաներ, որոնց ոյժը հաւասար է եղել 9,100 ձիու
ոյժի: Եթէ շոգեկաթսաների ծաւալն էլ ընդունենք նախակաթ-
սաների նման, կը ստանանք, որ շոգեկաթսաների մէջ կարող էր
պարունակել 334,000 (մօտ) փութ նախ: Ուրեմն խլուկների բո-
լոր շինած տեղերի մէջ կարող էր պարունակել 23,243,500 փութ
նախ: Ո՛րքան աշխատանք... իսկ քարէ և միայն հողից փորւած
ամբարներ եղել են 63,941,000 փթի համար:

Հապա խլուկների շինած բոլոր խողովակները, հապա դոյլերը...
Սրանց համար վիճակագրական թւեր չկան: (Թէև կարելի է հորերի
խորութիւնների հիման վերայ կազմել մօտաւոր թւեր, բայց աշխա-
տանքը շատ է և թւերն անճիշտ):

Վաթսայագործ լաւ վարպետներ շատ չկան, իսկ հասարակ և
միջակներ շատ են, որովհետև պահանջւում է միայն մեծ ֆիզիկա-
կան աշխատանք. ամենագլխաւոր աշխատանքն է կռանահարութիւնը:
Վարձագինը 80 կոպէկից մինչև 2 մանէթի է հասնում:

5. Կռանահարներ (МОЛОТОБОЙЦЫ). սրանք ոչ վարձկան ար-
հեստաւոր են և ոչ մշակ բանւոր, այլ մի տեսակ մէջ տեղն են
մնում: Կռանահարները վարձւում են գլխաւորապէս դարբնոցներում
և կաթսայագործարաններում: Ամեն մի վարպետ դարբնի ձեռքի
տակ շինում է մի կամ երկու կռանահար, իսկ ամեն մի կաթսայա-
գործ վարպետ՝ անշուշտ երկու կռանահար: Պարզ է, որ սրանց գործը
միայն մօլորձ խփելն է: Կաւ կռանահարը կարող է շուտով սովորել
դարբնութիւն կա՛մ կաթսայագործութիւն: Այստեղ ևս վարձատրու-
թիւնն աչիքան նախանձելի չէ. օրական 70 կոպէկից մինչև 1 ա. և
1 ա. 20 կոպէկ:

Բոլոր արհեստաւորները բանում են օրավարձով, բացի գլխա-
ւոր հսկող վարպետներից և ձուլող վարպետից: Արհեստաւորները
բանում են առաւօտեան ժամը 6-ից մինչև երեկոյեան 6-ը, հաշ-
ւելով սրա մէջ մի ժա՛մ՝ ճաշելու համար:

(Կը շարունակուի)

ԳԵՕԹԵՒՑ

Թարգմ. ԱՐՇԱԼՈՅՍ ՄԽԻԹԱՐԵԱՆԻ

Թըւում է երբեմն՝ թէ գըլխիս վերայ
Փայլում են փառքի պայծառ ճաճանչներ,
Թէ հիւսնդ կրճքումն այլ տանջանք չը կայ
Եւ աչքերիս մէջ չը կան արցունքներ,
Թէ բոլոր մարդիկ սիրով նորոգւած
Պատրաստ են գրկել երգչին, իբր եղբայր,
Թէ սէրն օրէնք է ամենին դարձած
Եւ ճշմարտութիւն տիրել է աշխարհ:

Անցաւ այդ վայրկեանն. և ահա նորից
Ըզգում եմ գըլխիս տատասկոտ պըսակ,
Ահա դառն արցունք վազեց աչքերիցս
Ու կուրճքըս ճընշեց ըսպանիչ տանջանք.
Մարդիկ դարաւոր հին ուղին բըռնած,
Փռչիների մէջ նեխւած հընութեան,
Անցնում են ահա կըրկին իմ աւաջ
Թըշնամի սիրոյ և ճշմարտութեան...

ՕՐ. 2-ի ԱԼԲՈՄՈՒՄ

ՅՈՒՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՅԻ

Ի՞նչ ես ուզում, որ թողնեի
Քո ալբոմում չիշատակ. —
Սիրոյ հրդէ՛հ փոթորկալի,
Ուրախութիւն, թէ տանջանք...

Դու խնդրում ես, բայց որեւց,
Սիրաս լիքն է բոլորից:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԽԵԼՔՆ ՈՒ ՍԻՐՏԸ

ՍԱՄՈՒԷԼ ԲԱԼԱՂԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ ¹⁾)

III

Մկները, Կուղերը, նրանց ջրանցքները ու ամբարտաւանները: Շները, նրանց խանդութիւնը, սէրը: Շները մեծ խելք ունին: Կապիկները սատարիկ սրտով են վերաբերում դէպի իրանց անբաղդ ընկերները: Կապիկները չեն սիրում, որ նրանց վերայ ծիծաղեն: Կապիկների ճաշակը, Կապիկները ընդունակ են նոյն իսկ հերոսական գործեր կատարելու: Կապիկների հետաքրքրութիւնը: Կապիկների գործերում արտապաշտում է առնադրակ մեծ խելք:

Խելքը պարզ արտայայտում է նաև կրծողների (грызуны) դատարգլին պատկանող կենդանիների գործերում: Իսկ զոցանից ամենախելքներն են մեծ մկները (крыса) և մանաւանդ կուղերը (соборъ): Ահա ինչ են պատմում մի քանի նատուրալիստներ մեծ մկների կեանքից: Այդ կենդանիները շատ անգամ ձևաներ գողանալով տանում են նրանց վերին յարկից շինութեան ներքին յարկերը, իսկ որպէս զի ձևաները չը կորսուեն, իրանք շարում են կարգով սանդուխքի զանազան աստիճանների վերայ: Նոցանից մէկը գողանալով վերևի յարկում մի ձու՝ բերում է տալիս սանդուխքի ամենաբարձր աստիճանի վերայ կանգնած մկանը, որը նոյն բոլէին յանձնում է

¹⁾ Զ. Ռոմէնս — կենդանիների խելքը, էջ 370:

ձուն իրանից մի փոքր քաշ կանգնած ընկերովը, իսկ ինքը ցած-
րանալով կանգնում է իր ընկերովից մի աստիճանով ներքև սան-
դուխքի վերայ, ստանում է նրանից ձուն, յանձնում իրանից ցածր
կանգնածին և այդպէս շարունակում է, մինչև որ ձուն տնփորձ
կը հասցնեն ներքևի յարկը:

Այս Ֆախտի ճշմարտութիւնը վկայում են շատ գիտնականներ:
Ջեսսէն պատմում է, որ մի անգամ անդլիացի մի նաւապետ զայրա-
ցել էր խմանալով, որ շոգենաւից ամեն օր անհետանում են ձաները:
Հաւատացած լինելով, որ այդ բանը անում են ծառաւորները, նա հրա-
մալեց նորից զամբիւղը լցնել ձաներով ու լետող մի անկիւնում թափ
կենալով՝ սպասում էր գողի գալուն: Ի՛նչքան մեծ եղաւ նրա դարմացքը,
երբ նա տեսաւ, որ ծառաւորների տեղ մօտեցան զամբիւղին մեծ մկները «մի
անընդհատ շարք կաղմեցին սկսած իրանց բունից մինչև ձաների զամ-
բիւղը և սկսեցին առաջի թաթիկներով մէկը միւսին տալ ձաները» ¹⁾:

Յաճախ մեծ մկները այս կամ այն նիւթը գողանալու համար
դիմում են աւելի ևս սրամիտ միջոցների:

Սակալն թողնենք Ջեսսէնը պատմի, թէ ի՛նչպէս են նրանք չափը-
տակում իւզը նեղ բերանք ունեցող շիշերից: Ուղղակի կոխել իրանց
դունչը շիշի մէջ ու ալդպէս ուտել իւզը՝ անկարելի է նրանց համար շիշի
բերանքը նեղ լինելու պատճառով: Ապա ի՛նչպէս են անում նրանք: «Մի
սարդափում, ասում է Ջեսսէն, դրել էին Ֆլորենտինեան իւզով լիքը շիշեր
մի արկղի մէջ, որը ծածկովթ չունէր: Վալով մի անգամ սարդափը իւզ
վեր առնելու նպատակով՝ շիշերի տէրը նկատեց, որ շիշերի մէջ իւզի քա-
նակութիւնը սատուիկ պակասել է: Այդ բանը նրան կասկածաւոր թւաց,
նա նորից լցրեց շիշերը և կողպեց ինչպէս առաջ: Միւս առաւօտը չափ-
նուեց, որ իւզի մի մասը էլի անհետացել է: Վերջապէս երբ սկսեցին զիտել
սարդափը փոքրիկ պատուհանով, ալն ժամանակ նկատեցին, թէ ինչպէս
մկները մտնելով արկղի մէջ, բարձրացան գէտի շիշերի բերանքը ու քարշ
դցեցին շիշի բերանքի մէջ իրանց պոչերը» ¹⁾, Յետոյ նրանք հանում էին
շիշերից իրանց պոչերը և սկսում լիզել պոչերին կպած իւզը...:

Այս պատմութիւնը ալնքան անհաւատալի թւաց Բոմբենսին, որ նա
ձեռնարկեց մի չարք փորձերի նրա ճշտութիւնը ստուգելու համար: Նրա
փորձերն էլ միևնույն բանը ցույց տւին. աչտուղ նույնպէս մկները օգտւում
էին իրանց պոչերից՝ շիշերից իւզը զգաճալու համար:

Ծանօթանալք այժմ կուղբերի (ծօծքն, որի հիանալի մորթից
մուշտակների օձիք են շինում) կեանքի հետ: Այդ կենդանիները,

¹⁾ Ջ. Ռոմէնս — նույն տեղը:

որոնք մի փոքր աւելի մեծ են քան նապաստակները, ապրում են գետերի կամ լճերի ափերում Ասիայում-Ամերիկայում: Ջրերի մօտ նրանք կառուցանում են առանձին շինութիւններ երկու յարկից բաղկացած գործ ածելով շինութեան համար ծառերի ճիւղեր: Բէշկերի «տունը» ունենում է հաղորդակցութիւն թէ ցամաքի հետ և թէ գետի կամ լճի յատակի հետ: Այդ մուտքերը շինւած են լինում ճարպկութեամբ այնպէս, որ դրսեւից նրանց տեսնել անկարելի լինի:

Կուղբերը կերակրւում են ծառերի բարակ և հիւթալի ճիւղերով, որոնց բերում են ցամաքից ու ջրի մէջ գտնուող անցքերով մտնում իրանց «տունը»: Հետաքրքիր է ճիւղեր ծառելու միջոցը: Եթէ կուղբերի տան մօտ կան ծառեր, այն ժամանակ նրանք դուրս դալով ջրից իրանց ատամներով սղոցում են ծառի բունը (СВОЛЬ), մինչև որ ծառը կը տապալի գետնին: Նրանից յետոյ նրանք կաորում են ատամներով վեր ընկած ծառի փոքրիկ ճիւղերը ու տանում տուն ուտելու համար:

Յաճախ գործը հեշտացնելու համար նրանք սղոցում են ծառը ոչ թէ ջրի կողմից, այլ հակառակ կողմից, այնպէս որ ծառը վեր ընկնելով դէպի ջուրը՝ նրա ճիւղերը խորատուգւում են ջրի մէջ: Այդպիսով էլ կարիք չի լինում աւելորդ աշխատանքի, որովհետև եթէ ծառը վեր ընկնէր դէպի ցամաքը, կուղբերը ստիպւած կը լինէին ճիւղերը քաշ տալ ցամաքով մինչև ջուրը:

Բանը բոլորովին փոխւում է, երբ ջրի մօտերքում էլ չեն լինում ծառեր. այդ դէպքում կուղբերը ստիպւած են լինում ճիւղեր բերել հեռուից: Բայց ինչպէս բերեն ճիւղերը ցամաքով, երբ ծառերը յաճախ գտնւում են 70 կամ էլ աւելի սաժէն հեռու նրանց բունից:

Այդ փոքրիկ կենդանիների համար շատ դժւար է ծանր ճիւղերը այդքան երկար ճանապարհ բերել մինչև բունը հասցնել: Ապա ինչպէս են անում նրանք:

Ահա այստեղ կուղբերը ցոյց են տալի իրանց զարմանալի սրամտութիւնը, հեռաւոր տեղից ճիւղեր բերելու համար նրանք զիմում են միւսնոյն միջոցին, որին յաճախ դիմում է և մարդը. նրանք շինում են ջրանցք (КАНАЛЪ):

Օրինակ ենթադրենք որ մի որ և է դեռի ափում ապրում են կուղբերը, իսկ ծառերը դանում են նրանց բունից և ջրից 70 սաժէն հեռու: Այդ դէպքում կուղբերը սկսում են փորել գետինը սկսած ջրից և այդպէս փորելով շարունակ դնում են մինչև ծառերը, գոյանում է մի խողովակ, որի միջով ջուրը գետից հեշտութեամբ հոսում է դէպի ծառերը:

Հէնց այդ էլ հարկաւոր է կուղբերին: Հասցնելով ջուրը մինչև ծառերը, նրանք սկսում են սղոցել ծառերը իրանց ասամներով, իսկ տապալելուց յետոյ կոտորում են ծառերի փոքրիկ ճիւղերը, գցում են նրանց իրանց ջրանցքի մէջ և հեշտութեամբ քաշ տալի ջրի միջով մինչև իրանց բունը:

Կուղբերի կեանքի յարմարութեան համար անհրաժեշտ է, որ ջրի մակերևոյթը շատ չը ցածրանայ նրանց բունից, այլ եթէ կարելի է միշտ մնայ միևնոյն բարձրութեան վերայ: Բայց մենք գիտենք, որ գետերում կամ լիճերում ջրի մակերևոյթը միշտ փոփոխւում է, այդ պատճառով կարող էր պատահել որ կուղբերի բների մօտ ջուրն ցամաքէր, եթէ նրանք չ'աշխատէին դրա առաջը առնել: Որպէս զի ջրի մակերևոյթը միշտ անփոփոխ պահպանելի բների շուրջը, կուղբերը շինում են արեւստական լճեր իրանց բների շուրջը կառուցանելով ջրի մէջ ամբարտակներ (плотина):

Այդ շինածքը, որը ունենում է մօտ 1 արշին բարձրութիւն և յաճախ ահագին երկարութիւն, իսկապէս մի հակադական դործ է, եթէ աչքի առաջ ունենանք նրան կառուցանող փոքրիկ կենդանիներին:

Թէ ամբարտակները և թէ ջրանցքները հիանալի կերպով դիմանում են զանազան աննպաստ արտաքին ոյժերին, օրինակ ջրի ջնջմանը, որը շուտ շուտ փոխւում է:

Այդ շինածքների ամրութիւնը բացատրում են նրանց հետազոտողները այն հանգամանքով, որ նրանք կառուցւած են լինում ճիշտ ֆիզիկական և մեխանիկական օրէնքների հիման վերայ: Ի՞նչ է նշանակում այդ փաստը, մի՞թէ այդ փոքրիկ կենդանիները իրօք այնքան մեծ խելք ունեն, որ ընդունակ են ըմբռնել մեխանիկայի և ֆիզիկայի հիմնական օրէնքները և դրանց հիման վերայ մինչև անգամ շինութիւնն եր կառուցանել?

Այս հարցը շատ դիտնականներին է հետաքրքրել և հետաքրքրում է մինչև այժմ, բայց տարաբաղդաբար բաւարար պատասխան չը կայ դեռ նրա համար:

Ամեն հետազօտող պնդում է, որ ամբարտակը և ջրանցքը շինում են զարմանալի ճարտարապետական հմտութեամբ, այդ մի անհերքելի փաստ է: Բայց և ամեն մի հետազօտող ընկնում է անել զրութեան մէջ, երբ ցանկանում է որոշ բացատրութիւն տալ այդ տարօրինակ փաստին:

Ամենքը անկարելի են գտնում ընդունել այն միտքը թէ կողբերին ծանօթ են գիտութեան գլխաւոր օրէնքները, բայց միակողմից ամենքը չեն կարող չը խոստովանել, որ առանց նոյն օրէնքների իմանալու անհնարին է կառուցանել այդ տեսակ շինւածքներ:

Շատերը ցանկանալով մի կերպ դուրս գալ այդ դժւար դրութիւնից ասում են, թէ կողբերը իրանց շինւածքները կառուցանում են «բնազդման» օգնութեամբ և ոչ թէ խելքով: Բայց այդ բացատրութիւնը շատ քչերին է բաւականացնում: Առհասարակ ամեն անգամ երբ անհնարին է լինում բացատրել այս կամ այն կենդանու հոգեկան երևոյթները, էն բոպէին առաջ է գալիս «բնազդում» խօսքը:

Ես մինչև հիմայ չէի խօսում «բնազդման» մասին, որովհետև թէև այդ խօսքը յաճախ գործ է ածւում թէ գիտութեան և թէ հասարակութեան մէջ, բայց չը նայած դրան դեռ շատ քիչ բան է յայտնի բնազդման մասին:

Ուրեմն պէտք է ընդունենք վերջ 'ի վերջոյ, որ կողբերի ամբարտակների և ջրանցքների կառուցանելու փաստը մնում է դեռ չը բացատրւած: Բայց և այնպէս այդ կենդանիների կեանքի ուսումնասիրողների ընդհանուր կարծիքով, նրանք (կողբերը) օժտւած են մեծ խելքով:

Սակաւ կարելի է գտնել այնպիսի կենդանիներ, որոնք ունենային այն աստիճան բուն մարդկային զգացմունքներ, ինչպէս է շունը: Հպարտութիւն, բարկութիւն, խանդոտութիւն, գոռոզութիւն, ատելութիւն, սէր — այս բոլորը համարեա նոյնքան յատուկ են շան բնաւորութեանը ինչքան և մարդկանց:

Որ շունը ընդունակ է զարմանալի սիրոյ դէպի իր տէրը — այդ

գիտեն ամենքը: Յաճախ երբ շունը նկատում է, որ իւր տէրը սկսել է նրա հետ վարւել սառը կերպով, նա ընկնում է անասելի յուսահատութեան մէջ:

Նոյն սիրոյ զգացմունքից է առաջանում շատ անգամ շների խանդոտութիւնը: Առաւել շունը տանել չէ կարող երբ նրա աչքի առաջ իրան տէրը սկսում է գգւել մի ուրիշ շան: Ահա մի օրինակ.

Մի ընտանիքում ապրում էր մի շուն Չարլի անունով. նա, աչքքան պառւակել էր, որ նրա համար շատ դժւար էր մինչև անգամ մանդալը: Հէնց այդ պատճառով էլ նա շատ քիչ էր իր տեղից շարժւում: Բայց ահա միևնույն ընտանիքը բերում է իր տուն պանելու մի փոքրիկ շուն, որը շուտով գրաւում է բոլորի սէրը: Սկսած այդ օրից խեղճ Չարլին կորցրեց իր հանդուստութիւնը: Կարծես բաղդաւոր ախոյեանի աջողութիւնը աչքքաւի լինէր նրան: Չը նպած իր անտանելի դրութեանը, Չարլին աչքք աչխատում էր վազվել, թռչկոտալ, մի խօսքով անում էր ամեն բան, որ պէտքի նմանի իր ախոյեանին և ստանալ զգաւնք տան տիրոջից, նրա կատաղութեանը չափ չէր լինում երբ տէրը նրան թողած փոքրիկ շանն էր գգւում ¹⁾:

Սակայն ոչ պակաս հետաքրքիր է և շան խելքը: Խօսելով այդ բանի մասին Դարւինը աւելացնում է. «պ. Կօչլիգունը մի անգամ վիրաւորեց մի զոյգ վայրենի բաղեր, որոնք վեր ընկան գետի միւս ափում: Նրա շունը աշխատում էր միանգամից երկուսին էլ բերել, բայց այդ նրան չէր յաջողւում: Այդ ժամանակ նա գիտակցութեամբ խեղդեց բաղերից մէկին, թէև ամբողջ իր կեանքում՝ նա որսերի ոչ մի փեսուր չէր ճիւղած, վիրաւորւածին բերաւ տաւ իր տիրոջը, յետոյ յետ գնաց, որ խեղդած բաղին էլ բերի» ²⁾:

Այս փակուր վերին աստիճանի նշանաւոր է, որովհետև նա նա պարզ ցոյց է տալիս, որ կենդանիների գոնեա մի քանի տեսակները ընդունակ են պատողութիւններ անել: Այս դէպքում եթէ որսկանը ուղղակի սպանած լինէր երկու բաղերին, շան համար դժւար չէր լինել նրանց երկուսին էլ միասին բերել: Հետաքրքիրը հէնց այն էր, որ բաղերը միայն թեթեւ կերպով վիրաւորւած էին, այդ պատճառով միանգամից նրանց բերել անհնարին էր: Ի՞նչ պէտք է անէր կենդանին: Եթէ նա մէկին թողնէր գետի միւս ափի վերայ,

¹⁾ Չուլ Ռօմնոս—նոյնտեղ, էր. 450.

²⁾ Դարւին—մարդու ծագումը, էր. 47.

խակ միւս բաղին բերէր տար տիրոջը այն նպատակով որ նորից վերադառնայ երկրորդին էլ բերելու համար, այն ժամանակ հասկանալի բան է, որ որսկանը կը զրկէր երկրորդ բաղից, որովհետեւ այս վերջինը դեռ կենդանի էր՝ և հէնց որ շունը նրան բաց թողնէր, նա իսկոյն կը փախէր մի կերպ: Ահա այս դատողութիւնները ինչպէս երեւի կատարւեցան շան գլխում, որոնց հետեանքն այն եղաւ, որ նա մի բաղին ավի վերայ թողնելուց առաջ, նրան խեղդեց և յետոյ կենդանի բաղին տարաւ իր տիրոջը տալու:

Կարծեմ, որ ընթերցողը կը համաձայնէի, որ շան ընտրած միջոցը ամենալաւ ելքն էր, որին կարելի էր դիմել, եւ եթէ այդ կենդանու տեղը մարդ լինէր, որին մի որ և է պատճառով նոյնպէս անհնարին լինէր երկու վիրաւորւած բաղերին միանգամից անցկացնել գետով, նա անկասկած կ'ընտրէր նոյն միջոցը, որին դիմել էր որսկանի խելացի շունը...

Նոյնպէս հետաքրքիր է Գարւինի գրքում բերւած մի ուրիշ պատմութիւն:

Գոկտոր Հեյսը իր սահնակում լծում էր շներ և նրանց օգնութեամբ միշտ զբօսնում էր սառուցի վերայ: Չարմանալի է, որ այդ շները, երբ սառուցը հաստ էր լինում, վազում էին մէկը միւսին մօտիկ, իսկ ալետեղ, ուր սառուցը բարակում էր և կարող էր ամեն մի բոլակ կտրուիլ, նրանք հեռանում էին իրարից և ալետէս էին քաշում սահնակը:

Անների իրարից հեռանալը, ասում է Գարւինը, յաճախ ծառայում էր ճանապարհորդների համար իբրեւ առաջին նախազգուշութիւն և ազատցոյց, որ սառուցը դառնում է բարակ ու վտանգաւոր ¹⁾:

Հարկ եմ համարում այստեղ մատնանիշ անել շների մի զարմանալի ընդունակութեան վերայ:

Նրանք ոչ միայն ճանաչում են իրանց տէրերին շատ տարիներ բացակայութիւնից յետոյ, որը ցոյց է տալիս որ շները ունեն մեծ չիշողութիւն, այլ և ընդունակ են մտաբերել իրանց ծանօթներին, եթէ ցոյց տան նրանց վերջինների լուսանկարները: Շները՝ ինչպէս երեւում է, ընդունում են ծանօթների պատկերները և լուսանկարները կենդանի մարդկանց տեղ:

¹⁾ Գարւին, նոյն տեղը եր. 46.

Ահա ինչ է պատմում Զ. Ռոմենսը աչք բանի մասին:

Անգլիայից մի մարդ գործով գնացել էր Հնդկաստան, թողնելով իր ընտանիքը և չունը Անգլիայում: Նրա հեռանալուց երկու տարի ուշ, նրա ընտանիքը ստանում է նրա մեծ դիրքով նկարած պատկերը չրջանակի մէջ: «Հէնց որ չունը մոտաւ աչն սենեակը, որի մէջ դրած էր պատկերը, նա ճանաչեց իր տիրոջը, թէև չէր տեսել նրան երկու տարւալ ընթացքում. մոտեցաւ պատկերին և սկսեց լիզել տիրոջ երեսը»¹⁾:

Եթէ չեմ սխալուում՝ աչն երեւոյթը, որ շնորք ընդունում են պատկերը կենդանի մարդու տեղ, գոյութիւն ունի շատ վայրենի մարդկանց շրջանում:

Սակայն ամենահետաքրքիր կենդանին զգացմունքների և խելքի զարգացման տեսակէտից անկասկած կապիկն է: Առաջ ծանօթանանք նրանց զգացմունքների հետ: Մայրական սէրը աչնբան զարգացած է, որ կապիկները յաճախ չեն կարողանում տանել իրանց երեխաների մահը: Իսկ եթէ մեռնում է մայր-կապիկը, նրա որբերը չեն մնում անխնամ. նրանց իսկոյն վերցնում են ուրիշ կապիկներ և գեղեցիկ կերպով հոգում նրանց համար:

Նրբ կապիկները իրանք չեն ունենում երեխաներ, նրանք շատ անգամ գողանում են ուրիշ կապիկների երեխաներին և նրանց խնամում աչնպէս, որ կարծես իրանց սեպհական երեխաները լինեն: Մի քանիսները մինչև անգամ գողանում են շան և կատուի ձագերին:

Դարւիւնը պատմում է մի կապիկի մասին, որը հողնպէս գողացել էր կատուի ձագ և ամբողջ օրեր նրանով էր զբաղւում: Մի օր որդեգիր—կատուն աչնբան աներախտագէտ դտնւեց, որ ճանգերով ճանգրտեց իր բարերար կապիկն: Վերջինս շատ զարմացաւ, սկսեց զիտել կատուի թաթերը և գտնելով նրանց վրալ սուր ճանդեր, իսկոյն առանց երկար մտածելու առամներով կրծոտեց և դէն գցեց կատուի ճանդերը:

Զարմանալի սրտով են վերաբերւում կապիկները դէպի իրանց հիւանդ կամ վիրաւորւած ընկերները: Նրբ մէկը նրանցից հիւանդանում է, նրան շրջապատում են միւսները, զրկում են, համբուրում են, զանազան համակրական ցոյցեր են անում հիւանդի ցաւը թեթեւացնելու համար:

Պատմելով մի աչք տեսակ դէպքի մասին Ռոմենսը ասում է. «սկսած աչն լոսիկից, երբ մէկը հիւանդացաւ, ընդհանուր ուշադրութիւնը և հոգա-

¹⁾ Ռոմենս, նոյն տեղ եր. 462.

տարութիւնը զէպի նրան ընկերներէ կողմից կրկնապատկեց, հետաքրքիր և միևնույն ժամանակ սաստիկ սրտաշարժ էր տեսնել, թէ ինչպիսի քնքշութեամբ հոգում էին նրանք փոքրիկ էակի հիւանդի համար: Յաճախ նրանք մըցում էին իրար հետ ամեն մէկը ցանկանալով, որ առաջ ինքը քնքուշ ծառաութիւններ անի հիւանդին: Նրանք շատ անգամ գողանում ընտում էին քաղցր ուտելեղեններ հիւանդի համար: Նրանք քնքշաբար վերցնում էին հիւանդին իրանց ձեռքերի վերայ, սեղմում էին իրանց կրծքին և լաց էին լինում նրա համար աչնպէս՝ «ինչպէս սիրող մալը լաց է լինում իր հիւանդ երեխայի համար»¹⁾:

Կապիկները սաստիկ բարկանում են, երբ նրանց վերայ մէկը ծիծաղում է: Բազմաթիւ օրինակներից բերեմ մէկը:

Մի կապիկ մուրճը ձեռին աշխատում էր կակալ կոտրել, երբ նրան մօտեցաւ մի կին և սկսեց հետաքրքրութեամբ նայել նրա վերայ: Վերջապէս կապիկը կոտրեց կակալը, որ տարաբաղաբար փչացած դուրս եկաւ: Նրա առաջ կանգնած կինը տեսնելով նրա անաջողութիւնը սկսեց ծիծաղել: Այդ որ տեսաւ կապիկը կատաղեց ու սկսեց չարտել կնոջ վերայ ինչ որ կար նրա շուրջը. կակալներ, մուրճը, սրճամանը և շորերը: Դարւինը նոյնպէս նկատել է կապիկների բնատուրութեան այդ զիծը. նա պատմում է, որ երբ կենդանաբանական ալգիի պահապանը մօտենալով նոյն ալգիում գտնուող մի կապիկի վանդակին հանում էր գլխանից մի նամակ կամ գիրք ու սկսում բարձր կարդալ, կապիկը աչնքան բարկանում էր, որ կատաղութիւնից սկսում էր կրծոտել իր թաթը: Հասկանալի է, որ այս զէպը կապիկը պահապանի գիրք կարդալը համարում էր մի տեսակ ծաղր իրա վերայ:

Կապիկների որձերը թռչունների որձերի նման շատ անգամ ունենում են աւելի աչքի ընկնող գոյներով ներկած մարմին: Ուրիշ խօսքերով կապիկների որձերի մարմինը աւելի շատ է նախշած, աւելի գեղեցիկ է (կապիկների տեսակէտից) քան թէ էգերինը: Ընթերցողին արդէն յայտնի է, որ թռչունների վերաբերմամբ այդ փաստը բացատրւում է նրանով, որ թռչունների էգերը ունենալով դադափար գեղեցկի մասին, ընտրում են միշտ աւելի գեղեցիկ որձերին իրրեւ ամուսիններ: Որովհետեւ այդ տեսակ ընտրութիւն կատարւել է դարերի ընթացքում, դրանցից այն հետեւանքն է դուրս եկել, որ մինչդեռ էգերը երկար ժամանակի ընթացքում մնացել են անփոփոխ, որձերը ընդհակառակը դառել են աւելի գեղեցիկ:

¹⁾ Ռոմենո, նոյն տեղը եր. 481.

Մենք նոյնպէս վերև տեսանք, որ նոյն իսկ որձերի գեղեցիկ լինելու ֆակտը ապացոյց է, որ թռչունները ունեն յայտնի էսթէտիկական զարգացում:

Նոյն բացատրութիւնը տրւում է նաև կապիկների վերաբերմամբ: Այդ պատճառով ընդունւում է, որ կապիկները նոյնպէս ունեն ճաշակ դէպի գեղեցիկը, թէև այդ ճաշակը այնքան չէ զարգացած՝ ինչպէս թռչունների շրջանում:

Ես արդէն ասացի, որ կապիկները ունեն բաւականին զգայուն սիրտ: Պէտք է աւելացնեմ, որ սէրը դէպի իրա անբաղդ ընկերներեմն կապիկին հասցնում է մինչև հերոսութիւն: Ահա լսեցէք, թէ ինչ է պատմում յայտնի Բրեմը:

Մի անգամ ճանապարհորդելով Արխանխայում Բրեմը իւր ընկերների հետ պատահեցին մի խումբ կապիկների, որոնք բոլորն էլ արդէն բարձրացել էին մօտակալ լեռան գագաթը, բացի մի փոքրիկ կապիկից, որը դեռ նոր էր աշխատում բարձրանալ ձորից: Ահա հէնց այդ խոցովի վերայ թափեցան ճանապարհորդների շները: Կապիկի դրութիւնը սարսափելի էր, նա չատկեց մի բարձր քարի վերայ, բայց շները իսկոյն շրջապատեցին նրան: Նա սկսեց ողբալին ձայնով գոռալ... «Այդ ժամանակ որձերից ամենամեծը մի խկական հերոս, նորից ցածրացաւ սարից, կամաց կամաց մօտեցաւ փոքրիկ կապիկին, սկսեց նրան զզուել և լեռնոյ հանդիսաւոր կերպով տարաւ նրան իր հետը»:

Ակներև է, որ այս դէպքում ազատիչ կապիկը պատրաստուել էր զոհելու իր կեանքը, որովհետև ներքեւում այնքան շներ կային, որ նրան երբէք կենդանի բաց չէին թողնիլ: Սակայն բաղդի բերմամբ նա և փոքրիկ կապիկը ազատեցան ահա ինչպէս. ազատիչ կապիկի վարքը այնքան զարմացրել էր շներին, որ նրանք սուշած նայում էին, երբ մեծ ու փոքրիկ կապիկները հեռանում էին նրանցից: Ուրեմն կապիկների փրկութիւնը բոլորովին պատահական չէր:

Անկասկած կապիկները ունին նաև մեծ խելք. եթէ մի որ և է ցածր կենդանի աշխատում է կոտրել օրինակ կակալ, նա ըստ մեծի մասին օգտւում է իր ատամներով: Իսկ եթէ վերջինները մի որ և պատճառով չեն օգնում, կենդանին սաստիկ տանջւում է, չը կարողանալով նպատակին հասնել: Եթէ այդ բոլորում տաք նրան մի մուրճ, նա անկարող կը լինի օգտւել նրանով: Կածր կենդանիները

ընդունակ չեն գործ ածել գործիքներ իրանց նպատակին հասնելու համար:

Բայց եթէ նոյն փորձը անէք կապիկի հետ, բոլորովին հակառակ հետեանք կը ստանաք: Օրինակ եթէ կապիկին տաք մի մուրճ կամ քար այն ժամանակ, երբ նա տանջուած է աշխատելով կոտրել կակալը, նա առաջ հետաքրքրութեամբ կը զննի նրան, յետոյ կը փորձի օգտուել նրանով: Սկզբում փորձը անաջող կը լինի. կապիկը կը խփի կակալին մուրճի ոչ այն մասով, որով հարկ է խփել, բայց վերջ ի վերջոյ երկար տանջելուց յետոյ նա կընտելանայ մուրճի կանոնաւոր գործ ածելուն:

Մի որ և է նոր, չը տեսնուած երևոյթ սաստիկ հետաքրքրում է կապիկին և նրա մէջ արտադրում է ցանկութիւն անպատճառ գտնել նրա պատճառը: Եթէ տաք կապիկին մի առարկայ, որը նա երբէք չի տեսել, նա խսկոյն կը սկսի զննել, դիտել, մասերի բաժանել նրան որպէս զի իմանայ նրա կազմութիւնը:

Պրոֆեսոր Ռօբերտսոնը պատմում է հետեւի դէպքը:

Պարիզի Jardin des plantes-ում մի կապիկի վանդակի առաջ կանգնած ամբոյսը գցում էր նրան պտուղներ, որոնց նա ագահութեամբ ուտում էր: «Այնչափ մէկը վանդակի մէջ զցեց փոքրիկ ձուի հալելի, որը ունէր ամուր փաշտեալ չըջանալի. կապիկը խկոյն վեր առաւ հալելին և քկսեց նրան պտտեցնել... Յանկարծ նա կանգնեց. նրան զարմացրեց իրա պատկերը հալելու մէջ, մի րոպէ նա տարակրտանքի մէջ էր, յետոյ արագութեամբ աչքերը ուղղեց դէպի հալելու քամակը, ցանկանալով աջնոտեղ գտնել պատկերի արտադրողին: Ոչինչ չը գտնելով նա զարմացաւ և ինչպէս երևում է, վերագրեց այդ հանգամանքը իրա անարագաշարժութեան: Նա նորից բարձրացրեց հալելին, զգուշութեամբ մօտեցրեց իրան և արագ շարժելով գլուխը՝ նախ և հալելու քամակին: Այս անգամ էլ ոչինչ չը գտնելով, նա էլի կրկնեց իր փորձը: Այժմ նրա զարմացքը փոխեց բարկութեան. նա սկսեց ինչքան ուժ ունէր, խփել վանդակի լատակին հալելիով, մինչև որ վերջինս փշրեց»...

Ռենդեր պատմում է, որ երբ առաջի անգամ նա տեսց իր կապիկներին ձու ուտելու համար, վերջինները փշրեցին ձուն, աչնպէս որ հեղուկի մեծ մասը թափեց և կապիկներին շատ քիչ հեղուկ մնաց ուտելու համար: Բայց լետոյ կապիկները գտան ձու ուտելու հնարը. նրանք՝ երբ ձուն ստանում էին, զգուշութեամբ կտրորում էին ձրւի մի ծալը, ապա կճեպի կտորները հանում իրանց մատներով ու լետոյ ուտում աչնպէս, որ ոչինչ չէր կորչում:

Ռենգերը մի անգամ տեղ իր կապիկներին շաքարի մի կտոր փաթած թղթի մէջ: Շաքարի հետ նա գրել էր թղթի մէջ ևս մի պիծակ (օճա): Կապիկը շտապով բաց արեց շաքարը, որ ուտի, քանկարծ պիծակը կծեց նրան: Գրանից վետու Ռենգերը էլ չը կարողացաւ խաբել կապիկներին. և իր նա փաթածելով թղթի մէջ շաքարի հետ մի պիծակ, տալին էր կապիկներին, սուքա առաջ զգուշութեամբ մօտեցնում էին փաթածած առարկան իրանց ականջներին, որպէսզի իմանան թէ արդեօք թղթի մէջ չը կա պիծակ ¹⁾:

Մի ընտանիքում ապրում էր մի կապիկ: Որպէս զի նա ազատ չը թափառի սենեակներում, նրան շղթաւով կապել էին սենեակում դրած ծանր լւացարանից (УМЫВАЛЬНИКЪ): Ամեն անգամ երբ կապիկը ուզում էր վեր առնել մի առարկայ, որը նրանից հեռու էր դրած և շղթայի երկարութիւնը թուլ չէր տալիս նրան վերցնել առարկան, կապիկը հետեւալ միջոցին էր գիմում: Մօտենալով լւացարանին, նա գործ էր դնում իր բուր ուժը, որպէս զի շարժի տեղից լւացարանը և մօտեցնի վերջինը իրան հետաքրքրող առարկային: Նա աչնքան խթում էր, որ լւացարանը մօտենում էր ցանկալի առարկային, աչն ժամանակ նա ազատ մօտենում էր և վերցնում առարկան:

Նոյն կապիկը սաստիկ ատում էր աղ ընտանիքում ծառայող աղախներն և երբ սա մտնում էր նրա սենեակը՝ կապիկը չալրտում էր ամեն բանին, որ ձեռքն էր ընկնում, ցանկանալով աղ առարկաներով խփել աղախներն, բայց որովհետեւ կապիկը փոքրիկ էր իսկ աղախները բարձրահասակ, աղ պատճառով կապիկի շալրած առարկաները զիպչում էին աղախնի ոտներին ոչինչ վեաս չը հասցնելով նրան: Աղ հանգամանքը միաչն աղախնի ծիծաղն էր շարժում: Տեսնելով նրան ծիծաղելիս՝ կապիկը աւելի ևս կատաղում էր:

Վերջապէս նա հետեւալ միջոցը հնարեց. հէնց որ աղախները մտնում էր սենեակը, կապիկը առնում էր երկար փայտը, մուրճը և միւս ծանր առարկաները ու նրանց ձեռքերում բռնած աշխատում էր բարձրանալ սենեակում դրած կախարանի (ВѢШАЛКА) վերայ:

Հասնելով կախարանի գագաթին, նա իսկույն աչնտեղից գցում էր փայտը, մուրճը և միւս առարկաները, որոնք աչս դէպքում կարող էին զիպչել աղախնի կրծքին, գլխին, եթէ նա չուտով չը փախչէր սենեակից:

¹⁾ Դարւին, նոյն տեղ, էջ 47.

IV

Ընդհանուր հայեացք: Ամեօբան, Պոլիպները, կակղամարմինները, միջատները, ողնաւորները, ձկները, թռչունները, կաթնասունները: Նշրակացու-
թիւն՝ Մարդու և կենդանիների հոգեկան երևույթները ունեն միևնույն հիմ-
նական գծերը:

Այժմ աւելորդ չի լինիլ մի ընդհանուր հայեացք ձգել առաջ
բերած բոլոր ֆակտերի վերայ:

Մենք տեսանք, որ կենդանական աշխարհի ամենացածր ներ-
կայացուցիչները—ամէօբան, պոլիպները և միւսները—բոլորովին
զուրկ են խելքից: Զգայնութիւնն ու խելքը սկսում են նկատելի
դառնալ, այն էլ շատ թույլ կերպով, կակղամարմինների (մոլլիսկ-
ների) դասակարգում: Միջատները ունենալով աւելի բարձր կազմը-
ւածք քան կակղամարմինները, օժտւած են նաև աւելի մեծ խել-
քով քան վերջինները:

Սակայն ամենից աւելի զարգացած խելք ու զգայնութիւն
ունեն ողնաւոր (այսինքն մէջքի ողնաշար ունեցող) կենդանիները,
որոնք միևնույն ժամանակը համարւում են ամենաբարձր, ամենակա-
տարեալը բոլոր կենդանիներից:

Ողնաւորներից էլ այն դասակարգերը, որոնք ունեն աւելի
ցածր կազմւածք, աւելի քիչ են զարգացած խելքով, նրանց զգա-
յնութիւնն էլ աւելի թույլ է զարգացած քան աւելի բարձր ողնա-
ւորներինը: Օրինակ ձկները, որոնք պատկանում են ամենաստոր
ող-
նաւորների թւին, համեմատաբար շատ ստոր են իրանց ոգու զար-
գացմամբ:

Ձկներից մի աստիճան աւելի բարձր կանգնած սողունները,
դորսերը, մողեսները (ящерицы) զերազանցում են ձկներին իրանց
խելքով:

Իսկ թռչունները ու կաթնասունները և վերջիններից մանա-
ւանդ շները և կապիկները իրանց զգացմունքներով և խելքի զար-
գացումով արդէն յիշեցնում են մարդուն:

Խօսելով այդ հարցի մասին Դարւինը հետեւեալ նկատողու-
թիւններն է անում. «Չարհուրանքը բոլորովին միակերպ է ներգոր-
ծում թէ մեղ և թէ կենդանիների վերայ. նրանց մկանունքները

դողում են, սիրտը բաբախում է, մաղերը ցցում են... Ամենքը գիտեն թէ ինչպիսի հեշտութեամբ կենդանիները հասնում են կատաղութեան և ինչպէս պարզ կերպով արտայայտում են իրանց կատաղութիւնը... Իրանց ճշտութեամբ յայտնի Ռենգերը և Բրեմլը հաւատացնում են, որ իրանց կապիկները իսկապէս ընդունակ էին վրէժխնդրութեան: Շան սէրը դէպի իր տէրը զարմանալի է» ¹⁾:

Ընթերցողին յայտնի է, որ մայրական սէրը, սէրը դէպի ամուսինը, հաւատարմութիւնը ամուսնական կապի վերաբերմամբ, ատելութիւնը, հպարտութիւնը—այս բոլոր զգացմունքները գոյութիւն ունին ոչ միայն մարդկանց այլ և կենդանիների հասարակութիւնների մէջ:

Բացի դրանից կենդանիները օժտւած են նաև բարդ զգացմունքներով: «Ամենքը նկատած կը լինեն շան խանդոտութիւնը, որը արտայայտւում է, երբ նրա տէրը սկսում է գզել մի ուրիշին: Նոյնը նկատւում է և կապիկների շրջանում: Այդ ցոյց է տալի, որ կենդանիները ոչ միայն սիրում են, այլ և ցանկանում են սիրւած լինել... Նրանք սիրում են խրախուսանք և զովասանք... Մեծ շունը ուշադրութիւն չի դարձնում լակոտների հաչոցին և այդ չատկութիւնը կարելի է անւանել մեծահոգութիւն: Մի քանի գիտնականներ նկատել են, որ կապիկները բոլորովին չեն սիրում, որ նրանց վերայ ծիծաղեն և երբեմն իրանց վիրաւորւած են ձևացնում» ²⁾:

Մտաբերելէք, որ կենդանիները ընդունակ են հիանալ գեղեցկութիւնով. մի քանի կենդանիների էգերը ընտրում են իրանց համար իբրև ամուսին աւելի գեղեցիկ որձերին, իսկ վերջինները գեղեցիկ սեռի սիրտը գրաւելու համար կոկետաբար ցոյց են տալիս իրանց շքեղ զարդերը: Ն[թ]է որձի թւերն են գեղեցիկ, նա բաց է անում էգերի առաջ իրա թւերը հովհարի նման անպէս, որ երևան գալ նրա բոլոր գեղեցկութիւնը: Իսկ եթէ գեղեցիկ է որձի, օրինակ, կուրծքը և ոչ թւերը, նա երբեք չի բաց անում գեղեցիկ սեռի առաջ իրա թւերը, այլ վերում է շքեղ կուրծքը:

¹⁾ 2. Գարւին—Մարդու ծագումը, էջ 37—38.

²⁾ 2. Գարւին նոյն տեղ էջ 40.

Եթէ այս ֆակտերին աւելացնենք և այն, որ Թուշուները ընդունակ են զմայլել գեղեցիկ երգով—ընդունակ են գնահատել մուղիկան, այն ժամանակ կը գանք այն եզրակացութեան, որ Թուշուները ունեն յայտնի էս թե տի. քական զարգացում: Գեղեցկի մասին ունին գաղափար նաև շատ ուրիշ կենդանիներ, բայց ինչպէս երևում է նրանց ճաշակը աւելի քիչ է զարգացած քան Թուշուներինը:

Վերջապէս չը պէտք է մոռանալ և այն հետաքրքիր ֆակտը, որը ես բերեցի վերև կապիկների կեանքից և որը ցոյց է տալի, որ կենդանիների ընկերասիրութիւնը կարող է նրան հասցնել մինչև հերոսութեան...

Գալով կենդանիների խելքի զարգացման հարցին պէտք է նկատել, որ կենդանիները օժտւած են խելքի գլխաւոր տարրերով. նրանք ունեն բաւական մեծ չիշողութիւն, հետաքրքրութեամբ դիտում և զննում են ամեն մի նոր առարկայ: Կապիկները, օրինակ, մի նոր բան տեսնելով երկար սկսում են աշխատել, տանջւել, որպէս զի իմանան հետաքրքրական առարկայի կազմաճքը: Մի կապիկ տեսնելով թէ ինչպէս է տանտիկինը բաց անում սանդուղը բանալիքով, սաստիկ հետաքրքրւեց և երբ նրան տւին բանալիքը՝ նա բոլոր իր ուշադրութիւնը կենտրոնացրեց սանդուղը բաց անելու վերայ. հազար անաջող փորձեր անելուց յետոյ, վերջապէս նա գտաւ բանալիքի գործածութեան գաղտնիքը:

Խօսելով Թուշուների մասին ես առիթ ունեցայ յայտնել, որ նրանց ուղեղը՝ մարդկանց ուղեղի նման, ընդունակ է կազմել նոյն իսկ ասոցիացիաներ: Այստեղ աէտք է աւելացնեմ, որ այդ երևույթը ճիշտ է ոչ միայն Թուշուների, այլ և շատ ուրիշ կենդանիների վերաբերմամբ, օրինակ՝ շների, կապիկների, կատունների...

Շների և կապիկների կեանքից բերած ֆակտերը ցոյց տւին մեզ, որ այդ կենդանիները դնւելով արտաքին պայմանների շնորհիւ բաւական դժար դրութեան մէջ, ընդունակ են յաճախ ելք գտնել այդ դրութիւնից դուրս գալու համար շնորհիւ իրանց խելքին: Շատ անգամ կենդանիները գեղեցիկ կերպով փոփոխում են արտաքին պայմանները, յարմարեցնելով նրանց իրանց նպատակների համար: Իսկ հէնց այդ ընդունակութիւնն է, որ կոչւում է խելք:

Շատ անգամ կենդանիները այնպիսի խելացի դործողութիւններ են անում, որ նրանցից աւելի գերազանց, աւելի խելացին չէր կարող անել նոյն իսկ մարդը, եթէ նոյն դրութեան մէջ գտնւէր:

Այդպիսով ունենալով աչքի առաջ բոլոր վերեւ բերած ֆակտերը, անկարելի է կարծեմ չը զալ այն եզրակացութեանը, որ մարդու և կենդանիների հոգեկան երևույթները ունեն միևնոյն հիմնական գծերը: Բոլոր զանազանութիւնը մարդու և կենդանիների մէջ՝ մեզ հետաքրքող հարցի վերաբերմամբ, կայանում է նրանում, որ մարդու խելքը ու զգացմունքները աւելի զարգացած են, աւելի բարդ են:

Ունենալով ինկատի այն հանգամանքը, որ բարձր ողնաւորները աւելի զարգացած խելք ու զգացմունքներ ունին քան մրջինները, մենք կարող ենք Ձոն Լեօբբովի այն խօսքերը, թէ «մրջինների մոաւոր ընդունակութիւնները զանազանում են մարդկային մոաւոր ընդունակութիւններից ոչ այնքան էութեամբ, ինչքան աստիճանով» փոփոխել այսպէս՝ Կենդանիների մոաւոր ընդունակութիւնները (և աւհասարակ հոգեկան երևույթները) զանազանում են մարդկային մոաւոր ընդունակութիւններից ոչ այնքան էութեամբ, ինչքան աստիճանով:

Իսկ եթէ այնուամենայնիւ մեզ թւում է, թէ իբր մեծ տարբերութիւն կայ կենդանիների և մարդկանց հոգեկան երևույթների մէջ, այդ առաջանում է նրանից, որ մենք համեմատում ենք կենդանիներին այն մարդկանց հետ, որոնք սաստիկ զարգացել են կուլտուրայի ազդեցութեան տակ:

Բոլորովին տարբեր եզրակացութեան կը գանք, եթէ համեմատութեան համար վերցնենք ոչ թէ կուլտուրական ցեղերը, այլ վայրենի մարդկանցը, որոնց մոաւոր զարգացումը ողորմելի է, ճաշակը անտանելի և զգացմունքները «անասնական»:

Եթէ, ասում եմ, այդ վայրենի մարդկանց հոգեկան երևույթները համեմատենք կենդանիների հոգեկան երևույթների հետ, այն ժամանակ մենք կը համոզւենք, որ իրօք այնքան էլ մեծ չէ այն զանազանութիւնը, որը կայ մարդկանց և կենդանիների խելքի և զգացմունքների մէջ:

Այս եղբակացութիւններն, որոնց ապացուցանելու պատիւը անկասկած պատկանում է Չարլզ Դարւինին, ունեցան մեծ հետեանքներ: Բերեմ դոցանից մէկը:

Առաջ մարդու հոգեկան երևոյթները ուսումնասիրում էին բոլորովին առանձին և այդ ուսումնասիրութիւնը յաճախ հանդիպում էր ահագին դժւարութիւնների, որովհետև այդ երևոյթները շատ բարդ են:

Մեզ համար այժմ պարզ է, որ նոյն իսկ մարդու հոգեկան երևոյթների ուսումնասիրութեան համար, մենք պէտք է առաջ ծանօթանանք և ուսումնասիրենք կենդանիների հոգեկան երևոյթները, որովհետև միևնոյն երևոյթները կենդանիների շրջանում առաջ են գալիս աւելի հասարակ ձևով, ուստի և աւելի հեշտ է նրանց ուսումնասիրելը:

Այդպիսով մարդու հոգեբանութիւնը չը պէտք է առանձին դոյութիւն ունենայ, այլ պէտք է լինի կապած կենդանիների հոգեբանութեան հետ. մարդու հոգեբանութիւնը պէտք է յենւի կենդանիների հոգեբանութեան վերայ:

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Ֆ. Կ. ԿՈՆԻԲԵՐ (G. C. Conybeare), պրոֆեսոր Օկսֆորդի համալսարանի. Մի բազմաթիվ Արիստոտելի Ստորոգութեանց և Մեկնութեանց, յաղագս Աշխարհի, յաղագս Առաքինութեանց և Մոլութեանց և Պորփիրի ներածութեան յունարէն բնագիրներին — հին հայերէն թարգմանութիւնների հետ:

(Մուրճ)՝ ի պատարածան ընթերցողները չեն մոռացել անտարակոյս որ սեպտեմբեր ամսին Լոնդոնում կապացած Արևալագէտների համաժողովում ես առաջարկեցի մի «Համազգային ընկերութիւն» կազմել հայկական ուսումների առաջացման համար (pour l'avancement des études arméniennes): Յատկապէս ջանացի մատնացողք անել աչն օգուտը, որը համանման հելլենական ընկերութիւնները այսպիսով կարող կը լինէին ստանալ հայագէտների աշխատակցութիւնից՝ թէ բնաստութեան թէ պատմութեան և թէ բնագիտության քննութեան տեսակէտներից: Աչն ժամանակ չալտած փափագս արդէն սկսում է իրադորձել *Anecdota Oxoniensia* կոչւած չարքումը մի չքիզ հասորի հրատարակութեամբ ¹⁾:

¹⁾ Անհետաքրքրական չէ լմանալ մեր ընթերցողներին որ չարքելի

Այդ ժողովածուն՝ տպւած Օկսֆորդի համալսարանի ծախքով և նրա իսկ տպարանում, պարունակում է իւր մէջ բնագրեր, դոկումենտներ և քաղւածքներ, հանւած գլխաւորապէս դեռ անտիպ ձեռագրերից որոնք պահպանւել մնացել են Օկսֆորդի Բոդլէյեան գրադարանում (Bodleian Library), — բաժանւած մի քանի սերիաների՝ կլասսիկականի, սեմիթականի, արիականի և մի չորրորդի, որը վերաբերում է միջին դարերին և նորագոյն ժամանակներին: Արդ՝ կլասսիկականի բաժնումն է (հատոր I, մաս վեցերորդ) որ լոյս է տեսել աչն աշխատութիւնը որը մեզ հետաքրքրում է և որի ամբողջ վերջագիրը հետևեալն է.

հայագէտ պրոֆեսորը իւր ֆրանսերէն գրած ներկալ լօղւածի սկիզբը, աչ սինքն մինչև այս տեղը — ինքն է գրել հայերէն: Մ. Խ.

„A Collation with the ancient Armenian versions of the Greek text of Aristotele's Categories, De Interpretatione, De Mundo, De Virtutibus et Vitiis and of Porphyry's Introduction, by Frederick Cornwallis Conybeare, U. A. Late fellow and Praelector of University College, Oxford, at the Clarendon Press, 1892 ¹⁾». քառածալ, էջ XL և 184, մի ֆակսիմիլով (fac simile) Պաւլա քաղաքում զտնուդ ձեռագրից»:

Գիրքը ներկած է պ. Արգար Յովհաննիսեանին թիֆլիսից և հայր Գաբրիելին Ս. Ղազարում: Հեղինակը, պ. Կոնիքիրը, որի մասին ես իտեղ եմ լիակատար կերպով իմ «Հայկաբանութիւնը եւրոպայում» աշխատութեանս մէջ, որը տպագրութեան ընթացքի մէջ է «Մուրճ»-ում, — աղիքան քաջ լաւանի է հալ գիտնականներին, որ ես աշտուղ չեմ մտնելու կենսագրական մանրամասնութիւնների մէջ նրա վերաբերեալ, Գիտնականի չիշեալ աշխատութիւնը ինչպէս որ աղ երեւում է վերնագրից մի բաղդատութիւն է Արիստոտելի և կամ սրան վերագրւած բաղմաթիւ

¹⁾ Մի բաղդատութիւն հայկական հին թարգմանութիւնների լուսական բնագրերի հետ—Արիստոտելի ստորագրութիւնների, մեկնութիւնների, Աշխարհի, Առաքինութիւնների և Մուլութիւնների և Պորփիրի ներածութեան — աշխատասիրեց Յրեղիբիկ Կոռնալլիս Կոնիքիր, նախկին ուսանող և սրբֆեսոր Օկսֆորդի համալսարանի, Կրաբենդոնի տպարան, 1892:

գրածների հայկական հին թարգմանութիւնների, աղինքն 1) Ստորագրութիւնները (հրատարակութիւն Waitz'ի), 2) Մեկնութիւնների մասին (հրատարակութիւն Նոյնի), 3) Աշխարհի մասին (հրատարակութիւն Բեկկերի—Բերլինում), 4) Առաքինութիւնների և Մուլութիւնների մասին (հրատարակութիւն Նոյնի) և 5) Պորփիրի ներածութիւնը ստորագրութեանց (հրատարակութիւն Ադոլֆ Բուսսէ):

Ստորագրութիւնների և Մեկնութիւնների բաղդատութիւնը բռնել է էջ 1—50. և Waitz'ի լուսարէն բնագրի հետ ալտիսով բաղդատու հալ թարգմանութեան բնագրի—հիմնւած է Սուրբ Ղազարի բնագրի վրալ հրատարակւած 1833 թւին Կոնիքիրի, Մամբրէի և Գաբիթ Անյաղթի գրւած քննարկ (Ստորագրութիւններ էջ 339—408), Նոյնը բացատրութիւնների հետ էջ 409—458, մեկնութիւնները էջ 461—486, իւր կողմից հիմնւած կրեք ձեռագրերի վրալ, Միթարեանների գրադարանից, որպէս նաև Աղալին գրադարանի և երուսաղէմի պատրիարքարանի լուսադոնի ձեռագրերի վրալ: Պ. Կոնիքիրը մեզ հաւատացնում է որ էջմիածնի ձեռագրերը ոչինչ նոր բան չեն աւելացնում: Դժբախտաբար նա արդէն տպել էր տեղ իւր բաղդատութիւնը, երբոր մի ուրիշ ձեռագիր գտաւ Խալիլալի Պաւլա քաղաքի համալսարանի գրադարանում: Այս ձեռագիրը երկու հատորի մէջ, թւագրւած D 42, 43, և գրւած բամբակեալ հաստ և շատ ուլիտակ թղթի վրալ, թերեւ ընդօրինակւած լինի

1100 և 1300 թվականների միջեր-
քում, բայց կազմը պատկանում է
XV դարուն: Յաջորդ դարի սկզբում
ալզ ձեռագիրը պատկանում է եղել
Պերո դի Բեկարիզի (Pero di Becca-
risi),—Պաւլացի մի աղնականին,
իսկ քիչ չետոյ նշանաւոր արեւելագէտ
Թէգէ Ամբրուազի'ն կամ Ամբրոզիո'ն:
Ալբանեան դքսերի գերդաստանից,—
որ հեղինակ է մի ներածութեան քաղ-
դէական, ասորական, հայկական և ալ
լեզուներէ, Պաւլա, 1539, որի մէջ նա
օրինակներ է քաղում ալս իսկ ձեռա-
գրից: Անուանեալ ալս ձեռագիրը անց-
նում է Պաւլալի համալսարանը, ուր
ալժմա էլ նա պահուում է: Ահա զրա
բովանդակութիւնը: Հատոր I. 1) Բոյսերի
լուծական անունների մի
ցանկ, գրած հայերէն տառերով.
զրանց համապատասխանող հայկա-
կան ժողովրդական անունների հետ,
2) Փիլոնի բառարանը Հին կտա-
կարանի չափով անունների, 3) Յա-
ղագս աշխարհի (ոչ կատա-
րեալ) և Հաղագս առաքինու-
թեանց, 4) Պորփիւրի ներա-
ծութիւնը, 5) Դաւթի բացա-
տրութիւնը ալս ներածութեան մա-
սին, 6) Մի բացատրութիւն ստորո-
գութիւնների մասին (ոչ կատա-
րեալ), 7) Մի թարգմանութիւն Նե-
կլիդեսի սկզբի, պատկերներով հան-
չերձ: Հատոր II, Ստորոգութիւնք
և չաղագս մեկնութեանց:

Արդ՝ երկրորդ հատորն է աւելի
կարեւորը, որովհետեւ զրա բնագիրը
չափ մաքուր է, ալսինքն վերծ մի-
ջին դարերի ընդօրինակողների բաղ-
մաթիւ սխալներից որ և հասցնում է
մինչ աւալիսով հինգերորդ դարուն:

Աւալիսով ալ. Կոնիբիրը ստիպ-
ւած է եղել ճորից աչքի անցնելու
իւր բաղդատութիւնը Պաւլալի ձե-
ռագրի հետ և տպել չաւելածներ
էջ 89—106 ստորագրութիւնների և
մեկնութիւնների համար: Մի երկ-
րորդ չաւելածում նա մէջ է բերել
նաև զոցա բնագիրը—աւելացնելով
երբեմն սուրբ Ղազարի (Վենետիկ)
բնագրի վարձանները, երբեմն էլ
Նրուսաղէմի և Պարիզի ձեռագրերինը
(ստորագրութիւններ՝ էջ 107—183):
Պր. Կոնիբիրը նշմարել է տալիս, որ
կէտագրութիւնը չափ խնամքով է
կատարած, թէև ուղղագրութիւնը
բոլոր տեղերում միեւնոյնը չէ: Շեշտա-
գրութիւնը նշանակւած է խնամքով.
բայց ես համամիտ չեմ հաւագէտ զիտ
նականի կարծիքին, որ իբր թէ այս
ղէպքում մենք մի լեզւաբանական
գիւտ ունինք անելու հին հայկական
չեշտի նշանակութեան վերաբերեալ:
Նւ իրաւ, հայկական բութը և գծից
բարձր գրած ստորակէտի նման ա-
պաթարցը (ապոստրոֆ), (օրինակի
համար՝ Դոլ'աւ) ցոյց է տալիս ձե-
ռագրի մէջ միմիայն որ պէտք է
քիչ կանգ առնել,—մինչդեռ չեշտը
նշանակում է ալն բառերը, որ հար-
կուոր է բաձրացնել ձայնի չեշտով
և մասնաւորապէս թւում է ընդօրի-
նակութիւն լինել չեշտ-որոնները
նշանակելու համար,—չաճախ նաև
զոքա լոկ լուծարէնից արտագրւած
բառեր են, որոնց դրողը կամեցել է
պահպանել իրանց ծագումի չեշտը:
Եթէ բացի ալզ մենք համեմատելու
լինինք ալ. Կոնիբիրի արձանագրած
իրողութիւնը, թէ էջ 30 և թէ Պոր-
փիւրի ներածութեան Դաւթի գրած

բացատրութեան վերջը, որ արտագրւած է Պաւլոսի ձեռագրի մէջ,— ուր ընդօրինակողը նոյն խակ գրել է spiritus lenis նշանը ձախաւորով սկսող հալական բառերից առաջ, ըստ չունականի ¹⁾ մենք կը հասկանանք, թէ ինչ լեզւաբանական նշանակութիւն ունին այդ նշանները:

Անցնենք ալժամ ալս հալական հին վերախաների բովանդակութեանը: Պր. Կոնիբիրը նկատում է թէ կարեւոր ճանաչելու համար պէտք է, որ թարգմանութիւնը լինի. 1) հին, 2) բաւականին բառացի՝ չունական բնագիրը դատելու համար, 3) զերծ աղաւաղութիւններից, որոնք տեղի են ունեցել շարադրութիւնից չեւոյ: Անուանեալ նա վիճում է ստորագրութիւնների (կատեգորիաների) և մեկնութիւնների թարգմանութեան տարեթւի մասին ոճի տեսակէտից, ընդօրինակողների իրանց ցոյց տւած ցուցմունքների, թէ հին հեղինակի վկայութիւնների և թէ պատմական աւանդութեան տեսակէտներից: Ոճը է հալական գրականութեան ոսկեալ դարինը, աչսինքն V-ինը, բայց թէ սա չունարէնիցն է փոխադրւած հալերէն բառերով: Մարդ իրան ակամալ հարցնում է՝ արդեօք սա մի տեսակի բառալի չէ նման Գրոնսխիտս Թրակացու քերականութեան հալ աշակերտների համար, որոնք բաւականի

զօրեղ չեն չունական բնագիրը առանց ուրիշի օգնութեան կարդալու համար: Այս ենթադրութիւնը կը հաստատւէր ալս իրողութեամբ, որ թուր հին հալական ձեռագրերում բնագիրը բաժանւած է երկու փոքրիկ մասերի, որոնցից ամեն մէկին հետևում է մի բացատրութիւն, որը շատ քիչ է զանազանում բնագրի ոճից: Պր. Կոնիբիրը կարծում է, որ ալս թարգմանութեան կազմութիւնը, նաև բացատրութիւնը կարող է պատկանել Պրոքերեսիոսի ժամանակին,— ծագումով մի հալի, որը ճարտասանութեան պրոֆեսոր էր Աթէնքում և որի կեանքը պատմւած է նրա աշակերտներից մէկի, Նոնապիոսի ձեռքով «Փիլիսոփաների և սովիստների կեանքը» վերագրով գրքում: Հայր Սուքիաս Պարոնեանը, Մանչեստրից, նկատում է, որ բացատրութեան մէջ Վարդանը չիշում է իբրև քաջութեան մի տիպար,— արդ՝ Վարդանը ընկաւ պարսիկների դէմ մղւած պատերազմում 451-ին, մի հանդամանք, որ չամենալս դէպս կարող է ապացուցանել թէրևս, որ բացաղութեան տարեթւը չի կարելի հինդերորդ դարու կիսից առաջ համարել և, եթէ բնագիրը ժամանակակից է եղել բացաղութեան, նոյն աչս նկատողութիւնը կարելի էր վերաբերել նաև չոյն բնագրի թարգմանութեանը:

Գալով ալս վերախաների հեղինակին, արդէն նրանց բաւականին ուշ սկսեցին վերագրել Գաւիթ Անյաղթին, քանի որ հին ձեռագրերը բոլորովին չիշատակութիւններ չեն պարունակում: Բացի դորանից, եթէ

¹⁾ Ձախաւորով սկսող որ և է բառ չունարէնում չի գրւում առանց spiritus նշանի, որը կամ չի հնչւում, (spiritus lenis), կամ ունի հալական հ տառի հնչիւնը (spiritus asper): Մ. Խ.

մենք համեմատելու լինենք լուսնական ալն կոմենտարիան, որ լալտնի է ἀπὸ φωνῆς Δαβὶδ անունով (հատոր IV Արիստոտէլի Բերլինեան հրատարակութիւնից), մենք նրանով ոչ մի կերպ չենք ճանաչիլ հայկական բացատրութիւնները: Բացի ալդ, տարօրինակ է, որ ոչ Ստեփանոս Սիւնեցին, ոչ Գրիգոր Մագիստրոսը իրանց նամակներից միևնույն մասին խօսք կը լինի չնայ, խօսելով Դաւթի իրրև «Ն եր ա ծ ու թ ե ա ն» հեղինակի, ոչ մի փշատակութիւն չեն անում ալս գրածքների մասին, որոնք իբր թէ դրա թարգմանութիւններն են: Պ. Կոնիբերը, հիմնւելով պ. Վալենտին Ռոզի կարծիքի վրայ, Ռոզի՝ որը հրատարակեց 1887-ին «Կեանք Սուրբ Դաւիթ Թեաղղոսիկեցոյ», որ սուրբը՝ թերևս մի հալ Միջագետքից և փիլիսոփան միևնույն անձնաւորութիւնն են, մանաւանդ որ երկուսին էլ վերագրւում են բոլորովին նույնանման անեկղոտներ: Յալանի է, որ ստացած ընդհանուր կարծիքը ալն է որ Դաւիթ Անշաղթը ծնւել է Տուրուբերանի Ներպէն կամ Ներզիւն գիւղում: Նա Մովսէս Խորենացու հօրեղբորորդին էր և որ նա ուսում առաւ Աթէնքում Սիրիանուի ձեռքի տակ, որ Պրոկղի վարժապետն էր: Նէլմանը հրատարակեց մի փշատակարան ալդ փիլիսոփայի և սորա գրածքների մասին Journal Asiatique թերթում 1829 թ. և պ. Բարթէլէմի Սէնտ-Յիւէրը դրա աւելւածով շատ օրինաւոր նկատողութիւններ արեց, որոնք մէջ են բերւած «Ն ու ր ը ն դ հ ա ն ու ր կ ե ն ս ա գ-

ր ու թ ե ա ն մէջ (Nouvelle Biographie générale) հատոր XIII (1857) David de Nerken վերնագրով: Պ. Կոնիբերը մեզ տեղեկացնում է որ Էջմիածնի գրադարանում կալ մի գրւածք՝ «Գ ի ր ք է ա կ ա ց վերնագրով, թարգմանած լուսնաբէնից 578-ին, որի օրիգինալ բնագիրը թերևս գրւած լինի 580 թւի մօտերքը: Ալդ գիրքը խօսում է Մովսէսի և Դաւթի հակաճառութիւնների մասին ընդդէմ հերետիկոսների և պատմում է ալս աւելւածով, որ Դաւիթ Անշաղթը ալն հինգ հալ ուսանողներից էր, որոնք Վ-րդ դարու սկզբում հրաւիրւեցան Կ. Պոլիս կալսր Թէոդոսիոսի կողմից, ալնտեղ լուսնաբէնը սովորելու և Սուրբ Աստածաշունչը հալեբէն թարգմանելու համար: Ալդ երկտասարդները կոչւում էին՝ Մովսէս (քերականագէտ), Մամբրէ, (փիլիսոփայ), Աբրահամ (հռետոր), Պօղոս և Դաւիթ: Վերջինս ալնուհետև կալսրի կողմից Նրեան ուղարկւեց, ալնտեղ Գառնիի ամբուլթիւնների կառուցման վերալ հսկելու համար, որի պաշարումը հաղորդում է Տակիտոս: Պոլիս վերադառնալուց չնայ Դաւիթ թուլտութիւն խնդրեց կալսրից Աթէնք գնալու և ուսանելու համար, ուր նա ստացաւ փիլիսոփայութեան ամբիոնը: Նա մնաց ալնտեղ երեսուն տարի, ինչպէս նաև Մովսէսը: 431 թւին երկու փիլիսոփաները հերքեցին Նեստորին Նփեստում և կալսրը նրանց չեա ուղարկեց Հալաստան պարգևներով հանդերձ: Դժբախտաբար հալրենիք վերադառնալով նրանք ստիպւած էին թաղնւել, որովհետև պարսիկները

հալածում էին նրանց հայրենակիցներին: Մովսէսը ծպտւած մուրացկանի հագուստով չետ քաշւեց զաշտի զիւղերից մէկում, բայց նրա չորս ընկերները գնացին մինչև Նրեան, ուր նոքա ընդունւեցին գրկաբաց Մովսէսի աշակերտակիցներից մէկի կողմից, որը լիտոյ դառաւ հաւոյ կաթողիկոս: Ծպտեալ Մովսէսը ճանաչւեց և չը նաչած իւր բողոքներին նրան արքեպիսկոպոս ձեռնադրեցին: Այդ ժամանակն էր, որ նա դրեց իւր պատմութիւնը, իւր քերականութիւնը և հոգևոր երգերի մի գիրք, մինչդեռ Գաւթիթ իւր կողմից չօրինեց իւր Ներածութիւնն և բը. (Prolégomena):

Չը նաչած անախրօնիզմներին՝ ալս պատմութիւնից երևում է որ հինգերորդ դարու սկզբում Աթէնքում կար Գաւթիթ անունով մէկը՝ փիլիսոփայութեան պրոֆեսսոր և անհաւանական չէ, որ Արիստոտէլի և Պորփիրի չոյն կոմենտարիաները սրանը լինեն (*ἀπὸ φωνῆς Δαβίδ*): Ալս ամենը աշուտամենաշիւ չի պարզում ստորոգութիւնների և մեկնութիւնների բացատրութիւնները: Պ. Կոնիբերը նրանից տալիս է թարգմանաբար լուծարէն և անգլիէրեն կտորներ, չուսալով թէ չունաղէտներից մէկը կը կարողանալ նրանց մէջ լուծարէն օրիգինալի հետքեր գտնել, քանի որ ոճից չալտնի է, որ ալս բացատրութիւնները թարգմանւած են ևղել չունարէնից: Ամենաչն դէպքում նրա մէջ կալ մի բաւականի երկար նկատողութիւն, ուր թարգմանիչը օգտակար է համարում մեկնել չունական

մի քանի դարձացքներ և ալս նկատողութիւնը պէտք է որ օրիգինալ լինի: Թերեա, ինչպէս որ կարծում է պ. Կոնիբերը կարելի լինէր վերագրել թէ թարգմանութիւնը և թէ բացատրութիւնները հէնց իրան Պրոֆեսորիոսին, մանաւանդ որ մեղ չալտնի չէ նրա իսկական անունը: Կարող են չփոթած լինել Պրոֆեսորիոսին չառաջաբանների և Պորփիրի կոմենտարիաների հեղինակ Գաւթիթ հետ, որը ապրում էր հարիւր տարով աւելի ուշ:

Ի մի գումարելով պ. Կոնիբերի արած եզրակացութիւնները, տեսնում ենք որ ստորոգութիւնների և մեկնութիւնների հալերէն թարգմանութիւնը Գաւթիթ Անչաղթինը չէ, բացատրութիւնը ժամանակակից է բնագրին, իսկ տարեթիւը թերեալ լինի V դարու երկրորդ կէսը:

Գալով բոլոր հալ թարգմանութիւնների բառացի ճշգրտեան, դոքա բացի «չաղազս Աշխարհի» թարգմանութեանը, ամենն էլ նոյնքան ստրկական են որքան և թրակացի Դիոնիսիոսի քերականութեան թարգմանութիւնը, որը հիմնովին ուսումնասիրւած է պրոֆ. Աղալբերտ Մերքսի (Merx) կողմից, հրատարակութիւն Գուստաւ Ուհլիս, Լալպցիգ, 1883: Նկատենք ալս առիթով որ ալս հալացրած չոյն բառերի մի մեծ քանակութիւնը աշուտհետ ընդունւեցին սովորական լեզւի մէջ, մի երևութ որ մենք գտնում ենք բոլոր քաղաքակիրթ լիզոններում օտար ծագումի բառերի նկատմամբ:

Իբրեւ ալսացոյ վերոյիշեալի մենք կարտագրենք ալստեղ ստորոգութեան

թիւները առաջին հատածը ըստ Պաւլի հրատարակութեան: Մենք կը դնենք նաև բոլոր շեշտերը:

«Հոմանունք ասին որոնց անանք միայն հասարակ: Իսկ ըստ անանքն, բան գոյացութեան. անշ: Ո՛րզան: Կենդանի և մարդն և գրեանի: Քանզի սոցա, անուն միայն հասարակ: Իսկ ըստ անանքն, բան գոյացութեան, անշ¹⁾: Քանզի եթէ բացատրեսցէ որք զինչ է նոցա երկաքանիւր ուրնք կենդանին քոլ, լատով իւրաքանչիւր ուսմք. բան բացատրեսցէ»:

Յունարէնը՝

Ὁ μόνον λέγεται ὢν ὄνομα μόνον κοινόν, ὁ δὲ κατὰ τούνομα λόγος τῆς οὐσίας ἕτερος, οἷον ζῶν, ὃ τε ἄνθρωπος καὶ τὸ γεγραμμένον. Τούτων γὰρ ὄνομα μόνον κοινόν, ὁ δὲ κατὰ τοῦνομα λόγος τῆς οὐσίας ἕτερος. ἀνγὰρ τις ἀποδιῶ, εἰς τὴν αὐτῶν ἑκατέρω τὸ ζῶν εἶναι, ἴδιον ἑκατέρου λόγον ἀποδῶσει.

Ինչ վերաբերում է բնագրի հարադասութեանը (pureté), ևս արդէն մատնացոյց արի ալի աղբիւրների վրա որտեղից քաղել է պ. Կոնիբերը և աւելորդ է աւելացնելը որ նա արել է ամեն ջանք կարելիին չափ հարադատ բնագրեր ձեռք բերելու համար, որքան ներում է հնազիտութեան (պալէօգրաֆիա) ներկայ վիճակը:

Ինձ մնում է խօսել միւս թարգմանութիւնների մասին, բացի ստո-

րոգութիւններից և մեկնութիւններից:

«Յաղագս Աշխարհի և լաղագս առաքինութեանց», որոնք ձեռագրերի մեծամասնութեան մէջ կրում են այս վերնագիրը «Արիստոտէլ իմաստունի նամակները՝ առ Ալեքսանդր կայսրը: «Նկարագրութիւն Աշխարհի և վառն առաքինութեանց» չի շատակում են Գրիգոր Մագիստրոսի մի նամակում¹⁾ իւր՝ Վասիլ և Նղիշէ աշակերտներին գրած, որոնք ալի ժամանակ (աղսինքն XI դարու առաջին կիսում) Յոնաստանում էին սովորում: Ոճը թերևս չի չեցնում է VIII կամ IX դարերը, իբրև տարեթիւ հալ վերսիւնների:

Որովհետև այս երկու գրածքները շատ էին տարածած միջին դարերի դպրոցներում—բնական է որ թէ լուծարէն բնագիրը և թէ հալբէն թարգմանութիւնը զրանից մեծ փոխոխութիւններ են կրել: Պ. Կոնիբերը նոյն իսկ վարանում էր տալ «Յաղագս Աշխարհի» վարանտները Բերլինի լուծնական բնագրի հետ միասին, և իւր բաղդատութիւնը արդէն տպած էր (էջ 51—71), երբ նա գտաւ մի աւելի մաքուր թէն անկատար ձեռագիր, աջն է Էջմիածնի «Յաղագս Աշխարհի» (№ 2050 Կարենեանի ցուցակում, № 2093 գրադարանի ցուցակում) թւագրւած Աղթամար, փրկչական թիւ 1223:

Պ. Կոնիբերը մի քանի բաներ

¹⁾ Նրբեմն այս երկու կէտերը գրւած են սողից վեր, — ալի ալի գէպրումն է լինում երբ պատուան աւելի երկար է լինում:

¹⁾ Այս նամակը գտնւում է Միւնխենի գրադարանում:

է ուղղում էջ XXXIII և XXXIV, չնորհիւ այս գիւտին:

Յաղագս Առաքինութեանց (բաղդատութիւն էջ 72 և 73) թարգմանւած է թւում նոյն ժամանակին ինչ որ և չաղագս Աշխարհի: Պր. Կոնիբիրը ունէր սակաջն վեհետկի հրատարակութիւնը Կորինի և ալլն գրածքների մէջ (Սուրբ Ղազար 1833), որոնք նոյն ժամանակից են, ինչ Պարիզի, Էջմիածնի, Երուսաղէմի ձեռագրերը, բայց 1892 թւի գտնանաւ նա գտնում է Հռոմի Վատիկանի գրադարանում Cod. Arm. III, fol 456 verso a fol 461 recto, մի մագաղթեալ հիւնալի ձեռագրի XIII դարու սկզբներին դատարկ տեղերով աջն մասերի, որ ընդօրինակողը չէր կարողացել կարդալ օրիգինալը: Անուամենայնիւ այդ գիւտը երեք վերպակ է ուղղել (XXXV)²⁾ Պորփիրի բովանդակութիւնը պարունակում է պ. Կոնիբիրի աշխատութեան մէջ՝ էջ 76—88: Ստորոգութեանց ներածութիւնը տպւած է վեհետկի բնագրում էջ 227—250 և հիմնւած է վեց ձեռագրերի վրայ, որոնցից երկուսը (1319—1411 թւականներին) տալիս են նաև Դաւթի մեկնութիւնը, տպւած Մխիթարեաների ձեռքով էջ 251—336: Պաւլալի օրինակը աւելի մաքուր է մանաւանդ բացատրութեան մէջ,

²⁾ Յաղագս Աշխարհի և Առաքինութեանց գրածքները գտնւում են Սուրբ Ղազարի հրատարակութեան մէջ էջ 608—635, որոնք հիմնւած են վեց ձեռագրերի վրայ, որոնցից երեքը պատկանում են 1319—1411 1599 թր. է.):

որը անուամենայնիւ անկատար է: Պր. Կոնիբիրը բաղդատել է իւր աշխատութիւնը XIV դարու Թիֆլիսի մի ձեռագրի հետ, նաև Պարիզի ձեռագրի հետ (fonds arméniens 106), Էջմիածնի մի ձեռագրի հետ և մի օրինակի հետ, որ տպւած է 1793 թ. Մաղրասում Սպահանի մի ձեռագրից: Քանի որ Պաւլալի ամբողջ ձեռագիրը հիմնւած է մի վատ լուսնարէն օրինակի վրայ, պ. Կոնիբիրը հարկ չի դատել նրան տպել տալու: Նա վերագրում է թարգմանութիւնը VԻ-րդ դարուն, աւելացնելով, որ բացատրութիւնը պէտք է ուսումնասիրել աշխարհի մէկի ձեռքով, որի նպատակը լինի տալ Պորփիրի ներածութեան մի քննադատական հրատարակութիւնը: Վերջապէս պ. Կոնիբիրը չնորհակալութիւն է ցուցնում իւր բարեկամներին: Օկսֆորդի պրոֆեսոր Margoliouth'ին և Հայր Սուքիաս Պարոնեանին, Մանչեսթրից, աջն օգնութեան և քաջալերութեան համար, որ նրանք ցոյց են տուել իրան: Աւելորդ չէ նաև արտել լինել, որ սա առաջին գիրքն է տպւած հայերէն տառերով Clarendon'ի տպարանում: Յուսանք, որ սա չի լինելու վերջինը և որ մեծ համալսարանի հեղինակները ալժմ կը ճանաչեն հայ օրինակների կարևորութիւնը, որը՝ պ. Նորայր Բիւղանդացին, համաձայն մեզ զրած մի նամակին, մտադիր է աւելի ևս պարզ կացուցանել մի մօտապաշ գրածքով:

Գ. Ա. ՇՈՒՈՒՄՅԱՆ,

Անդամ Լոնդոնի թագաւորական Ասիական Բնկերութեան:

ՀԱՅՈՑ ԳՐԻ ՄԱՍԻՆ

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՅԻ

Ն Ա Ռ Ա Ր Ա Ն

Մօտ օրերս լոյս տեսաւ պ. Իսահակ Յարութիւնեանցի «Հայոց գիրը» վերնագրով աշխատութիւնը, որ պսակւած է Սահակ-Մեսրոպեան մրցանակաբաշխութեան ամբողջ մրցանակով 1888 թւին:

Դիրքը բաղկացած է չորս հարիւր երեսից միջակ դիրքով և բաժանւած երկու մասի: Առաջին մասումը խօսում է նշանագրերի և տառերի զարգացման մասին ընդհանուրն ի նկատի առած, երկրորդ մասում իր ասելիքն ամփոփում հայոց գրերի վրայ: Չը նաչւած նիւթի գիտական բնաւորութեան՝ կաշկայւում է ամենամեծ հետաքրքրութեամբ ու սիրով և լսառջ մղում ընթերցողին, առանց որ և է տաղտկութիւն պատճառելու: Գոնէ ես մէկ օրուայ մէջ կարդացի այդ քրտնաջան և սուտաբաշխատութիւնը և չիմացայ, թէ ինչպէս վերջացաւ: Պէտք է ասեմ սակայն, որ իմ բանն ուրիշ է: Աս այդ գրքի մի ծալից մինչև միւսը վազեցի, որ Հայոց գիրը գտնեմ, բայց վերջումս ստացայ մի ահագին, հազկական քիթ. սուս ու փուս տեղս նստեցի և սկսեցի այս չօղւածը գրել այդ տպաւորութեան տակ:

1

Պարոն Յարութիւնեանցը վերջ ի վերջոյ մեզ ալս նորութիւնն է չափանում, որ Գանիէլեան առած գրերը Գանիէլի հնարածը չէին, ալ հին հազկական գրերի մնացորդ: Առաջաշտ հաջերը, ասում է, ունեցել են իրանց աղգալին գիրն ու զրականութիւնը, բայց քրիստոնէութեան մուտք գործելովը ալլ զրականութիւնը կրօնի հետ զուրս է մղւել, մոռացութեան տուել և անդաւտացել: Ալլ հին գրերիցն է ահա, որ պատահամբ Գանիէլի ձեռքն է ընկել, և նա էլ տուել է հալերին: Այս բանն ապացուցանելու համար նա, բացի իր սեփական հալեացքից և սլաոճառաբանութիւններից, բերում է և հետեւեալ վեց փաստերը:—

ա. Տասներեքերորդ դարի Վարդան պատմաբան վարդապետն ասել է, թէ Գանիէլի մօտ եղած գրերը 22 էին և հնուց մնացած հալոց գրեր էին: Գրանց վրա Մեսրոպն աւելացրեց 14 զիր:

բ. Ալդ գտնւած գրերի մասին Կորիւնն ասել է. «մանաւանդ զի և նշանագիրքն իսկ՝ չալոց դպրութեանց թաղեալք և չարուցեալք զիպեցան»: Էմինը Կորիւնի ալս ասածը թարգմանել է այսպէս՝ къ тому же надобно прибавить, что эти письма были забыты и найдены случайно, որ թարգմանի՝ պէտք է ալս էլ ասել, որ ալդ գրերը մոռացել էին և գտնուել զիպեւածաբար: Պր. Յարութիւնեանցը սխալ է համարում Էմինի ալս թարգմանութիւնը, և ինքն ասում է՝ Կորիւնն ակնարկում է ալս հանդամանքը, որ հալոց հին ալբուրները մոռացել էր՝ սեղի տալով ալոց դպրութեանց, ալսինքն ալոց գրերին և ապա կրկին չալանել: Պարսնի ալս բացատրութիւնը փոքր ինչ կամապկան է. Կորիւնն ասում է. «Մանաւանդ որ ալդ նշանագրերը թաղել էին ուրիշ դպրութիւններից, մէկ էլ չարութիւն առել»: Ալստեղ չկալ ոչ հալոց հին ալբուրներն ի, ոչ էլ ուրիշ դպրութիւնների և գրերի սեղի տալ: Եթէ մեկնել հարկաւոր է, պէտք է ալսպէս մեկնել, ինչպէս Վարդան պատմագիրն է ասել ալդ միեւնոյնը իր խօսքերով. նա ասում է ալդ նշանագրերի մասին... «որ վառն ոչ պարզելուն զընդարձակութիւն լեզւիս, անհոգացեալ եղև չառաջնոցն»: Այս նշանակում է, թէ ալդ գրերը ոչ թէ դուրս էին մղել ուրիշ գրերից և դպրութիւններից, ալ պակասաւոր լինելով՝ պէտք չէին եկել ոչ մի դպրութեան համար և թաղել էին: Այս հեղինակների ասածի և պ. Յարութիւնեանցի մեկնութեան մէջ ալս զանազանութիւնը կալ, որ ոչ Կորիւն և ոչ ուրիշները չեն եմթաղում, որ Գանիէլեան նշանագրերով որ և է գրականութիւն լինի եղած, իսկ պարոնը ալսպէս է բացատրում, որ կարող լինի չեղած տեղից հին գրականութիւն հանել...

գ. Ազաթանգեղոսն ասում է, որ թէ Գրիգորի և թէ Կոստրի ասածները Տրդատի դպիրները նշանագրում էին և թագաւորի առջև կարդում: Ալստեղ էլ «նշանագիր» բառի համար վկայութիւն է բերում 20 տեղից, ուր ալդ բառը գործ է ածւած տառերի մտքով, թէ և կարող էր աւելի քան քառասուն տեղից էլ վկայութիւն բերել, որ զազործ է ածւել և ոչ-տառերի նշանակութեամբ, ալ առհասարակ նշանների, լինին գաղափարագիր, բնեւագիր, թէ եգիպտական ու չինական գրեր: Բայց պարոնին պէտք է, որ անպատճառ դրանք տառեր լինին եղած, որպէս զի կարողանալ ապացուցանել մի չեղած երեւթ: Մի բան միայն ալստեղ զժառանգում է հեղինակին: Ալդ նշանագրերը կարող էին տառեր լինել և ոչ թէ ուրիշ բան, բայց ով կարող է ասել, թէ դրանք հալերէն էին: Սրա համար իսկույն բերում է հետեւեալ վաստը—

գ. Տասներեքերորդ դարում անցեալը զուշակող Վարդան պատմագիրն ասա ինչ է ասում. «Թէ հնումն իրաւ հալերէն գրեր են եղել, ալդ

բաժնը հաստատուեց Ղևոն թագաւորի ժամանակը, երբ գտնւեցան հաջ կռապաշտ թագաւորները՝ զրամներ հալերէն գրով գրոշմած: (Խնչ գրոշմած և ում անուն): Սրանից հետեցնում է ալ. Յարութիւնեանցը, թէ ապա ուրեմն Տրդատի զսիրները հաջ գրերով էին գրում: Իսկ Ագաթանգեղոսը, իսկ Գրիգոր լուսաւորիչը, իսկ Տրդատն ինքը, գրանք ինչ գրով էին գրում...

Ե. Հալը Խնջիջեանը պատմում է, որ ինքը անգլիական դեսպանի մօտ հարիւրաւոր արծաթի զրամներ է տեսել, շատ հին հալական գրերով (հ, տ, ս, կ, ճ, և ալւն), բալց մէջերումը ձախաւոր չը գտնելով՝ չի կարողացել կարդալ: Հապա «ալք ծա ասուածն» ինչպէս էր կարողանում կարդալ հ. Խնջիջեանը:

Այս բոլոր փաստերը բաւական ազդու և զօրաւոր ապացոյցներ համարելով՝ որ նոյն իսկ Տրդատի ժամանակ հալերէն գիր ու գրականութիւն կար, սրանց ումն առաւել ևս սաստկացնելու համար բերում է հետեւեալ վեցերորդ փաստը, որ մի հրաշալի գիւտ է:

Գ. Ալք գիւտն անողը Փիլիստրատոս անունով մի պատմաբան է, որ ապրիլիս է եղել Տրդատից էլ շատ առաջ: Այս մարդը իր մի աշխատութեան մէջ ասել է—«պատմում են, որ մէկ անգամ Պամֆիլիալում բռնել է մի լուպ, շնքին մի ոսկի մանեակ կապած, իսկ ալք մանեակի վրայ գրած է եղել հալերէն տառերով հետեւեալը—«Արշակ թագաւոր Նիւսեալ աստուծուն»: Այստեղ անում է ալք լուպի պատմութիւնը, նրա հոտաւութիւնը, Արշակի մօտ ընկնելը, նրանից փախչելը: Մարդ իմանալով է կարողացել կարդալ ալք Խնջիջեանի համար անվերծանելի գիրը:

Սրանք են ահա հեղինակի ալն հաստատուն սխեները որոնց վրայ կառուցել է իր չորսհարիւր լարկանի աշխատութիւնը: Ինքը հիանում է իր բերած փաստերից և ոգևորում, որ՝ ուղիղն ասած՝ մեծ պատիւ է բերում իրան՝ իբրև մի անմեղ և անկեղծ ազգասիրի: Կարծես մտքումն ասում է.—կա ձեզ ցոյց կը տամ, ուլ ղերմանացի ինքնահաւան պրոֆեսսորներ, որ իմ ազգը մեծ ազգ է, և մինչդեռ դուք չը գիտէիք ձեր կալքաս շինելը, մենք հալերս Սոկրատի և Արիստոտէլի հետ էինք գլուխ գլխի խփում: Պէտք է ալ էլ ասել, որ եթէ գիրքն ալ տեսղենցիան չունենար, հեղինակը չէր էլ պահելիլ ամբողջ մրցանակով, որովհետև ալք պատկազրութեան համար էլ կալ հաս ու չհասի ինչգիր:

2

Հիմա գանք մերն ասենք, թէկուզ դրա համար մեր գլխին փչէ պսակ զնեն, որ իմ կարծիքով աւելի փառաւոր է:

Այս տեսակ խնդիրները իսկասլէս շատ դիւրին կերպով լուծելու խնդիրներ են, միայն տարաբախտաբար մեղանում սովոր են պահանջելու իրական ապացոյց, ականատես վկայ, ինչպէս ալք պահանջում են հալ-

տարար դատաւորները: Կան խնդիրներ, որոնց համար պէտք է պահանջել վկաներ, ալ եթէ լինին էլ, դրանք մերժելի են իբրև սուտ վկաներ մի սուտ և չեղած բան իբրև եղած և կատարած բան հաստատելու համար կոչւած: Եթէ մենք մեր հին կեանքի վրայ նայելու լինինք մեր պատմաբանների ասածի վրայ հիմնւելով՝ առանց կանխապէս արդ ասածները անաչառ կրիտիկալի բովից անց կացնելու, շատ անգամ բոլորովին կը մոլորւինք և կը սխալւինք: Ոչինչ չիմար բան չը կալքան չեղած բանի համար պատճառ փնտրելը, թէ ինչն է եղել և ինչ նպատակով: Քանի քանի ալսպիսի բաներ կան մեր թէ գրականութեան և թէ կեանքի մէջ: Սուտն ու ճշմարիտը որոշելու համար մեզ առաջնորդ պիտի ունենանք տիեզերական օրէնքը: Ինչ որ համաձայն է արդ օրէնքին, նա սուտ է, թէկուզ միլիոնաւոր վկաներ լինին: Այս է ահա մեր տեսակէտը և ալս տեսակէտով էլ պիտի մօտենանք մեր ձեռք առած խնդրին:

Սկսենք հեշտիցը և դէպի զժառը գնանք:

Ի՞նչ էր Դանիէլի դտածը, արդեօք մի մատենան հին հայերէնով գրւած, թէ մի ալբուքն՝ որոշ թւով բաղկացած: Եթէ լինէր մի մատենան հայերէն, բայց ծանօթ տառերով գրւած, օրինակ պարսկական, ասորական կամ լուսական, արդ գրեթէ ծանօթ հայագէտը աւելի դիւրութեամբ կը կարդար նոյն մատենան, իսկ եթէ գրւած լինէր մոռացւած, անլսողացած կամ վերջապէս նոր հնարած գրերով, դա նոյն իսկ հալի համար կը լինէր մի տեսակ անընթեռնելի ծածկադրութիւն, որի բանալին գեռ պիտի գտնէր, որ ապա թէ կարողանար կարդալ: Իսկ եթէ լինէր մի տեսակ ալբ ու բն, ոչ ոք կարող չէր դրա ոչ բանալին գտնել և ոչ իմանալ, թէ ինչ լեզուի գրեր են դրանք, քանի որ դրանք պաշտօնական կան նշաններ են, բառ չեն, որ կարդալով իմանան, թէ նա ինչիւրէն է: Ալ խնդիր է, եթէ արդ ալբուքները իր հետ ունենար և բանալին, ալսինքն մի ծանօթ լեզուով բացատրւած լինէր, թէ ո՞ր դիրք ինչ ձալնի նշան է: Բայց կարող է արդեօք պատահել, որ գրականութիւնից ոչ մի հետք չը մնալ, թէկուզ մի կտոր, մի ալ գրքի կազմից կպած, բայց մնալ արդ մատենագրութեան ալբուքները, ալն էլ մի հատ միալն: Այս խնդիրն ահա ալս կերպ արծարծելով՝ մենք Խորենացու վկայութիւնը և միւսներինն էլ գտնում ենք շատ բնական և ուղիղ, և արդ ալն է, որ Դանիէլը կամ ինքն իրանից, կամ մի հալի առաջարկութեամբ ասորական գրերը ձևափոխելով՝ լատկացրել էր հայերին, ասելով՝ «եթէ կամենում էք ձեր սեփական գրերն ունենալ, համեցէք տարէք», բոլորովին ալնպէս, ինչպէս Մեսրոպն արաւ վրացոց համար: Այս լուրը թագաւորի ականջն է ընկնում, նա էլ իմաց է տալիս կաթողիկոսին և Մեսրոպին, ուղարկում են Վահրիճ անուանով մի ճարտարամիտ մարդ, որ Դանիէլից սովորում է արդ գրերի ձալները և նրանց կապակցելու եղանակը և բերում ու սովորեցնում է Մեսրոպին: Ալբ օրից սկսում են արդ գրերով բան գրել կամ թարգմանել, որ

սկզբումը Մաշտոցը կը լինէր անշուշտ, որի մէջ էր ամփոփւած ծխակատարութիւնը և ժամերգութիւնը, և նոյն գիրքն էլ սկսում են աւանդել ուսումնարաններում: Այդ ուսումնարանում մենակ մանուկներ չէին կարգացնում, այլ արդէն ասորագէտ տիրացուներին և քահանաներին, որոնց համար մի առանձին դժարութիւն չը կար ընդամենը մի գիրք սովորելու և նոյն իսկ անգիր անելու գլխէ գլուխ:

Այս Գանիէեան շրջանի մասին մեր ականատես պատմիչները արհամարհանքով են խօսում, որոշ կերպով չեն ասում, թէ որքան ժամանակ տւեց: Չեն ուզում ուղղակի խոստովանել, որ այդ գրերը ինքը Գանիէն էր չինել: Այս հանգամանքներն աչն են ցոյց տալիս միայն, որ դրանց ժամանակ ասորիներն ատելի էին դարձել հայերի աչքումը, շարունակ կուր ունէին միմեանց հետ, հաջերը նրանց դուրս էին մղում իրանց եկեղեցիներէր, հացի խնդիր կար մէջ տեղը, նրանք էլ մատնութիւններ էին անում, լափշտակում էին կաթողիկոսական գահը: Բաւական է միայն վիշել Սուրմակի, Բրքիշուի և Շմուէլի վարմունքը այդ ժամանակի մասին մի որոշ գաղտնիար կաղմելու համար: Հաջերը քաղաքականապէս կախումն ունենալով պարսիկներէր, հոգեորապէս և մտաւորապէս էլ ասորիներէր ունէին կախումն: Յոյս ունէին, որ թէ մէկից և թէ միւսից կազաւին լոյների օգնութեամբ: Այս պատճառով էլ երեսները շրջեցին ասորիներէր և լոյներին դիմեցին: Թողին Նդեսիան, որ իրանց միակ ուսումնալարն էր և քաշեցին դէպի Աղէքսանդրիա: Ասորա-հայական շարաքերութեան պէս եղաւ և հայա-վրացական շարաքերութիւնը: Ինչ որ էին ասորիները մեզ համար, նոյնը եղանք և մենք վրացոց համար: Ասորիներէր ճնշում էինք, իսկ վրացիներին ճնշում, մէկի ջիգրը միւսից էինք հանում: Այսպէս է կեանքի օրէնքը, ինչ պէտք է անես: Ջարմանալի չէ ուրեմն, որ վրացիքն էլ Մեսրոպին չեն համարում իրանց գիր տուող, ասում են՝ մենք շատ վաղուց ունեցել ենք այդ գիրը և իրանց այդ կարծիքը հիմնում են դարձեալ—իբր թէ գտնւած—հին դրամների վրայ: Հայոց գրի հեղինակը վրացիներին չի ուզում արժանացնել այդ փառքին, բայց ուզում է, որ ականատես ասորիները մեզ իր ուզած փառքին արժանացնեն:

Այսպէս ահա՝ բնական և քաղաքական հանգամանքները մտաւորապէս կշռելով, մենք գտնում ենք, որ Գանիէլի գիր տալը հայերին՝ անժխտելի է, իսկ այդ գրերի հետ կապել կարելի չէ մի չեղած և չը լսւած գրականութիւն:

3

Գրականութիւնը մի ճրագ է, մի լոյս. ուր որ նա վառւի, ճառագալթներ կարձակէ իւր չորս կողմը: Հաջերը, որ միշտ շարաքերութիւն են ունեցել գրականութիւն ունեցող հեթանոս ազգիւր հետ, եթէ գրականութիւն

ունենալին, առաւել ևս կը ծաղկեցնէին նրան, քան թէ ալդ կղաւ հինգերորդ դարում: Այնուհետև մեր միջին եւ դուրս կը գալին բանաստեղծներ, ճարտասաններ և փիլիսոփաներ: Այն թիւ գրականութիւն է, որ կեանքի մէջ ոչ մի հետք չի թողնում, ալ մերթ լուրջի վղիցն է կախում, մերթ չեղած դրամների վրայ դրոշմում, առանց մարդոց վղից կախելու և առանց կոթողների վրայ դրոշմելու:

Վրականութիւն կար, ասում են, բայց քուրմերն իրանց մահաճանաչում ծածկած էին պահում, լոյս աշխարհ չէին հանում, չէին ազգայնացնում, ժողովրդականացնում:

Մենք չենք ունեցել ոչ քրմութիւն ազգային և ոչ կռապաշտութիւն ժողովրդական: Եթէ հազ արդը կռապաշտ լինէր, նրա մէջ կը ծաղկէր կռագործութեան արեւստը և լառաջ կը բերէր մի տեսակ հեթանոսական ճարտարութիւն: Հալերը ողբապաշտ էին, իսկ ալդ ոգիները բնակւում էին անտառներում, ջրերում, լեռներում և հովիտներում ¹⁾: Հալերը նոյն էին հնումը, ինչ որ այսօր կղիլի քուրդերը, սրանց պէս պարզ, սրանց պէս անմեղ բնութեան զաւակներ: Հալի մահաճան իր օջախն էր, որ միշտ վառ էր պահում կամ անթեղնում, որ չը հանգչի: Ի հարկէ այսպէս չէր նա իր նախապատմական կեանքում, բայց այսպէս էր աչն ժամանակ, երբ կենթադրւում է, թէ նա գիր ու գրականութիւն ունէր: Ալդ ժամանակ հատ ու կտոր կղւած մահաճանները իրանց դարձութեամբ, եթէ ունէին սեփական դարձութիւն, հալական չէին, ալ օտար, նորամուտ, բերովի և ձեռնհաս միմիայն զաղթական դատակարգին, աչն էլ մասամբ միայն:

Անհատի, նոյնպէս և հասարակութեան և ալդի—որովհետև դրանք էլ անհատներից են բաղկացած— ոգու զարգացման մէջ մի բնական ներդաշնակութիւն կա: Քարէ գործիք ունենալը և երկաթի գործածութիւնից դուրս լինելը, կարող է մեր երևակայութեան մէջ լառաջ բերել մի ժողովուրդ, որի կենցաղավարութիւնը ներդաշնակ կը լինի իր գործ դրած գործիքների հետ: Մի կոթող, մի արձան, մի աշտարակ կարող է մեղ համար չափ դառնալ նրանց շինողների քաղաքակրթութեան աստիճանը որոշելու համար: Լէֆէլի շինած աշտարակը մի կարգէ դուրս բան չէ, եթէ ի նկատի ունենանք իր ժողովրդի մտաւոր զարգացման աստիճանը: Բաբելոնի կախեալ պարտէզները և աշտարակաշինութիւնը, ընդունելով իբրև կատարած փաստ, ցոյց են տալիս շինողների մտաւոր զարգացման մի աչնալիս աստիճան, որ միայն ալդ երևելի վրայ հիմնելով կարող ենք ալդ մարդկանց վերագրել ուրիշ շատ հրաշալիքներ էլ: Կարող ենք ասել

¹⁾ Այսօր իսկ մեր ժողովրդի երևակայութեան մէջ դատարկ տեղ չը կա, բոլորը լցած է ոգիներով, աչնպէս որ ոտք դնելու տեղ չունի:

անկարելի բան է, որ ալդ ճարտարութեանը հասած մի ժողովուրդ գիր և գրականութիւն չունենար:

Երբ որ մի ժողովրդի մտաւոր զարգացումը հասնում է գիտակցարար շինելու և ստեղծելու աստիճանին, ղուրս գալով բնազդամբ ապրելու շրջանից, աճեռհետեւ նա մենակ մի բան չի գտնում, ալ շատ բան, մի զիւտը հետապնում է գտնել մի ուրիշ գիւտ, սա էլ մի ուրիշը: Ամեն ոք սկսում է կատարելագործել իր ունեցածը՝ երկրագործն իր վար ու ցանքսը, ալգեգործն իր տունին ու ծառը, արհեստաւորն իր գործն ու գործիքը, վաճառականն իր առն ու տուրքը, գրողն իր զիրն ու գրիչը, մէկ խօսքով երկրի կուլտուրան աճում, զարգանում, բարեփոխւում և կատարելագործւում է իր մասերի մէջ՝ ներդաշնակութիւն սլահելով բնական կարգով: Պատահում է, ալս, որ երբեմն նրա ողու ալս կամ ալն լատկութիւնը գերակշիւ է հանդիսանում միւս լատկութիւնների վրայ, մի բան անհամեմատ աւելի է ծաղկում, քան միւս բան, բայց դա լինում է ժամանակաւոր, առժամանակ. ներդաշնակութեան օրէնքը միշտ ձգտում է հաւասարակշռութիւն ձգել խելքի և երեակալութեան ու կամալականութեան ոտարւնների ու թուիչքների մէջ: Աճող երկխալի խօսքն ու քալը իրար հաւասարակշռում են, հողու և մարմնի շարժումները միմեանց հաւասարադօր են: Այս երեուլթն ենք նկատում ահա ինքն ուրօն զարգացող մի ժողովրդի մէջ:

4

Ալդ ինչ ունինք մեր աշխարհում, ճրալիսի հալկական ճարտարութիւն, որոնց վրայ նալելով՝ առէինք—«Այս բանն ունեցողը գիր չունենալ չէր կարող»: Սրա հակառակ շատ բան ենք գտնում ու չը գտնում, և սրտի խորքից հառաչամ, թէ «Այս բանը չունեցողը և ունեցողը գիր ունենալ չէր կարող»:

Ինձ կը պատասխանեն, թէ մեր հին աշխարհում գտնւում են բեռաղիր արձաններ: Շատ ուրախ եմ: Բայց ինչո՞ւ ալդ արձանները բեռաղրող հալերը չը տառագրել են և ուրիշ արձաններ: Սթէ չը կան տառաղրած արձաններ, ալդ ոչ միալն ցոլց է տալիս, որ հալերը իւրահնար տառեր չունէին, ալ ալն էլ է սալացուցանում, որ բեռաղիր արձանները հալի ձեռքի գործեր չեն, ալ կամ բոլորովին օտար, կամ պատէրով չինած օտարի ձեռքով: Հալերն արձանագործութեան և արձանաղրութեան ալնքան անհմուտ էին, ալնքան ղուրի ամեն ալդ տեսակ ճարտարութիւնից, որ նոն իսկ մեր գրերը գտնւելուց չիտոյ էլ մենք երկար ժամանակ չունեցանք ոչ արձանագործութիւն և ոչ արձանաղրութիւն: Ինքը Մեսրոպը գրչութեան արեւտին հմուտ չէր: Լաւ գրելու արհեստն էլ մի ջոկ բան էր, ինչ որ գրէին, պէտք է արտագրել տալին նոն իսկ չը հալագէտ

վարպետներին: Այս էր պատճառը, որ շատերը միմիայն կարողալ զիտէին առանց զրեւ իմանալու և շատերն էլ միայն զրեւ, առանց կարողալ իմանալու: Գրեւը նւթի—մագաղաթի—թանդութեան և սակաւութեան պատճառով էլ դիւրամատչելի չէր ամենին:

Միակ ճարտարապետական շէնքը, որի փայտակներն ալսօր էլ երևում են, ալդ Տրդատի հովանոցն է: Աս ինքս նշմարել եմ նրա թափթըրիած քարերի վրայ լուսական զրերի հետք, և հէնց ինքը շէնքն էլ բուն լուսական գործ է և ոչ հալի: չինւած է պատէրով, լուսն վարպետների ձեռքով: Աթէ Տրդատի դպիրները, ալնքան ճարտար էին հալագործութեան մէջ, որ մարդկանց խօսակցութիւնը խկոն զրի էին առնում ծածկաբար, որ թագաւորին ցոյց տան, ինչո՞ւ ալդ մարդիկը իրանց ալդ հրաշալի շնորքը չէին ցոյց տալիս և Տրդատի հովանոցի վրայ, մի երկու բան զրեւ տալով նրա սրբատաշ քարերի վրայ:

Ամեն ինչ, որ հալոց անւանեալ աշխարհումն է գտնւում, ալդ չի նշանակիլ, որ անպատճառ հէնց հալինն էլ պէտք է լինի: Նա: Ալդ ալդպէս կը լինէր, եթէ Հայաստանը մի կուսական երկիր լինէր, հալն ալդ հողի վրայ լինէր ստեղծւած և ապրած, առանց տեղի տալու օտար հոտանքի: Ար ժամանակ, որ հէնց ալդպէս էլ հաւատում էին մեր առաջնակարգ դպիրները, բալց ալսօր մի երկիր և ազգ ուսումնասիրելու համար կալ բոլորովին ալ մեթօդ: Ալսօր ալդ երկրումը շատ խօսք և բառեր կան, շատ աշխարհագրական անուններ, որոնք իրանց կազմութեամբ մատնում են իրանց և ցոյց տալիս, որ հալկական ծագումն չունին, ալ մի դուրս մղւած կամ անցած գնացած և կամ հալի հետ ի մի ձուլւած ազգի: Ալ ինչ մէաս ունի, որ ալսպէս լինի: Մթթէ դրանով մեր հալերեւասիրութիւնը կը պակսի: Աս կարծում եմ ընդհակառակը: Արք ես մտածում եմ, որ իմ ազգը մի զառամած և իր դերը կատարած պրծած ազգ չէ, ալ նոր, թարմ, ջահէլ, ես ուրախանում եմ անսահման ուրախութեամբ: Ով որ երևակայում է նրա անցեալը, ես երևակայում եմ նրա ապագայ հակալական քալերը: Ալն, մի օր պիտի ջախջախին Արտաւազդի դարաւոր կապանքները և նրա անհղ ձալնից պիտի թնդան ու որոտան Հայաստանի լեռներն ու ձորերը և նոր հոգի ու նոր կեանք պիտի փչւի քարացած աշխարհի սրտում:

5

Գիր և գրականութիւն ունենալու մի խոշոր պատճառաբանութիւնն էլ ալն են բերում, թէ՛ գրոց լեզուի ծաղկիլը հինգերորդ դարում ալնպիտի մի հակալական գործ է, որ ինքն իրան ցոյց է տալիս, որ հալերն ունեցել են ազլալին ձոխ գրականութիւն, եթէ ոչ, ինչպէս կարող էին թարգմանել Աստուածաշունչը, որ թագունի թարգմանութեանց է համարւում, և

զանազան փրկիտփաշական գրածններ ես: Այս կարծիքի մարդիկը շատ վսեմ ոճով են խօսում, զանազան բարձր ածականներ տալով առաջին շըրջանի մատենագրութեանը, որով և զինաթափ են անում ընթերցողին և նախապաշարում:

Մի ազգ կարող է շատ ճոխ լեզու ունենալ, առանց գիր ունենալու, և ընդհակառակը՝ գիր ունենալ, առանց ճոխ լեզվի: Նթէ փրնիկեցիք, եգիպտացիք և չինացիք գիր ունէին, իսկ հալերն ու պարսիկները՝ ոչ, այդ դեռ ապացոյց է, որ նրանց լեզուն ճոխ էր, իսկ հալերինն աղքատ: Անհատներ կան, որ շատ ճոխ լեզու ունին, իսկ խելք ասածիցդ և ոչ մի մտալ: Նշանաւոր մաթեմատիկոսների լեզուն անհամեմատ աղքատ է, քան թէ նշանաւոր բանաստեղծներինը: Կան ազգեր, որ աւելի բանաստեղծ են, կան, որ աւելի մաթեմատիկոս, հաշուող, կշռող, գործնական, սրամիտ, աչքաբաց, հնարող: Նրկիրը, կլիման, պարապմունքը, ցեղական լատկութիւնը մէկին ալ հոգեկան լատկութիւններ է տալիս, միւսին ալ: Մէկին սուր լեզու է տալիս, միւսին սուր միտք: Մէկին աւագակ է շինում, միւսին տալիս է խաղաղ կեանք: Մէկին սարէսար և ծովէծով է ձգում, միւսին տալիս նստակեաց կեանք և ալն: Հալերը չունէին գիր և գրականութիւն, բայց ունէին շատ ճարտար և ճոխ լեզու. ունէին ամենահարուստ բանաւոր գրականութիւն: Ոչ մի քրիստոնեաւ ազգ չունի ոչ մեր Շարահանը և ոչ մեր Նարեկը, երկու զուտ բանաստեղծական հրաշագործութեան և ճոխ լեզվի ու երևակաութեան արդասիք: Այս դնենք կշռի մէկ նժարումը և զառնանք միւս նժարին:

Սուրբ գրքի լեզուն մի ժողովրդական և աղքատութեան չափ մի պարզ լեզու է: Յրկատուի տւած քարոզները ժողովրդին, իրանց պարզութեամբն է, որ երկնալին են դառնում: Դաւթի սաղմոսը զլխէ ի գլուխ մի հովերգութիւն է: Նա իր թագաւորական զահի վրալ էլ իր հօր ոչ լաւներն արածացնող պարզ հովիւն է: Այս պարզ նահապետական կեանքից հալերը շատ և շատ բարձր էին կանգնած իրանց լեզուով: Մեր բանաւոր երգերը հատուկտոր բաներ չէին, ալ նրանցից ամեն մէկը արկածներով լիքը մի վէպ էր, և եօթն օր եօթը գիշեր էր տևում զրանցից ամեն մէկը ծալրէ ի ծալր ասելու, պատմելու և երգելու համար: Այդ մարդիկն ունէին առասպելական լիջողութիւն, մէկ մէկ մատենադարան էր զրանց գլուխը, որոնց մէջ ամբարած էին պահում ազգի աւանդութիւնները: Գրանք հատ ու կոտոր մարդիկ չէին, ալ այդ պարապմունքն ունէին ամբողջ գիւղերով, որոնց հետքերը դեռ մինչև ալսօր էլ կան, թէ և լեզուն փոխւած: Ուրեմն ինչ զժարութիւն կարող էր լառաջ գալ սուրբ գիրքն ալսպիսի մի լեզուով թալ գմանելու համար, մինչդեռ ալսօր իսկ աւետարանի տարածողները ոչինչ զժարութեան չեն հանդիպում աւետարանը թարգմանելիս կիսավայրենի և կիսակիրթ ազգերի լեզուով:

Այն դժարութիւնը, որ աչս առիթով չառաջ են բերում մեր պատմաբանները, և նոյն իսկ Խորենացին, որ ասում է, «Քանզի անդէտք էին մերում արւեհսն ի բազում մասանց թերացեալ գործն դասելու», աչս խօսքը մեզ համար աչն է պարզում այսօր, որ Մեսրոպն ու Սահակը արւեստաւոր լեզուով չէին թարգմանում, ալ բուն ժողովրդական, բուն հայերէն: Գրոց լեզւի արւեստաւորութիւնը, աչսինքն բուն հայերէնից տարբերող նրա քերականութիւնը կրտսեր աշակերտները մոցրին, բաց անքարւեստաւոր լեզուն չը տեսան ոչ Սահակը և ոչ էլ Մեսրոպը: Գրոց լեզուն աչս արւեստովն է, որ չլացնում է շատերի աչքը, որ դառնում է մի հնուկազական բուրգ շատերի համար, և չեն կարողանում ըմբռնել, որ ալք բուրգը կոխածոջ քարերի մի կոյտ է և զուրկ ազգային լեզւի բնական կենդանութիւնից, որ դա մեռած էր նոյն իսկ իր ծնած ժամանակ:

Կրտսեր թարգմանիչների մէջ ամենից երեւելի հանդիսացողը, ամենից շատ աշխատողը և ամենից շատ ապրողը Մովսէս Խորենացին է: Շատերը և Չամչեանն էլ՝ կարծում են, որ Մովսէսը սուրբ գրքի թարգմանութեանը մասնակցած չէ: Բայց դա խոշոր սխալ է. հապա ով պիտի կատարելագործէր՝ իր ասելով՝ «ի բազում մասանց թերացեալ գործը», քանի որ հէնց դրա համար էլ ուղարկել էին նրան Աղէքսաղրիա, «ի լեզու պանծալի, ի ստուգ լոգանալ ճեմարանին վերաբանութեան»: Մէկ տեղ էլ ինքը չի խեցնում է Սահակ Բագրատունուն, թէ ինքը «աչ մի է ծերացեալ և թարգմանութեանց պարապեալ»:

Երեւակեմք մեզ, որ Մովսէսը՝ նախ քան բարձր ուսման գնալը՝ ոչ միայն քաջ հմուտ էր իր մալրենի լեզւին և իր վարդապետների բոլոր գիտութիւնը սեփականած, ալ և անհատապէս օծուած վառ երեակալութեամբ և բանաստեղծ բնութեան չատուկ ձիրքերով, որով նա ամփոփած էր իր մէջ մանկութիւնից լսած ժողովրդի բանաւոր գրականութիւնը: Այս մարդն ահա քաջ հմտանալով Աղէքսանդրիալի ճեմարանում աչն ժամանակաւ ճարտասանական և հռետորական արւեստին, հանդէս եկաւ մեր նորածիլ գրականութեան մէջ մի բոլորովին նորաձև լեզուով, ստեղծեց մի բոլորովին նոր դպրոց, որի ազդեցութեանը ենթարկեց թէ ցալնժամ և թէ աչնուհետե եղած դպրութեան լեզուն: Այս լեզուով ոչ ոք կարող չէր գրել, մինչև լաւ չըսովորէր աչն արւեստը, որով գրած էր, և ալք բաւական չէր դեռ ևս, պէտք է գիտենար և նոյն իսկ լուսական լեզուն, որ աչնուհետե ըմբռնէր նրա բառերի դասաւորութեան եղանակը և համաձայնութիւնը: Սրա համար էլ ալք լեզուն մնաց միայն ալք մէկ դարումն ամփոփւած, սրբանալով սուրբ գրքով և դառնալով եկեղեցական լեզու: Աչնուհետե ոչ ոք ալ ևս չը կարողացաւ ալք լեզուով գրել, բայց ինչ գրած էլ որ մօտաւորապէս չը նմանեց գրան, նա կորաւ իբրեւ անպէտք բան, իբրեւ գուհիկ և անարւեստ լեզուով գրած:

«Հայոց գրի» հեղինակի մի պատճառաբանութիւնն էլ հին հայերի չարաբերութիւն ունենալն է փիւնիկեցոց հետ: Եթէ մի անգիր ազգ չարաբերութիւն ունենալով գիր ունեցող ազգի հետ, վեր առնէր նրա գիրը, էլ աշխարհիս երեսին ոչ մի անգիր ազգ չէր լինիլ: Հին հայերի չարաբերութիւնը իրանցից լուսաւոր ազգերի հետ նույնն էր, ինչ որ ալսօր օսերի և չէրքէզների չարաբերութիւնն է մեզ հետ. ինչպէս որանցից մէկը իր իւզն ու պանինն է մեզ սալիս, միւսը՝ իր ձին ու եափնջին, նոյնպէս էլ հայերը կարող էին իրանց խաղողն ու գլինին և էջն ու ջորին տանել ի վաճառ, բայց հայերը չունէին թանգազին գորգեր և ծիրանի գործւած քներ:

Այս պատճառաբանութիւնն աչնքան թուլ է, որ սրա վրայ ես չեմ ուզում կանգ առնել, որովհետեւ շատ կերկարի, եթէ սկսեմ մի առ մի բացատրել ազգերի փոխադարձ չարաբերութեան դրական և բացասական կողմերը: Այսքան միայն կասեմ, թէ ով որ ծանօթ է միայն տեսաւ. կախիտութեան թէօրիալին, նրա տւած վճիռները սխալ կը լինին, եթէ ծանօթ չէ նաև տեսաւ կապահ ռեթեան թէօրիալին: Մտաւոր զարգացման մի աստիճանից միւսին անցնելը ոչ ղիւրին և ոչ կարճ ժամանակի գործ է և կախումն ունի ամենազօրեղ ցնցումներից, ամենակենսական պահանջներից: Տաճիկն ու պարսիկն էլ ալսօր չարաբերութիւն ունին լուսաւորեալ Եւրոպայի հետ, բայց մնում են նոյնը, ինչ որ կան: Հինը չը քաջքալած՝ նորը նրա տեղը բռնել կարող չէ: Հին հայերը գիր ու գրականութիւն ունենալու ոչ պահանջ ունէին և ոչ նախապատրաստութիւն: Այդ հայերի համար է, որ Խորենացին ասում է—«Այլ ինձ թուի, որպէս ալթմ՝ և առ հինսն Հալաստանեալց լեալ անսիրելութիւն իմաստութեան և երգարանաց բանատրաց, վասնորոյ աւելորդ է մեզ և ալ չաղազս անբանից արանց թուլամտաց վալրենեաց ճառել:

Ես կը մնամ մեր հանճարաւոր քերթողահօր համախօս ու համակարծիք ծառան ամենախոնարհ հպատակութեամբ, մինչև աւելի համոզեցուցիչ փաստերով չապացուցանեն, որ հեթանոս հայերն ունեցել են իրանց ազգային գիրն ու գրականութիւնը: Իսկ իմ ընթերցողներից կը խնդրեմ, որ իմ այս դրածքը քննադատութիւն չը համարեն: Ես չեմ քննադատել պ. Յարութիւնեանցի գիրքն ամբողջապէս, այլ միայն նրա տենդենցիան, այսինքն այն ձգտումը, որով նա ուզում է հաստատել, որ հին հայերը գիր ու գրականութիւն են ունեցել:

Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՆՈՐ ԱՂԲԻՒՐԸ

ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆԻ

Վերջին ամիսներս հալ բանասիրութիւնը սաստիկ հետաքրքրած է Խորենացու պատմութեամբ: Այս բազմաչարհար հեղինակը, ամենանշանաւորը մեր հին մատենագիրներին մէջ՝ ամենից շատ է ենթարկել գիտութեան անաչառ քննադատութեան, գիտութեան, որ չէ ճանաչում հայրենասիրութիւն, չէ զգում բարեպաշտ երկիւղածութիւն զէպի նւիրական դարձած գրական հին լիշատակարանները. ալ մի ձեռքում բռնած համեմատական ուսումնասիրութեան մանրացոյցը, միւս ձեռքում անողոք քննադատութեան անդամահատութեան դանակը՝ հանդարտ պաղարիւնութեամբ և լարած ուշադրութեամբ հետազօտում է հին մատենագիրներին, ոմանց գլորում է անդունդը, հրատարակում է կեղծ՝ խաբեբայ, խարդախող և խարդախած. իսկ ոմանց իրանց ստոր աստիճանից տանում բարձրացնում է աշնակիսի գահ, որի վերաջ երբէք չեն գտնուել դարերի ընթացքում:

Մ. Խորենացին շատ անգամ մտել է քննութեան ալս սարսափելի բովը, շատ անգամ ենթարկել է անողոք լարձակումների և կասկածների. բայց երբէք նա չէ գտնուել աշն վտանգաւոր դրութեան մէջ, ինչպէս Ներկայումս: Խնդիրն ալ ժամ աշնպէս է դրած, որ եթէ մի ուրիշ չաջող լուծում չը գտնէ՝ մեղ պէտք է ստիպէ ընդունել աշն երկուսից մէկը. կամ՝ որ Խորենացին հինգերորդ դարի մատենագիր չէ, ալ վեցերորդ դարի երկրորդ կէտում, մինչև իսկ եօթներորդ դարի վերջերում ապրող մարդ. կամ, եթէ Մ. Խորենացի անունով մէկն չիրաւի ապրել է հինգերորդ դարում՝ ուրեմն Խորենացու պատմութիւն կոչւած գիրքը նորա գրածը չէ, ալ մի. կեղծիք է Զ. կամ Է. դարերի. երկսալրաբանութիւն, որի թէ աշն և թէ միւս կողմը հաւասարապէս կորստաբեր նշանակութիւն ունին Մ. Խորենացու և նորա պատմութեան համար: Եթէ առաջին կէտն ընդունենք՝ Խորենացին դուրս կը գալ մի խարդախող և չանդուգն ստախոս, որ իրան համարում է Սս. Սահակի և Մեսրոպի անմիջական աշակերտ, իրան ականատես է համարում պատմած վերջին անցքերին, մինչդեռ նա Ս. Սահակից ամենաքիչը մի դար չհոռոյ է սպրել ու գրել և ժամանակակից չէ աշն անց-

քերին, որ նկարագրում է: Եթէ երկրորդ կէտն ընդունենք՝ Խորենացին ալ ևս կանհետանալ մեր մատենագրութեան միջից իբրև պատմութեան հեղինակ, և նորա անունով մեր ձեռքը հասած պատմութիւնը կը դառնալ մի կեղծած աշխատութիւն, որ Զ. կամ Է. դարի մի անանուն եկեղեցական շարագրել է և վերագրել Մ. Խորենացուն, իւր աշխատութեան լարգն աւելացնելու համար: Այնուհետև ալ աշխատութիւնը կը կորցնէ իւր նշանակութեան ու կարևորութեան ամենամեծ մասը: Յիշեալ երկսպարաբանութեան սր կէտն էլ ընդունելու լինինք՝ մեր առաջ դուրս կը գան անթիւ խնդիրներ մեր պատմութեան և գրականութեան մասին, բոլորովին կը կործանուի ալն չնքը, որ կոչւում է «Հալոց մատենագրութեան հինգերորդ դար», որի գլխաւոր սիւնն է Մ. Խորենացու պատմութիւնը. մենք կընկնինք մի քաօսի, մի անելանելի խաւարի մէջ մեր նախկին պատմութեան և մատենագրութեան նկատմամբ:

Այս Գամկլեան սուրը Մ. Խորենացու գլխին կախեց Փրանսիացի գիտնական հալագէտ Ա. Կարրիէր, նոյն անձը, որ անցեալ տարի մի առանձին գրքովով ջանաց ապացուցանել, թէ Խորենացին երբէք չէ ունեցել Մար Աբաս անունով մի աղբիւր, ալ նորա թէ անունը և թէ պատմութիւնը բոլոր հանգամանքներով հնարել է իւր գլխից: Ա. Կարրիէրի ալս դատաւճիռը որքան և անողոք ու խիստ է (ասեմք նաև անսխալ չէ)՝ ալնու ամենալին միշտ թեթև վէրք է, համեմատութեամբ ալն մահացու հարածին, որ ալժամ տալիս է Խորենացուն լիշեալ գիտնականը: Մենք ալստեղ համառօտ կերպով կը բացատրենք խնդրի էութիւնը և կը դնենք լետոյ մեր կարծիքն ալ խնդրի նկատմամբ, որ եթէ ընդունելի լինի բանասէրներին՝ կարծում ենք կը լուծէ ալ կնճռոտ խնդիրը և կոչնչացնէ Գամկլեան սուրը:

Ա. Կարրիէր «Հանդէս ամսօրեակի» ալս տարաւ օգոստոսի համարում հրատարակեց մի կարևոր խօսք «Մ. Խորենացու մէկ նոր աղբիւրը» վերնագրով (եր. 250—253), որտեղ ցուց տւեց, որ Մ. Խորենացին իւր Բ. գրքի 83 գլխի բովանդակութիւնը փոխ է աւել Վարք Սեղբեստրոսի կոչած վիպաբանութիւնից ¹⁾: Իսկ աբբալ Դիւչէնի «Ըբած հմտա-

¹⁾ Խորենացու ալ փոխ առնած 83-րդ գլխի համառօտ բովանդակութիւնն ալս է. «Դիոկղետիանոսի Մաքսիմիանալ դուստրն ամուսնանում է Կոստանդիանոս կեսարի հետ, որ Հռոմի Կոստ թագաւորի որդին էր Հելենալ պրունիկից ծնած: Տրդատ հարսանիքի ժամանակ բարեկամանում է Կոստանդիանոսի հետ: Երբ Կոստանդ մեռնում է՝ Դիոկղետիանոս նորա տեղ կալսր է նշանակում Կոստանդիանոսին: Սա դեռ կեսար եղած ժամանակ, կռիւ մէջ լաղթելով՝ երազում մի խաչ է տեսնում, վերան դուած, թէ «Ալսու լաղթեա»: Այս խաչն իբրև զինուորական նշան գործածելով լաղթում է թշնամիներին. բաց լետոյ իւր կնից գրդակով՝ հալածանք է

կան հետազոտութեանց համեմատ՝ վարք Սեղբեստրոսի գրութեան լատինական խմբագրութիւնը Ն. դարու վերջին տարիներէն չառաջ չի կրնար ըլլալ, ուստի և չոչն խմբագրութիւն» (որից օգտւել է Խորենացին Ա. Կարրիէրի կարծիքով) «ամենէն կանուխ Զ. դարուն առաջի տարիներն եղած պիտի ըլլալ: Այն ասին պէտք է թողուլ Խորենացու Հայոց պատմութեան չօրինման նկատմամբ աւանդեալ տարեթիւը, և նոյն գրոց չօրինումն մինչև Զ. դար իջեցնել: Չենք կրնար ըսել թէ այս կտորը չետամուտ չաւելած մըն է, աչնու որ Խորենացու գրութեան կերպն և ոճը կը մատնէ մեծապէս»: (Հանդ. ամս. եր. 253):

Այս եղբայրացութիւնն անում է Ա. Կարրիէր՝ հիմնւելով իւր մէջ բերած համեմատութեան վերաջ. նա մի կողմից զետեղում է Վարք Սեղբեստրոսի վկայաբանութեան չունարէն բնագրից հառաւորներ և նոցա դէմը դնում է համապատասխան հառաւորները Խորենացու 83-րդ գլխից: Նմանութիւնն ալնքան ալնքիւն է, որ անկարելի է չը համոզւել, թէ ալդ 83 գլխի աղբիւրը Սեղբեստրոսի վարքն է:

Ա. Կարրիէրի այս գիւտն հարկաւ անուշաղիւր չը մնաց բանասէրների կողմից: Նոյն «Հանդէս ամսօրեալի» նոյեմբերի համարում (եր. 343—346) Ս. Վ. Պարոնեան հալ բանասէրը հրատարակեց իւր առարկութիւնը Ա. Կարրիէրի դէմ: Բացատրելով մի կողմից, թէ ինչ անտեղի հետեանքների կարող ենք հասնել, ընդունելով Ա. Կարրիէրի հետ, թէ Խորենացու պատմութիւնը գրած է Զ. դարում, միւս կողմից խոստովանելով, որ վերաւի Խորենացու 83 գլուխը հաւատարիմ նմանութիւն ունի Զ. դարի չունարէն բնագրին հետ՝ Հ. Պարոնեանը այս միջին ենթադրութիւնն արաւ, իբրև ամենահաւանական, թէ Սեղբեստրոսի վարք կոչւած գրածքն հաւանօրէն Զ. դարից շատ առաջ ծնունդ է՝ առել չունական վկայաբանութիւնների մէջ, և մի կողմից անցել է փերմելիանոս եպիսկոպոսի գրածքների մէջ, որոնցից և օգտւել է Խորենացին Ն. դարում, իսկ միւս կողմից անցել է Հում, փոփոխութիւններ կրել, և այս փոփոխ-

լարուցանում քրիստոնեաների դէմ, որի պատճառով ելեփանդական բորտութեամբ ախտանում է: Բժիշկները չեն կարող օլնել, ոչ էլ կախարդները, որ Տրդատ նորա մօր ուղարկեց Պարսկաստանից և Հնդկաստանից: Քուրմները խորհուրդ են տալիս՝ երեխաներ մորթել և նոցա արիւնը մի աւազանի մէջ ածելով լողանալ: Բայց Կոստանդիանոս խղճահարում է անմեղ երեխաների լացից և նոցա մալերի ողբից, և լաւ է համարում հիւանդ մնալ, քան կոտորել երեխաներին: Այս մարդասիրութեան փոխարէն՝ Աստուծոյ հրամանով Առաքեալները տեսիլքում երևում են Կոստանդիանոսին և հրամայում են՝ Հումի Սեղբեստրոս եպիսկոպոսից մկրտել, որով կազատուի իւր ախտից: Կոստանդիանոս մկրտում և լաւանում է և Սեղբեստրոսի ձեռքով քրիստոնեալ է դառնում, և նորա առաջ Աստած ջնջում է բռնաւորներին, «ինչպէս համառօտ պատմում է Ագաթանդեղոս»:

ւած կերպսւրանքով նորից թարգմանել է լունարէն—այն ձեով, որ աչժմ գոյութիւն ունի:

Ա. Կարրիէր «Հանդէս ամսօրեայի» դեկտեմբերի համարում (Երևո 373—379) պատասխանեց Հ. Պարոնեանին: Պր. Նորայր Բիւզանդացի նամակով չափոնել է Ա. Կարրիէրին, թէ Սեղբեստրոսի վարքի հալերէն թարգմանութիւնը գտնւում է Սոկրատ Սքոլաստիկոսի պատմութեան սկզբում ¹⁾, (որ դեռ տպագրւած չէ): Պր. Կարրիէր Վենետիկ գնալով քննում է Սոկրատի Պատմութեան չորս ձեռագիրները, որոնք բոլորն էլ սկզբում ունին «Վարք Սեղբեստրոսի»: Այս թարգմանութիւնից Ա. Կարրիէր մէջ է բերում հատւածներ և համեմատում է խորենացու 83 գլխից հատւածների հետ, որից անտարակուսելի կերպով երևում է, որ խորենացու 83 գլխի աղբիւրն է ոչ թէ Սեղբեստրոսի վարքի լունարէն բնագիրը (ինչպէս առաջ ենթադրում էր պ. Կարրիէր), այլ այդ հալերէն թարգմանութիւնը, որ գտնւում է Սոկրատի պատմութեան սկզբում: Ա. Կարրիէր այսպէս է ձևակերպում իւր եզրակացութիւնը. «Մ ո վ ս է ս խ ո ռ ե ն ա ց ի գ ո Ր Ժ ա Ժ ա Ժ է վարուց Սեղբեստրոսի հալերէն թարգմանութիւնը» (Հանդ. ամս. 375): Հետազօտութիւնը շարունակելով՝ պ. Ա. Կարրիէր նկատում է, որ Սեղբեստրոսի վարքի հալերէն թարգմանութեան մէջ ալեպիսի հատւածներ կան, որոնք այդ գրւածքի լունարէն, լատիներէն և տուրերէն բնագիրները չունին, բայց սակաւն խորենացու 83 գլխում գտնւում են: Պարզ է որ լուն բնագրից եղած թարգմանութեան մէջ այս չափազանց անհրաժեշտ համար՝ հարկաւոր էր որ գոնէ մի քանի տարի անցած լինէր: Սորանից Ա. Կարրիէր գալիս է այս երկրորդ եզրակացութեան. «Մ ո վ ս է ս խ ո ռ ե ն ա ց ի գ ո Ր Ժ ա Ժ ա Ժ է վարուց Սեղբեստրոսի հալերէն թարգմանութիւնը՝ երբ վերջինս արդէն ընդամիջ արկեալ չաւելւածներ առած էր»: (Հանդ. ամս. եր. 378):

Ա. Կարրիէր չափոնում է, որ առ աչժմ չէ ուզում իւր հանած հետեւանքն աւելի ևս հեռուն տանել: Բայց նորա հետազօտութիւնից ինքն ըստ ինքեան բղխում է հետեւեալը.

Սեղբեստրոսի վարքի լունարէն թարգմանութիւնն եղած է Զ. դարի սկզբներում:

Հայերէն թարգմանութիւնը պէտք է որ այդ լունարէնից գոնէ մի քանի տարի ուշ եղած լինի:

Գոնէ մի քանի տարի պէտք է անցած լինի, մինչև որ հալերէն թարգմանութիւնը եկամուտ չաւելւածներ ընդունէ:

¹⁾ Նոյն բանն, անկախ պպ. Ն. Բիւզանդացուց և Ա. Կարրիէրից՝ չափոնում է և Միաբանը Պարիզից գրած մի նամակով, որ տպւած է «Հանդէս Ամսօրեայի» նոյն դեկտեմբերի համարում (Եր. 370—372):

Խորենացին օգտուել է ալս՝ չաւելածներ պարունակող հաւերէն թարգմանութիւնից:

Ուրեմն՝ Խորենացու պատմութիւնը, ամենականութիւնը՝ գրւած պէտք է լինի Զ. դարի կէսերին մօտ:

Կարող է լինել, որ հաւերէն թարգմանութեան մէջ չաւելածներ արեւ է նոյն ինքն թարգմանիչը. ալս դէպքում էլ Խորենացու պատմութիւնը չէ կարող 520—530 թւականից առաջ գրւած լինել, որ մեծ տարբերութիւն չունի նախորդ եզրակացութիւնից:

Սովորաբար պատմութեան երկու հաւերէն թարգմանութիւն կալ (Երկուան էլ դեռ տպագրւած չեն). մէկը գտնուում է Նրուսաղէմի Հայոց վանքում, որի երբ և որի ձեռքով թարգմանւած լինելը չաւտնի չէ. իսկ միւսից շատ ձեռագիր օրինակներ կան, և հէնց աղ ձեռագիրների վիշտակարաններում գրւած է, որ աղ պատմութիւնը թարգմանւած է (Փիլոն Տիրակացու ձեռքով) Ներսէս Կասարականի խնդրով (690—692), ուրեմն եօթներորդ դարի վերջերում: Եթէ Նրուսաղէմի ձեռագիրն աւելի հին թարգմանութիւն չը լինի, և ապացուցւի որ Խորենացին օգտուել է ոչ թէ աղէ հին թարգմանութիւնից, ալ վերջինից՝ ալս ժամանակ ինքն ըստ ինքեան Խորենացու պատմութեան զրութեան ժամանակը կորոշւի է. դարի վերջերը, նոյն իսկ Բ. դարի սկիզբները:

Արդեօք կարելի է համուել այսպիսի եզրակացութեան, Խորենացու պատմութիւնը գրւած ենթադրել Զ. դարի կէսերում, կամ նոյն իսկ Է. դարի վերջը. արդեօք չկա՞յ մի ուրիշ ճանապարհ՝ լուծելու ալս՝ մեր մատենադրութեան և պատմութեան համար վերին աստիճանի կարևոր խնդիրը, լուծել ալս կերպով, որ Խորենացու գրութեան ժամանակի մասին ներկայումս ընդունւած կարծիքը չը չեղափոխւի և ուրիշ շատ չեղափոխութիւններ չ'առաջացնէ: Մենք կարծում ենք կա՞յ այդպիսի մի ճանապարհ, և կը փորձենք արծարծել և պաշտպանել, հակառակ պ. Ա. Կարբիէրի կարծիքին, ալս տեսակէտը, թէ Խորենացու պատմութեան Բ. գրքի 83 գլուխը Խորենացու գրածը չէ, ալ մտցրած է նորա պատմութեան մէջ ոչ առաջ քան ժԱ. դարում: Մեր ալս կարծիքն հիմնուած ենք հետեւեալ փաստերի և դատողութիւնների վերալ:

Ա. Խորենացու պատմութիւնն ուսումնասիրողը չէ կարող չը զարմանալ ալս օտարտի երևութին վերալ, որ աղ բարեպաշտ մասնագիրը ոչ մի տեղեկութիւն չէ տալիս հայոց քրիստոնէութիւն ընդունելու մասին: Նա մեծ սիրով ու ոգևորութեամբ պատմում է Տրդատի մանկութիւնը, Հալատտանից փախչելը, Յունաստանում գործած քաջութիւնները, Հալատտան վերադառնալն իրիկ թաղաւոր, պատերազմները, Հռոմ ուղևորելը Երեսնամեակի տեսութեան, կատարած բարեպաշտական դործերն և ալն. միւս կողմից նոյնչափ ոգևորութեամբ և մանրամասնութեամբ պատ-

մում է Ս. Գրիգորի ծննդեան տեղը, մանկութիւնը, կրթութիւնը, ամուսնանալը, կնից բաժանելը, Տրդատի մօտ ծառայութեան մտնելն և առաքելական պաշտօնի պատրաստուելը, Հայաստանում իբրև քահանայապետ տրած բարեկարգութիւնները, նորա երկու որդոց մանկութիւնն ու կեանքը, պատմում է Ս. Նունէի (Հռիփսիմեան կոչսերից մէկի) Վրաստան գնալը և քարոզելը, Վրաց քրիստոնէութիւն ընդունելն և ալլն: Բայց ոչ մի բառով էլ պատմում Հռիփսիմեանց Հայաստան գալն ու նահատակութիւնը, Տրդատի հիւանդութիւնը, Ս. Գրիգորի վիրապից հանելը, քարոզելը, Վեսարիա գնալն, եպիսկոպոս ձեռնադրւելը և հաջոց մկրտելը:

Նա էջը կարող այս դէպքերը չը գիտնալ, քանի որ Ագաթանգեղոսի պատմութիւնն աչքի առաջ ունէր, որին հետեւելով գրում է Տրդատի ժամանակի պատմութիւնը մեծ մասամբ, և որին չաճախ վկայ է կանչում իւր գրածներին: Նա էջը կարող մոռանալ կամ արհամարհել այս նշանաւոր դէպքը, քանի որ սքանչանալով գտնում է Ս. Գրիգորին և Տրդատին, լուսաւորութեան հալը և առաքեալ կոչելով նրանց (Խոր. Բ. 92), քանի որ Վրաց աշխարհի քրիստոնէութիւն ընդունելը պատմում է, քանի որ առանձին երկու գրածք է նւիրում Հռիփսիմեան կոչսերին (Պատմութիւն Հռիփսիմեանց և Ճառ Հռիփսիմեանց): Մի հնար միայն կա՝ բացատրելու այս երևութը, ալն է, թէ Խորենացու մեր ալժմեան ունեցած բնագրում պակասում է Հաջոց դարձի պատմութիւնը իւր նախընթաց և հետորդ պարագաներով:

Բ. Խորենացու պատմութեան մէջ այս պակաս մասը սկզբնապէս պէտք է զետեղած լինէր նորա Բ. գրքի 82 և 84 գլուխների միջալացում, ալսինքն պէտք է կազմէր նորա պատմութեան 83 գլուխը: Որովհետև նորա պատմութեան 82 գլխում մենք տեսնում ենք, որ Տրդատ վերադառնում է Հայաստան իբրև թագաւոր և մի պատերազմ է մղում պարսիկների դէմ. իսկ 84 գլխում արդէն տեսնում ենք, որ Տրդատ գնացել է Հռոմ Վոստանդիանոս կայսեր տեսութեան: 82 գլխում պատմում է Տրդատի կեանքը մինչև և քրիստոնէութիւն ընդունելը, իսկ 84 գլխում՝ քրիստոնէութիւնն ընդունելուց չեւոյ արածները: Պարզ է ուրեմն որ նորա քրիստոնէութիւն ընդունելը պէտք է պատմած լինէր 82 և 84 գլուխների մէջ, ալսինքն 83 գլխում, ալն գլխում, որ մեր ալժմ ունեցած ձեռագիրներում և տպագիր օրինակներում պակասում է:

Գ. Թէ Խորենացու նախկին ձեռագիրներում եղել է ալ 83 գլուխը և բովանդակելիս է եղել հաջոց դարձի պատմութիւնը՝ ապացուցւում է Ասողիկի պատմութեան համեմատութեամբ: Խորենացու պատմութեան հետ Ասողիկ ինչպէս իւր առաջին հանդէսում, ալնպէս և երկրորդ հանդէսի առաջին գլխի սկիզբը հիւում է Խորենացու պատմութիւնից, մեծ մասամբ նոյն իսկ Խորենացու բառերով և երբեմն Խորենացու բովանդակու-

թիւնն համառօտելով: Նոյնպէս վարում է նա և Տրդատի և Լուսաւորի պատմութեան վերաբերութեամբ: Խնդիրը շատ կարեւոր լինելով՝ մենք այստեղ կ'արտագրենք Ասողիկից մի բաւական ընդարձակ հատած, որի մէջ բաժան-բաժան գրում ենք ալն տեղերը, որոնք բառացի նոյն են Խորենացու հետ, նօտրագրում ենք ալն տեղերը, որոնց բովանդակութիւնը նման է Խորենացու պատմածին, բայց բառացի չէ, իսկ սովորական գրութեամբ գրում ենք ալն տեղերը, որ Խորենացու մէջ ամենեկին չկան:

«Արդ խնդրէ՞լով զսոսանքն աս Տրդատայ գտաք թագաւորեալ էր ըրորդ ամին Դիոկղեստի անսոսի և լերկորդ ամին Շապհոյ Պարսից արքայի: Որոչ հասեալ ի Կեսարիա՝ լուրովք ի նախարարացն Հալոց ընդ առաջ Էլանէին: Եւ յսոսանքն աս Լուսաւորեան Տրդատայ սոսքն Գրիգոր անսոսնէ շարչարանացն արեալ վասն Քրիստոսէ հաւարացն՝ վերադնէց լինէր ¹⁾: Իսկ քաջին Տրդատաչ արագապէս բազում ճակատս տուեալ նախ ի Հալս և ապա ի Պարսըս: զորով զփորձ առեալ կորովեացն Պարսից զսասակութեան հսկաչին՝ բազում վիրօք զձին սատակեցին նետած զութեամբ, որ զարկուցեալ լերկիր ընկենոյր զարքաչն: Իսկ նորա չարուցեալ և ի հետի չարձակեալ՝ փոխանակ իւր զբազումս ընկենոյր ի թշնամեացն. և զմիոյ ուրումն ձի կալեալ՝ աշտանակեաց արիաբար: Դարձեալ լերկրորդումն միւս անգամ կամաւոր լեալ ի հետի՝ սուսերաւ զփղուցն զերակամս պուղէր: Եւ աչսպիսի նահատակութեամբ լամեալ ի Պարսս և ի Ասորեստան՝ անդր ևս քան զՏիգրոն չարձակի:

Եւ ի հնգետասներորդ ամին Տրդատաչ սուրբ կոտանքն Հռիփսիմեանք և Գալիանեանք վասն աստուածապաշտութեան հալածեալք ի Դիոկղետիանոսէ, եկեալ ի Վաղարշապատ քաղաք՝ զմարտիրոսական չարչարանս ընկալան ի Տրդատաչ արքայէ. լորում աստուածատուր պատուհանս ի վերայ Տրդատաչ և աշխարհիս Հալոց: Եւ ի նմին (ամի) աստուածահրաշ չալոնութեամբ ելեալ ի վերապէն սուրբն Գրիգոր՝ լուսաւոր վարդապետութեամբ սկիզբն առնէ և բժշկութեան հարուածոցն, որ հինգ օր անսուաղ մնացեալ ամենալն բաղմութեանն, ունին զնելով վարդապետութեան սրբոյն Գրիգորի, որ ևն Առաջաւոր պահք, ամի ամի պահեալք մինչև ցալմ: Թող զալ ևս վաթսուն օր վարդապետութեան նորա:

¹⁾ Մեր նօտրագրած ալս փոքրիկ հատածն Ասողիկ գրել է՝ առաջնորդելով Խորենացու ալս խօսքից. «Սա (Տաճատ) էր, որ չապալն զգայոց աներոյն իւրոյ Արտաւազդայ, և նա արքայի, նախ զԳրիգոր Անակալ լինել որդի»: Յալանի է որ Արտաւազդի ալս չալոնագործութեան անմիջական հետեանքն եղաւ Ս. Գրիգորի վերապ ձգեւը:

Արդ ի գնալն Տրդատայ ի Հռոմ առ սուրբն Կոստանդիանոս՝ նիւթէ չարիս Շապուհ ի վերայ մերոյ աշխարհիս. և ի խորհրդէ նորա ելեալ Քաղաքիւն Հիւսիսայն աղփացն յաշխարհ մեր: Ի նորին բանս հրապուրեալ նահապետ ազգին Սլկոունեաց՝ առաջնաւ յորոքեալ ամրանալ չամուրն Ողական: Եւ ալն ինչ ընդ հուպ եկեալ մեծին Տրդատայ չարեմտից՝ առաջէ առ Սլկոնն զճենազնեանն Մամգուհն, որոյ ելեալ դառնալն քանիս խփեաց զնա, և յորժամ որսալը նա երէս՝ հարեալ ներս առն զնա: Զոր շահալ արքայն՝ կարգէ զնա խարարն Մամգուհն ի տեղի ապստամբին, անուանելով զՏարօն չանուհն իւր Մամգուհնեան տուն» ¹⁾:

Այս ընդարձակ հատածի վերայ մի ակնարկ ձգելն անգամ բաւական է նկատելու համար՝ որ նա ազբիւրի նկատմամբ բաղկացած է երեք կտորից. առաջին և երրորդ կտորը կազմած են ստրկական հետեողութեամբ Խորենացու պատմութեան, իսկ միջին կտորը Խորենացու մեր ալփման ունեցած պատմութեան մէջ չկալ ամենեկին: Առաջին կտորը քաղած է Խորենացու Բ. 82 զլխից, երրորդ կտորը քաղած է նոյն հեղինակի 84 զլխից: Իսկ որակից է քաղել Ասողիկ միջին կտորը: Դժար չէ մականբերել, որ ալս միջին կտորը Ասողիկ քաղել է Խորենացու պատմութեան Բ. 83 զլխից, որ ալսմ կորած է, որ սակաւն պէտք է գոյութիւն ունենար հին ժամանակ: Այս մականբերութիւնն ստուգութեան կը փոխուի, երբ ի նկատ առնենք ալն հանգամանքը, որ Խորենացու նախկին 83 զլխի մեր *a priori* ենթադրած բովանդակութեան բոլորովին համապատասխանում է Ասողիկի միջին կտորը, ալսինքն պարունակում է Հալիսիմեանց պատմութիւնը, Տրդատի հիւանդութիւնը, Ս. Գրիգորի վերապից ելնելը, քրիստոնէութիւն քարոզելը և վարդապետութիւնը:

Նոյն երեւոյթը նկատուում է Յովհաննէս Կաթողիկոսի պատմութեան մէջ, եթէ համեմատելու լինինք նորա՝ ալս ժամանակին վերաբերեալ հատուածը Խորենացու հետ: Տարբերութիւնը սորանումն է միայն, որ Յովհ. Կաթողիկոս շատ աւելի ազատօրէն է օղտում Խորենացուց և ի նկատի ունի նաև Ագաթանգեղոսի պատմութիւնը, մինչդեռ Ասողիկ միայն Խորենացուց օղտելով և ստրկաբար հետեւելով՝ աւելի կարեւորութիւն ունի մեր համեմատութեան համար:

Այս համեմատութիւնից գալիս ենք ալս եղբակացութեան, թէ Ասողիկ (ինչպէս և Յովհ. Կաթողիկոս) ունեցել են իրանց ձեռքում Խորենացու ալսպիսի ձեռագիր, որի մէջ Բ. գրքի 82 և 84 զլուխների մէջ գետեղած 83 զլուխը պարունակում էր Հայոց դարձի պատմութիւնը:

¹⁾ Ասողիկ, Եր. 60 — 62. տպագր. Պետերբ. 1885.

Դուրեք առարկող լինի, թէ Ասողիկ վերալիշեալ միջին կտորը գրելիս օգտուել է Ագաթանգեղոսից կամ Զենոբից: Բայց աշխարհի առարկութիւնը հիմնաւոր չէ: Ասողիկի ալի միջին կտորի բովանդակութիւնը կազմում է Ագաթանգեղոսի պատմութեան զրեթէ երկու-երրորդական մասի նիւթը. և ալի 13 տողը մի ամբողջ գրքից ծաղկաքաղ անելու ընդունակ չէ Ասողիկի աշխարհի բան կարող է անել աւելի դարգացած մատենագիրը: Ասողիկի ամբողջ առաջին և երկրորդ հանդէսները արդարայնում են մեր աշխարհը: Բացի սորանից՝ Ագաթանգեղոս չէ վիշատակում, թէ հալերը հինգ օր անսւաղ մնացին և ալի հինգ օրը կոչեցաւ Առաջաւորաց պահք, ալ նա պատմում է միալն՝ թէ թագաւորն ու մեծամեծները վաթսուն և վեց (կամ վաթսուն և հինգ) օր պահք պահեցին ¹⁾, որից չետոյ բժշկեցան հարւածներից: Արդ Ասողիկ չէր համարձակի, եթէ Ագաթանգեղոսից օգտուած լինէր՝ նորա 66 կամ 65 պահոց օրերը ինքնազուլով փոխել 5 օր անսւաղ ծոմապահութեան և զորանից զատ՝ 60 օր վարդապետութեան:

Իսկ Զենոբ թէպէտ վրաւի վիշում է հինգ աւուր ծոմապահութիւնը ²⁾ բայց բոլոր մնացած պատմութեամբ զանազանում է Ասողիկից, և բաւական է մի թեթեւ համեմատութիւն՝ նկատելու համար, որ ոչ մի կապ և նմանութիւն չկալ Ասողիկի ալի միջին կտորի և Զենոբի մէջ: Բացի սորանից չափնի է, որ Ասողիկ չէ էլ ճանաչում Զենոբին, որովհետեւ նրան չէ վիշատակում աչն աղբիւրների շարքում, որոնցից քաղում և հիւսում է իւր պատմութիւնը ³⁾: Ուրեմն հաստատ է մնում մեր վերելի եզրակացութիւնը, թէ Ասողիկ վերալիշեալ միջին կտորը համառօտել է Խորենացու ճախկին 83 գլխից, որ նորա ժամանակ զուգութիւն ունէր, իսկ ալիւ կորած է:

Աշխարհով մենք կրէնենանք Խորենացու Բ. գրքում երկու հատ 83-րդ գլուխ, որոնցից առաջինը սլարունակում էր Հալոց դարձի պատմութիւնը, իսկ երկրորդը՝ Կոստանդիանոսի առասպելախառն պատմութիւնը: Առաջինը ինչպէս տեսանք, թէպէտ սլիւ կորած՝ բայց բոլորովին վաւերական է, իբրեւ նոյն ինքն Խորենացու գրածը, իսկ երկրորդը կասկածելի, իբրեւ Զ-Ղ դարերում շարադրւած:—Տեսնենք ինչ տարնչութիւն ունի ալի երկրորդ, կասկածելի 83 գլուխը առաջին, վաւերականին հետ:

Դ) Կասկածելի 83 գլուխը չէր կարող վաւերական 83 գլխի մասը կազմել, որովհետեւ Հալոց դարձի պատմութիւնը և Կոստանդիանոսեան

¹⁾ Ագաթ. եր. 422, 423, 424, տպագր. Թիֆլ. 1882.

²⁾ Զենոբ, եր. 23, վեհ. 1889.

³⁾ Ասողիկ, եր. 6—7:—Առանձին ուսումնասիրութեան մէջ մենք կը ջանանք ցոյց տալ, թէ Զենոբի պատմութիւնը գրւած է ոչ առաջ քան Զ. դարում, ուրեմն Զենոբի «հինգ անուաղ աւուր և Առաջաւորաց պահոց» աղբիւրը կարող է լինել նոյն ինքն Խորենացին:

առասպելը բովանդակութեան կողմից աչնչափ տարբեր և հեռու են միմեանցից, որ Խորենացու նման ճաշակով և գրագէտ մատենագիրը չէր գետեղի մի գլխում ալս տարբեր նիւթերը: Դարձեալ՝ Հալոց դարձի պատմութիւնն ահաքան կարևոր էր, ահապիսի ամիրոփ ամբողջութիւն էր կազմում և ինքն ըստ ինքեան ահաքան ընդարձակ էր, որ անկարելի կը լինէր խճողել նրան կողմնակի նիւթով և նսեմացնել աչդ գլխի ճշանակութիւնը:

Ե) Կասկածելի 83 գլուխը չէր կարող վաւերական 83 գլխից զատ, առանձին գլուխ կազմել, որովհետեւ ալս դէպքում Խորենացու 82 և 84 գլուխները մէջ պէտք կը լինէր դնել ոչ թէ մի գլուխ, ալ երկու, և երկուսն էլ 83 թահամարով: Մինչդեռ բոլոր ձեռագիրները ալս տեղերում գլխակարգութեան վերաբերութեամբ բոլորովին համաձայն են միմեանց:

Այս երկու (Դ, Ե) դատողութիւններից եզրակացնում ենք, որ կասկածելի 83 գլուխը տեղ չունէր Խորենացու նախկին պատմութեան մէջ, ալ նա բռնել է վաւերական 83 գլխի տեղը աչն ժամանակ՝ երբ սա որ և է զիպւածով կորել էր Խորենացու պատմութիւնից:

Զ) Այս եզրակացութիւնը հաստատում է նորանով, որ Ասողիկ և Յովհ. կաթողիկոս, որոնք չալտնապէս օգտւում են Խորենացուց և մանաւանդ առաջինը, որ բացառապէս Խորենացուց համառօտելով հիւսում է իւր պատմութիւնն ալս տեղերում՝ ոչ մի լիշատակութիւն չեն անում ալս կասկածելի 83 գլխի բովանդակութեան մասին, ամենեւին չեն օգտւում ալս գլխից: Սա ապացոյց է, որ Ասողիկի և Յովհ. կաթողիկոսի ունեցած Խորենացու պատմութեան մէջ չը կար ալս կասկածելի 83 գլուխը, որից ոչ մի քաղած չեն անում, ալ կար վաւերական 83 գլուխը, որի բովանդակութիւնն ամբողջում են ալս երկու մատենագիրներն իրանց պատմութեան մէջ:

Է) Թէ ալս կասկածելի 83 գլուխը Խորենացու գրածը չէ՝ հաստատում է մասամբ և աչն մեծ հակասութեամբ, որ նկատւում ալս գլխի և Խորենացու վաւերական գրածքների մէջ: Կասկածելի 83 գլխում աւանդւում է, թէ Կոստանդիանոս կալարը Հեղենաչ պրուհիկի գաւաին է. մինչդեռ ինքը Խորենացին Կոստանդիանոսին համարում է սերած Հռիփսիմի կոյսի ցեղից¹⁾, իսկ Հռիփսիմէին համարում է թագաւորական տոհմից²⁾, կամ ալապէս ասելով՝ Կոստանդիանոսին համարում է Օգոստոս կալսեր տոհմի սերունդ: Խորենացին չէր կարող չալտնել, առանց որ և է բացատրութեան, ալսպիսի երկու հակասական կարծիքներ, աչն էլ Կոստանդիանոսի նման հաշակա-

¹⁾ Ճառ Հռիփսիմեանց, Եր. 323, Մատեն. 1865:

²⁾ Պատմ. Հռիփսիմեանց, Երևն 298:—Հռիփսիմէի թագաւորական զարմից լինելը Խորենացին աւանդում է համաձայն Աղաթիւնեղոսի, Եր. 80:

ւոր կապեր մասին, որին կոչում է «մեծ», «սուրբ», «բարեպաշտ» և այլն:

Ը) Իբրև կողմնակի ապացույց, թէ այս կասկածելի 83 գլուխը ուշ ժամանակի ներմուծութիւն է խորենացու պատմութեան մէջ՝ կարելի է նկատել և հետևեալ հետաքրքրական երևոյթը, որ այս գլուխը աւելի մաքուր և անաղարտ է պահպանւած ձեռագիրներում, քան նորա նախընթաց և հետևորդ գլուխները ¹⁾:

Վերջիշեալ բոլոր դատողութիւններից և փաստերից մենք եզրակացնում ենք հետևեալը.

Խորենացու պատմութեան Բ. գրքի 83 գլուխը իրան խորենացու գրածը չէ, այլ եկամուտ չաւելած է (interpolation) ոչ առաջ քան ժԱ դարում: Մինչև ժԱ դարի սկիզբը խորենացու պատմութեան ձեռագիրները պարունակում էին բուն խորենացու գրած 83 գլուխը, որի բովանդակութիւնն էր Հալոց դարձի պատմութիւնը իւր պարագաներով:

Մեր խնդրից դուրս է, թէ ինչպէս է եղել այդ չաւելածը, երբ և որի ձեռքով—որոնց մասին կարելի է հաւանական ենթադրութիւններ անել: Մեր նպատակն էր ցույց տալ, թէ խորենացու պատմութեան ազման օրինակներում գտնուող 83 գլուխը խորենացու գրածը չէ, ուստի և չէ կարելի հիմնել նորա վերաջ և խորենացու պատմութիւնը համարել Զ. կամ Լ. դարի գործ:

Միայն այսքանս կարևոր ենք համարում ասել, որ բացատրելու համար, թէ ինչո՞ւ կորուած վաւերական 83 գլխի փոխանակ Կոստանդիանոսեան առատպելն է մտցւած, և ոչ մի ուրիշ պատմութիւն: Սա մեր կարծիքով բացատրւում է չաջորդ 84 գլխի սկզբի խօսքերով «...ի գնալն Տրդատալ ի Հռոմ առ սուրբն Կոստանդիանոս»: Անծանօթ հեղինակը, որ հարկ է համարել իւր ձեռքում ունեցած խորենացու պատմութեան մէջ լրացնել պակասորդ 83 գլուխը՝ բնականաբար պէտք է դնէր այդտեղ Կոստանդիանոսի քրիստոնէութիւն ընդունելու պատմութիւնն և Տրդատի նորա հետ արդէն ծանօթ լինելը՝ որպէսզի այս կերպով կապէր այդ գլուխն չաջորդին հետ և բացատրէր Տրդատի Հռոմ գնալու շարժաւիթը: Իսկ Կոստանդիանոսի այս պատմութիւնը արդէն հաշիւին թարգմանւած պատրաստ կար Սոկրատ Սքուաստիկոսի պատմութեան սկզբում, պէտք էր միայն համառօտել այն տեղից:

¹⁾ Ն. Մաւի հրատարակած բաղդաստութեան մէջ ԶԱ, ԶԲ, ԶԴ և ԶԵ գլուխները, որ Վենետ. տպագրութեամբ 198 տող են կազմում՝ պարունակում են 167 տարբեր ընթերցւածք, իսկ ԶԴ գլուխը, որ բաղկանում է 45 տողից՝ պարունակում է միայն 18 ընթերցւածք, այսինքն՝ կրկնապատիկ պակաս քան նորա նախորդ և չաջորդ գլուխները:—Նոյն երևոյթը նկատւում է և Վարինեանի բաղդաստութեան մէջ:—Ուրիշ հաւասար պատմաների մէջ՝ բնագրի համեմատական անաղարտութիւնը նշան է նորա համեմատական նորութեան:

Գուցէ մեր դատողութիւններն աչնքան հիմնաւոր և փաստերն աչնքան զօրաւոր չեն, որ բաւական համարւին վերջնականապէս լուծելու պրոֆէսոր Ա. Կարրիէրի զարթեցրած բանասիրական կարևոր խնդիրը. բայց կարծում ենք, որ նոքա արժանի են հմուտ բանասէրների ուշադրութեան և քննութեան, որոնք եթէ աչս տեսակէտից խնդիրը քննելու լինեն՝ յոյս ունինք աւելի զօրաւոր փաստեր կը կարողանան գտնել, քան որ մեզ չաջողեցաւ աչս ավելիոյ գրած չօղածում:

Յամենայն դէպս անկեղծ շնորհակալութիւն ենք չափնում գիտնական Ա. Կարրիէրին, որ առաջինն արժարծեց աչս կարևոր բանասիրական խնդիրը, որի աչս կամ աչն կերպ լուծւելը խիստ հետաքրքրական պէտք է լինի մեր գրականութեան և չատկապէս ծերունի քերթողահօր պատմութեան և անձնաւորութեան նկատմամբ:

13 դեկտեմբերի, 1892 թ.

Թիֆլիս:

Նոր ստացած գրքեր

1) ԱՐՇԱՐՈՒՆԻ.—«Սիրոյ ճարակը»: Տիրան և Արփենիկ: Կաղզւանի անցեալից առնւած մի պատկեր: Ալեքսանդրապոլ, տպ. Գ. Սանուքեանցի, գինն է 40 կոպէկ:

2) ՆԱԶԱՐԵԱՆՅ, Յ., տարկաւագ.—«Յիսուս Քրիստոսի մկրտութիւնը (ժողովրդական ընթերցանութեան համար), Թիֆլիս, տպարան Շարաձէի, 1892 թ., գինն է 8 կոպէկ:

3) ՆՈՅՆԸ.—«Օրացոյց 1893 թւականին Քրիստոսի» (վեցերորդ տարի): Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1892 թ., գինն է 20 կոպէկ:

4) ՔԻԻՐՔՉԵԱՆ, վ. Մ.—«Համառօտ պատմութիւն ընդհանուր ազգաց (!): Մասն Ա. Արեւելեան հին պատմութիւնք: (Վաւերացեալ չուսումնական Խորհրդոյ Ազգ. Կենդ. Վարչութեան): Կ. Պոլիս, տպարան Ն. Ճ. Արամեան, 1892 թ., գինը 4 դրուշ:

5) ՉՄՇԿԵԱՆ, Մ.—«Ժողովրդական պատկերազարդ օրացոյց 1893 թ.: համար: Թիֆլիս, տպ. Ռոտինեանցի, 1892 թ., գինն է 25 կոպէկ:

6) Հրատար. ԱՍՔ.ԱԻԷԻ.—«Ձրուցներ» (Փոխադրութիւն) Տեառ Ա. 1) Անաստեաններն էլ մեղք են, 2) Կոյր երաժիշտը, 3) Երազ, 4) Ճշմարտախօս աշակերտը, 5) Նշգրտասէրը: Թիֆլիս, տպարան Ռոտինեանցի, 1892 թ., գինն է 5 կոպէկ:

7) ԲՐԻԼԵԱՆՉԻԿԵԱՆ.—«Հայկական մանուկրամներ և ծաղկազրեր ձեռագործի համար»: Հրատարակութիւն Ք. Բաշինջաղեանի: Ս. Պետերբուրգ, 1892 թ., գինն է 50 կոպէկ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

† ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

(† 19/31 դեկտեմբերի 1892 թ.)

Ձեռք ալ ևս Գրիգոր Արծրունին, նա որ քսան տարի շարունակ և անընդհատ կերպով մեր հասարակութեան ամենից շատ ուշք զրաւած անձնաւորութիւնն է եղած:

Գրիգոր Արծրունին ասպարէզ եկաւ և հէնց առաջին րոպէից ցնցեց հասարակութեան ուշադրութիւնը: Հում երկաթին մագնիսականութիւն հաղորդեց, որի հոսանքը իսկոյն երկու ուղղութիւնների ջոկեց՝ երկու ծայրերում կենտրոնանալով: Եւ հանգուցեալը եղաւ մինչև իւր մահը մի մագնիսական սլաք հասարակաց կարծիքի մեղանում, հասարակաց ոգին իւր մէջ կենտրոնացնելով աւելի քան որ և է մէկը նորա — ժամանակակիցներից:

Արծրունին ստեղծւած էր զարթեցնելու և արթնութեան մէջ պահելու հասարակաց կարծիքը, իւր տեսողութիւնը տարածելով ազգի բոլոր խաւերի վերայ և կեանքի բոլոր շողերը մի պրիզմայի միջով անցկացնելով: Այդ պրիզման իւրն էր, նորանից ցոլացող գոյներով նա գոյն տւեց ժամանակի կեանքին, որպէս ոչ մէկը նորանից առաջ և նորա կենդանութեան օրերով:

Բայց մխիթարական է որ այն յառաջատար հոսանքը, որին հանգուցեալը մեծ մղում տւեց, աճեց և ճիւղաւորւեց դեռ ևս նշանաւոր պուբլիցիստի կենդանութեան օրերով նաև նորանից անկախ: «Մշակ» լրագիրը որ զրոշակ էր մոքերի նոր հոսանքների, դառաւ օրգան կուսակցութեան պարագլխի, և իբրև այդպիսին՝ նա կուսակցութեան գլխաւոր ղեկավարող թերթը մնաց իւր հիմնադրի ձեռքում մինչ վերջին րոպէն, շնորհիւ այն հաւատի, որ իմացել էր նա ներշնչել զէպի ինքը երիտասարդութեան մէջ և ժողովրդական խաւերում:

Մեր յառաջգլխական հոսանքը մաքեր մշակելու դործում աւելի ընդարձակ ծառալ ստացաւ, քան թէ այն, ինչ հանգուցեալի

օրգանը միշտ վերջը կարողացաւ արտայայտել. բայց Արծրունուն մնում է մեծ պատիւը որ նա իւր օրգանի միջոցով ղեկավարեց հասարակաց կարծիքը կարեւորագոյն կռիւներում և համակրութիւն վաստակեց ամբողջ յառաջդիմական կուսակցութեան կողմից, հնարաւորութիւն տալով բոլոր յառաջդիմականներին իրանց զգալ մի մարմին, երբ խնդիրը ընդհանուր կուսակցութեան գործնական դատերի պաշտպանելու մէջն էր:

Իւր կուսակցութիւնը ստեղծելու համար, նա նախ մտքեր քարոզեց. դորանից առատ կերպով օգտուեց նաև նորագոյն գրականութիւնը, որը իւր ներկայացուցիչներից շատերի անունով կապուած է «Մշակ»-ի առաջին տասնամեայ շրջանի գործունէութեան հետ: Երբ իւր քարոզած ուղղութեամբ սնուած մատաղ սերունդը կեանքի մէջ գործելու չափահասութեան հասաւ, Արծրունին իւր լրագրով զբաղեց այդ սերնդից մի կուսակցութիւն կազմակերպելու և նրանով մեր կեանքում հինը նորով փոխարինելու. դպրոցներ, ընկերութիւններ, Էջմիածինը իւր օրգաններով, որպէս նաև ընդհանուր հայկական կեանքը՝ զգացին այդ նոր հոսանքի առողջարար ոյժը:

Գրիգոր Արծրունու, որպէս կուսակցութեան պարագլխի, մեծ արժանիքը այն էր, որ նա, և դորանում առաջինը մեզանում, — իմացաւ կուսակցական պայքարների մէջ ուղղութիւն պահպանել, յարմարացնելով այդ ուղղութիւնը իւր քարոզած մտքերի ուղղութեանը և այդպիսով կեանքը մղելով դէպի մտքի շաւիղը: Գրիգոր Արծրունին իսկական հիմնադիրն է գաղափարական կուսակցական կեանքի մեզանում, որ, մեր կարծիքով՝ հանգուցեալի ամենամեծ տիազոսը կը ֆնայ մեր կուլտուրական կեանքի զարգացման պատմութեան մէջ:

Մենք այս տողերով ուղեցինք գծել հանգուցեալի հրապարակախօսական գործունէութեան միայն դրական կողմերը, որոնց համար նա զնահառութեան արժանի է մեր աչքում:

Այն պատիւը, որին ազգը նորան արժանացրեց, նա արդարութեամբ վաստակեց:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՔՐՈՆԻԿ

Պանամայի ընկերութեան զործը:

Ո՞ւմ չէ չալտնի ֆրանսիացի Ֆերդինանդ Լեստպսի անունը: Ո՞ւմ չէ չալտնի որ Լեստպսը որին իւր հայրենակիցները հպարտութեամբ կոչում են Մեծ Ֆրանսիացի—անխղելի կերպով կապել է իւր անունը XIX դարուս հրաշք-ստեղծագործութիւններից մինի, աչն է Սուեցի կանալի գլուխ բերելուն հետը:

Դժբաղդաբար Լեստպսի անունը կապած է մնալու նաև աչն տխուր անցքերի հետ, որոնց տեղիք տւեց նրա երկրորդ՝ աւելի մեծ, աւելի չանդուգն ձեռնարկութիւնը—աչն է Պանամայի ջրանցքի փորելը:

Պանամայի կանալի փորելը չը չաջողւեց և մի մեծ սկանդալ, մի կատարեալ սկանդալ fin du siècle տեղի ունեցաւ Ֆ. Լեստպսի օրերի արևմուտքին:

Ֆերդինանդ Լեստպսը ներկայումս 87 տարեկան պատկառելի հասակում է, ծնւել է 1805 թւի նոյեմբեր ամսին Պարիզի մօտ գտնուող Վերտալում: Նրիտասարդութեան օրերով պետական ծառայութեան մէջ էր, վարելով փոխ կոնսուլի, կոնսուլի և ապա դեսպանի պաշտօն Մադրիդում: Աջնուհետև իրան ամբողջապէս նւիրում է Սուեցի ջրանցքի փորելուն որ և աւարտում է փառաւորապէս 1869 թւին: Ամուսնանում է երկրորդ անգամ 1862 թւին մի կրէօլուհու հետ, որին պատահել էր խամայիլում մի երեկոյթի: Այդ ամուսնութիւնը լինում է շատ բեղմնաւոր: Լեստպսը ունեցաւ իւր երկրորդ կնոջից 11 երեխայ և ալփմնրա մեծ որդին—Շառլը, որը նմանապէս Պանամայի ընկերութեան կառավարիչներից մէկն է—52 տարեկան է, իսկ ամենափոքրիկ աղջիկը 7 տարեկան է:

1879 թւից սկսած Լեստպսը ձեռնարկեց Պանամայի գործին և ժողովուրդին չը խրտնեցնելու համար, վարւեց ալա նոր զործում Սուեցի գործի նման, ալսինքն առաջ բաւական չալտարարեց ալդ նոր գործի համար 300 միլիոն ֆրանկ և ապա առաջ ու առաջ գնալով ալդ գումարը

հասցրեց մօտ մէկ ու կէս միլիարդ ֆրանկ ահռելի գումարին: Ի դէպ ասեմք որ մի քանի մասնաղէտներն կարծիքով Պանամայի գործը գլուխ քերելու համար առնւազն հարկաւոր է երեք ու կէսից չորս միլիարդ ֆրանկ:

Լեսսեպսի Սուեցեան ձեռնարկութիւնը աջողեց. ընկերութեան մասնակցողները ստացան և շարունակում են ստանալ մեծամեծ օգուտներ, իսկ ինքը Լեսսեպսը, բացի Նիւթական շահից, ստացաւ իւր երախտագէտ հայրենակիցների կողմից Մեծ Ֆրանսիացու մականունը և դառաւ պատմական և աշխարհահռչակ մի անձնաւորութիւն:

Պանամայի ձեռնարկութիւնը—հանդիպելով բազմաթիւ դժարութիւնների՝ չը չաջողեց և ահա նոյն ֆրանսիացիները Լեսսեպսին—պատւաւոր լիգէոնի ասպետին,—դատի են կանչում:

Մեծ ծերունին տեղեկութիւնն չունի անցքերի մասին. նրա ընտանիքը թագցնում է նրանից իրականութիւնը: Նա ապրում է Լա-Շենէ ամառանոցում: Նրան հաւատացրել են թէ իւր որդիներն մէկը Բորդօ քաղաքումն է, մինչդեռ նա Սուդանումն է կուտում: Մերունին ամբողջ ժամանակ կարդում է, քիչ խօսում, հիւանդ է և բոլորովին խուլացել է:

Մի ամիսի գաղափար տւած լինելու համար, ղենեք աչտեղ աչն համեմատական աղիւսակը որից պարզ երևում է թէ ինչքան շահ է տեղ մինչ օրս Սուեցի ձեռնարկութիւնը և ինչքան վնաս է պատճառում Պանամային:

(Տես չաջորդ երկու էջերը)

ՍՈՒԵՅԻ ԶԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ

1868

	Նրձահանւածների արժէքները:	Դրամագլ. չրձա- հանութ. կուրսով:	Թղթ. արժէքները 19 նոյ. 1892 թ.	Դրամագլուխը ներկայ կուրսով:
400.000 աղցիա	500 ֆ.	200.000.000 ֆր.	2.623 ֆ. 75 սան.	1.019.500.000 ֆ. —
120.000 »	270 »	32.400.000 »	716 » 50 »	85.980.000 » —
120.000 »	100 »	12.000.000 »	139 » 25 »	16.710.000 » —
400.000 »	85 »	34.000.000 »	95 » 50 »	38.200.000 » —
333.333 օրլիգացիա	5% 300 »	99.999.900 »	602 » 50 »	200.833.132 » 50 ս.
15.152 »	3% 1 սեր. 330 »	5.000.160 »	475 » 50 »	7.201.776 » —
57.874 »	330 »	19.098.420 »	475 » 50 »	27.519.687 » —
75.000 »	— 2 սեր. 380 »	28.500.000 »	471 » 25 »	35.343.750 » —
60.000 »	— 410 »	24.600.000 »	471 » 25 »	28.275.000 » —
69.000 »	— 420 »	25.200.000 »	471 » 25 »	28.275.000 » —
		480.798.480 ֆր.	1.517.840.745 ֆ. 50 ս.	
		Հիմնադիրների մասը.	117.625.000 »	
			1.635.425.745 ֆ. 50 ս.	
		Նրձահանւածների գումարը.	480.798.480 » — ս.	
		Օգուտ	1.154.667.265 ֆ. 50 ս.	

ՍՈՒԵՅԻ

THE NEW YORK PUBLIC LIBRARY

ASTOR LENOX TILDEN FOUNDATION



ԳԱՆԱՄԱՅԻ ԶԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ

	Նրժանեւածների արժէքը	Գրամազլ. շրժանու- թիւն կուրսով:	19 Նոյ. 1892 միջ. կուրսը	Գրամազլուխը Ներկայ կուրսով:
600.000 աւցիւ	500 ֆ.	300.000.000 ֆ. —	21 ֆ. 62 ո.	12.972.000 »
250.000 օբլիգացիա	5% 437 » 50 ո.	109.375.000 » —	32 » — »	8.000.000 »
600.000 »	3% 285 » — »	171.000.000 » —	19 » 50 »	11.700.000 »
459.762 »	4% 333 » — »	153.100.746 » —	20 » 75 »	9.510.061 ֆ. 50 ո.
458.802 »	1 սերիա 450 » — »	206.460.900 » —	25 » 25 »	11.581.750 » 50 »
258.887 »	2 » 440 » — »	113.910.280 » —	25 » 25 »	6.536.896 » 75 »
89.802 »	3 » 460 » — »	41.308.920 » —	75 » 75 »	6.802.501 » 50 »
849.249 »	360 » — » ¹⁾	236.996.945 ֆ. 05 ո.	85 » 65 »	72.738.176 » 85 »
357.699	105 » — »	37.558.395 » —	82 » 87 »	29.642.516 » 13 »
		1.369.711.186 ֆ. 05 ո.		169.516.903 ֆ. 23 ո.
		169.516.903 » 23 »		
	վնաս. . . .	1.200.194.282 ֆ. 82 ո.		

¹⁾ Այս պարգեւատու վիճակիւսող օբլիգացիաների մի մասը մնաց անվաճառ:

THE HISTORY OF THE UNITED STATES



Այս թւերի պերճախօս եզրակացութիւնը այս է.

Շրջահանութիւնների Արժէքը ներկայ

	գումարը	կուրսով	
Սուեց	480.798.480 Փ.	1.635.465.745 Փ.	չա՛ 1.154.667.265 Փր.
Պանամա	1.369.711.186 »	169.516.903 »	Ֆինաս՝ 1.200.194.282 »

Առաջին ձեռնարկութիւնը, ուրեմն տեւել է չա՛ մօտ 1.155 միլիոն ֆրանկ, իսկ երկրորդը ֆինաս աւելի քան 1.200 միլիոն ֆրանկ:

Այս թւերի վրայ աւելացնենք ալն հանդամանքը, որ այս ֆինասի տուժողները մեծ մասամբ միջին կամ նոյն իսկ միջին կարողութիւնից պակաս տէր մարդիկ են, որոնք իրանց սանս իմ սանտիմի վրա հաւաքածները, կամ ինչպէս ֆրանսիացիք են ասում, իրանց «արած էկո-նոմիաները»—տեւել են Պանամայի թղթերին այն չոյսով թէ ունենալու են տարեկան այս ինչ օգուտը կամ ըստ իրանց՝ այս ինչ ռենտա:

Վերջին պարգեատու վիճակախաղ փոխառութիւններից վետոյ ընկե-րութեան գործերը սկսեցին կադել և 1888 թ. ընկերութիւնը օգնութիւն խնդրեց պարլամենտից: Օգնութիւնը մերժեց և լեռնապար խնդրեց կա-ռավարիչներ նշանակել գործը առաջ տանելու համար: Նշանակած ան-ձանց աշխատութիւնը փոխառութիւն անելու—Պանամայի գործը առաջ տանելու համար—չը չաջողեց: Ապա դատարանը մարդիկ նշանակեց ընկե-րութեան գործը վերջացնելու համար:

Պանամայի գործի ներկայ տիտէր գրութեան և անցքերի պատճառը այս վերջիչեալ հարիւր միլիոնների կորուստն է: Իսկ երբ շուկի պէս խարդախութիւնների և կաշառակերութիւնների լուրեր էլ տարածեցին—գործը ստացաւ աւելի ևս սուր կերպարանք, մանաւանդ որ ներկայ հան-րապետութեան հակառակորդները և թշնամիները այս գործին տւին նաև քաղաքական ատառ, աշխատելով սուեր գցել թէ հանրապետականների վրա և թէ հանրապետութեան վրա առհասարակ: Իսկպէս Պանամայի ընկերութեան կառավարիչների դէմ դատ բաց անելու օրինական պալմա-նոսթամը (որ է երեք տարի) անցել է, բացի մի մեղադրական կէտից որը հիմնուած է «վերջին փոխառութեան մէջ նկատուած ինչ ինչ անկանոնու-թիւնները» վրա, — փոխառութեան որի չը գլուխ գալու պատճառով փողերը ետ էին տրւել: Միւս մեղադրական կէտերի համար դանդատողները կա-րող էին քաղաքացիական դատ բաց անել, որի հետեանքը չէր կարող լինել մեղադրողների բանդարկութիւն, ալլ միմիայն դրամի հատուցում:

Նրբ լուբէի մինիստրութեան արդարադատութեան անդամ մինիստր Ռի-կառըթուլութիւն տեց Պանամայի ընկերութեան կառավարիչների դէմ դատ բաց անելու—հանդէս եկան զանազան լրագրերի հրապարակական զրպար-տութիւններ և մեղադրութիւններ ուղղւած ոչ միայն մէկի կամ երկուսի դէմ, ալլ տասնեակների դէմ և նոյն իսկ ալնպիսիների, որոնք կամ պատգամա-

ւորներ են և կամ սենատորներ: Լրագրական այս մերկացումները, որոնց ճշգրտութեան որ աստիճանի լինելը անկալտ էր և կարօտ ապացոյցներն ունեցան իրանց պաշտպանները պարլամենտում լանձին աջակողմեաններն:

Ռումբը պաթեց 21 նոյեմբերի (ն. տ.) պատգամաւորներն ժողովի նստին և հրացանաձիգներին առաջինը, աղսպէս ասած, եղաւ Դելահայէ (Delahaye) միապետական երեսփոխանը.

Սա իւր մի երկար ճառի մէջ պահանջեց որ մի լանձնաժողով նշանակուի Պանամայի գործի վրա («լուս գցելու») համար 1888 թվին, ասաց նա ի միջի ալոց, Ֆրանսիայում երկրւղալի լուրեր էին պտտում Պանամայի գործի մասին և հոգն իսկ ակնարկում էին սաստիկ խարդախութիւններն Վրա: Ֆերդինանդ Լեասեպը մի սրտոյտ արեց Ֆրանսիայի մէջ, բայց դա չ'օգնեց մի համակրութիւն առաջ բերելու համար: Այն ժամանակ մի ելոսագէտ — ֆինանսիստ — միտք ունեցաւ պարզեաւոր մի վիճակահանութիւն կազմելու... ապա ելոսագէտը գործը չաջողացնելու համար պահանջեց Պանամայի ընկերութեան կառավարիչներին հինգ միլիոն ֆրանկ պարլամենտի բոլոր աչն երեսփոխանների ձաջները գնելու համար, որոնք ծախու էին: Ամեն մի երեսփոխան ունէր իւր գինը նալած իւր աղղեցութեան... Նրեք միլիոն ֆրանկ բաժանւած է այս ձեով 150 պատգամաւորների մէջ...

— Անուշները տւէք, լսում է ձախակողմեաններից:

— Սպասեցէք քննութեան, պատասխանում է Դելահայէն և ապա նոր ակնարկութիւններ անելով Ֆրոկէի ¹⁾ և Ֆրեսխէի ²⁾ ձեռքերով կատարւած իբր զեղծումների վրա, աջակողմեան պատգամաւորն, որը ի գէպ ասած թունդ բուլանձական էր՝ շարունակեց՝ «Այստեղ կան հարիւրից աւելի պատգամաւորներ որոնք փող են վեր առել:

Ժողովականների մեծամասնութիւնը չուզւած է:

Ֆրոկէ (Նախագահ). «Իսկ չէք կարող ձեր պաշտօնակիցներից աւելի քան հարիւրին աղղպիսի ծանր կերպով մեղադրել առանց անուշները տալու: Տւէք անուշները. ես հրամայում եմ որ անուշները տաք»:

— Դելահայէ՝ Քննութեան սպասեցէք:

Տեղի է ունենում մի աննկարագրելի խառնաշփոթութիւն, աղմուկ, գոռում, գոչիւն, զայրացած դէմքեր, սպառնալի շարժումներ: Ապա մի քանի փոխադարձ առարկութիւններից վետոյ Ֆրոկէի և Դելահայէի մէջ մինիստրութեան գլուխը — Լուբէն՝ չալտնում է թէ ինքն էլ ընկերանում է քննութեան պահանջման: Ժողովի միաձայն հաւանութեամբ ընտրւում է մի քննիչ լանձնաժողով 33 անդամներից բաղկացած, իսկ Բրիսսոնը նախագահ:

¹⁾ Նախագահ ներկայ պատգամաւորների ժողովի:

²⁾ Թէ ներկայ և թէ շատ նախորդ մինիստրութիւնների գլխավորական մինիստրը:

Այսպիսով ստեղծում է մի նոր ասեան, որին չանձնուում է Պանամայի գործի վրա լույս սփռելու գուզընթաց գաղափարների հետ, որը իւր կողմից դատի էր հրաւիրել Ֆերդինանդ Լեասեպսին, բառին Կոտտիւլին, Մարիուս Ֆոնտան'ին և Լյֆֆել'ին, Պանամայի ընկերութեան ազգ գլխաւոր կառավարիչներին, որոնք մեղադրուում էին «խարդախ միջոցներ գործ դնելում հաւատացնելու համար գոյութիւն չունեցող մի վարկի մասին, փոխառութիւններից դուշացած դումարները վատնած լինելուն» և այլն:

Ընթերցողը պետք էր տեսնի թէ ինչ զգալութիւններ առաջ բերեց պարլամենտի ձեռքով ընտրւած քննիչ չանձնաժողովի ընտրութիւնը, որը, նշանակելուց և եթ—սկսեց իւր մօտ հրաւիրել զանազան անձանց ցուցմունքները լսելու համար:

Չանձնաժողովի առաջին նիստին լսած վկայութիւններից ամենահետաքրքրականը և նշանաւորը եղաւ Դըլահէ'ինը, որոնցից օգտուելով չանձնաժողովը համոզեց ¹⁾ թէ թիւուէ բանկալին գրասենեակը ստացել է մի հատ չեկով բառին Ռաշնախից (միջնորդ Պանամայի ընկ. կառավարիչների և 26 չեկերով ստացողների մէջ) մի կօշօ գումար 3.390.475 Ֆրանկ, որը և ետ է տրւել զանազան անձանց 26 չեկերով, որոնցից երկուսը մի մի միլիոն Ֆրանկի: մէկը՝ 475.000 Ֆ., մէկը՝ 400.000 Ֆ., մէկը՝ 195.000 Ֆ., մէկը՝ 150.000 Ֆ., մէկը՝ 140.000 Ֆ., մէկը՝ 100.000 Ֆ., մէկը՝ 50.000 Ֆ., մէկը՝ 40.000 Ֆ., մէկը՝ 25.000 Ֆ., մէկը՝ տասըսը քսան քսան հազարի և մէկը՝ 5.000 Ֆ.:

Հէնց այստեղ ասենք որ պարլամենտի չանձնաժողովը սկսեց հրատարակութեան տալ իւր ստացած անդեկութիւնները: Թէ այս հանգամանքը, որը հակառակում է Ֆրանսիական օրէնքի հոգուն քանի որ գաղափարաւորական քննութեան վերաբերեալ մանրամասնութիւնները զաղտնի պիտի մնան մինչև գաղափարների օրը և թէ այն հանգամանքը որ պարլամենտի չանձնաժողովը սկսեց մանրամասնութիւններ պահանջել գաղափարների ձեռք բերած անդեկութիւնները—տեղիք տւին ընդհարումի մի կողմից գաղափարների միջև, միւս կողմից վիշեալ չանձնաժողովի—քանի որ վերջինս տքնում էր ձեռք բերել առաջինին պատկանեալ իրաւունքները և թերեւ աւելի:

Լրագրիւրը բաժանեցին երկու մասերի. մէկը պաշտպանելով քննիչ չանձնաժողովի արածը, միւս մասը գաղափարների իրաւունքները:

Այսպէս թէ ահապէս չանձնաժողովը շարունակեց իւր տտեանը հրաւիրել ում բարեք էր համարում և հրատարակութեան տալ իւր ձեռք բերած անդեկութիւնները: Ի շարս այլոց նա իմացաւ վկայ Ռոսինիոլ'ից թէ իբր բառին Ռաշնախը ստացել է Պանամայի ընկերութիւնից

¹⁾ Մանուաւնդ որ ինքը թիւուէ'ն հաստատեց այս իրողութիւնը հազարելով նաև մանրամասնութիւնները և պատրաստականութիւն չանձնել ալք 26 չեկերը գաղափարներին:

իննը միլիոն ֆրանկ, թէ իբր ալլ գումարը նշանակած է ընկերութեան մատուաներում, լալց տւանց հաստատող թղթերի: Անուհետեւ նոյն վկայի տակով ընկերութեան մատուաների «գալտարարութեանց ծախքի հաշիւը» հասնում է քսան միլիոն ֆրանկի և որ ալլ գումարը բաժանւած է լրագրատներին և խմբագրատներին: Վկայի տակով ստացել են Պոլի ժուռնալ թերթը 300.000 ֆ., Տելեգրաֆը ¹⁾ 120.000 ֆ., Գոլուա՛ն 15.000 ֆ., Ռադիկալ՝ 100.000 ֆ., Ֆիգարո 500.000 ֆ., Տելեգրաֆ՝ կառավարիչը 120.000 ֆ., Գոլուա՛նը 30.000 ֆ., Ռադիկալ՝ երկուսը 100.000 ֆ., *Evenement*՝ 50.000 ֆ., ժուռնալ դէ Վէրա՛ն՝ 40.000 ֆ., Պարիզ՝ 80.000 ֆ.:

Գառարանի և պարլամենտական լանձնաժողովի մէջ խուլ ընդհանրումը գնալով ստանում է աւելի որոշ և սուր՝ կերպարանք: Մեղադրւածների փաստաբանները ղեկավար են ընդհանուր մի բողոքով ընդհանուր դատախազ Քենե դը Բուեպեռ՝ ընդդէմ պարլամենտական լանձնաժողովի բռնած զիրքին և բոլոր տեղեկութիւնների հրապարակ հանելուն: Իրանց բողոքում փաստաբանները ասում են ի թիւս ալլոց «քննութեան անպաշտան գաղտնի պահելը կազմում է հիմնական կանոն մեր քրէական օրէնքի» և ալլն Քենե դը Բուեպեռը որի ձեռքումն է Պանամայի գործը իւր կողմից մեղադրում է դատաստանական քննիչ Պիլէին որ սա չափունի էր պարլամենտական լանձնաժողովի առաջ իրան լուսնի աչնալի մասնաւորութիւններ որ առ ի պաշտօնէ պիտի պարտնի պահէր քանի որ տեղեկացել էր իրանց առ ի պաշտօնէ: Նոյն ալլ ընդհանրումը թի էր տւել Շառլ Լեոսեպիւն, Ֆոնտանին և Լատտիւլին միտել պարլամենտական լանձնաժողովի առջեր ներկայանալու: Վերջապէս այս ամենը արծաղանք գտաւ պարլամենտում:

Հասաւ նոյեմբերի 28-ի օրը: Պատգամաւորների ժողովում աջակողմեան Գլլա Ֆիեռանն խօսք է ուղղում և սկսում ծանրանալ աչն մասնաւոր հանդամանքների վրա որոնք կապ ունին բառն Ռաչնալի մահան հետ:

Ֆիեռաննէ՝—պատմում էին թունաւորութեան մասին և նոյն իսկ սպանութեան մասին: Այս հանգամանքների պատճառով դատաստանի պարտաւորութիւնն էր խուզարկութիւն կատարել և զմեռել հանգուցեալի թղթերը: Բացի ալլ զիակը թաղեցաւ չափազանց արագ: Ասում են նոյն իսկ թէ թաղումը կեղծ է եղել, թէ բարոն Ռաչնալը հիմա էլ ողջ առւղջ է և որ դադաղի մէջ լսի քարեր էին ածւած: Այս ալլի առաջ ունենալով կարի անհրաժեշտ է գերեզմանից հանել զիակը և զիաղնութիւն կատարել: (Գոհունակութեան ցուցեր):

Ռիկառը, արդարապատութեան նախարարը, տալիս է ժողովին նոյն

¹⁾ Պատկանող Ֆրեյտինէին:

բացատրութիւնները որ տեւէ էր նախընթաց օրը խուզարկող չանձնաժողովին, ապա ինքն Ռաջնախը թաղել է—որովհետեւ բժշկի վկայականը հաստատում էր բառոնի բնական մահը: Խակ եթէ խուզարկող չանձնաժողովը կատարած ունի բառոնի սպանութեան մասին—չանձնաժողովը կարող է իւր բխով ընդունել ալիպիսի մի բանաձև և բառոնի դիտողներինը կը կատարուի: Եւ երբ Ռիկաուը ակնարկում է ասելով թէ բոլոր ձեականութիւնները կատարուել են բառոնի թաղումից առաջ—պատգամաւորներին մէջ չիտթութիւն և չուզմունք է արտայայտուում: Ռիկաուը շարունակում է ասելով որ «Ռաջնախի թղթերը չեն զմուշկ որովհետեւ բառոնը մեռել էր առաջ քան ստացել խուզարկող չանձնաժողովին ներկայանալու հրաւերը և ալի հիման վրա չէր կարող հրաւիրւած համարուել: Նոյեմբեր 19 ընդհանուր դատախազը խուզարկող քննիչին ազատ կացուցեց գործի առաջ տանելուց, ուստի միմիայն ալիմ բողոքիչ ատեանը իրաւունք ունի գործելու: Պատգամաւորները նորից չուզմունքի ցոյցեր են արտայայտուել Նիթէ, աւելացնում է Ռիկաուը, մի բան ևս մնում է անելու,—դատարանը կը կատարի իւր պարտքը:

Այս խօսքերը առաջ են բերում մեծ ազմուկ:

Տեղից վեր է կենում Բրիտոնը—խուզարկող չանձնաժողովի նախագահը և իւր զարմանքը չափնելուց չետոյ մինիստրի առած խօսքերին, (քանի որ խոստացել էր օգնելու չանձնաժողովին և անկատար թողել իւր խոստումները) շարունակում է, դառնալով Ռիկաուին. «Կ. Մինիստրը պէտք է քրքրէր օրէնքների զինարանը ալի գործի վրա լոյս սփռելու համար, քանի որ ալի բանը կարի է պահանջում երկրի կողմից: Խակ եթէ նա չարմար օրէնքի կէտ չը գտաւ—բարձրագոյն շահերը պահանջում են օրէնքով գնալու: (Գոհունակութեան նշաններ):»

Ապա Բրիտոնը Ռիկաուին պարտաւելու մտքով ալիպիսի օրակարգ է առաջարկում. «Ժողովը չափնելով իւր համամիտութիւնը պարլամենտական չանձնաժողովին—անցնում է հերթական գործերին:

Շատերի սպասածի հակառակ—մինիստրութեան գլուխը, Լուբէն, չափարարում է խկոյն որ եթէ կառավարութեան մտադրութիւնները կատարածի ապակ են լինելու—մինիստրութեանը կը մնալ միայն հրաժարական տալ:

Պատգամաւոր Մոփան'ը կամենալով ազատել ամբողջ մինիստրութիւնը բացի ի հարկէ Ռիկաուից առաջարկում է լրացնել Բրիտոնի առաջարկած օրակարգի բանաձևը այսպէս. պատգամաւորների ժողովը ապանելով իւր հաւատը մինիստրութեան նաեւ իւր համամիտութիւնը պարլամենտական չանձնաժողովին—անցնում է հերթական գործերին:

Լուբէն չափնեց թէ պահանջում է պարզ բանաձև առանց վիշտութեան եղած առարկութիւնների և եթէ չը ստացանց ալիպիսի անպալման քուէ ամբողջ մինիստրութիւնը հրաժարուելու է:

Ներկայ եղող 523 պատգամաւորներէից 304-ը տալիս են հակառակ քէ Լուրէի առաջարկութեան: Իսկ Բրիտոնի բաճաճը ընդունում է 393 քէով: Ապա Լուրէի մինիստրութիւնը տալիս է իւր հրաժարականը:

Ժամանակ տաճք կազմելու նոր մինիստրութեան և մի քանի խօսք ասեճք առհասարակ լրագրական կաշառատութեան և կաշառակերութեան մասին: Կան ասողներ թէ այն ինչ կաշառակերութիւն է իսկապէս որը չալտնի է ամենքին, աշկարա է և կատարում է, ալսպէս ասած, ամենքի աչքի առաջ: Ո՞ւմ չէ չալտնի որ եւրոպական և թիւս որոնց և Պարիզի շատ լրագրերի էջերը—որ բաժնում որ կամենաք, կարելի է գնել մի չալտնի վճարով և որ տողին տւած 12 Ֆրանկը մեծ բան չի համարում: Պարիզի ցուցահանդէսի ժամանակ ռեկլամները համար վճարում էին տասնեակ հազարներ: Այս ամենը արգելք չի հանդիսանում այդ իսկ լրագրերի շատ տարածման և դոցա անկախութեան շատ խնդիրներում: Նւ որովհետեւ պատգամաւորներէից շատ շատերը կապւած են Նազ կամ առաւել կիրպով լրագրութեան հետ—ապա հասկանալի են և բոլոր վեր փշեալ ստերածգութիւնները, որոնք, թերեւ, մասամբ միայն արդարացի լինեն: Նւ իրաւ, եթէ թեթեւ աչքով նայելու լինենք լրագրական կաշառակերութեան վրա—նոյնը չենք կարող անել պատգամաւորների և կառավարչական դիրք ունեցողների կաշառակերութեան վրա: Եղել են սրտխօսներ որոնք պնդում էին թէ պարլամենտի 750 անդամներից եօթ հարիւրը բռնում են առնում (prennent) և միմիայն լիստեն են ըմբռնում (comprennent):

Նոյն Դըլահէ աշակողմանը, որի ցուցմունքի զլիսաւոր իմաստը մենք վերը փշեցինք, քննիչ լանձնաժողովին ասում էր ի թիւս աչլոց. «Պանամայի ընկերութիւնից ստացած հինգ միլիոն Ֆրանկով գործ էին տեսնում երկու հոգի. բառոն Ռաֆնալը և Նրա մշտական օգնական Առտոնը: Առաջինը մեռաւ, երկրորդը փախաւ ¹⁾: Նա մեռաւ լոյս կիւրակի օրը, իսկ իմ հարցապնդումս պիտի քննէր պարլամենտում երկու օր առաջ, այն է հինգ շաբթի օրը: Նա չէի կարող նախատեսել Նրա վաղահաս մահը...

«Ով է Առտոնը:

«Ամբողջ տարի շարունակ նախորդ պարլամենտի անդամները մի քաջափոխ չէին կարող անել որ կուլուարներում չը հանդիպէին այդ փոքրիկ մարդուն, զգեցի գէմքով, ամենքի հետ ծանօթին, որը շատ պատգամաւորների հետ մտնում էր զաղտնի խօսակցութիւնների մէջ: Ինչո՞ւ էր այդ մարդը գալիս այն տեղ,—այդ ամենքը գիտէին: Նւ երբ մի նոր ընտիր պատգամաւոր հարցրեց թէ դա ո՞վ է, Նրան պատասխանեցին՝ դա Պանամայի մարդն է (c'est l'homme de Panama):

¹⁾ Այս ցուցմունքից մի քանի օր անցած Առտոնը վերադարձաւ և իրան ձեռքակալել տւեց:

Անուհետև բացատրելով թէ ինչ բան է չեկը և չեկի տետրակը, Վրլահէն շարունակեց:

«172 հատ ալգալիսի չեկերից բաժանւած են եղել քաղաքակահ գործիչներին: Այս լուրերը չալտնի են ամբողջ Պարիզին: Սոսկ ալ լուրերը չոչափում են պարլամենտի պատիւը:

Հրաւիրեցէք եօթ հարիւր փոռն պատգամաւորներից որին և կամենաք և հարցրէք նրան՝ արդեօք իրան է որ պարլամենտի կուլուառնելում լուրեր էին պտտում Պանամայի ընկերութեան ձեռքով ձեր մի քանի ընկերներին կաշառելու մասին: Եւ ալդ 750 պատգամաւորներից ամեն մէկը ձեզ կը պատասխանի՝ ալո, իրաւ է:

Մեր երեք հարիւր սենատորները թերեւ նման պատասխան տան»:

Ապա Վրլահէն պատմեց քննիչ լանձնաժողովին պտտող ալն բացատրութիւնը թէ ինչու մեռաւ Ռաջնախը:

